Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների

հասարակական կազմակերպություն

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԴԵՊԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

ԵՐԵՎԱՆ 2011

ՀՏԴ 341.231.14
ԳՄԴ 67.91
Մ 356

Մ 356 Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպերի կիրառումը ՀՀ դատարանների կողմից / Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ. – Եր.: Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ, 2011. - 244 էջ:

Գրքում քննարկվում են ՀՀ դատարանների կողմից Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի կիրառության օրինաչափություններն ըստ տարբեր ատյանների դատարանների, ինչպես նաև նախադեպերի կիրառության հետ կապված իրավական հակասություններն ու կազուսները: Հավելվածում ներկայացված են ինչպես վերհանված օրինաչափություններն արտացոլող դատական ակտերը, այնպես էլ՝ նախադեպային նշանակություն ունեցող կամ իրավունքի այս կամ այն ասպեկտի համար ներկայացուցչական որոշումները, վճիռներն ու դատավճիռները:

ՀՏԴ 341.231.14
ԳՄԴ 67.91

ISBN 978-99941-2-600-2

© Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների, 2011







Գրքի հրատարակումը հնարավոր է դարձել իրականացնել Քաուսթերփարթ ինթերնեշնլի Հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի, և Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության No AID-111-LA-10-00001 համագործակցային պայմանագրի DFD-A-00-09-00141-00 պայմանագրի շրջանակներում «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության միջոցով:

Գրքի բովանդակությունը, արտահայտված տեսակետները և կարծիքները պատկանում են հեղինակներին՝ «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության պատասխանատվության ներքո, և հնարավոր է, որ չհամընկնեն Քաուսթերփարթ ինթերնեշնլի Հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության և ԱՄՆ կառավարության տեսակետների հետ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 6

Դատական նախադեպի՝ որպես իրավունքի աղբյուրի հասկացությունը, ծագումը և զարգացումը 10

Դատական նախադեպի կիրառման առանձնահատկությունները 15

Դատական նախադեպը միջազգային իրավունքում 21

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների իրավաբանական բնույթը, դերը և նշանակությունը 25

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի իրավաբանական ուժը ՀՀ ներպետական մարմինների համար 33

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին ներպետական մակարդակում հետևելու պետությունների պարտավորությունը 39

ՀՀ դատարանների՝ քրեական և քաղաքացիական գործերով կայացրած դատական ակտերում Եվրոպական դատարանի որոշումների և Կոնվենցիայի կիրառության որոշ քանակական օրինաչափություններ 41

ՀՀ դատարանների՝ քրեական և քաղաքացիական գործերով կայացրած դատական ակտերում Եվրոպական դատարանի որոշումների և Կոնվենցիայի կիրառությունը 50

Եզրահանգումներ 100

Հավելված 1
Քրեական գործերով կայացված դատական ակտեր 103

Լևոն Գուլյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0051/11/09 103

Տարոն Պիրապյանի վերաբերյալ որոշում, ԱՐԴ1/0028/06/10 123

Տիգրան Քամալյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0097/01/09 132

Ալիկ Մաթևոսյանի վերաբերյալ որոշում, ՎԲ 04/10 144

Սեյրան Այվազյանի վերաբերյալ որոշում, 105/07 159

Արայիկ Գզոյանի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0049/01/09 174

Ժիրայր Քառյանի վերաբերյալ դատավճիռ, ԵԿԴ 0048/01/08 192

Հավելված 2
Քաղաքացիական գործերով կայացված դատական ակտեր 203

Սահակ Սիրունյանն ընդդեմ Հայկանուշ Գրիգորյանի,
ԱՐԱԴ /0920/02/09 203

Գուրգեն Հարությունյանի դիմումի վերաբերյալ որոշում,
ԵԱՔԴ/0766/0208 210

Էրիկ Քալանթարյանն ընդդեմ Հայրապետ Քալանթարյանի,
Կենտրոն տարածքային նոտարական գրասենյակի,
ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ Կենտրոն տարածքային ստորաբաժանման,
ԵԿԴ/0907/02/10 219

Սերգեյ Ձիգարխանովն ընդդեմ «ԲՏԱ Բանկ» ՓԲԸ,
ԵԿԴ/0313/02/09 225

Ռիմա Նախշքարյանն ընդդեմ Միսակ և
Կարեն Նախշքարյանների, ԵԱՔԴ/1092/02/09 235

ՆԱԽԱԲԱՆ

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպությունը Քաունթերփարթ Ինթերնեշնլ կազմակերպության և Հայաստանում ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության (USAID) օժանդակությամբ 2011թ. մայիս-հոկտեմբեր ամիսներին իրականացրել է ՀՀ դատարանների որոշումների ուսումնասիրություն՝ նվիրված Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի կիրառության խնդիրներին: Ուսումնասիրության արդյունքներն ամփոփված են ընթերցողի դատին ներկայացվող գրքում:

Իրավունքի զարգացման և օրենքի միասնականության ապահովման՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի գործառույթի կարևորագույն բաղկացուցիչներից է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում ձևավորված իրավական արժեքների և իրավաբանական հայեցակարգերի հետևողական ներպետականացումը: Սա այն մեխանիզմն է, որի միջոցով ապահովվում է դատարանի նախադեպային որոշումների հեղինակությունն ու հիմնավորվածությունը: Դատարանի նախադեպային որոշումներն, իրենց հերթին, հնարավորություն են ստեղծում հրատապ կերպով շտկել օրենքներում առկա բացերն ու հակասությունները, ապահովել դատավարության բոլոր մասնակիցների համար կանխատեսելի արդարադատություն, ապահովել օրենքների միատեսակ կիրառություն և միասնական դատական պրակտիկա, լուծել դատական պրակտիկայում ծագող խնդիրները: Միաժամանակ, դատական նախադեպի հետևողական կիրառումը նվազեցնում է երկակի չափորոշիչներով առաջնորդվելու հնարավորությունը: Ստորադաս դատարանները՝ հետևելով վերադաս դատական ատյանի դիրքորոշմանը և նախադեպային պրակտիկային, իսկ նախադեպային որոշումներ կայացնող դատական ատյանը՝ հետևողականորեն բեկանելով նախկինում կայացված իր որոշումներին հակասող դատական ակտերը, ձևավորում են միասնական պրակտիկա, որի արդյունքում էականորեն սահմանափակվում է երկակի չափորոշիչներով առաջնորդվելու հնարավորությունը:

Դատական նախադեպի կիրառությունը բարձրացնում է նաև վերջնական դատական ակտերի բովանդակությունը կանխատեսելու հնարավորությունը և նվազեցնում արդարադատության ավարտին «ակնկալիքների» հավանականությունը, քանի որ դատավարության

մասնակիցները, գտնելով վճռաբեկ դատարանի կամ Եվրոպական դատարանի կողմից իրենց գործին համանման մեկ այլ գործով կայացրած որոշում, կարող են կանխատեսել ստորադաս դատարանի որոշման բովանդակությունը:

Ավելին, դատական քաղաքականության վրա ազդող գործոններից են վերադաս դատական ատյանների որոշումները, որոնցում արտացոլվում և արտահայտվում են դատական քաղաքականության ուղղությունները[1]: Սույն պայմաններում կարևորվում են պետության բարձրագույն դատական մարմնի որոշումների դերն ու նշանակությունը: Ներկայումս դատավարական իրավունքի զարգացման միտումներից է դատավարության ժողովրդավարացումը և հումանիստականացումը: Մարդկային քաղաքակրթության նվաճում հանդիսացող այնպիսի արժեքներ, ինչպիսիք են արդարությունը, ազատությունը, հավասարությունը և այլն, չեն կարող չազդել դատավարական իրավունքի բովանդակության վրա[2]: Պատահական չէ, որ ժամանակակից իրավագիտությունը կարևորում է պետական իշխանության համակարգում իրավական դատարանի դերն ու նշանակությունը: Ռուսական դպրոցի ներկայացուցիչ Շևցովի պնդմամբ՝ բավարար չէ, որպեսզի կիրառվող օրենքը լինի իրավական: Անհրաժեշտ է, որպեսզի իրավական բնույթով օժտված լինեն նաև իրավակիրառ (դատական) մարմինները և հենց իրավակիրառ գործընթացը[3]: Վերջինի կողմից առաջ է քաշվել իրավական դատարանի գաղափարը և նշվում է, որ իրավական պետությունում դատարանը, որպես նշված պետության մարմին, պետք է լինի իրավական: Դա կարող է իրականություն դառնալ միայն այն ժամանակ, երբ դատարանը ձևավորվում և գործում է իրավունքի համակարգում, կիրառում է իրավունքը: Միաժամանակ, առանց իրավական դատարանի, իրավունքն էլ չի կարող գոյություն ունենալ:

Սակայն, ինչպես ցույց է տալիս ներպետական դատական պրակտիկայի փորձը, անչափ կարևոր հիմնախնդիր է ՀՀ դատարանների որոշումներում Եվրոպական դատարանի նախադեպերի օգտագործման հարցը: Հիմնախնդիրը դրսևորվում է անորոշության և անհստակության ձևով. ակնհայտ չէ, թե ՀՀ դատարաններն իրենց որոշումներում ինչ չափով և, որպես կանոն, որ դեպքերում են հիմնվում

1 Տե՛ս, Судебная власть. Под ред. И. Л. Петрухина, М., 2003, с. 70.

2 Տե՛ս, Лукьянова Е. Г. Теория процессуального права. М., 2003, с. 137-155.

3 Տե՛ս, Шевцов В. С. Право и судебная власть в Российской Федерации. М., 2003, с. 6.

Եվրոպական դատարանի նախադեպային որոշումների վրա, ինչպես են մեկնաբանում դրանք: Առկա է նաև Վճռաբեկ դատարանի համապատասխան որոշումների անհասանելիության և դժվար մատչելիության հիմնախնդիր. դատարանի կողմից կայացված հիմնարար որոշումները, որոնք վճռորոշ նշանակություն պետք է ունենային ՀՀ քաղաքացիների՝ միջազգային փաստաթղթերով երաշխավորված իրավունքներն ապահովելու հարցում, ոչ միշտ են ծառայում իրենց նպատակին:

Իրականացված ուսումնասիրության նպատակն էր ՀՀ դատարանների՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նախադեպերի և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) կիրառությամբ կայացված որոշումների հետազոտությունը, դրանց հանրայնացմամբ ՀՀ-ում կանխատեսելի և եվրոպական չափանիշների վրա հիմնված արդարադատության զարգացման խթանումը:

Վերլուծության առարկա են դարձել նախադեպերի կիրառության օրինաչափություններն ըստ տարբեր ատյանների դատարանների, ինչպես նաև նախադեպերի կիրառության հետ կապված իրավական հակասություններն ու կազուսները:

Առաջին ատյանի ընդհանուր իրավասության և Վերաքննիչ դատարանի կայացրած ակտերը ձեռք են բերվել Դատալեքս տեղեկատվական համակարգի (Datalex.am) միջոցով: Վճռաբեկ դատարանի կայացրած ակտերը հիմնականում հայտնաբերվել են Արլիս իրավական տեղեկատվության համակարգի (Arlis.am) միջոցով: Վերլուծվել են 2008-2011թթ. այն դատական ակտերը, որոնցում եղել է Կոնվենցիայի կամ այլ միջազգային պայմանագրի որևէ հղում:

Ընդհանուր առմամբ, վերլուծության համար առանձնացվել են տարբեր ատյանների դատարանների կայացրած՝ քրեական գործերով 61 և քաղաքացիական գործերով 153 դատական ակտեր: Վերլուծության առանձին խումբ են կազմել վճռաբեկ բողոքը վերադարձնելու վերաբերյալ որոշումները՝ 200:

Դատական ակտերը բաժանվել են խմբերի և ենթախմբերի ըստ Կոնվենցիայի և Եվրոպական դատարանի նախադեպերի կիրառման շրջանակի և ծավալների: Բաժանումը կատարվել է՝ հիմք ընդունելով Կոնվենցիայի և Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի կիրառությունն առանց դրա կիրառման մեկնաբանության և կիրառման մեկնաբանությամբ: Այս խմբերը համապատասխանաբար բաժանվել

են նաև ենթաբաժինների՝ ըստ Կոնվենցիայի, նախադեպի, ինչպես նաև և՛ Կոնվենցիայի, և՛ նախադեպի կիրառման չափանիշների:

Հաջորդ փուլում դատական ակտերն առանձնացվել են՝ ըստ պատասխանող պետության: Վերլուծության նպատակն է եղել հասկանալ, թե ՀՀ դատարանների կողմից կիրառվող նախադեպերում որ պետությունն է, որպես կանոն, հանդես գալիս որպես պատասխանող՝ ՀՀ թե այլ: Առանձնացվել են երկու ենթաբաժիններ. դատարանների կողմից կիրառված Հայաստանի Հանրապետության դեմ ներկայացված բողոքների վերաբերյալ որոշումներ և այլ պետությունների դեմ ներկայացրած բողոքների վերաբերյալ որոշումներ:

Առանձնացվել են նաև այն դատական ակտերը, որոնցում դատավարության մասնակից կողմերից մեկը հղում է կատարել Կոնվենցիային կամ Եվրոպական դատարանի որևէ նախադեպի: Ենթաբաժիններում ներառվել են այն դատական ակտերը, որտեղ դատարանի կողմից կիրառվել է կողմի ներկայացրած նախադեպը, դատարանը չի անդրադարձել կողմի կատարած հղումներին, դատարանը չի կիրառել կողմի ներկայացրած հոդվածը կամ նախադեպային որոշումը, սակայն մեկնաբանել է չկիրառման պատճառները:

Ուշադրության են արժանացել նաև այն դեպքերը, երբ կողմը հղում է արել Կոնվենցիային կամ Եվրոպական դատարանի նախադեպին, իսկ դատարանը դրա փոխարեն կիրառել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպ, կամ կիրառել է Կոնվենցիայի հոդվածը, սակայն Վճռաբեկ դատարանի նախադեպի հետ միաժամանակ: Առանձնացվել են նաև այն գործերը, որտեղ Կոնվենցիայից բացի եղել են այլ միջազգային ակտերին արված հղումներ:

Գրքի հավելվածում ներկայացված են ինչպես վերհանված օրինաչափություններն արտացոլող դատական ակտերը, այնպես էլ՝ նախադեպային նշանակություն ունեցող որոշումները, վճիռներն ու դատավճիռները: Ընտրվել են առավել հետաքրքրական և իրավունքի այս կամ այն ասպեկտի համար ներկայացուցչական դատական ակտերը:

Հրապարակված դատական որոշումները դառնում են հասարակության իրավական մտքի անբաժան մասը

Հ. Լաուտերպախտ

ԴԱՏԱԿԱՆ ՆԱԽԱԴԵՊԻ՝ ՈՐՊԵՍ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Դատական նախադեպ հասկացության վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ հնչել են ամենատարբեր և հակասական կարծիքներ: Եվ այն որպես իրավունքի աղբյուր դիտարկելու հիմքով էլ առանձնանում են ռոմանագերմանական և «ընդհանուր իրավունքի» իրավական համակարգերը:

Պատմականորեն դատական նախադեպը ծագել է Հին Հռոմում, որտեղ դատական իրավադրույթը ճանաչվում էր որպես նորմ, եթե այն հաստատվում էր մի քանի դատական որոշումներով. հռոմեական իրավունքում որպես նախադեպ հանդես էին գալիս պրետորների և այլ մագիստրոսների էդիկտները (բանավոր հայտարարութուները) և որոշումները: Այն փաստը, որ դատարանները պահպանում էին իրենց իսկ կողմից ձևավորած տեսակետը, ենթադրում էր, որ հետագայում նույնպես նրանք այն կպահպանեին: Ժամանակը հանդիսանում էր դատական իրավանորմի ներդրման հիմնավորվածության և՛ ապացույցը, և՛ վերջինիս կայունության երաշխիքը: Նման տեսակետից հետևում էր, որ մի քանի դատական որոշումները կարող են ստեղծել իրավանորմ: Արդյունքում առաջացավ «ձևավորված դատական պրակտիկա» հասկացությունը (*settled jurisprudence, jurisprudence constante*):

Այդուամենայնիվ, այս մոտեցումը տարբեր զարգացում է ապրել ռոմանագերմանական և ընդհանուր իրավունքի իրավական համակարգերում: Ռոմանագերմանական իրավական համակարգը, աստիճանաբար հրաժարվելով «ակտիվ կազուիստիկ» մոտեցումից, ընդունեց գրված օրենքի գերակայության սկզբունքը: Ընդունելի դարձավ res judicata սկզբունքը, համաձայն որի՝ դատական որոշումը հանդիսանում է պարտադիր միայն դրա կողմերի համար:

Արևմտյան Եվրոպայի երկրներում, հատկապես Ֆրանսիայում, առավել կոշտ դիրքորոշում էր ձևավորվել դատական պրակտիկայի նկատմամբ: Նապոլեոնի քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ դատարանն իրավունք չուներ հրաժարվելու արդարադատություն իրականացնելուց օրենքի անկատարության պատճառաբանությամբ, սակայն չէր կարող ընդունել որոշում նաև ընդհանուր իրավադրույթի տեսքով: Հետագայում, իհարկե, դատական պրակտիկայի նկատմամբ վերաբերմունքը փոխվեց: Ներկայումս նույնպես ֆրանսիական օրենսդրությունը պահպանում է հեղափոխական անցյալի ավանդույթները, սակայն աստիճանաբար օրենքի հետ համահավասար պարտադիր իրավական ուժ է ձեռք բերում նաև նախադեպը:

Շվեյցարիայի քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ օրենսդրական բացերի պայմաններում դատավորն իրավասու է գործել որպես օրենսդիր՝ առաջնորդվելով իշխող տեսությամբ և սովորույթներով: Հարավային Եվրոպայի երկրներում, հատկապես Իտալիայում, դատական պրակտիկան ընդունվում է որպես իրավունքի երկրորդական աղբյուր, իսկ Իսպանիայի քաղաքացիական օրենսգիրքը դատարաններին իրավունք է վերապահում օրենսդրական բացերի պայմաններում կիրառել սովորույթ, դատական որոշումներ և իրավունքի ընդհանուր սկզբունքները:

Ներկայումս ռոմանագերմանական իրավական համակարգի երկրներում նկատվում է «նախադեպային իրավունքի» ձևավորման միտում, ինչը ենթադրում է դատարանների կողմից ձևավորված պրակտիկային հետևելը, իսկ պրակտիկայի կիրառումից հրաժարումը հանգեցնում է դատական որոշման քննարկման, անհրաժեշտության դեպքում՝ բեկանման վերադաս դատական ատյանների կողմից:

«Ընդհանուր իրավունքի» համակարգի երկրներում դատական պրակտիկայի նկատմամբ դիրքորոշումն այլ զարգացում ապրեց: Այստեղ հաստատվել է ձևավորված դատական պրակտիկայի սկզբունքը: Հետաքրքիրն այն է, որ ընդհանուր իրավունքի երկրներում դատարանների կողմից իրավունքի «ստեղծման» տեխնիկան մոտ է հռոմեական իրավունքին. ինչպես ընդհանուր իրավունքի, այնպես էլ հռոմեական իրավունքի իրավաբանը հնարավորինս խուսափում է ընդհանրացումներից և բնորոշումներից: Նրանց մեթոդն ակտիվ կազուիստիկան է: Նրանք կոնկրետ գործից անցնում են մեկ այլնի՝ փորձելով ստեղծել գործող մեխանիզմ դրանցից յուրաքանչյուրի նկատմամբ կիրառելու համար[4]: Դարերի ընթացքում ընդհանուր

4 Цвайгерт К., Кетц Х. Введение в сравнительное правоведение в сфере частного права. Т. I. М., 1998, с. 282-283.

իրավունքն անցում կատարեց դեպի հռոմեական իրավունքի տեխնիկա[5]: Ակտիվ կազուիստիկան ազդեցություն գործեց ընդհանուր իրավունքի յուրահատկությունների վրա:

Ընդհանուր իրավունքի երկրների իրավաբանական գրականության մեջ ընդունված է այն մոտեցումը, որ դատական նախադեպը ձևավորվում է մի քանի դատական որոշումներով (դատական ընդհանուր պրակտիկայի միջոցով): Տարբեր դատական որոշումների համադրման ընթացքում դուրս է բերվում ընդհանուր նորմ, որը կարիք ունի զարգացման[6]: Սակայն ժամանակակից «ընդհանուր իրավունքում» ուշադրությունն ընձեռնվում է ***նախադեպ պարունակող մեկ դատական որոշմանը***: Ճանաչված նորմն ունենում է պարտադիր բնույթ: Հետևաբար, «ընդհանուր իրավունքի» երկրների տեսական գրականության մեջ նախադեպային իրավունքը բնորոշվում է որպես դատարանների կողմից արդարադատության իրականացման ընթացքում ստեղծված և կիրառվող նորմերի ու սկզբունքների ամբողջություն[7]: Նախադեպային իրավունքի սկզբունքն ամրագրում է, որ դատավորները պարտավոր են հետևել վերադաս դատարանների ընդունած որոշումներին (ուղղահայաց նախադեպ): Միաժամանակ, վերադաս դատարանները պարտավոր են հետևել իրենց կայացրած որոշումներին (հորիզոնական նախադեպ):

Միաժամանակ, անհրաժեշտ է տարբերել դատական նախադեպ և դատական պրակտիկա հասկացությունները: Եթե նախադեպը դատարանի որոշումն է կոնկրետ գործով, ապա դատական պրակտիկան կոնկրետ գործերով դատարանների օրինակելի որոշումներ են, որոնք ձևավորվում են երկարատև, միատեսակ դատական իրավակիրառման արդյունքում[8]: «Դատական պրակտիկա» հասկացությունը կիրառելի է միայն այն դեպքում, երբ այս կամ այն հարցի լուծման կապակցությամբ դուրս է բերվում դատարանների գործունեության որոշակի ուղեգիծ[9]: Հետևաբար, որպես իրավունքի աղբյուր հանդես է գալիս ոչ թե դատական պրակտիկան, այլ կոնկրետ, անհատականացված նախադեպը, քանի որ իրավական նորմի հստակ արտահայտումը կատար-

---

5 Milsom S. N. Studies of the History of Common Law. L., 1985, p. 72.

6 Llewelyn K. Jurisprudence: Realism in Theory and Practice. Chicago, 1967, p. 56.

7 Cross R., Harris J. Precedent in English Law. Oxford, 1991, p. 20.

8 Сорокин В. В. Судебная практика как источник права: за и против // СибЮрВестник, № 3, 2002, с.37.

9 Спектор Е. И. Судебный прецедент как источник права // Журнал российского права, №5, 2003, с.51.

վում է նախադեպում[10]: Անգլոսաքսոնական իրավական համակարգի երկրներում հենց դատական նախադեպն է հանդիսանում իրավունքի աղբյուր, այլ ոչ դատական պրակտիկան:

Այդուամենայնիվ, դատական պրակտիկայի՝ իրավունքի աղբյուր հանդիսանալու հնարավորությունը նյութական առումով ամենևին չի հերքվում, քանի որ դատարանների գործունեության ընթացքում գործերի քննության շրջանակներում իրավական նորմերը հստակեցվում և նույնիսկ ստեղծվում են նորից (համապատասխան պայմանների առկայության դեպքում): Դատական պրակտիկան արտացոլում է պետության մեջ ձևավորված պետահիրավական համակարգի և իրավակարգի մի մասը, հետևաբար, պետք է հանդիսանա իրավունքի աղբյուր նյութական առումով: Իսկ իրավունքի աղբյուր ձևական-իրավաբանական իմաստով պետք է դիտարկել դատական նախադեպը՝ իրավական նորմի դրսևորման կոնկրետ ձևը, որն ընդունվում է պետության կողմից և ապահովվում է պահպանման երաշխիքներով:

Դատական նախադեպը որպես դատարանի իրավաստեղծման ակտ: Իրավունքի տեսության մեջ դատական նախադեպը բնորոշվում է որպես կոնկրետ գործով դատարանի կայացրած որոշում, որի հիմնավորումները դառնում են կանոն՝ պարտադիր նույն ատյանի կամ ստորադաս ատյանների դատարանների համար նմանատիպ գործերով որոշումներ կայացնելիս: Այդպիսով, դատական նախադեպը կոնկրետ գործով դատարանի որոշումն է: Այն իրենից ներկայացնում է դատարանի իրավաստեղծման ակտ:

Գոյություն ունեն օրենքով ամրագրված դատական իրավաստեղծման հստակ սահմաններ, ինչը, մի շարք տեսաբանների կարծիքով, հանդիսանում է դատական և օրենսդիր իշխանությունների գործառույթների հսկում, վերջինի իրավասությունների յուրացման դեմ երաշխիքներ[11]:

Ի տարբերություն պառլամենտական իրավաստեղծման, դատական իրավաստեղծումը կանխորոշվում է նրանով, որ

- դատական իրավաստեղծումը միշտ արդարադատության կողմնակի արդյունքն է. այն ինքնուրույն գործողություն չէ, այն իմաստով, որ պայմանավորված է դատական իշխանության

10 Ануфриева Л. П. Соотношение международного публичного и международного частного права (сравнительное исследование правовых категорий), Докт. диссертация. М., 2004, с.94.

11 Мартынчик Е., Колоколова Э. Прецедентное право: от советской идеологии к международной практике // Российская юстиция. 1994, № 12, с. 22.

հիմնական գործառույթի՝ արդարադատության իրականացմամբ,

- այն իրականացվում է օրենսդիր իշխանության կողմից ընդունված օրենքի հիման վրա և օրենքի շրջանակներում,
- դատարանի իրավաստեղծումը մեծամասամբ կապված է օրենքի մեկնաբանության և իրավական բացերի լրացման հետ, դատական իրավադրույթները դատավորների կողմից մշակվում են միայն առկա նորմերի և իրավական սկզբունքների հիման վրա, այլ ոչ դատավորի սուբյեկտիվ կամարտահայտության հիման վրա: Վերոգրյալ իրավադրույթները չպետք է հակասեն գործող, առաջին հերթին՝ սահմանադրաիրավական դրույթներին, դրանք ինքնին չեն կարող փոփոխել կամ վերացնել օրենքը:

ԴԱՏԱԿԱՆ ՆԱԽԱԴԵՊԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դատական նախադեպի սկզբունքն ամրապնդեց դատական որոշումների պարտադիրությունը ոչ միայն գործի կողմերի համար՝ դրանով իսկ հրաժարվելով *res judicata* սկզբունքից: Ձևավորվեց *stare decisis* սկզբունքը, ինչը նշանակում է պահպանել նախորդ գործերի որոշումները և հիմնավորումները[12]:

Դատական նախադեպի կիրառման հարցին անդրադառնալիս յուրաքանչյուր իրավաբան բախվում է դրանցից ընդհանուր նորմի դուրսբերման խնդրին: Այս տեսանկյունից, կարևորվում է որոշման ratio decidenti և *obiter dictum* մասերի տարանջատումը: *Ratio decidenti*-ն հանդիսանում է իրավական նորմը, որը ուղղակիորեն կամ միջնորդավորված դիտարկվում է դատավորի կողմից եզրահանգման գալու համար[13]: Այն կարող է լինել ինչպես կոնկրետ իրավական նորմ, այնպես էլ այլ իրավական հիմք, որի հիման վրա դատարանը կայացնում է որոշում: Որոշման այս հատվածն էլ պարտադիր է դատարանների համար հետագայում նմանատիպ գործերի քննության դեպքերում:

Ratio decidendi-ն ձևավորում է նորմատիվային բնույթ ունեցող իրավական հիմք, որը պետք է կիրառվի բոլոր այլ անձանց, այլ ոչ միայն կոնկրետ գործի կողմերի նկատմամբ: Այսպիսով, *ratio* -ն ներկայացնում է նախադեպային իրավունքի նորմը: Տեսականորեն դատական որոշման մնացած մասը հանդիսանում է dictum: Այսինքն, դատարանի կողմից արտահայտված կարծիք, որը գործի լուծման համար էական նշանակություն չի ունենում:

Որոշման *ratio decidenti*-ն առանձնացնելու համար անհրաժեշտ է երկու քայլերի իրականացում. առաջին՝ անհրաժեշտ է գործի փաստական հանգամանքները գնահատել, ինչպես դա կարվեր դատավորի կողմից, երկրորդ՝ անհրաժեշտ է տվյալ փաստերից առանձնացնել գործի լուծման համար էական փաստերի ամբողջությունը, ինչպես դա կարվեր դատավորի կողմից[14]: Dictum-ը, որպես կանոն, ներառում է փաստերը, որոնք կարևոր չեն դատարանի որոշման համար՝ կանոնների կամ դրանց մասերի կրկնություն, հնարավոր իրավիճակների

12 Cross R., Harris J. Precedent in English Law. Oxford, 1991. p. 100.

13 Նույն տեղում, էջ 34:

14 Նույն տեղում, էջեր 65-66:

քննարկում, որոնք կապված չեն գործի հանգամանքների հետ, փաստերի և օրենքի վերաբերյալ հատուկ կարծիքներում արված մեկնաբանություններն ու պնդումները:

Տեսական գրականության համաձայն՝ *stare decisis* սկզբունքի ենթատեքստում *dictum*-ը նախադեպային արժեք չունի և այն փաստը, որ եզրահանգումը դատարանի կողմից կատարվել է որպես obiter dictum, կհանգեցնի տվյալ դրույթի նշանակության նվազման[15], սակայն պրակտիկայում այն հաճախ է ունենում որոշիչ ազդեցություն և նշանակություն: Միջազգային դատարանի դատավոր Անզիլոտտիի կարծիքով, «տեսակետը, որ անհրաժեշտ չէ տարբերակել էական և ոչ էական հիմնավորումները, կարող է հեշտությամբ մեկնաբանվել որպես երկու հասկացությունների միջև տրամաբանական տարբերության բացակայության մերժում, քան դրանց հարաբերական նախադեպային նշանակության գործնական տարբերությունների մերժում»[16]:

Որպես *ratio decidendi* օրինակ կարելի է ներկայացնել Սկորդինոն ընդդեմ Իտալիայի գործով Եվրոպական դատարանի արդարացի փոխհատուցման վերաբերյալ վճիռը, որը վերաբերում է սեփականությունից ապօրինի զրկելու դեպքում վճարվելիք փոխհատուցման խնդրին: Սույն գործով որպես *ratio decidendi* նորմ է հանդիսանում դեռևս Միջազգային արդարադատության մշտական դատարանի կողմից հաստատված դրույթը սեփականությունից ապօրինաբար զրկելու դեպքում արդարացի փոխհատուցման հարցի վերաբերյալ, ինչը հաստատվել է Եվրոպական դատարանի այլ վճիռներով նույնպես: Համաձայն տվյալ նորմի՝ «...փոխհատուցումը, որքանով դա հնարավոր է, պետք է վերացնի ապօրինի գործողության հետևանքները և հնարավորինս վերականգնվի նախքան տվյալ գործողության կատարումն առկա իրավիճակը: Միջազգային իրավունքի խախտմամբ կատարված գործողությունների համար վճարվելիք փոխհատուցման գումարի որոշման համար կիրառվող սկզբունքներն են. վերականգնումը բնեղենով կամ եթե դա հնարավոր չէ, բնեղենով վերականգնմանը համարժեք դրամական փոխհատուցումը, անհրաժեշտության դեպքում՝ փոխհատուցում վնասների և կորցրած օգուտի համար, եթե բնեղենով վերականգնումը չի ծածկում նման վնասները»[17]:

15 Lauterpacht, Development, p. 339.

16 Shahabuddeen, Precedent in the world court, p. 157.

17 Collection of Judgments, Series A no. 17, p. 47.

Հետագայում այս ստանդարտները խորացվել և զարգացվել են դատարանի կողմից: Մասնավորապես, *Papamichalopoulos and Others v. Greece*[18] գործում արդարացի փոխատուցման վերաբերյալ հարցի առանձին քննության արդյունքում Դատարանը գտել է սեփականությունից փաստացիորեն զրկելու ձևով սեփականության իրավունքի խախտում, ինչը տևել է ավելի, քան քսանհինգ տարի, երբ կայացվել է տվյալ գործով հիմնական դատական ակտը: Հետևաբար, Եվրոպական դատարանը պարտավորեցրել էր հունական իշխանություններին վճարել սեփականությունից օգտվելու հնարավորությունից զրկվելու և վնասների համար փոխհատուցում հողի ներկայիս արժեքին համապատասխան, որը բարձրացել էր՝ պայմանավորված ապօրինի զբաղեցումից հետո հողատարածքում կառուցված շինությունների գոյությամբ:

Նման մոտեցումը պահպանվել է Եվրոպական դատարանի կողմից այլ գործերում նույնպես: Մասնավորապես, *Belvedere Alberghiera S.r.l. v. Italy*[19] գործում Դատարանն ամրագրել է, որ «քանի որ սեփականությունից զրկման անօրինական լինելու հանգամանքը հաստատվել է, դրա համար փոխհատուցումը պետք է համապատասխանի սեփականության ողջ արժեքին: Բարոյական վնասի փոխհատուցման առնչությամբ Դատարանը փաստել է, որ Դիմումատուին վճարվելիք փոխհատուցումը չի սահմանափակվում սեփականությունից զրկելու պահին դրա արժեքով: Ելնելով դրանից՝ անհրաժեշտ է կատարել սեփականության ներկայիս արժեքի և հնարավոր վնասների գնահատում: Այդպիսով, Դատարանը գտել էր, որ Դիմումատուին պետք է վճարվի սեփականության ներկայիս արժեքը և դրանից ապօրինաբար զրկվելուց ի վեր օգտվելու հնարավորությունից զրկված լինելու համար:

Նմանատիպ հանգամանքներով գործում նույնպես Դատարանը պահանջել էր փոխհատուցել Դիմումատուի սեփականության զրկման համար դրա ներկայիս արժեքով՝ ներառյալ իր սեփականությունից օգտվելու հնարավորությունից զրկված լինելու համար բարոյական վնասը (*Carbonara and Ventura v. Italy*)[20]:

Այսպիսով, որպես ratio decidendi կիրառելով Միջազգային արդարադատության մշտական պալատի կողմից սահմանված նորմը՝ Եվրոպական դատարանն իր վճիռներում փաստել է, որ սեփականությունից

18 1995թ. հոկտեմբերի 31-ի վճիռ, Series A no. 330-B, para. 36.

19 Թիվ 31524/96, paras. 34-36, 2003թ. հոկտեմբերի 30-ի վճիռ:

20 Թիվ 24638/94, paras. 40-41, 2003թ. դեկտեմբերի 11-ի վճիռ:

ապօրինաբար զրկելու դեպքում համարժեք փոխհատուցումը կատարվում է տվյալ սեփականության ներկայիս արժեքին համապատասխան: Դատարանը հակված է նաև փոխհատուցելու վնասները, որոնք չեն ծածկվում կատարված փոխհատուցմամբ՝ հաշվի առնելով կոնկրետ հողի պոտենցիալը՝ անհրաժեշտության դեպքում հաշվարկված իշխանությունների կողմից կառուցված շինությունների համար կատարված շինարարական ծախսերը:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև դատարանի նախադեպային որոշման տարբեր մասերի պարտադիրության հարցին: Այսպես, կարևոր է, թե դատարանի որոշման հատկապես որ հատվածն է պարունակում նախադեպային նշանակություն ունեցող տարրը՝ պատճառաբանությունների մասը (*motifs*), թե եզրահանգումը (*dispositifs*): Սույն հարցի վերաբերյալ իր տեսակետն է արտահայտել ՄԱԿ-ի Միջազգային դատարանը՝ նշելով, որ դատարանի որոշման ոչ բոլոր մասերն են օժտված նախադեպային պարտադիր ուժով[21]: Դատավոր Անզիլոտտիի կարծիքով՝ պարտադիր նշանակություն ունեն միայն որոշման եզրահանգումային մասերը, այլ ոչ պատճառաբանությունները. «Ասելով վճռի եզրահանգումային հատված՝ ես նկատի չունեմ, որ միայն վճռի եզրափակիչ մասում ամրագրվածն է հանդիսանում դատարանի եզրահանգումը: Հակառակը, անվիճելի է, որ գրեթե միշտ անհրաժեշտ է վերլուծել դատարանի պատճառաբանությունները, որպեսզի հստակ հասկացվի եզրափակիչ մասը և, ավելին, վճռի հիմնավորումները: Սակայն, ամեն դեպքում, դատարանի որոշման եզրափակիչ մասն է պարունակում դատարանի պարտադիր որոշում, որն էլ հետևաբար, կարող է մեկնաբանության անհրաժեշտություն ունենալ[22]: Միաժամանակ, անվիճելի է, որ վճռի բոլոր հատվածները մեկնաբանում և փոխլրացնում են միմյանց և դրանցից յուրաքանչյուրը պետք է հաշվի առնել որոշման եզրափակիչ մասի իմաստը ճիշտ հասկանալու համար»[23]:

Դատական նախադեպն ունի նաև կիրառման այլ առանձնահատկություններ: Մասնավորապես, դատական որոշումների բազմազանության մեջ պետք է գտնել կոնկրետ գործի համար անհրաժեշտ

21 Interpretation of Judgements Nos. 7 and 8, (Factory at Chorzow), 1927, PCIJ, Series A, No. 13, p. 11.

22 Նույն տեղում, ինչպես նաև South West Africa, ICJ, Rep 1966, pp. 333-334, Judge Jessup dissenting opinion.

23 1925, PCIJ, Series B, No. 11, p. 30 and also Maritime Delimitation and Territorial questions between Qatar and Bahrain, ICJ rep. 1995, p. 53, Judge Shahabuddeen, separate opinion.

նախադեպը: Նման ընտրությունը կատարվում է երկու գործերի փաստական հանգամանքների զուգորդման միջոցով:

Վճռաբեկ դատարանը ևս անդրադարձել է նախադեպերի կիրառման հարցին: Մասնավորապես, «Արաբկիր Ալկո Լիկյոր-Օղու գործարան» ՍՊԸ-ն ընդդեմ Սոս Բաղդասարյանի՝ թիվ 3-480(ՎԴ) գործով 25.07.2008 թվականի որոշմամբ Վճռաբեկ դատարանը գտել է. «Յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքներով եզակի է և Վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտով տրված իրավական մեկնաբանության՝ համապատասխան գործով կիրառելիության հարցը լուծելիս դատարանները պետք է համադրեն նախադեպային գործի և քննության առարկա գործի էական նշանակություն ունեցող փաստերը: Այսինքն, դատարանը նախադեպային որոշմամբ տրված օրենքի մեկնաբանության՝ քննվող գործով կիրառելիության հարցը լուծելիս պետք է նախ առանձնացնի այն փաստական հանգամանքները, որոնք էական նշանակություն են ունեցել նախադեպային որոշման կայացման համար և այնուհետև դրանք համադրի քննվող քաղաքացիական գործի փաստական հանգամանքների հետ՝ որոշելով դրանց նույնական լինել կամ չլինելու հարցը»:

Վերադաս դատական ատյանի որոշումների պարտադիրության տեսանկյունից համեմատական իրավագիտությունում առանձնացվում են դատական որոշումներում նախադեպի օգտագործման մի քանի տեսակներ.

1. Նախադեպը իրավական դաշտի մի բաղադրիչ է, որի հիման վրա դատարանն իրավունք ունի կայացնել դատական որոշում:
2. Նախադեպը դատարանի համար պարտադիր է, մինչև ստորադաս դատարանի կողմից չեն բերվում պատճառաբանված հիմնավորումներ այն չկիրառելու վերաբերյալ: Օրինակ, Գերմանիայում և Լեհաստանում դատարանները պետք է հետևեն նախադեպին, եթե չկան դրանից հրաժարվելու հատուկ պատճառներ:
3. Նախադեպը դատարանի համար պարտադիր է, և դատարանը պետք է կայացնի որոշում դրա հիման վրա՝ անկախ դրա չկիրառման պատճառաբանվածությունից[24]:

Մայրցամաքային երկրների իրավական համակարգերում կիրառվում է առաջին տարբերակը, հազվադեպ դեպքերում են կիրառվում երկրորդ կամ երրորդ տեսակները: Երրորդ տեսակը ենթադրում է

24 Cross R., Harris J. Op. cit. p. 34.

պարտադիր նախադեպի տեսությունը: Ընդհանուր իրավունքի երկրները հետևում են երրորդ մոդելին, սակայն բարձր դատարաններն իրավասու են նաև հրաժարվել դրանց կիրառումից: Այս իմաստով, այն հանգամանքը, որ դատարանն իրավունք ունի փոխել իր պարտադիր նախադեպը, որոշ հեղինակների կողմից մեկնաբանվում է որպես պարտադիր նախադեպի տեսությունից շեղում[25]: Սույն պայմաններում, ընդհանուր իրավունքի դատարանների կողմից նախադեպային իրավունքի կիրառումից հրաժարվելու փաստն ամրապնդում է առաջին երկու համակարգերի միջև էական տարբերությունների աստիճանական վերացման միտումը[26]:

25 Նույն տեղում, էջ 104:

26 Տե՛ս, the case of the Netherlands, Maarten Bos, “The Interpretation of International Judicial Decisions”, 33 (1981), p. 16.

ԴԱՏԱԿԱՆ ՆԱԽԱԴԵՊԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ

Անհրաժեշտ է փաստել, որ նախադեպ հասկացությունը նույնական չէ ներպետական և միջազգային իրավական համակարգերի համար: Միջազգային իրավունքում նախադեպ եզրն ունի իր մեկնաբանությունը: Մասնավորապես, յուրովի մեկնաբանությունը պայմանավորված է միջազգային իրավունքի սուբյեկտների կազմով, նրանց յուրահատկություններով, միջազգային իրավունքի՝ որպես ինքնուրույն իրավական համակարգի առանձնահատկություններով: Պետությունները՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտներ, մեծ դերակատարություն ունեն միջազգային պրակտիկայի ձևավորման և միջազգային իրավունքի նորմերի ստեղծման գործում: Միջազգային իրավունքում նորմաստեղծ գործունեության եղանակներից մեկն է համարվում սովորութային իրավական եղանակը, որի համար հիմք է հանդիսանում պետությունների փորձը: Այս հիմնավորմամբ որոշ հեղինակներ «նախադեպ» եզրին տալիս են տարածական մեկնաբանություն՝ ներառելով դրանում ոչ միայն դատական որոշումները, այլև պետությունների պայմանագրային պրակտիկան և, ընդհանրապես, պրակտիկան:

Այսպիսով, կարելի է առանձնացնել ներպետական իրավական և միջազգային իրավական նախադեպեր: Սակայն պետք է ընդգծել, որ միջազգային իրավունքում դատական նախադեպը չի նույնանում ընդհանուր իրավական համակարգ ունեցող երկրներում առկա մոտեցմանը: Միջազգային իրավունքում բացակայում է պարտադիր նախադեպը՝ *stare decisis*[27]: Սույն սկզբունքի կիրառման անթույլատրելիությունը միջազգային իրավունքում պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

- միջազգային իրավունքում գոյություն չունի որևէ օրենսդիր մարմին, որը կարողանա վերացնել անհիմն կամ արդիականությունը կորցրած որոշումները,
- ի տարբերություն ներպետական դատարանների, միջազգային դատարանների իրավազորությունը սահմանափակ է կոնկրետ գործի քննությամբ. այսպես, ՄԱԿ-ի միջազգային դատարանի Ստատուտի 59-րդ հոդվածի համաձայն՝ «Դատարանի որոշումը

27 David J. Bederman, International Law Frameworks. Foundation Press, 2001, p. 45.

պարտադիր է միայն վեճի մասնակից պետությունների համար սույն վեճի շրջանակներում»[28]: Մինչդեռ դատարանը վճիռ կայացնելիս հղում է կատարում իր նախկին որոշումներին շարունակականությունը պահպանելու նպատակով[29]:

Դատարանի Ստատուտի 38-րդ հոդվածի համաձայն՝ «Դատարանն իրեն հանձնված հարցերը լուծելիս կիրառում է.

ա. ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ բնույթի միջազգային կոնվենցիաները, որոնք սահմանում են վիճող պետությունների կողմից որոշակիորեն ճանաչված կանոններ,

բ. որպես իրավական նորմ ճանաչված միջազգային սովորույթը՝ որպես համընդհանուր պրակտիկայի ապացույց,

գ. քաղաքակիրթ ազգերի կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքները,

դ. 59-րդ հոդվածում նախատեսված վերապահումով, դատական որոշումները և հանրային իրավունքի բնագավառում առավել հայտնի տարբեր ազգերի մասնագետների դոկտրինաները՝ որպես իրավական նորմերի որոշակիացման երկրորդական միջոց»:

Այսպիսով, ՄԱԿ-ի միջազգային դատարանի ստատուտը միջազգային իրավունքի աղբյուրների շարքում ընդգրկում է նաև միջազգային դատարանի որոշումները: Այդուամենայնիվ, դատարանի որոշումները չեն հանդիսանում իրավունքի աղբյուր, քանի որ դրանք չեն կարող ստեղծել միջազգային իրավունքի նորմեր, սակայն մեծ ազդեցություն են ունենում միջազգային իրավունքի նորմերի ստեղծման կամ փոփոխման գործընթացի վրա:

Այսպես, միջազգային դատարանի նորմաստեղծ գործընթացի մասին խոսել հնարավոր չէ, քանի որ միջազգային իրավունքում դրա համար անհրաժեշտ է պետությունների կամքի համաձայնեցում, իսկ դատարանի որոշումները պարտադիր են միայն գործի կողմ հանդիսացող պետությունների համար, երրորդ պետությունների համար այդ որոշումներն իրավական պարտադիր ուժ չունեն: Սակայն այդ գործընթացը կարող է միախառնվել նորմաստեղծ գործունեության սովորութային եղանակի հետ: Որքան էլ պարտադիր լինեն դատարանի որոշումները երրորդ պետությունների համար, այդուամենայնիվ, դրանք, լինելով միջազգային իրավունքը կիրառող ակտեր, որի

28 Միաժամանակ, Ստատուտի 28-րդ հոդվածը թույլատրում է որոշումների օգտագործումը՝ որպես իրավունքի երկրորդական աղբյուր:

29 Ե. Կիրակոսյան, «ՄԱԿ-ի Միջազգային դատարանի որոշումների իրավական նշանակությունը միջազգային իրավունքում», 2005:

ընթացքում հստակեցվում, կոնկրետացվում են միջազգային իրավունքի նորմերը, հետագայում անպայմանորեն ներդրվում են միջազգային հարաբերությունների պրակտիկայում:

Հետևաբար, պետք է փաստել, որ միջազգային դատարանների որոշումները, չունենալով միջազգային իրավունքի նոր նորմեր ստեղծելու իրավասություն, պարտադիր իրավական ուժ ունենալով միայն գործի կողմ հանդիսացող պետությունների համար, չափազանց կարևոր են միջազգային իրավունքի կիրառման արդյունավետությունն ապահովելու համար և, հանդիսանալով միջազգային իրավունքը կիրառող և կոնկրետացնող ակտեր, չեն կարող չազդել միջազգային հարաբերությունների այլ մասնակիցների վրա, կանխորոշել հետագա միջազգային պրակտիկան:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների առանձնահատկությունները: Եվրոպական դատարանի կողմից ընդունված որոշումներն առանձնանում են մի շարք հատկանիշներով.

1. Դրանք ունեն ինցիդենտային բնույթ, այսինքն՝ անխզելիորեն կապված են կոնկրետ գործի հետ: Սակայն կոնկրետ գործը լուծելիս Եվրոպական դատարանը հաճախ ստիպված է լինում մեկնաբանել 1950թ. Կոնվենցիայի դրույթները, և այդ մեկնաբանությունները Եվրոպական դատարանի վճիռներին հաղորդում են նորմատիվային բնույթ:
2. Չնայած այն հանգամանքին, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների ճնշող մեծամասնությունը ռոմանագերմանական իրավական ավանդույթներ ունեցող պետություններ են, այդուհանդերձ, Ստրասբուրգի դատարանի վճիռներն իրենց բովանդակությամբ ավելի մոտ են ընդհանուր իրավունքի երկրների դատական ակտերին: Մասնավորապես, վճիռներում դատարանը հղումներ է կատարում իր նախորդ որոշումներին: Եթե նախկինում դատարանը որոշում է կայացրել քննվող գործին փաստական հանգամանքներով նմանվող այլ գործով և նոր որոշմամբ այն ուրիշ հետևությունների է հանգում, ապա Եվրոպական դատարանը նոր վճռի մեջ, որպես կանոն, ցույց է տալիս գործերը միմյանցից տարբերող էական հատկանիշները: Այսպիսով, Եվրոպական դատարանի որոշումները նախադեպային նշանակություն ունեն հետագայում այդ մարմնի կողմից քննվող գործերի համար, թեև Եվրոպական կոնվենցիան ինքնին Եվրոպական դատարանին չի կաշկանդում իր նախորդ վճիռներով:

Կոնվենցիան Եվրոպական դատարանին ընձեռել է իրավասությամբ ոչ միայն կիրառելու Կոնվենցիայի դրույթները, այլև դրանք մեկնաբանելու (Կոնվենցիայի 32-րդ հոդված)։ Այդպիսով, Եվրոպայի խորհրդի շրջանակներում Կոնվենցիայի մեկնաբանման իրավասությամբ օժտված է բացառապես Եվրոպական դատարանը։ Դատարանի կողմից որոշումների կամ վճիռների ընդունման դեպքերում Դատարանի կողմից կիրառվում են իր՝ Դատարանի կողմից նախկինում կայացված դատական ակտերում արտահայտված իրավական կարծիքներ։

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌՆԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ, ԴԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Եվրոպական դատարանի վճիռների իրավաբանական բնույթի, դերի և նշանակության վերաբերյալ տեսական գրականության մեջ արտահայտվել են տարաբնույթ, անգամ իրարամերժ դիրքորոշումներ:

Մի խումբ տեսաբանների կարծիքով, Եվրոպական դատարանը չի ստեղծում իրավական նորմեր, այլ կիրառում է Եվրոպական կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների նորմերը: Դատարանը զբաղվում է ոչ թե իրավաստեղծ, այլ իրավակիրառ գործունեությամբ: Ավելին, Կոնվենցիան Եվրոպական դատարանին լիազորել է հենց կիրառել դրա դրույթները, այլ ոչ ստեղծել նոր իրավական նորմեր: Կոնվենցիայի 32-րդ հոդվածի համաձայն՝ «Դատարանի իրավազորությունը տարածվում է այն բոլոր հարցերի վրա, որոնք վերաբերում են Կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների դրույթների մեկնաբանմանը և կիրառմանը, և որոնք իրեն հանձնվում են 33-րդ, 34-րդ, 46-րդ և 47-րդ հոդվածների դրույթներով նախատեսված դեպքերում»:

Այս հեղինակները Եվրոպական դատարանի հնարավոր իրավաստեղծ գործունեությունը համարում են հակասող միջազգային իրավունքի հանրաճանաչ՝ պետությունների ինքիշխան հավասարության սկզբունքին, որը նախ և առաջ նշանակում է, որ իրենց փոխհարաբերություններում պետությունները պարտավոր են հարգել միմյանց պատմական և սոցիալ-քաղաքական զարգացման տարբերությունները, դիրքորոշումների և հայացքների բազմազանությունը, ներպետական օրենքներն ու վարչական կանոնները, պետությունների իրավունքը իրենց հայեցողությամբ և միջազգային իրավունքի համաձայն որոշելու և իրականացնելու այլ պետությունների հետ հարաբերությունները[30]:

Միջազգային իրավունքի նորմերը ձևավորվում են առաջին հերթին պետությունների փոխհարաբերությունների ընթացքում: Միջազգային իրավունքի նորմը կարող է պարտավորեցնել պետությանը միայն այն դեպքում, երբ վերջինս իր համաձայնությունը կհայտնի տվյալ իրա-

30 Международное право. Под. ред. В. И. Кузнецова, М., Юристъ, 2001, с. 125-126.

վական նորմի վերաբերյալ, քանի որ «միջազգային հարաբերություններում գոյություն չունի ներպետական օրենսդիր մարմնի նման մարմին, որը կստեղծեր միջազգային իրավունքի սուբյեկտների համար պարտադիր իրավական նորմեր: Միջազգային իրավունքի գլխավոր առանձնահատկություններից մեկն այն է, որ դրա նորմերը ձևավորվում են տվյալ իրավական համակարգի սուբյեկտների կողմից»[31]:

Հետևաբար, այս խումբ հեղինակները եզրակացնում են, որ եթե նույնիսկ ենթադրվի, որ Եվրոպական դատարանի կողմից ձևավորվում է իրավական նորմ, ապա վերջինս չի պարտադիր չի լինի Կոնվենցիայի անդամ պետությունների համար, քանի որ Եվրոպական դատարանի որոշումներն ու վճիռները հանդիսանում են իրավակիրառ, այլ ոչ իրավաստեղծ գործունեության արդյունք, և հետևաբար, տվյալ դատական ակտերը չեն կարող պարունակել իրավական նորմեր:

Գերիշխող է նաև Կոնվենցիայի 46-րդ հոդվածի մեկնաբանության վրա հիմնվող տեսակետը, համաձայն որի՝ Եվրոպական դատարանի վճիռը՝ որպես կոնկրետ գանգատի քննության արդյունք, ի պաշտպանություն կոնկրետ անձի կոնվենցիոն իրավունքի, ունի միայն *inter partes* բնույթ, այսինքն իրավական հետևանքներ է առաջացնում միայն տվյալ գործով կողմերի համար և նրանց հարաբերություններում: Հետևաբար, վճիռների պարտադիր իրավաբանական ուժը սահմանափակված է *ratione personae, ratione materie, ratione temporis* շրջանակներով[32]: Ավելին, որոշ հեղինակներ պնդում են, որ Եվրոպական դատարանի վճռի պարտադիրությունը սահմանափակվում է միայն վճռի եզրափակիչ մասի կատարմամբ, այն է՝ Դատարանի կողմից արձանագրված իրավունքի խախտման ճանաչում, արդարացի փոխհատուցում և խախտված իրավունքի վերականգնմանն ուղղված համապատասխան միջոցառումների իրականացում, ինչը չի ներառում նույնիսկ վճռի պատճառաբանական մասում ամրագրված իրավական դիրքորոշումների ընդունում:

Մյուս կողմից էլ, տեսաբանների մի խումբ գտնում է, որ նման մեկնաբանությունները հետևանք են Եվրոպական դատարանի դերի և գործառույթների սահմանափակ ընկալման: Համաձայն վերջինների տեսակետի, Եվրոպական դատարանն անհատական գանգատների քննության գործընթացքում կատարում է երկակի գործառույթ: Առա-

31 Тункин Г. И. Теория международного права. М., Зеркало, 2000, с. 75.

32 Ekart Klein. Should the binding effect of the judgment of the European Court of Human Rights be extended? // Protecting human rights: the European perspectives, studies in memory of Ryssdal. Carl heymanns Verlag, 2000, p.706.

ջինը՝ իրականացնում է անհատական վերահսկողություն, երկրորդը՝ անհատական վերահսկողության միջոցով կատարում է մարդու իրավունքների վերաբերյալ ընդհանուր սկզբունքներ սահմանելու և պաշտպանության նվազագույն մակարդակը որոշելու առաքելություն: Սույն գործառույթները փոխկապակցված են: Հետևաբար, Եվրոպական դատարանի վճիռն ունի երկակի բնույթ. մի կողմից այն կոչված է պաշտպանելու կոնկրետ անձի խախտված կոնվենցիոն իրավունքը, մյուս կողմից՝ Կոնվենցիայի դրույթների մեկնաբանության միջոցով ձևավորելու մարդու իրավունքների պաշտպանության համընդհանուր չափորոշիչներ: Առաջին դեպքում դրանք հանդես են գալիս որպես իրավակիրառ ակտեր, երկրորդ դեպքում՝ որպես Կոնվենցիայի մեկնաբանման ակտեր:

Եթե Դատարանի վճիռը որպես իրավակիրառ ակտ իրավական հետևանքներ է առաջացնում միայն կողմերի համար և դրա բովանդակությունը հանգում է վճռի կատարման կապակցությամբ ծագող պարտավորություններին, ապա Դատարանի վճիռը որպես Կոնվենցիայի մեկնաբանման ակտ իրավական հետևանքներ է առաջացնում նաև այլ մասնակից պետությունների համար, քանի որ Կոնվենցիայի մեկնաբանությունը կատարվում է բոլոր մասնակից պետությունների համար: Սա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ Դատարանի կողմից Կոնվենցիայի դրույթների կոնկրետացման արդյունքում ձևավորված իրավական դիրքորոշումը չի կարող ունենալ անհատական որոշակիացված բնույթ, քանի որ Կոնվենցիայի դրույթները չեն կարող Դատարանի կողմից տարաբնույթ կերպով մեկնաբանվել յուրաքանչյուր կոնկրետ մասնակից պետության առնչությամբ:

Իր վճիռների իրավաբանական բնույթին Դատարանն անդրադարձել է մի շարք գործերով: Մասնավորապես, Կարներն ընդդեմ Ավստրիայի գործով վճռում Դատարանն ամրագրել է. «Եվրոպական դատարանի վճիռները խնդիր ունեն ոչ միայն լուծելու քննության ընդունված կոնկրետ գործը: Դրանք նաև ուղղված են ավելի մեծ ու լայն խնդրի կարգավորմանը, այն է՝ Կոնվենցիայի նորմերի մեկնաբանմանը, պահպանմանը և զարգացմանը՝ դրանով իսկ նպաստելով Պայմանավորվող պետությունների կողմից իրենց ստանձնած պարտավորությունների կատարմանը»[33]: Հետևաբար, Դատարանը փաստել է, որ չի կարող կոնկրետ գործով վճիռ կայացնել մեկուսացված

33 Karner v. Austria, no. 40016/98. Judgment of July 24, 2003, para. 26.

և առանց այնպիսի հետևանքների, որոնք դուրս են գալիս կոնկրետ գործի շրջանակներից[34]:

Բացի այդ, մեկ այլ գործով Եվրոպական դատարանն արտահայտել է այլ տեսակետ: «Գործնականում Եվրոպական դատարանի բոլոր վճիռներն ունեն նախադեպային նշանակություն, քանի որ համարժեք իրավիճակներում, որպես կանոն, Եվրոպական դատարանը կայացնում է համարժեք վճիռ: Սա ամենևին չի նշանակում, որ Դատարանը կաշկանդված է իր նախկին դիրքորոշումներով և պրակտիայում հանդիպում են նման դեպքեր: Իր վճիռների նախադեպային նշանակության վերաբերյալ կարծիք է հայտնել ինքը՝ Դատարանը՝ նշելով, որ Կոնվենցիայի 34-րդ հոդվածի հիման վրա Դատարանի դերը չէ վերացական կարծիքներ արտահայտելը, այլ առանձին գործի հանգամանքների առնչությամբ Կոնվենցիայի կիրառումն է: Այնուամենայնիվ, կոնկրետ գործերով կայացված վճիռներն այն կամ այն չափով ստեղծում են նախադեպեր և այն գործով վճիռը ոչ տեսականորեն և ոչ գործնականում չի կարող կառուցվել, ձևակերպվել այնպես, որ կանխվի դրա կիրառումը հետագա գործերում»[35]:

Եվրոպական դատարանի համար իր վճիռների նախադեպային նշանակությունը կայանում է նրանում, որ Դատարանը ոչ միայն, որպես կանոն, կաշկանդված է իր նախկին վճիռներում արտահայտած իրավական դիրքորոշումներով և դրանցում ձևավորված սկզբունքներով, այլև նրանով, որ նախկին վճիռը հենց իր համար հանդիսանում է նմանատիպ գործի լուծման տիպային օրինակ:

Մինչդեռ այլ հարց է Եվրոպական դատարանի վճիռների «նախադեպային նշանակություն» հասկացության բովանդակությունն ու ծավալը մասնակից պետությունների դատարանների կապակցությամբ: Սույն դեպքում «նախադեպային նշանակություն» հասկացությունն իր դասական իմաստով չի դրսևորվում: Ներպետական դատարանների տեսանկյունից, որոնք ունեն Եվրոպական դատարանի իրավազորությունից էապես տարբերվող այլ իրավազորություն և Եվրոպական դատարանի հետ չեն գտնվում աստիճանակարգային

34 Դրա ապացույցն է նաև մասնակից պետությունների ներպետական իրավական համակարգում Դատարանի վճիռների ունեցած ազդեցության կապակցությամբ Կոնվենցիայի մասնակից պետությունների պրակտիկայի ուսումնասիրության արդյունքները, որոնք ցույց են տալիս, որ Դատարանի վճիռները դուրս են գալիս կողմերի միջև հարաբերությունների շրջանակից և ձեռք են բերում de facto erga omnes բնույթ: Իրավունքի խախտման վերաբերյալ Դատարանի վճիռները հաճախ անվերապահորեն հանգեցնում են առանձին պետություններում օրենսդրական փոփոխությունների:

35 Pretty v. United Kingdom, no. 2346/02. Judgment of April 29, 2002, para. 75.

հարաբերությունների մեջ, կարևորվում է ոչ թե Եվրոպական դատարանի եզրահանգումը կամ դրանում արտահայտված *ratio decidenti*-ն, այլ *judicial dicta*-ն՝ իրավական խնդիրների վերաբերյալ Դատարանի բազմակողմանի քննարկման արդյունքը, և obiter dicta-ն՝ Դատարանի կարծիքները իրավունքի հարցերի վերաբերյալ, որոնք անմիջականորեն չեն վերաբերում քննության առարկա գործին:

Սա նշանակում է, որ ներպետական դատարանները կոնկրետ գործով որոշում կայացնելիս կաշկանդված չեն իրավունքի խախտման փաստի կապակցությամբ Դատարանի այս կամ այն վճռում կատարված եզրահանգմամբ, ներպետական դատարանները, հաշվի առնելով համապատասխան իրավական հիմնախնդրի վերաբերյալ Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները և սկզբունքները, գործելով դրանց համապատասխան և միաժամանակ հավասարակշռելով գործում առկա տարաբնույթ շահեր իրենց իրավազորության շրջանակներում, այդ սկզբունքները կիրառելով տվյալ գործի առնչությամբ՝ ինքնուրույն գնահատական են տալիս կոնկրետ գործի հանգամանքներին:

Սույն պայմաններում անհրաժեշտ է շեշտել, որ անհիմն է տարանջատել պատասխանող պետության դեմ կայացված վճիռները և այլ մասնակից պետությունների դեմ կայացված վճիռները: Եվրոպական դատարանի նախադեպային նշանակությունը հավասարապես վերաբերում է բոլոր վճիռներին՝ անկախ նրանից, թե որ մասնակից պետության առնչությամբ են դրանք կայացված, ինչը նշանակում է, որ ցանկացած մասնակից պետության առնչությամբ կայացված վճիռ նախադեպային նշանակություն ունի մյուս բոլոր մասնակից պետությունների համար:

Միաժամանակ, ելնելով կենդանի օրգանիզմ դոկտրինից՝ Եվրոպական դատարանը երբեմն շեղվում է իր նախադեպից՝ ապահովելու Կոնվենցիայի մեկնաբանության վրա սոցիալական փոփոխությունների ազդեցությունը և տվյալ ժամանակի իրավիճակին համապատասխանությունը:

Հատկանշական է, որ Եվրոպական դատարանի գործունեության տեսանկյունից կարելի է խոսել ոչ թե Դատարանի կողմից ստեղծված նախադեպային իրավունքի, այլ մեկնաբանությունների նախադեպերի մասին: Ինչպես վերը նշվեց, Դատարանն օժտված է ոչ միայն Կոնվենցիայի կիրառման, այլև Կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների իրավական նորմերը մեկնաբանելու իրավասությամբ: Պրոֆեսոր Բերգերովը նշում է, որ «Իրավունքի տեսությունում

բացի դատական նախադեպից գոյություն ունեն նաև իրավական նորմերի մեկնաբանությունների նախադեպեր: Այդ արդյունքը ձևավորվում է դատական մարմինների կողմից իրավական նորմերի մեկնաբանման ընթացքում: Մեկնաբանման նախադեպը որոշակիորեն տարբերվում է դատական նախադեպից առ այն, որ առավելապես ուղղված է այս կամ այն օրենքի բովանդակության տրամաբանական խնդիրներին»[36]: Միջազգային պայմանագրերի կիրառումն անխզելիորեն կապված է դրանց մեկնաբանման հետ: Միջազգային իրավական նորմերի մեկնաբանման տակ հասկացվում է դրանց բովանդակության, նպատակների պարզաբանում՝ հաշվի առնելով կոնկրետ իրավիճակի համար դրա կիրառման հետևանքները[37]: Հետևաբար, մեկնաբանությունը նպատակ ունի բացահայտել պայմանագրի տեքստի իմաստը, մինչդեռ կիրառումը ենթադրում է կողմերի համար վրա հասնող հետևանքների հաստատում:

Նախքան Կոնվենցիայում տեղ գտած այս կամ այն դրույթը կիրառելը, Եվրոպական դատարանը պետք է մեկնաբանի միջազգային իրավունքի համապատասխան նորմը, մասնավորապես՝ դրա իմաստը, ոգին և նորմատիվ բովանդակությունը: Կոնվենցիան պարունակում է հասկացություններ, որոնց շրջանակը հնարավոր է բացահայտել միայն Եվրոպական դատարանի կողմից իրականացված մեկնաբանման արդյունքում: Օրինակ, Կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով խոշտանգումների, դաժան կամ անմարդկային վերաբերմունքի հասկացությունը, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով քաղաքացիական իրավունքները, քրեական մեղադրանքը կամ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն անձնական կյանքի հասկացությունը:

Այն հեղինակները, ովքեր Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը դիտարկում են որպես մեկնաբանության նախադեպ, Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի բովանդակությունը հանգեցնում են նրան, որ այն իրենից ներկայացնում է Կոնվենցիայի ամբողջական մեկնաբանություն, որի միջոցով բացահայտվում են կոնվենցիոն նորմերի բովանդակությունը, ծավալն ու իմաստը:

Որոշ տեսաբանների կարծիքով, սակայն, Դատարանը հայտնում է նաև այնպիսի իրավական դիրքորոշումներ, որոնք ըստ էության կոնվենցիոն այս կամ այն նորմի մեկնաբանության արդյունք չեն: Եվրոպական դատարանի պրակտիկայում ձևավորվել են որոշակի

36 Венгеров А. Б. Теория государства и права. М., Новый юрист, 1998, с. 421.

37 Лукашук О. И. Толкование норм международного права. М., 2002, с. 14.

իրավական սկզբունքներ, մարդու իրավունքների պաշտպանության որոշակի չափորոշիչներ, իրավունքների սահմանափակման թույլատրելի սահմանները գնահատելու մեթոդներ, զարգացել են տարբեր իրավական ինստիտուտներ, որոնք, ըստ էության, կապված չլինելով այս կամ այն կոնվենցիոն կոնկրետ նորմի բովանդակության մեկնաբանության հետ, անժխտելիորեն կազմում են Դատարանի նախադեպային իրավունքի բաղկացուցիչ մասը: Օրինակ, իրավունքները սահմանափակող միջոցառումների և դրանցով հետապնդվող իրավաչափ նպատակի միջև արդարացի հավասարակշռության սկզբունքը, իրավական որոշակիության, լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության սկզբունքը:

Որոշ հեղինակներ, մերժելով Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը որպես ներպետական իրավունքի աղբյուր ճանաչելը, միաժամանակ փորձում են այն ներկայացնել որպես «իրավական կարգավորիչ»: «Միջազգային նորմերի, այդ թվում Եվրոպական դատարանի պրակտիկայում ձևավորված իրավական նորմերի կարգավորիչ կիրառելիությունը թույլ է տալիս դրանք որակել որպես իրավական կարգավորիչներ, այլ ոչ որպես իրավունքի աղբյուր»[38]:

Տեսական աղբյուրներում քննարկվում է նաև այն մոտեցումը, որ ներպետական իրավունքի աղբյուր դիտարկվող վճիռների շրջանակը սահմանափակվում է միայն տվյալ մասնակից պետության առնչությամբ կայացված վճիռներով:

Այդուամենայնիվ, հարկ է նկատի ունենալ, որ Եվրոպական դատարանը Կոնվենցիային մասնակից պետությունների ստանձնած պարտավորությունների կատարումը երաշխավորելու նպատակով մշակում և ամրագրում է իրավական դիրքորոշումներ, որոնցում ձևավորված մարդու իրավունքների պաշտպանության չափորոշիչներն ընդհանուր են բոլոր մասնակից պետությունների համար: Եվրոպական դատարանի այս կամ այն մասնակից պետության առնչությամբ կայացված վճռում արտահայտած իրավական դիրքորոշումը հավասարապես, առանց երկակի չափորոշիչների, կիրառելի է ցանկացած այլ պետության առնչությամբ կայացվող վճռում:

Անհրաժեշտ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ Եվրոպայի խորհրդի ցանկացած անդամ պետություն իր ներպետական օրենս-

38 В. А. Канашевский, Прецедентная практика Европейского суда по правам человека как регулятор гражданских отношений в Российской Федерации // «Журнал российского права», 2003, 4(76), с. 126.

դրությունը և իրավակիրառ պրակտիկան, ի կատարումն իր դեմ կոնկրետ գործով կայացված վճռի, կոնվենցիոն պահանջներին համապատասխանեցնելիս պարտավոր է առաջնորդվել ոչ միայն տվյալ վճռում արտահայտված իրավական դիրքորոշումներով, այլև այլ մասնակից պետությունների դեմ կայացված վճիռներում արտահայտված՝ համակարգային փոխկապվածության մեջ գտնվող իրավական դիրքորոշումներով: Անհնարին է կատարել կոնկրետ վճիռն առանձին վերցրած՝ առանց հաշվի առնելու խնդրո առարկայի վերաբերյալ հետևողականորեն զարգացված նախադեպային իրավունքն իր ամբողջության մեջ:

Բացի դրանից, ենթադրվում է, որ ներպետական համապատասխան սուբյեկտների կողմից Կոնվենցիայի կիրառումն անխուսափելիորեն հանգեցնում է նաև Դատարանի նախադեպային իրավունքի կիրառմանը: Իրավակիրառողը չի կարող սահմանափակվել միայն իր պետության առնչությամբ կայացված վճիռները հաշվի առնելով. նա կոնվենցիոն դրույթը կիրառելիս պարտավոր է հաշվի առնել տվյալ իրավական խնդրի վերաբերյալ Եվրոպական դատարանի ձևավորած նախադեպային իրավունքը կազմող բոլոր իրավական դիրքորոշումները՝ իրենց ամբողջության և համակարգային փոխկապվածության մեջ:

Անհրաժեշտ է ընդգծել նաև, որ մասնակից պետության համար կառաջանան միևնույն իրավական հետևանքները՝ անկախ նրանից, թե այդ պետությունն անտեսում է իր դեմ կայացված վճռում առկա՝ Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները, թե այլ մասնակից պետությունների դեմ կայացված վճիռներում արտահայտված իրավական դիրքորոշումները: Երկու դեպքում էլ տվյալ պետությունը կճանաչվի որպես իրավախախտ:

Դատարանի կողմից կոնվենցիոն հասկացությունների մեկնաբանության արդյունքում ձևավորվում են իրավական դիրքորոշումներ, որոնք հետագայում օգնում են Դատարանին առավել արդյունավետ և օպերատիվ կարգով քննել կոնկրետ գործերը: Իրավական դիրքորոշումների տակ թաքնվում են իրավակիրառ պրակտիկայի ընթացքում ձևավորված դիրքորոշումները, որոնց վրա հիմնվում են կոնկրետ գործ քննելիս, իրավական նորմերի և հասկացությունների մեկնաբանությունների բազմիցս կիրառմամբ հաստատված չափանիշները՝ ձևավորված կոնկրետ տեսակների գործերի քննության պրակտիկայի ընթացքում:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՈՒԺԸ ՀՀ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մինչև Կոնվենցիային կից 11-րդ Արձանագրության ուժի մեջ մտնելը Եվրոպական դատարանի մեկնաբանությունների պարտադիրության հարցը որոշակիորեն կանոնակարգված էր: Ի տարբերություն դրա, 11-րդ Արձանագրությամբ խմբագրված Կոնվենցիայի տեքստն այդ մասին որևէ դրույթ չի պարունակում:

Մասնավորապես, մինչև 11-րդ Արձանագրության ուժի մեջ մտնելը Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում էր, «Յուրաքանչյուր Բարձր պայմանավորվող կողմ ցանկացած ժամանակ կարող է հայտարարություն անել այն մասին, որ նա *ispo facto* և առանց հատուկ համաձայնության ճանաչում է դատարանի պարտադիր իրավասությունը սույն Կոնվենցիայի դրույթների մեկնաբանմանը և կիրառմանը վերաբերող հարցերի նկատմամբ»: Այս դրույթից բխում էր, որ համապատասխան հայտարարություն արած պետությունն այդ փաստի ուժով Եվրոպական դատարանի վճիռներում տրված Կոնվենցիայի մեկնաբանությունները կհամարեր իր համար պարտադիր, և հետևաբար, իր ազգային իրավունքի բաղկացուցիչ մաս: Մինչդեռ 11-րդ Արձանագրության ներմուծումից հետո վճիռներում առկա մեկնաբանությունների պարտադիրության հարցը մնում է չպարզաբանված:

Միաժամանակ, նույն Եվրոպական դատարանն անդրադարձել է իր վճիռների պարտադիրության հարցին մի քանի վճիռներում: Համաձայն Դատարանի, չնայած այն հանգամանքին, որ Դատարանը կաշկանդված չէ իր նախորդ վճիռներով[39], սակայն Դատարանը հետևում և հղում է դրանց՝ ելնելով իրավական որոշակիության պահպանման և Կոնվենցիայի նախադեպային իրավունքի զարգացման անհրաժեշտությունից: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան համարվում է «կենդանի փաստաթուղթ», քանի որ Եվրոպական դատարանի նախկին դատական վճիռները պետք է ժամանակի ընթացքում մեկնաբանվեն դինամիկ և ժամանակին համապատասխան՝ ապահովելու առավելագույն պաշտպանություն:

Դատարանի նախադեպային իրավունքի իրավաբանական ուժի վերաբերյալ կարծիքների համաձայն՝ ներպետական մակարդակում

39 Եվրոպական դատարանի կանոնադրության 51-րդ հոդված, 1-ին մաս:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքն օժտված չէ պարտադիր իրավաբանական ուժով, հետևաբար ներպետական իրավակիրառ սուբյեկտներն ազատ են դրան հետևելու և դրանով առաջնորդվելու հարցում: Ներպետական դատարանի դատավորն ազատ է որոշելու՝ առաջնորդվել այդ նախադեպով, թե ոչ[40]:

Ըստ երկրորդ տեսակետի, չնայած նրան, որ ներպետական մակարդակում Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքն օժտված չէ պարտադիր իրավաբանական ուժով, սակայն որոշակի հանգամանքներում ներպետական իրավակիրառ սուբյեկտները, մասնավորապես դատարանները, պարտավոր են հաշվի առնել Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը: Սույն տեսակետը ենթադրում է, որ Եվրոպական դատարանի վճիռները հաշվի առնելու պարտավորությունը բացարձակ չէ, նման պարտավորությունը չի կարելի հանգեցնել դրանք մեխանիկորեն կիրառելուն: Ներպետական իրավակիրառ սուբյեկտների կողմից Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի կիրառումն իրենից ներկայացնում է որոշակի բարդ, ստեղծագործական գործընթաց, որում իրավակիրառողը պետք է ոչ թե անվերապահորեն առաջնորդվի Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներով և մոտեցումներով, այլ պետք է Եվրոպական դատարանի վճիռներն իր համար որպես ուղենիշ ընտրի՝ գնահատելով դրանց՝ մարդու իրավունքների պաշտպանության համար ունեցած դրական արդյունքը: Նախադեպային իրավունքը հաշվի առնելու պարտավորության հիմքում պետք է ընկած լինի մեկ նպատակ. այն է՝ տվյալ անձի համար ապահովել առավելագույն պաշտպանություն՝ այդ անձի շահերը հավասարակշռելով այլ անձանց շահերի հետ:

Համաձայն երրորդ տեսակետի, Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը ներպետական մակարդակում ունի պարտադիր իրավաբանական ուժ՝ հանդիսանալով Կոնվենցիայի բաղկացուցիչ մասը: Այս տեսակետին հարում են այն տեսաբանները, ովքեր նախադեպային իրավունքի բովանդակությունը հանգեցնում են մեկնաբանության նախադեպի՝ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը ներկայացնելով որպես Կոնվենցիայի ամբողջական մեկնաբանություն: Համաձայն այս տեսակետի, Դատարանի նախա-

40 Georg Ress. The European Convention of Human Rights and States Parties: The Legal Effect of the Judgments of the European Court on Human Rights on the Internal law and before Domestic Courts of the Contracting States // Protection of Human Rights in Europe. Limits and Effects, p. 240.

դեպային իրավունքն անբաժանելի է Կոնվենցիայից և այդպիսով պետությունների համար պարտադիր է այնքան, որքան Կոնվենցիան: Կոնվենցիոն դրույթների մեկնաբանությունները, որոնք զարգացվել են մի շարք վճիռներում և դուրս են եկել կոնկրետ գործի փաստերի շրջանակներից, դիտվում են որպես այդ դրույթների բաղկացուցիչ մաս և որպես այդպիսին ձեռք բերում պարտադիր իրավաբանական ուժ[41]:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կոնվենցիայի անդամ են տարբեր ժողովրդավարական արժեքներ և մոտեցումներ ունեցող 47 պետություններ, որոնք դրան են միացել տարբեր պատմական ժամանակաշրջաններում, Դատարանը որդեգրել է մասնակից պետությունների հայեցողության շրջանակի դոկտրինը, որով և հիմնավորվում է Դատարանի նախադեպային իրավունքի իրավաբանական ուժի պարտադիրության անհնարինությունը: «Հայեցողության շրջանակը» Դատարանի պրակտիկայում վերաբերում է հայեցողության ազատությանը, որը վերապահված է մասնակից պետությունների ներպետական մարմիններին տեղական կարիքները, պայմանները և բարոյական արժեքները գնահատելու հարցում: Սուբսիդիարության և պետական կոնսենսուսի գաղափարները հաճախ վկայակոչվում են հայեցողության դոկտրինը պաշտպանելու համար[42]:

Հայեցողության շրջանակի էությունը կայանում է նրանում, որ մինչ մարդու իրավունքների ոլորտում համաեվրոպական եզրաբանության մշակումը, այն նպաստում է տարբեր իրավական մշակույթների միասնականացմանը և ներդաշնակեցմանը, պաշտպանում է ազգային առանձնահատկությունները: Այն թույլ է տալիս գտնել փոխզիջում Կոնվենցիայով նախատեսված ընդհանուր կանոնների և տվյալ պետության կոնկրետ իրավիճակի միջև: Այն բխում է Եվրոպական դատարանի համակարգի հիմքում ընկած սուբսիդիարության սկզբունքից, որը ենթադրում է, որ Եվրոպական դատարանը մասնակից պետություններում մարդու իրավունքների պաշտպանությանը միջամտում է միայն այն ժամանակ, երբ տվյալ մասնակից պետությունը ենթադրաբար թերանում է Կոնվենցիայով ստանձնած իր պարտավորությունները կատարելու հարցում: Ընդ որում, մասնակից պետություններն ազատ են կոնվենցիոն իրավունքներն ու ազատությունները իրենց իրավազորության ներքո գտնվող անձանց

41 Jorg Polakiewicz. The obligations of States Arising from the Judgments od ECHR. Summary.

42 George Letsas. Two Concepts of the Margin of Appreciation // Oxford journal of legal studies. Vol 26, no. 4(2006), p. 706.

երաշխավորելու համար միջոցների ընտրության հարցում: Եվրոպական դատարանի նպատակը չէ միատեսակ մոտեցումներ պարտադրել տարբեր պետություններին, այլ ձևավորել նվազագույն չափորոշիչներ, որոնք կապահովեն մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության համաեվրոպական շրջանակներ ու սահմաններ: Հետևաբար, նախադեպային իրավունքի ազդեցությունը ներպետական իրավունքի վրա սկզբունքորեն հանդիսանում է եվրոպական իրավունքի ոչ թե միասնականացման, այլ ներդաշնակեցման գործոն:

Այսպիսով, Դատարանը, որպես Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարման ապահովման երաշխավոր, իր նախադեպային իրավունքի միջոցով սահմանում է մարդու իրավունքների պաշտպանության նվազագույն չափորոշիչներ, մեկնարկային մակարդակ՝ պահանջելով ոչ թե այդ չափորոշիչների պարտադիր կիրառում, այլ որպեսզի ներպետական մակարդակում մարդու իրավունքների պաշտպանությունը չլինի ավելի նվազ իր կողմից սահմանված նվազագույն մակարդակից:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2002թ. ապրիլի 26-ին Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան վավերացնելով՝ ՀՀ իրավական համակարգը համալրվեց կարևորագույն միջազգային իրավական ակտով: Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին հնարավորություն ընձեռնվեց Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների խախտումների դեպքերում դիմել Կոնվենցիայի հիման վրա ստեղծված Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը:

Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության «դատական օրենսգրքի» 15-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված է. «Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով ...Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ»:

Վերոգրյալ նորմի վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել իրավակարգավորման առարկայի վերաբերյալ օրենսդրի հետևյալ մոտեցումները.

- օրենսդիրը որպես ներպետական իրավունքի աղբյուր է դիտարկում ոչ թե Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, այլ Դատարանի կոնկրետ վճիռը.
- դատարանի համար պարտադիր են Եվրոպական դատարանի վճռի հիմնավորումները և ոչ թե Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները,
- Եվրոպական դատարանի վճռի հիմնավորումներին վերագրվում է պարտադիր իրավաբանական ուժ,
- տվյալ գործի քննության ժամանակ պարտադիր են համարվում Եվրոպական դատարանի այն վճռի հիմնավորումները, որոնք կայացվել են նույնանման փաստական հանգամանքներով գործի առնչությամբ:

Տեսական աղբյուրներում քննադատության է արժանացել օրենսդրի այն մոտեցումը, համաձայն որի Եվրոպական դատարանի վճիռների կիրառելիությունը պայմանավորված է փաստական հանգամանքների նույնականությամբ: Տեսակետի հեղինակները պնդում են, որ փաստական հանգամանքների նույնականությունը կիրառելի է ներպետական մակարդակում ստորադաս դատարանների համար: Մինչդեռ Եվրոպական դատարանի առնչությամբ ներպետական դատարանների համար կարևորություն են ստանում Դատարանի վճիռներում արտահայտած իրավական դիրքորոշումները, որոնք ներպետական դատարանների համար պետք է կիրառելի լինեն անկախ գործի փաստական հանգամանքների նմանությունից:

Այնուամենայնիվ, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ Եվրոպական կոնվենցիան հանդիսանում է ՀՀ ներպետական իրավական համակարգի բաղկացուցիչ մաս և ունի գերակայություն ներպետական օրենսդրության նկատմամբ, հետևաբար Եվրոպական դատարանը նույնպես ունի գերակայություն ներպետական դատարանների նկատմամբ: Սույն պայմաններում օրենսդրի մոտեցումն արդարացված է, և կիրառելի է ընդհանուր իրավունքի երկրներում ընդունված այն սկզբունքը, համաձայն որի դատական նախադեպ է հանդիսանում կոնկրետ գործով կայացված որոշումը, որի հիմնավորումները պարտադիր են նմանատիպ փաստական հանգամանքներով գործերով որոշումներ կայացնելիս:

Ավելին, մեկնաբանելով «նույնանման փաստական հանգամանքներով գործ» հասկացությունը Եվրոպական դատարանի դատական ակտի կիրառելիության համատեքստում՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը Ս. Այվազյանի վերաբերյալ գործով 2008թ. մայիսի 23-ի որոշմամբ նշել է. «... ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտը ոչ կիրառելի ճանաչելիս դատարանները չեն կարող բավարարվել կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերությունների պարզ համադրմամբ: Յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքների համակցությամբ եզակի է, ուստի դատարանը պետք է յուրաքանչյուր դեպքում պարզի, թե կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերությունները որքանով են էական: Հակառակ դեպքում, ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասում... ամրագրված իրավանորմը կդառնա անկիրառելի»:

Դրա հետ մեկտեղ, Եվրոպական դատարանի դատական ակտի կիրառելիության հարցը լուծելիս դատարանը պետք է հաշվի առնի նաև այն, թե տվյալ դատական ակտի հիմնավորման բովանդակությունը կազմող ինչպիսի դրույթ է ենթակա կիրառման: Եթե այդ դրույթ իր բնույթով առավել ընդհանրական է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել փոքր ընդհանրություն: Եվ հակառակը, եթե դրույթն իր բնույթով առավել կոնկրետ է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել մեծ ընդհանրություն:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ մասնակից պետությունների ներպետական իրավունքի աղբյուր է հանդիսանում Եվրոպական դատարանի կողմից հետևողականորեն և շարունակաբար ձևավորվող իրավական դիրքորոշումների ընդհանրացված համակցությունը՝ Դատարանի նախադեպային իրավունքը՝ արտացոլված Դատարանի՝ Կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների ենթադրյալ խախտմանը վերաբերող կոնկրետ վճիռներում:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ՀԵՏԵՎԵԼՈՒ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Չնայած նրան, որ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը ներպետական մակարդակում պետությունների համար չունի պարտադիր իրավաբանական ուժ, այդուամենայնիվ, ներպետական մարմինները կրում են այն հաշվի առնելու և դրան հետևելու պարտավորություն: Սա նշանակում է ոչ թե անվերապահորեն, որպես վարքագծի պարտադիր կանոն հիմք ընդունել Եվրոպական դատարանի նախադեպային նշանակության վճիռներում արտահայտված իրավական դիրքորոշումները, այլ մարդու իրավունքների ներպետական պաշտպանության գործառույթն օրենսդիր, գործադիր և դատական մարմինների գործունեության մակարդակում իրականացնել այդ իրավական դիրքորոշումներին համահունչ՝ ապահովելով մարդու իրավունքների պաշտպանության նվազագույն չափանիշներ:

Դրան հետևելու պարտավորության առկայությունը պայմանավորված է հետևյալ գործոններով.

- Կոնվենցիոն դրույթների ձևակերպումներն արդեն իսկ իրենց բնույթով այնպիսին են, որ անհնարին են դարձնում դրանց կատարումն առանց Դատարանի նախադեպային իրավունքը հաշվի առնելու:
- Իրավունքը հաշվի առնելու պարտավորությունը հանդիսանում է նաև միջազգային պարտավորությունները բարեխղճորեն կատարելու՝ մասնակից պետության պարտավորության դրսևորում:
- Կոնվենցիայի կիրառումն առանց իրավունքը հաշվի առնելու ոչ միայն անհնարին է, այլև կարող է հանգեցնել Կոնվենցիայի սխալ կիրառման:

Իրավակիրառ մարմինների կողմից պրակտիկայում նախադեպային իրավունքը հաշվի առնելու պարտավորությունը նշանակում է յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, երբ առկա է հակասություն ազգային իրավունքի նորմի և կոնվենցիոն նորմի միջև, կիրառել Կոնվենցիան՝ հիմք ընդունելով Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը: Իրավակիրառողի համար Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը հաշվի առնելու պարտավորությունը նրանից պահանջում է յուրաքանչյուր դեպքում այս կամ այն իրավական խնդրին

անդրադառնալիս պարզել և իմանալ, թե դրա վերաբերյալ ինչպիսին է Եվրոպական դատարանի մոտեցումը և իր իրավասության շրջանակներում գտնել Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին համահունչ այնպիսի լուծումներ, որոնք հետագայում կկանխեն վեճի շարունակումը Եվրոպական դատարանում:

Միաժամանակ, հարկ է նկատել, որ նշված պարտավորությունը չի կարելի հանգեցնել իրավունքի մեխանիկորեն կիրառմանը: Իրավակիրառողը, հայեցողության ազատության շրջանակներում, հաշվի առնելով ազգային, կրոնական, իրավական առանձնահատկություններն ու բարքերը, հավասարակշռելով գործում առկա տարաբնույթ փաստերը և, միաժամանակ, որպես ուղենիշ ունենալով Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, պետք է ձգտի տվյալ անձի համար ապահովել առավելագույն պաշտպանություն՝ չշեղվելով մարդու իրավունքների պաշտպանության նվազագույն չափանիշներից: Իրավակիրառողը պետք է կողմնորոշվի այնպիսի վճիռների կայացման ուղղությամբ, որոնք համապատասխանում են Եվրոպական դատարանի սահմանած չափորոշիչներին և թույլ չեն տա արդեն արձանագրված խախտումներին համարժեք խախտումներ:

ՀՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ՝ ՔՐԵԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԿԱՅԱՑՐԱԾ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Ինչպես տեսնում ենք ստորև բերված պատկերներից, Եվրոպական դատարանի նախադեպային որոշումներին և Կոնվենցիային հղումներ են պարունակում առավելապես Վճռաբեկ դատարանի որոշումները՝ 48%՝ քրեական, 65%՝ քաղաքացիական և 60%՝ և՛ քրեական, և՛ քաղաքացիական գործերով:

Առաջին ատյանի դատարանի կայացրած որոշումների ցուցանիշներն են համապատասխանաբար՝ 31, 25 և 27 տոկոս:


Էականորեն նվազ է Վերաքննիչ դատարանի համապատասխան որոշումների համամասնությունը նշված երկու ատյանների որոշումների շարքում՝ 21, 10 և 13 տոկոս:

Ընդ որում, քրեական գործերով Վերաքննիչ ատյանի որոշումների համամասնությունը (21%) երկու անգամ գերազանցում է ***քաղաքացիական գործերով*** որոշումների (10%) համամասնությանը: Այս օրինաչափությունը հավանաբար պայմանավորված է քաղաքացիական գործերով Եվրոպական դատարանի որոշումների կիրառության ինչ-ինչ առանձնահատկություններով, քանի որ առաջին ատյանի դատարանի որոշումների թվաքանակը նույնպես նվազում է՝ 31-ից կազմելով 25%: Դրա փոխարեն քաղաքացիական գործերով Վճռաբեկ դատարանի որոշումներն ընդհանուրի 65%-ն են կազմում, ինչը բարձր է առաջին ատյանի որոշումներից մոտ 2.5 և Վերաքննիչ դատարանի որոշումներից շուրջ 5 անգամ:


Պատկեր 1. *Քրեական գործերով կայացված դատական ակտերի համամասնությունն ըստ դատական ատյանների*



Պատկեր 2. *Քաղաքացիական գործերով կայացված դատական ակտերի համամասնությունն ըստ դատական ատյանների*



Պատկեր 3. *Քրեական և քաղաքացիական գործերով կայացված դատական ակտերի համամասնությունն ըստ դատական ատյանների*



Ուսումնասիրվել են ***քրեական գործերով*** 2008-2011թթ. կայացված 61 դատական ակտեր. առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների 19 դատավճիռներ, Վերաքննիչ դատարանի 13 և Վճռաբեկ դատարանի 29 որոշումներ:

Քրեական գործերով կայացված դատական ակտերում

- ակնհայտ է Վերաքննիչ դատարանի հետևյալ «բացասական» ցուցանիշը՝ կողմի՝ Եվրոպական դատարանի նախադեպային որոշմանը կամ Կոնվենցիայի համապատասխան հոդվածին արված հղումներին չանդրադառնալու միտումը: Եթե առաջին ատյանի պարագայում այս ցուցանիշը զրոյական է, Վճռաբեկ դատարանի դեպքում՝ 6 դատական ակտ, ապա Վերաքննիչ ատյանի դեպքում դատարանը չի անդրադարձել կողմի հղումներին 10 դատական ակտերի (2 դեպքում անտեսվել է նախադեպին, 8 դեպքում՝ Կոնվենցիային արված հղումը) շրջանակներում: Իսկ եթե հաշվի առնենք Վերաքննիչ դատարանի որոշումների ցածր թվաքանակը, ապա ստացվում է, որ Վերաքննիչ ատյանի դեպքում կողմի հղումների «անտեսումը» տեղ ունի որոշումների 77%-ում, մինչդեռ Վճռաբեկ ատյանի դեպքում՝ միայն 21%-ում,
- Վերաքննիչ դատարանի ևս մեկ «բացասական» ցուցանիշն է դատական ակտերում բացի Կոնվենցիայից, նաև այլ միջազգային ակտերի կիրառման բացակայությունը: Եթե առաջին ատյանի դատարանի պարագայում առկա է այդպիսի 2, իսկ Վճռաբեկ դատարանի պարագայում՝ 5 դատական ակտ, ապա

Վերաքննիչ դատարանի և ոչ մի համապատասխան որոշում առկա չէ:

- Վերաքննիչ դատարանի դատական ակտերում Կոնվենցիայի և նախադեպային իրավունքի կիրառումն առավել քիչ է արտահայտված (20 դատական ակտերից միայն մեկում):

Աղյուսակ 1. Քրեական գործերով դատական ակտերի դասակարգումը

Դասակարգիչներ	Քրեական գործերով դատական ակտերի քանակն ըստ ատյանների			Քրեական գործերով դատական ակտերի ընդհանուր քանակը
	Առաջին ատյան	Վերաքննիչ ատյան	Վճռաբեկ ատյան	61
Դատարանի հղումներն առանց մեկնաբանությունների				
Հղում է արվել Կոնվենցիային առանց մեկնաբանությունների	3	1	1	5
Հղում է արվել նախադեպին առանց մեկնաբանությունների	0	0	0	0
Հղում է արվել և՛ Կոնվենցիային, և՛ նախադեպին առանց մեկնաբանությունների	1	0	0	1
Դատարանի հղումները մեկնաբանություններով				
Հղում է արվել Կոնվենցիային՝ մեկնաբանություններով	8	1	1	10
Հղում է արվել նախադեպին՝ մեկնաբանություններով	1	0	2	3
Հղում է արվել և՛ Կոնվենցիային, և՛ նախադեպին՝ մեկնաբանություններով	2	1	17	20

Դատարանը չի անդրադարձել կողմի հղումներին				
Դատարանը չի անդրադարձել կողմի հղած նախադեպին	0	2	1	3
Դատարանը չի անդրադարձել կողմի հղած Կոնվենցիայի համապատասխան հոդվածին	0	8	5	13
Դատարանը չի կիրառել կողմի հղած նախադեպը կամ Կոնվենցիայի հոդվածը՝ հիմնավորելով չկիրառելը				
Դատարանը չի կիրառել կողմի հղած նախադեպը, բայց հիմնավորել է չկիրառելը	0	0	1	1
Դատարանը չի կիրառել կողմի հղած Կոնվենցիայի հոդվածը, բայց հիմնավորել է չկիրառելը	0	2	4	6
Կիրառված նախադեպերն ըստ պատասխանող պետության				
Կիրառված նախադեպերը եղել են միայն ՀՀ-ի դեմ	1	0	0	1
Կիրառված նախադեպերը եղել են այլ երկրների դեմ	3	1	18	22
Այլ դասակարգիչներ				
Կողմը հղում է արել նախադեպին կամ Կոնվենցիային, բայց կիրառվել է Վճռաբեկ դատարանի որոշում	0	0	4	4
Բացի Կոնվենցիայից, դատարանը հղում է արել նաև այլ միջազգային ակտի	2	0	5	7

Վերլուծվել են ***քաղաքացիական գործերով*** 2008-2011թթ. կայացված 153 դատական ակտեր. առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների 38 վճիռներ, Վերաքննիչ դատարանի 15 և Վճռաբեկ դատարանի 100 որոշումներ: Ուսումնասիրության առաջին փուլում քաղաքացիական գործերով կայացված դատական ակտերը դասակարգվել են բովանդակային մի շարք չափանիշներով: Դրանք էին՝ գործեր, վերաբերող.

Պետության և հասարակության կարիքների համար օտարմանը	1
Սեփականության իրավունքին	71
Ժառանգման իրավունքին	17
Պայմանագրերից բխող վեճերին	72
Վնաս պատճառելու հետևանքով առաջացող պարտավորություններին	14
Մտավոր սեփականությանը	2
Ոչ նյութական վնասին	1
Սնանկությանը	2
Աշխատանքային իրավունքին	5

Ուսումնասիրված գործերից 37-ը վերաբերել են այլ, վերը չնշված ոլորտների: Չի հայտնաբերվել խոսքի ազատությանը և բաժնետիրական իրավունքին վերաբերող Կոնվենցիայի հղումով որևէ գործ: Ուսումնասիրության ընթացքում չի հաջողվել գտնել ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածով սահմանված ծանրակշիռ հանգամանքներով հիմնավորված դատական ակտեր: Վերլուծության առանձին խումբ են կազմել Վճռաբեկ բողոքը վերադարձնելու վերաբերյալ որոշումները՝ 1115:

Քաղաքացիական գործերով կայացված դատական ակտերում

- ևս «բացասական» է Վերաքննիչ դատարանի՝ կողմի՝ Եվրոպական դատարանի նախադեպային որոշմանը կամ Կոնվենցիայի համապատասխան հոդվածին արված հղումներին չանդրադառնալու միտումը: Վերաքննիչ ատյանի դեպքում կողմի հղումների «անտեսումը» տեղ ունի որոշումների 67%-ում,

առաջին ատյանի դատարանի դեպքում՝ 45%-ում, իսկ Վճռաբեկ ատյանի դեպքում՝ միայն 9%-ում,

- Վճռաբեկ դատարանն առաջատար է Կոնվենցիային և նախադեպին արված հղումների մեկնաբանության առումով. մեկնաբանվել են համապատասխան որոշումների 85%-ը, մինչդեռ առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի պարագայում համապատասխան ցուցանիշերը կազմում են 24% և 27%,
- ինչպես և քրեական գործերով դատական ակտերի պարագայում, քաղաքացիական գործերով որոշումներում ևս Վերաքննիչ դատարանը հակված չէ բացի Կոնվենցիայից, նաև այլ միջազգային ակտեր կիրառել: Եթե առաջին ատյանի դատարանի պարագայում առկա է այդպիսի 2, իսկ Վճռաբեկ դատարանի պարագայում՝ 1 դատական ակտ, ապա Վերաքննիչ դատարանի և ոչ մի համապատասխան որոշում առկա չէ:

Աղյուսակ 2. Քաղաքացիական գործերով դատական ակտերի դասակարգումը

Դասակարգիչներ	Քաղաքացիական գործերով դատական ակտերի քանակն ըստ ատյանների			Քաղաքացիական գործերով դատական ակտերի ընդհանուր քանակը
	Առաջին ատյան	Վերաքննիչ ատյան	Վճռաբեկ ատյան	153
Դատարանի հղումներն առանց մեկնաբանությունների				
Հղում է արվել Կոնվենցիային առանց մեկնաբանությունների	12	0	7	19
Հղում է արվել նախադեպին առանց մեկնաբանությունների	0	0	0	0
Հղում է արվել և՛ Կոնվենցիային, և՛ նախադեպին առանց մեկնաբանությունների	0	0	0	0

Դատարանի հղումները մեկնաբանություններով				
Հղում է արվել Կոնվենցիային՝ մեկնաբանություններով	9	4	80	93
Հղում է արվել նախադեպին՝ մեկնաբանություններով	0	0	2	2
Հղում է արվել և՛ Կոնվենցիային, և՛ նախադեպին՝ մեկնաբանություններով	0	0	3	3
Դատարանը չի անդրադարձել կողմի հղումներին				
Դատարանը չի անդրադարձել կողմի հղած նախադեպին	0	0	0	0
Դատարանը չի անդրադարձել կողմի հղած Կոնվենցիայի համապատասխան հոդվածին	17	10	9	36
Դատարանը չի կիրառել կողմի հղած նախադեպը կամ Կոնվենցիայի հոդվածը՝ հիմնավորելով չկիրառելը				
Դատարանը չի կիրառել կողմի հղած նախադեպը, բայց հիմնավորել է չկիրառելը	0	1	3	4
Դատարանը չի կիրառել կողմի հղած Կոնվենցիայի հոդվածը, բայց հիմնավորել է չկիրառելը	1	0	0	1
Կիրառված նախադեպերն ըստ պատասխանող պետության				
Կիրառված նախադեպերը եղել են միայն ՀՀ-ի դեմ	0	0	0	0
Կիրառված նախադեպերը եղել են այլ երկրների դեմ	0	0	3	3

Այլ դասակարգիչներ				
Կողմը հղում է արել նախադեպին կամ Կոնվենցիային, բայց կիրառվել է Վճռաբեկ դատարանի որոշում	0	0	0	0
Բացի Կոնվենցիայից, դատարանը հղում է արել նաև այլ միջազգային ակտի	2	0	1	3

ՀՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ՝ ՔՐԵԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԿԱՅԱՑՐԱԾ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Վերլուծությունը միտված է բացահայտելու Հայաստանի Հանրապետության դատարանների դատական ակտերում Եվրոպական կոնվենցիայի դրույթների և Եվրոպական դատարանի նախադեպային որոշումների կիրառման հիմնավորվածությունն ու օրինաչափությունները:

1. Դեպքերի մեծամասնությունում ներպետական դատարանների, հատկապես առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների կողմից Կոնվենցիայի կիրառությունը դրսևորվել է Կոնվենցիայի որևէ դրույթի տեխնիկական մեջբերմամբ, որը կրել է ձևական և արհեստական բնույթ: Այդ գործերով դատարանները, որպես կանոն, չեն մեկնաբանել Կոնվենցիայի մեջբերված նորմը և ուղղակիորեն չեն կիրառել այն:

Քրեական գործերով կայացված դատական ակտերից 61-ից 4-ում, քաղաքացիական գործերով կայացված 153 դատական ակտերից առնվազն յուրաքանչյուր երկրորդում դատարանների կողմից մեջբերվում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասն առ այն, որ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդար և հրապարակային քննության իրավունք»:

Օրինակ, Կարեն Լևոնի Սարուխանյանի վերաբերյալ գործով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավճռում դատարանը հետևյալ կերպ է կիրառել Կոնվենցիան. «Նախաքննության մարմնի կողմից Կարեն Սարուխանյանին առաջադրված է ՀՀ Քրեական օրենսգրքի 338 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով մեղադրանք, մինչդեռ նրա արարքում վերը նշված հանցակազմի տարրերից բացակայում են օբյեկտը, օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերը, քանի որ դրանց գոյությունը կարող է հաստատվել միայն Արեն Անանյանի վերաբերյալ քրեական գործի դատաքննության արդյունքներով կայացված դատական ակտով: Վերը թվարկված տարրերից առկա է

միայն սուբյեկտը, սակայն հանցագործության որակումը կոնկրետ հանրորեն վտանգավոր արարքի մեջ հանցակազմի առկայության հավաստումն է, իսկ հանցակազմի տարրերից մեկի բացակայությունը, հակառակը, նշանակում է, որ կատարված արարքը հանցագործություն չէ, ուստի և բացակայում է քրեական պատասխանատվության հիմքը:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք[43]:

ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 17 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, պարզել ինչպես կասկածյալի և մեղադրյալի մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրանց արդարացնող, ինչպես նաև նրանց պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 18 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ, նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի:

Սահմանադրության 21 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի:

ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 23 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը հանդես չի գալիս մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և արտահայտում է իրավունքի շահերը:

43 Տե՛ս, թիվ ԼԴ/0301/01/09 գործով առաջին ատյանի դատարանի դատավճիռը:

ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 366 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը պարտավոր է ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 35 հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով և 2-րդ մասով նախատեսված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում տվյալ դատական նիստում կայացնել արդարացման դատավճիռ:

Հիմք ընդունելով վերը շարադրված պատճառաբանությունները՝ դատարանը գտնում է, որ Կարեն Սարուխանյանի արարքում բացակայում է հանցագործության հատկանիշները՝ հետևաբար նաև հանցակազմը, ինչը հիմք է տալիս ՀՀ Քրեական օրենսգրքի 338 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում նրան ճանաչել անպարտ և արդարացնել: Կարեն Սարուխանյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ստորագրություն չհեռանալու մասին, պետք է վերացնել»:

Առաջին ատյանի դատարանների դատավճիռներից 19-ից 6-ում մեջբերվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասը՝ հիմնավորելու, որ հանցագործության մեջ մեղադրվող անձն ապահովված է եղել իր կարգավիճակից բխող նվազագույն իրավունքներով: Մասնավորապես, դատավճիռներում ամրագրվել է, որ քրեական հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները. իրեն հասկանալի լեզվով անհապաղ և հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին, բավարար ժամանակ և հնարավորություններ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար, պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանի միջոցով, կամ եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը, հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները հարցաքննության ենթարկվեն և իրավունք ունենալու իր վկաներին կանչելու և հարցաքննելու նույն պայմաններում, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները, օգտվելու թարգմանչի անվճար ծառայություններից, եթե չի հասկանում դատարանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով[44]:

Դատարանների կողմից վերոնշյալ դատական ակտերում նշվել է, որ դատական քննության ընթացքում ամբաստանյալը հանգամանորեն տեղեկացել է իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մա-

44 Տե՛ս, օրինակ, թիվ ԵԿԴ 0064/01/08 գործով առաջին ատյանի դատարանի դատավճիռը:

սին, ունեցել է բավարար ժամանակ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար, ունեցել է պաշտպան, մի դեպքում հրաժարվել է պաշտպանից, իսկ գործով հրավիրված վկաները հարցաքննվել են ամբաստանյալի ներկայությամբ և առերես:

Ի հիմնավորումն ամբաստանյալի անմեղության կանխավարկածի, Ա. Դավթյանի վերաբերյալ դատավճռում մեջբերվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի, յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործութուն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան: Դատարանը, ամրագրելով նաև անմեղության կանխավարկածին վերաբերող ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթները, փաստում է, որ դատաքննության ընթացքում հաստատվել է ՀՀ քր. օր. 266 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով հանցագործության կատարման մեջ ամբաստանյալի անմեղությունը՝ մասնավորապես իրացնելու նպատակով թմրամիջոց ձեռք բերելու, պահելու, փոխադրելու և իրացնելու մեջ վերջինիս մեղավորությունը դատարանի կողմից հերքվում է՝ ելնելով դատաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցների ամբողջական, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրության, դրանց վերաբերելիության և թույլատրելիության սկզբունքներից, ներքին համոզմամբ հետևյալ հանգամանքներից. վերոգրյալ հանցագործության առանձնահատկությունը հատուկ նպատակի՝ իրացման առկայությունն է, սակայն սույն գործով ամբաստանյալ Արմեն Դավթյանի կողմից կատարված հանցագործության օբյեկտիվ կողմի մեջ չի կարող ընդգրկվել: Սույն հանգամանքը հիմնվում է այն փաստերի վրա, որ ամբաստանյալը կալանավորված անձին այցելելու ընթացքում անմիջական շփում վերջինիս հետ չէր կարող ունենալ, առավել ևս չէր կարող որևէ բան փոխանցել վերջինիս, ինչի մասին տեղյակ է եղել ամբաստանյալը, դեռ ավելին, ամբաստանյալն անձամբ է թմրամիջոցը տրամադրել քրեակատարողական մարմնի աշխատակցին, երբ նա պահանջել է դատարկել գրպանները, այսինքն թմրամիջոցը հայտնաբերվել է ոչ թե խուզարկության հետևանքով, այլ ամբաստանյալն ինքն է հանձնել այն: Բացի այդ, քննությամբ չի հիմնավորվել, որ ամբաստանյալը թմրամիջոցը պետք է փոխանցեր կալանավորին, քանի որ սույն փաստը մերժում էր ինքը՝ կալանավորը, ինչպես նաև թմրամիջոցը հայտնաբերելուց անմիջապես հետո տրված բացատրությունում ամբաստանյալը հայտնել է, որ ինքը թմրամիջոցը որևէ

մեկին հանձնելու մտադրություն չի ունեցել, ինչը պնդել է նաև հետագա ցուցմունքներում:

Դատանարկոլոգիական փորձաքննությամբ հաստատվել է նաև, որ ամբաստանյալը տառապում է ափիոնային թմրամոլությամբ և ունի հարկադիր բուժման կարիք, որպիսի փաստը ևս հաստատում է, որ թմրամիջոցը ամբաստանյալը պահել է սեփական օգտագործման համար և իրացնելու նպատակ չի ունեցել: Հետևաբար, դատարանի կողմից հաստատվել է, որ ամբաստանյալը կատարել է հանցանք նախատեսված ՀՀ քր. օր. 268 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, այն է՝ առանց իրացնելու նպատակի խոշոր չափերի թմրամիջոց ապօրինի ձեռք բերելը, պահելը փոխադրելը45:

Ուսումնասիրված քաղաքացիական գործերում, հատկապես սեփականության իրավունքին վերաբերող դատական ակտերում, հաճախ մեջբերվում է Կոնվենցիային կից 1-ին Արձանագրության 1-ին հոդվածը: Օրինակ, Լուսինե Հարությունյանն ընդդեմ Ռուզաննա Այվազյանի գործով դատարանը մի շարք օրենքների հոդվածների շարադրանքին զուգահեռ արել էր նաև հետևյալ հղումը. ««Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» Եվրոպական կոնվեցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք»: Սակայն որևէ կերպ չի մեկնաբանվել այդ նորմը կամ չի կիրառվել հարաբերությունների նկատմամբ:

2. Որպես կանոն, դատարանները հակված են մեջբերել Կոնվենցիայի որոշ դրույթներ, այդուհանդերձ, առանց մեկնաբանության: Եթե անգամ տեղի է ունենում նորմի մեկնաբանում, ապա դատարանների կողմից մեկնաբանվում է հենց ներպետական օրենսդրության մեջ ինկորպորացված նորմը՝ ներպետական իրավունքի համատեքստում:

Դատարանների կողմից Եվրոպական կոնվենցիայի դրույթների տեխնիկական և ոչ բովանդակային հղումների ապացույցն են նաև այն դատական ակտերը, որոնցում տեղ են գտնում ***անորոշ հղումներ կամ մեջ են բերվում միմյանց բացառող հոդվածներ:***

Մասնավորապես, Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի Սիլվարդ Հովհաննիսյանն ընդդեմ Մակերեդ ՓԲԸ գործով վճռում դատարանը ներպետական օրենսդրությանը զուգահեռ հղում է արել ***Կոնվենցիայի***

45 Տե՛ս, թիվ ԵԷԴ/0018/01/09 գործով առաջին ատյանի դատարանի դատավճիռը:

6, 13-րդ հոդվածներին և 11-րդ արձանագրությանը՝ չնշելով հոդվածը[46]: Դատարանը նաև նշել է. «Վերոգրյալ միջազգային, սահմանադրական և ներպետական օրենսդրական իրավական նորմերի վերլուծությունը թույլ է տալիս կատարել այն եզրահանգումը, որ անձի դատական պաշտպանության իրավունքն ունի ներպետական՝ սահմանադրությամբ և օրենքով, ինչպես նաև միջազգային նորմերով հստակ ընդգծված պաշտպանություն: Տվյալ պարագայում, հայցվոր Սիլվարդ Հովհաննիսյանը, օգտվելով վերը նշված իրավական նորմերով իրեն ընձեռնված իրավունքի ճանաչման միջոցով օրենքով չարգելված իրավունքի պաշտպանության՝ դատարան դիմելու իրավունքից, դիմել է դատարան՝ իր գույքի նկատմամբ ձեռքբերողի բոլոր իրավունքները դադարած ճանաչելու պահանջով...»:

Այս հղման համատեքստում հարկ է նկատի ունենալ, որ Կոնվենցիային կից 11-րդ արձանագրությունը հիմնականում փոփոխեց կոնվենցիոնալ մեխանիզմի կառուցվածքը գործունեություն ու գործերի քննության ընթացակարգը: Մյուս կողմից, Կոնվենցիայի 6-րդ հոդվածը lex specialis[47] է Կոնվենցիայի 13-րդ հոդվածի համեմատությամբ, հետևաբար՝ դատարանի իրավունքը և մատչելիությունը երաշխավորվում է հենց 6-րդ հոդվածով, այլ ոչ թե 13-րդ հոդվածով:

3. Նախադեպի կիրառման տեսանկյունից խնդրահարույց է այն իրավիճակը, երբ դատարանները, մեջբերելով Կոնվենցիայի որևէ դրույթ, առանց նախադեպային որոշումների կիրառման ինքնուրույն են փորձում մեկնաբանել Կոնվենցիայով երաշխավորված իրավունքները, որի հետևանքով այդ նորմերին տրվում է ոչ պատշաճ բովանդակություն կամ կիրառություն:

Մասնավորապես, թիվ ԱՎԴ1/0141/02/09 քաղաքացիական գործում բողոք բերող անձը վճռի բեկանման հիմքերի շարքում նշել է, որ 19.06.2009թ. դատական նիստի վերաբերյալ պատասխանողներից ոչ մեկը ծանուցված չի եղել, որը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում է: Դատարանը, անդրադառնալով բողոք բերող անձի հիմնավորումներին, բողոքը բավարարել է: Ինչ վերաբերում է պատասխանողների ծանուցմանը, Վերաքննիչ դատարանը ընդունել է, որ նրանց մեծ մասի պատշաճ ծանուցված լինելու վերաբերյալ գործում տեղե-

46 Տե՛ս, թիվ ԵԿԴ/3708/02/08 գործով առաջին ատյանի դատարանի վճիռը:

47 Կոնվենցիայի 6-րդ հոդվածը հատուկ նորմ է 13-րդ հոդվածի առնչությամբ, որը ուժեղացնում է իրավական պաշտպանության միջոցին ներկայացվող պահանջները, եթե գործի քննությունը տեղի է ունենում դատարանի կողմից:

կություններ չկան, բայց որևէ կերպ չի անդրադարձել Կոնվենցիայի 6-րդ հոդվածին[48]:

Մ. Սահակյանի և Վ. Վարդանյանի վերաբերյալ գործով դատավճռում դատարանի կողմից մեջբերվել է նույն հոդվածի պարբերությունը՝ ի հիմնավորումն պաշտպանի՝ դատաբժշկական և դատահետքաբանական փորձաքննություն նշանակելու վերաբերյալ միջնորդության մերժման: Պաշտպանության կողմը միջնորդել էր կատարել սույն փորձաքննությունը՝ պարզելու համար, թե հասցված վնասվածքների պարագայում տուժողը և հարված հասցնողը ինչ դիրքով են գտնվել ավտոմեքենայում, ինչ մեխանիզմով են դրանք պատճառվել, մարմնի վրայի որ վնասվածքներն են համընկնում հագուստի վրա առկա վնասվածքների հետ: Ի լրումն այլ հիմնավորումների, դատարանը նշել էր, որ նման փորձաքննության անցկացումն անհիմն ազդեցություն կունենա գործի՝ ողջամիտ ժամկետում քննության ապահովման վրա, ինչը երաշխավորված է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով: Սույն օրինակից հստակորեն բխում է, որ դատարանը, ողջամիտ ժամկետում գործի քննության թվացյալ ապահովման անհրաժեշտությունից ելնելով, չի բավարել փորձաքննություն նշանակելու վերաբերյալ պաշտպանական կողմի միջնորդությունը, որի առնչությամբ երաշիքներ են ամրագրված հենց նույն 6-րդ հոդվածում[49]:

Մեկ այլ գործով, Լաուրա Հարոյանի վերաքննիչ բողոքը ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 10.11.2009թ. թիվ ԵԿԴ/1928/02/08 վճռի դեմ՝ ըստ հայցի Գագիկ Գրիգորյանի ընդդեմ Լաուրա Հարոյանի՝ ուրիշի ապօրինի տիրապետումից գույքը հետ պահանջելու և վնասի հատուցման պահանջի մասին և ըստ Լաուրա Հարոյանի հակընդդեմ հայցի՝ ընդդեմ Գագիկ Գրիգորյանի, երրորդ անձինք Երևանի քաղաքապետարանի, ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ «Կենտրոն» տարածքային ստորաբաժանման՝ Ֆրիկի փողոցի թիվ 16, 17, 18 և 19 տների ձեղնահարկի 378,65 քմ տարածքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու և Լաուրա Հարոյանի սեփականության իրավունքը Ֆրիկի փողոցի 16, 17, 18 և 19 տների ձեղնահարկի 378,65 քմ տարածքի նկատմամբ ճանաչելու պահանջների մասին գործը, կողմը Առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված խախտումը փորձել էր հիմնավորել Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված արդար դատաքննության իրավունքի խախտմամբ: Դատարանն իր

48 Տե՛ս թիվ ԱՎԴ1/0141/02/09 գործով Վերաքննիչ քրեական դատարանի որոշումը:

49 Տե՛ս թիվ ԵԱԴԴ /0056/01/09 գործով առաջին ատյանի դատարանի դատավճիռը:

հիմնավորումների մեջ նշել էր, որ ««Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ***ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք:*** Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վերաքննիչ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վերաքննիչ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է»[50]:

4. Եվրոպական դատարանի նախադեպային որոշումների կիրառման դեպքում առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների կողմից կոնկրետ նախադեպի կիրառման անհրաժեշտությունը և հիմնավորվածությունը, դրա և քննվող քրեական գործի փաստական հանգամանքների նմանությունը կամ նույնականությունը առավել հաճախ չի մեկնաբանվում, քան Վճռաբեկ դատարանի դեպքում:

Այսպես, Պ. Հակոբյանի, Ա. Հովհաննիսյանի, Գ. Ասատրյանի վերաբերյալ դատական ակտում դատարանը կիրառել էր Եվրոպական դատարանի նախադեպային որոշում՝ հիմնավորելով պաշտպանի ներկայացրած առերես հարցաքննությունների արձանագրություններն անթույլատրելի ապացույց ճանաչելու միջնորդությունը: Գործի հանգամանքներից պարզվել է, որ ամբաստանյալների միջև կատարված առերես հարցաքննությունների ժամանակ քննիչի կողմից արգելվել է միմյանց հարցեր հղել:

Դատարանը, մեջբերելով Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ ենթակետն առ այն, որ հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձի նվազագույն իրավունքն է հարցաքննել իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության և իրավունք ունենալու իր վկաներին կանչելու և հարցաքննելու նույն պայմաններում, ինչ իր դեմ

50 Տե՛ս, թիվ ԵԿԴ/1928/02/08 գործով Վերաքննիչ քրեական դատարանի որոշումը:

ցուցմունք տված անձինք: Հետևում է, որ մեղադրյալն իրավունք ունի հարցեր տալու իր դեմ վկայած անձանց: Սույն որոշմամբ դատարանը հղում է կատարել Ունտերպերտինգերն ընդդեմ Ավստրիայի (*Unterpertinger v. Austria*) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1986 թվականի հոկտեմբերի 22-ի որոշմանը, սակայն դատարանի կողմից չի մանրամասնվել, թե ինչու է կիրառվում կոնկրետ այս որոշումը:

Ճիշտ է, սույն գործը նույնպես վերաբերում էր իր դեմ վկայած անձանց հարցաքննելու իրավունքին և Եվրոպական դատարանն ամրագրել էր Դիմումատուի արդարացի դատաքննության իրավունքի խախտումն առ այն, որ դատական քննության ընթացքում վկաները հրաժարվել են ցուցմունքներ տալ և այդպիսով ամբաստանյալը զրկված է եղել վերջիններիս իր հարցերը հղելու հնարավորությունից: Սույն պայմաններում, որպես այդպիսին, դատական նախադեպը կիրառելի է, սակայն դատական ակտում դրա կիրառության հիմնավորումը բացակայում է[51]:

Ա. Հովսեփյանի վերաբերյալ գործով որոշմամբ դատարանն անդրադարձել է ***գրավը որպես կալանավորման այլընտրանքային միջոց կիրառելու հանգամանքներին***[52]: Մասնավորապես, սույն գործի շրջանակներում ամբաստանյալի նկատմամբ առաջին ատյանի դատարանի կողմից կալանավորումը որպես խափանման միջոց փոխարինվել էր գրավով: Վճռաբեկ բողոք ներկայացրած գլխավոր դատախազի տեղակալի կարծիքով՝ մեղադրյալը գիտակցելով, որ իր կողմից հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարումներից չարամտորեն խուսափելն առաջացնում է քրեական պատասխանատվություն և պատիժ, և նպատակադրվելով տվյալ արարքի հետևանքները վերացված չլինելու հանգամանքը թաքցնելու միջոցով խուսափել դրանից, պատրաստել և քրեական վարույթն իրականացնող մարմնին է ներկայացրել գույքային իրավունք վերապահող կեղծ վճարային փաստաթղթեր՝ իբր խոշոր չափերի վնասը պետությանը հատուցած լինելու վերաբերյալ, որով կատարել է ավելի մեծ հանրային վտանգավորություն ունեցող, ծանր հանցագործությունների թվին դասվող ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված մեկ այլ հանցավոր արարք, որի համար որպես պատիժ կարող է նշանակվել ազատազրկում մեկ տարուց ավելի ժամանակով: Մեղադրյալը դրանով իսկ անօրինական ազդեցություն է գործել

51 Տե՛ս, թիվ ԵԱԴԴ/0004/01/10 գործով դատավճիռը:

52 Տե՛ս, թիվ ԵԿԴ/0633/06/09 գործով Վճռաբեկ դատարանի որոշումը:

օբյեկտիվ ճշմարտությունը պարզելու նպատակով գործով իրականացվող նախաքննության վրա, իսկ պետությանը պատճառված վնասը վերականգնել է միայն այն բանից հետո, երբ քրեական վարույթն իրականացնող մարմինը բացահայտել է նրա կողմից գույքային իրավունք վերապահող կեղծ վճարային փաստաթղթեր պատրաստելու և նախաքննության մարմնին ներկայացնելու փաստը: Բողոք ներկայացնող անձը փաստարկել է նաև, որ մնալով ազատության մեջ՝ մեղադրյալը կարող է ազդել գործով անցնող մյուս անձանց վրա:

Սույն պայմաններում, Վճռաբեկ դատարանը հաստատել է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասից բխում է, որ անձի կալանավորման հարցը լուծելիս ՀՀ իրավասու դատարանները լիազորված են քննարկել դատաքննությանը մեղադրյալի ներկայանալը երաշխավորող այլընտրանքային միջոցների կիրառման հնարավորությունը, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենդրության 134-րդ հոդվածի համաձայն՝ կալանքի այլընտրանքային միջոց է համարվում գրավը:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանի կողմից մեջբերվել է Եվրոպական դատարանի որոշում՝ մեկնաբանելով այն, որ «Կոնվենցիան չի պարտադրում դատարանին յուրաքանչյուր կալանավորվածի տրամադրել որոշակի երաշխիքներով ազատ արձակվելու հնարավորություն. դատարանը պարտավոր է միայն քննարկել և լուծել այն հարցը, թե արդյոք հնարավոր է անձին ազատ արձակել այդ թվում՝ որոշակի այլընտրանքային երաշխիք ստանալով: Ուստի անձին երաշխիքով ազատ արձակելն առանձին դեպքերում կարող է ճանաչվել անթույլատրելի, երբ կոնկրետ փաստերով հիմնավորվում է, որ այլընտրանքային երաշխիքն ի զորու չէ կանխել անձի ոչ իրավաչափ վարքագիծը նրան ազատ արձակելու դեպքում»: Ի հիմնավորումն սույն կարծիքի՝ Վճռաբեկ դատարանի կողմից վկայակոչվել էին Ալեքսանդր Մակարովն ընդդեմ Ռուսաստանի[53], Մամեդովան ընդդեմ Ռուսաստանի[54] և Սուլաոջան ընդդեմ էստոնիայի[55] գործերով վճիռները:

Մինչդեռ վերոնշյալ գործերով որոշումներում Եվրոպական դատարանն ամրագրել է, որ ցանկացած պայմաններում անձին կալանավորելիս կամ կալանավորման ժամկետը երկարացնելիս իրավասու դատարանները պարտավոր են դիտարկել դատարանում անձի ներկայությունն ապահովելու համար այլընտրանքային միջոցների

53 Ալեքսանդր Մակարովն ընդդեմ Ռուսաստանի, 2009թ. մարտի 12, թիվ 15217/07:

54 Մամեդովան ընդդեմ Ռուսաստանի, 2006թ. հունիսի 1, թիվ 7064/05:

55 Սուլաոջան ընդդեմ էստոնիայի, 2005թ. փետրվարի 15, թիվ 55939/00:

կիրառման հնարավորությունը: Սույն իրավական դրույթը չի նշանակում միայն «իրավունք ողջամիտ ժամկետում դատական քննության» կամ «ազատվելու իրավունքը նախքան դատաքննությունը», այլև հաստատում է, որ ազատ արձակումը կարող է պայմանավորված լինել դատարան ներկայանալու որոշակի երաշխիքներով: Վերոնշյալ բոլոր գործերում Եվրոպական դատարանի կողմից ճանաչվել է անձնական ազատության իրավունքի խախտում, քանի որ ներպետական իրավասու մարմինները անձի ազատության իրավունքը սահմանափակելիս չեն անդրադարձել վերջինների՝ դատական քննության ներկայանալու այլընտրանքային երաշխիքների ուսումնասիրությանը: Ավելին, Սուլաոջան ընդդեմ էստոնիայի գործով ներպետական դատարանի կողմից անձի նկատմամբ կալանավորումը ընտրվել է որպես խափանման միջոց կարճ ձևական հիմնավորմամբ, առ այն, որ կալանավորումը հիմնավորված է, քանի որ մեղադրյալը նախկինում դատված է եղել, մշտական բնակության և աշխատանքի վայր, ընտանիք չի ունեցել, և կարող էր կատարել նոր հանցագործություններ կամ թաքնվել քննությունից: Ըստ Եվրոպական դատարանի, մշտական բնակության վայր չունենալն ինքնին չի կարող գնահատվել որպես փախուստի վտանգ, ինչպես նաև աշխատանք և ընտանիք չունենալը չի նշանակում, որ անձը հակված է նոր հանցագործություններ կատարելու[56]:

Գործերից մեկում ներպետական դատարանի կողմից դիմումատուի նկատմամբ կալանավորումն ընտրվել է որպես խափանման միջոց այն պատճառաբանությամբ, որ մեղադրյալի հանցակիցը թաքնվել է քննությունից և վերջինի թաքնվելու պոտենցիալ վտանգ է առկա եղել: Եվրոպական դատարանն ամրագրել է, որ հանցակցի թաքնվելը դեռևս հիմք չէ եզրակացնելու, որ մեղադրյալը նույնպես կարող է թաքնվել իշխանություններից: Ներպետական դատարանները պարտավոր են վստահորեն ներկայացնել կոնկրետ փաստեր՝ ի հիմնավորումն իրենց կասկածի, որ մեղադրյալը կարող է թաքնվել քննությունից, խանգարել քննության բնականոն ընթացքը կամ կատարել նոր հանցագործություններ: Դատարանն ամրագրել է, որ ներպետական իշխանությունների վրա է դրված կալանավորման համար որոշիչ կոնկրետ փաստերի հաստատման պարտականությունը: Նման դեպքերում ապացուցման բեռը մեղադրյալի վրա դնելը հավասարազոր է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի դրույթի անտեսման, որը կալանավորումը դիտարկում է որպես ազատության իրավունքի

56 Նույն տեղում, կետ 64:

սահմանափակման բացառիկ միջոց՝ թույլատրելի սպառիչ թվարկված և հստակ որոշված դեպքերում[57]:

Համաձայն Եվրոպական դատարանի դիրքորոշման՝ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելիս պետք է հաշվի առնվեն մեղադրյալի անձնական հատկանիշները և գնահատվեն այլ ապացույցների ամբողջության մեջ: Վերոգրյալ գործով ներպետական իշխանությունները հաշվի չեն առել այն հանգամանքը, որ դիմումատուն ունեցել է մշտական բնակության և աշխատանքի վայր, երկու անչափահաս երեխաներ, հիվանդ հայր: Բացի այդ, մեղադրյալը փախչելու հնարավորություն ունենալու պայմաններում նման քայլի չի դիմել և մնացել է վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ: Սույն պայմաններում Դատարանի կողմից արձանագրվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի խախտում:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանի կողմից վկայակոչված գործերի փաստական հանգամանքներն էականորեն տարբերվում են խնդրո առարկա գործի փաստական հանգամանքներից: Դատարանի կողմից պարզապես մեջբերվել է կիրառված վճիռներում առկա Կոնվենցիայի դրույթի կապակցությամբ Եվրոպական դատարանի ընդհանուր մեկնաբանությունը, ինչը չի կարող համարվել Եվրոպական դատարանի նախադեպի կիրառություն, քանի որ նախադեպի՝ որպես իրավունքի աղբյուրի կիրառության հիմքում ընկած է դատական այնպիսի որոշումների ընտրությունը, որոնք ոչ միայն համապատասխանում են իրենց փաստական հանգամանքներով, այլև դատարանի կողմից ստացել են միատեսակ լուծում:

5. Ի հակադրություն վերը նշված օրինաչափության, ՀՀ դեմ կայացված վճիռների առկայության պարագայում դատարաններն առավել հակված են հիմնավորել կիրառվող նախադեպի և քննվող գործի փաստական հանգամանքների նմանությունը կամ նույնականությունը:

Պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից խուսափելու համար պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերում կիրառվում է Բայաթյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով Եվրոպական դատարանի որոշումը: Վերջինս վերաբերում է Եհովայի վկայի, ով, ելնելով իր կրոնական համոզմունքներից, հրաժարվում էր անցնել պարտադիր զինվորական ծառայություն և քրեական պատասխանատվության է ենթարկվել զինվորական ծա-

57 Մամեդովան ընդդեմ Ռուսաստանի, 2006թ. հունիսի 1, թիվ 7064/05, կետ 75:

ռայությունից խուսափելու համար: Եվրոպական դատարան է ներկայացվել բողոք՝ Կոնվենցիայի 9-րդ հոդվածի՝ մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի խախտման ճանաչման պահանջով: Հիմնվելով *X. v. Austria* գործով Հանձնաժողովի որոշման վրա, 9-րդ հոդվածը մեկնաբանվել է Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 3-րդ մասի b ենթակետի լույսի ներքո, համաձայն որի՝ պարտադիր կամ հարկադիր աշխատանքը չի ներառում զինվորական բնույթի ցանկացած ծառայություն, իսկ այն երկրներում, որտեղ ճանաչվում է զինվորական ծառայությունից հրաժարվելը համոզմունքներից ելնելով, պարտադիր զինվորական ծառայության փոխարեն նշանակված ծառայությունը[58]:

Հանձնաժողովի նման մոտեցումը հաստատվել է նաև *X v. Federal Republic of Germany* գործում, որտեղ դիմումատուն հրաժարվել էր այլընտրանքային ծառայություն անցնելուց[59]: *Conscientious objectors v. Denmark* գործում հանձնաժողովը դարձյալ հաստատեց, որ Կոնվենցիան չի պաշտպանում համոզմունքների հիման վրա պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու իրավունքը[60]: Հետևաբար, Եվրոպական դատարանը գտել էր, որ զինվորական ծառայությունից հրաժարվելու համար քրեական պատասխանատվությունը չի հանգեցնում Կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտման[61]:

Ժ. Քառյանի վերաբերյալ գործով կիրառվել է Բայաթյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործը: Գործի փաստական հանգամանքների համաձայն՝ Ժիրայր Քառյանը, լինելով «Եհովայի վկա», կրոնական համոզմունքներից ելնելով, հրաժարվել է անցնել զինվորական կամ այլընտրանքային ծառայություն: Ի հիմնավորումն դատավճռում արտահայտած դիրքորոշման, դատարանի կողմից մատնանշվել է, որ նման մոտեցում է արտահայտվել Բայաթյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով Դատարանի որոշման մեջ: Դատավճռում տրվել է նաև նախադեպի կիրառման հիմնավորում, առ այն, որ վերոգրյալ գործով դիմումատուն նույնպես «Եհովայի վկա» էր, ով գիտակցաբար հրաժարվում էր զինվորական ծառայությունից իր կրոնական հայացքների պատճառով: Այդպիսով,

58 no. 5591/72, Commission decision of 2 April 1973, Collection 43, p. 161.

59 X v. Federal Republic of Germany, no. 7705/76, Commission decision 5 July 1977, Decisions and Reports (DR) 9, p. 196.

60 Conscientious objectors v. Denmark, no. 7565/76, Commission decision 7 March 1977, DR 9, p. 117.

61 A v. Switzerland, no. 10640/83, Commission decision of 9 May 1984, DR 38, p. 219.

Բայաթյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով Դատարանի նախադեպը սույն քրեական գործով կիրառելի էր[62]:

6. Որոշումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Կոնվենցիայի խախտումների մատնանշումներն առավել հաճախ տեղ են գտնում վերաքննիչ բողոքներում, որոնք, սակայն, իրենց հետագա պատասխանը դատարանի որոշմամբ չեն ստանում:

Ուսումնասիրված դատական ակտերից միայն մեկում է Վերաքննիչ դատարանն իր իրավական դիրքորոշումն արտահայտել՝ կիրառելով Եվրոպական դատարանի նախադեպային որոշումները: Մնացած դեպքերում վերաքննիչ բողոքում Կոնվենցիայի դրույթների՝ առաջին ատյանի դատարանի կողմից խախտված լինելու փաստին Վերաքննիչ դատարանը պատասխանել է՝ հիմնվելով միայն ներպետական օրենսդրությանը կամ, հազվադեպ դեպքերում, Վճռաբեկ դատարանի որոշումներին:

Օրինակ, Դավիթ Ավանյանի գործով վերաքննիչ բողոքում պաշտպանի կողմից բարձրացվել էր մեղադրական դատավճռի չպատճառաբանված լինելու հանգամանքը՝ որպես Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը կողմի փաստարկին պատասխանելու համար չի կիրառել Եվրոպական դատարանի որևէ նախադեպ, այլ միայն ամրագրել է, որ ստորադաս դատարանը, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում ստուգման ենթարկելով քրեական գործի հիմքում դրված ապացույցների ձեռքբերման աղբյուրները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով թույլատրելիության, վերաբերելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, ղեկավարվելով օրենքով, ներքին համոզմամբ, ամբաստանյալ Դավիթ Ավանյանի մեղավորության վերաբերյալ հանգել է ճիշտ հետևության, նրան մեղսագրված արարքի քրեաիրավական գնահատականը ճիշտ է տրվել, ուստի ամբաստանյալի նկատմամբ արդարացման դատավճիռ կայացնելու կամ դատավճիռը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու հիմքերը բացակայում են, իսկ դատավճիռն այդ մասով օրինական և հիմնավորված է[63]:

62 Տե՛ս, թիվ ԵԿԴ 0048/01/08 գործով առաջին ատյանի դատարանի դատավճիռը, Հավելված 1:

63 Տե՛ս, թիվ ԵԷԴ/0176/01/10 գործով Վերաքննիչ դատարանի որոշումը:

Վերաքննիչ դատարանի՝ Հ. Քամալյանի վերաբերյալ կայացրած դատական ակտում մատնանշվել է ամբաստանյալի ***արդարացի դատաքննության իրավունքի*** խախտումը, համաձայն որի, առաջին ատյանի դատարանում ամբաստանյալի պաշտպանի միջնորդությունը վկաներ հրավիրելու և հարցաքննելու վերաբերյալ դատարանի կողմից մերժվել է: Սույն քրեական գործով ամբաստանյալին մեղադրանք էր առաջադրված «Սև ջուր» գետից ձուկ և խեցգետին որսալիս 20-25 մետր հեռավորության վրա նկատելով իր համագյուղացի Ա. Հակոբյանին՝ նրան սպանելու դիտավորությամբ իր մոտ եղած 16 մմ տրամաչափի մեկփողանի ողորկափող հրազենով վերջինի ուղղությամբ կրակելու և սպանելու համար: Դեպքից 10 օր առաջ Հ. Քամալյանը գնացել է Ա. Հակոբյանի տուն և պահանջել «Սև ջուր» գետից ձուկ և խեցգետին չորսալ, վիճաբանել է վերջինի հետ և բռունցքով հարվածել նրա ճակատին, միաժամանակ սպառնացել սպանել նրան, եթե շարունակի ձուկ և խեցգետին որսալ նշված գետում: Առաջին ատյանի դատարանում պաշտպանության կողմից միջնորդություն է ներկայացվել դատարան հրավիրել թվով չորս վկաների, ովքեր նախաքննության ընթացքում հարցաքննվել են և հայտնել, որ ամբաստանյալի և տուժողի միջև հարաբերությունները ընկերական են եղել, դեպքից մի քանի օր առաջ նրանց տեսել են ձկնորսական ցանցը միասին մաքրելիս: Առաջին ատյանի դատարանի կողմից միջնորդությունն առանց որևէ պատճառաբանության մերժվել է:

Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով այս հարցին, նշել է, որ Եվրոպական դատարանը բազմիցս պետությունների և ներպետական դատարանների ուշադրությունն է հրավիրել վկաներին լսելու պարտականության վրա, ինչն արդար դատաքննության իրավունքի արդյունավետ իրականացման հիմնական երաշխիքներից է: Վերաքննիչ դատարանի կողմից մատնանշվել է Կրաքսին ընդդեմ Իտալիայի գործով Եվրոպական դատարանի որոշումը, որտեղ դիմումատուն ներկայացրել էր իր արդար դատաքննության իրավունքի խախտում ճանաչելու պահանջ, քանի որ դատարանում չէին հարցաքննվել պաշտպանության կողմի վկաները: Դատարանի կողմից խախտում չի ճանաչվել այն պատճառաբանությամբ, որ դիմումատուն ներպետական դատարանում չի մատնանշել այն հանգամանքները, որոնց վերաբերյալ պաշտպանության կողմից հրավիրված վկան պետք է վկայություն տար: Հետևաբար, Դիմումատուն չի հիմնավորել, որ վկայի հարցաքննությունը անհրաժեշտ էր գործով ճշմարտությունը բացահայտելու համար, ինչը կհանգեցներ պաշտպանության իրավունքի խախտմանը:

Վերաքննիչ դատարանը կիրառել է սույն որոշումը՝ հիմնավորելու համար հակառակը. այն է՝ առաջին ատյանի դատարանում պաշտպանության կողմի միջնորդությունը հիմնավորվել է այն հանգամանքով, որ վկաները դատարանին կարող էին հայտնել տեղեկություններ ամբաստանյալի և տուժողի անձնական հարաբերությունների վերաբերյալ, որով և հիմնավորվելու էր հանցագործության սուբյեկտիվ կողմի բացակայությունը: Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ սույն գործով վկաներին հրավիրելն ու հարցաքննելը պայմանավորված է եղել ճշմարտությունը պարզելու հետ: Վերաքննիչ դատարանը նշել է, որ քրեաիրավական որակումը պետք է հիմնված լինի գործով ձեռք բերված բոլոր փաստական տվյալների, այդ թվում՝ վկաների ցուցմունքների վրա:

Վերաքննիչ դատարանի կողմից կիրառվել է Պոպովն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության գործով Եվրոպական դատարանի որոշումը, որտեղ Դատարանի կողմից ճանաչվել է Դիմումատուի արդար դատաքննության իրավունքի խախտում առ այն, որ Դիմումատուի կողմից մատնանշած վկաները դատարանում չեն հարցաքննվել, այն դեպքում, երբ վերջինների ցուցմունքները եղել են գործին վերաբերելի, ինչը հաստատվել է դատարանի կողմից: Սույն գործում Դիմումատուն ներպետական դատարանի կողմից դատապարտվել էր սպանության համար, և պաշտպանության կողմից հրավիրված վկաներից երեքի ցուցմունքները դատարանի կողմից անարժանահավատ էին համարվել, քանի որ նրանք ամբաստանյալի հարազատներն էին և դատարանի գնահատմամբ պարզապես միտված էին պաշտպանել վերջինին, մինչդեռ մյուս երկու վկաները, որոնք չնայած այն հանգամանքին, որ դատական նիստերի օրերին եղել էին դատարանում, դատարանի առջև չեն հարցաքննվել: Դատարանի գնահատմամբ, «մերժելով լսել վկաների ցուցմունքները՝ առաջին ատյանի դատարանը չի քննարկել այն հարցը, թե արդյոք դրանք կարևոր էին սույն գործի շրջանակներում: Սակայն այն հանգամանքը, որ պաշտպանության կողմի միջնորդությունները այդ անձանց հարցաքննելու վերաբերյալ բավարարվել են ինչպես նախաքննության, այնպես էլ դատական քննության ժամանակ, նշանակում է, որ ներպետական իշխանությունները ընդունում են, որ դրանք վերաբերելի են սույն գործին: Սույն պայմաններում Դատարանն արձանագրել է արդար դատաքննության իրավունքի խախտում, քանի որ դիմումատուի դատապարտումը հիմնված է եղել հակասական ապացույցների վրա, իսկ վկաների հարցաքննության մերժումն առանց դրանց՝ գործին վերաբերելիության

պարզման հանգեցրել է պաշտպանության իրավունքի սահմանափակման»[64]:

Հատկանշականն այն է, որ Վերաքննիչ դատարանի կողմից չի տրվել Եվրոպական դատարանի որոշման կիրառման հիմնավորումը: Դատական ակտում պարզապես մեջբերվել են որոշման հատվածներ, առանց դրանց կիրառման անհրաժեշտության մեկնաբանության: Այդուամենայնիվ, սույն նախադեպային որոշման կիրառումը, մեր կարծիքով, տեղին է, քանի որ առաջին ատյանի դատարանի կողմից վկաներին դատարանում հարցաքննելու միջնորդությունը մերժելիս դատարանի որոշումը պատճառաբանված չի եղել, պարզապես հիմնվել է կողմերի հետ քննարկելու փաստի վրա: Մինչդեռ փաստաբանի ներկայացրած միջնորդության վերաբերյալ մեղադրողն արտահայտել է կարծիք, ըստ որի, այդ անձանց հրավիրելու և հարցաքննելու անհրաժեշտություն չկա, քանի որ ամբաստանյալին մեղադրանք չի առաջադրվել տուժողին ծեծելու և մարմնական վնասվածք հասցնելու համար, և այս ամենը որևէ կապ չունի նրա կողմից սպանություն կատարելու հետ:

Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ մեղադրողի սույն դիրքորոշումը չէր կարող դատարանի համար որոշիչ լինել պաշտպանի միջնորդությունը մերժելու համար, քանի որ ամբաստանյալին առաջադրված մեղադրանքի ծավալում ընդգրկված է եղել նաև տուժողին ծեծի ենթարկելու, մարմնական վնասվածք հասցնելու և սպանության սպառնալիք տալու հանգամանքը, բացի այդ, սույն դրվագով ինչպես նախաքննական մարմինը, այնպես էլ ընդհանուր իրավասության դատարանը հաստատել են ամբաստանյալի մեղավորությունը դիտավորությամբ սպանություն կատարելու մեջ: Վերաքննիչ դատարանը փաստել է, որ ընդհանուր իրավասության դատարանը արդարացի դատաքննության իրավունքի ապահովվման անհրաժեշտությունից ելնելով, պետք է հրավիրեր և հարցաքններ նշված վկաներին, քանի որ նրանք ամբաստանյալի և տուժողի փոխհարաբերությունների մասին նախաքննության ընթացքում հաղորդել են այնպիսի տվյալներ, որոնք էական նշանակություն ունեն մեղադրանքի հիմքում դրված ապացույցների արժանահավատությունը ստուգելու և գործով ճիշտ դատական ակտ կայացնելու համար: Սույն հիմնավորումից ելնելով՝ Վերաքննիչ դատարանն ի ապահովումն պաշտպանության իրավունքի լիարժեք իրականացման, բավարարել է պաշտպանության կողմի

64 Popov v. Russia, no. 26853/04, Judgment of 13 July 2006, paras. 187-188:

միջնորդությունը՝ հրավիրելով և հարցաքննելով պահանջված բոլոր վկաներին[65]:

7. Վճռաբեկ դատարանի որոշումներում արձանագրվել է Կոնվենցիայի և Եվրոպական դատարանի որոշումների կիրառման ամենաբարձր ցուցանիշը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանի քրեական պալատի որոշումների ուսումնասիրությամբ արձանագրվել է նաև նախադեպի պատշաճ կիրառման առավել բարձր որակ:

Ամբաստանյալի պաշտպանության իրավունքին և մեղադրանքի ծավալներին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Ա. Պապյանի գործով որոշմամբ[66]: Սույն քրեական գործի շրջանակներում ամբաստանյալ Ա. Պապյանին մեղադրանք էր առաջադրվել շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով սպանության փորձ կատարելու համար առ այն, որ վերջինը իր համագյուղացի Բ. Հակոբյանին սպանելու դիտավորությամբ գնացել է գյուղի կենտրոնական հրապարակ, որտեղ իր կողմից վարվող ավտոմեքենայից հանել է ապօրինի կերպով ձեռք բերված հրազեն հանդիսացող «KM-1797» տեսակի ատրճանակը և հինգ անգամ դիտավորությամբ կրակել է Բ. Հակոբյանի վրա: Այսինքն, չնայած ամբաստանյալին մեղադրանք է առաջադրվել շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով սպանության փորձի համար, այդուամենայնիվ, նրան փաստացիորեն մեղսագրվել է միայն ապօրինի կերպով ձեռք բերված հրազեն հանդիսացող ատրճանակից սպանելու դիտավորությամբ Բ. Հակոբյանի վրա հինգ անգամ կրակելու հանգամանքը: «Շատերի կյանքի համար վտանգավոր եղանակի» հատկանիշը բնութագրող և այդ հատկանիշի առկայությունը հաստատող որևէ փաստական տվյալ Ա. Պապյանին առաջադրված մեղադրանքում չի նկարագրվել, հետևապես և Ա. Պապյանին չի մեղսագրվել:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով Կամասինսկին ընդդեմ Ավստրիայի գործով Եվրոպական դատարանի որոշումը, հաստատել է, որ մեղադրական եզրակացությունն այն դատավարական փաստաթուղթն է, որով ամփոփվում են նախնական քննության արդյունքները, ինչպես նաև հիմնավորվում են քննիչի ենթադրությունները՝ մեղադրյալի մեղավորության և նրա արարքների իրավաբանական որակման մասին: Մեղադրական եզրակացության կարևորության

65 Տե՛ս, թիվ ԱՐԴ/0125/01/10 գործով վերաքննիչ դատարանի որոշումը:

66 Տե՛ս, թիվ ՏԴ/0115/01/09 գործով Վճռաբեկ դատարանի որոշումը:

մասին է վկայում այն հանգամանքը, որ դրանով են ընդգծվում քրեական գործի դատական քննության սահմանները: Այն կարևորվում է նրանով, որ մեղադրյալին հնարավորություն է տալիս կազմակերպել և իրականացնել իր պաշտպանության իրավունքը առաջադրված մեղադրանքի և այն հիմնավորող ապացույցների շրջանակներում: Մեղադրական եզրակացության հանձնման պահից հանցագործության մեջ մեղադրվող անձը համարվում է իրեն ներկայացված մեղադրանքի փաստական հանգամանքների և իրավական հիմքերի մասին պաշտոնապես և գրավոր ձևով տեղեկացված[67]:

Վճռաբեկ դատարանը մեջբերել է նաև Եվրոպական դատարանի մեկ այլ նախադեպ, որտեղ Եվրոպական դատարանն ամրագրել է, որ պաշտպանության իրավունքի իրականացման համար կարևոր է մեղադրանքի բնույթի և առիթների մասին տեղեկացված լինելը, հետևաբար, ներկայացված մեղադրանքի մասին մեղադրյալի լրիվ և պատշաճ տեղեկացված լինելը քրեական դատավարությունում արդար դատաքննության էական նախապայման է[68]: Եվրոպական դատարանի որոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը հաստատել է, որ «մեղադրանք» եզրը արարքի քրեաիրավական որակման և դրա հիմքում դրված փաստական հանգամանքների ամբողջություն է:

Եվրոպական դատարանն ամրագրել էր նաև, որ մեղադրանքի բովանդակությունը կազմող փաստական և իրավական հիմքերը պետք է լինեն հստակ և համաձայնեցված, չհակասեն միմյանց: Ելնելով վերոգրյալ իրավական հիմնավորումներից՝ Վճռաբեկ դատարանը հաստատել է, որ տեղի է ունեցել ամբաստանյալի պաշտպանության և արդար դատաքննության իրավունքի խախտում, քանի որ ստորադաս դատարանները դուրս են եկել մեղադրանքի ծավալից՝ «շատերի կյանքի համար վտանգավոր եղանակի» հատկանիշների չմեղսագրվելու պայմաններում վերջինս մեղավոր է ճանաչվել ՀՀ քր. օր. 34-104 հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի հատկանիշներով:

ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից ***տուժողների իրավունքների վերաբերյալ որոշումներում*** երկու դեպքում կիրառվել է Յանկովիչն ընդդեմ Խորվաթիայի գործով Եվրոպական դատարանի նախադեպային որոշումը: Սույն գործի շրջանակներում դիմումատուն դիմել էր Եվրոպական դատարան Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում արձանագրելու պահանջով: Դիմումատուն հարձակման էր ենթարկվել

67 Տե՛ս, Կամասինսկին ընդդեմ Ավստրիայի, վճիռ 19.12.1989, թիվ 9783/82, կետ 79:

68 Տե՛ս, Պելիսիերը և Սասսին ընդդեմ Ֆրանսիայի, 25.04.1999, թիվ 25444/94, կետեր 52-54:

երեք անհատների կողմից, նրան պատճառվել էր առողջության թեթև վնաս, ինչպես նաև հարձակվողները սպառնացել էին սպանել վերջինին: Ներպետական իրավասու մարմինների կողմից քրեական վարույթ հարուցելը մերժելու մասին որոշում էր կայացվել առ այն, որ հանցագործությունը նվազ կարևորության է: Դիմումատուն պնդում էր, որ Կոնվենցիայով երաշխավորված իր անձնական կյանքի իրավունքը պետության կողմից հարգված կլիներ, եթե իր վրա հարձակում գործած անձինք հետապնդվեին պետության կողմից, և Կոնվենցիայի 8-րդ հոդվածը երաշխավորում է հետապնդում պետության աջակցությամբ: Մինչդեռ դատարանը սույն պնդման հետ չի համաձայնել առ այն, որ Խորվաթիայի ներպետական քրեական օրենսդրությունը նախատեսում է հանցագործությունների քննության հանրային կարգ, որն իրականացվում է պետական մեղադրողի կողմից սեփական նախաձեռնությամբ կամ տուժողի դիմումի հիման վրա, ինչպես նաև մասնավոր մեղադրանքի շրջանակներում[69]: Վերջինները, որպես կանոն, նվազ վտանգավորության հանցագործություններն են[70]:

Սույն պայմաններում Եվրոպական դատարանն արձանագրել է, որ Դիմումատուն նախնական քննություն սկսելու իր պահանջում հստակեցրել էր, որ պահանջում է նախնական քննություն, հայտնելով, որ իր վրա երեք անձինք հարձակում են գործել: Նշել էր նրանց անուններն ու հասցեները: Նա հայտնել էր, որ իր դեմ կատարված հանցագործությունը կապված է եղել բռնությունների և սպառնալիքների հետ: Դեռ ավելին, ի հիմնավորումն իր պնդումների, դիմումատուն ներկայացրել էր նաև վնասվածքների վերաբերյալ բժշկական փաստաթղթեր[71]: Ներպետական մարմինների կողմից պատճառաբանվել է, որ դիմումատուի կողմից դիմումը հանձնելու ժամանակ ձևական պահանջները չեն պահպանվել: Դատարանը, սակայն, փաստել է, որ սույն գործի պայմաններում դիմումատուն պատշաճ ներկայացված չի եղել, նա գործազուրկ է եղել և հետևաբար, չի ունեցել միջոցներ իրավաբանական օգնություն ստանալու համար: Այդուամենայնիվ, համաձայն Խորվաթիայի ներպետական քրեական օրենսդրության, դիմումատուն օրենքով նախատեսված անվճար իրավաբանական օգնությունից օգտվելու իրավունք չի ունեցել, քանի որ օրենքը նման հնարավորություն ընձեռել է միայն երեք տարուց ավելի ազատազրկ-

69 Յանկովիչն ընդդեմ Խորվաթիայի, 05.03.2009թ., թիվ 38478/05, կետ 48:

70 Նույն տեղում, կետ 50:

71 Նույն տեղում, կետ 53:

ման ձևով պատիժ նախատեսող հանցագործություններից տուժողների համար[72]:

S. Քամալյանի վերաբերյալ որոշմամբ Վճռաբեկ դատարանն ***անդրադարձել է դատական քննության արագացված կարգ կիրառելու վերաբերյալ միջնորդության քննության կապակցությամբ դատարանի կողմից տուժողի դիրքորոշման գնահատմանը***[73]: Այսպես, քննարկվող գործի շրջանակներում ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում քրեական գործը քննվել է արագացված կարգով, առանց տուժողի մասնակցության և առանց վերջինիս կարծիքը հաշվի առնելու: Վճռաբեկ բողոքը վերաբերել է տուժողի արդար դատաքննության իրավունքի պաշտպանությանը արագացված կարգով դատական քննության պայմաններում:

Վճռաբեկ դատարանի կողմից նույն Յանկովիչն ընդդեմ Խորվաթիայի գործով որոշման կիրառմամբ տրվել է տուժողի իրավունքների պաշտպանության վերաբերյալ գնահատական: Սույն գործով Եվրոպական դատարանի արտահայտած դիրքորոշման տեսանկյունից մեկնաբանելով քրեական դատավարության դատական քննության արագացված կարգի վերաբերյալ նորմերը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված պայմաններում, երբ արագացված կարգ կիրառելու վերաբերյալ որոշում կայացնելիս տուժողը հնարավորություն չունի արտահայտելու իր դիրքորոշումը (քր. դատ. օր. 375.1, 375.2, 375.3 հոդվածներ), տուժողին հնարավորություն չի տրվում իրականացնել իր շահերի արդյունավետ պաշտպանություն: Սույն պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ տուժողի համար «արդար դատաքննության պահանջների պահպանմամբ» գործի քննությունը, inter alia, ենթադրում է, որ.

ա. Դատախազը (մեղադրողը) արագացված դատական քննության դեմ առարկելու կամ չառարկելու հարցը լուծելիս, պետք է հաշվի առնի տուժողի դիրքորոշումը՝ որպես մեղադրանքի կողմի սուբյեկտի:

բ. Դատարանը չի կարող անցնել դատական քննության արագացված կարգի՝ առանց այդ հարցի կապակցությամբ տուժողի դիրքորոշումը պարզելու:

գ. Դատարանը կարող է դատական քննության արագացված կարգ կիրառելու մասին մեղադրյալի միջնորդությունը մերժել, եթե դրա դեմ առարկում է տուժողը: Այդ դեպքում դատարանը կայացնում է առանձին

72 Նույն տեղում, կետ 54:

73 Տե՛ս, թիվ ԵՇԴ/0097/01/09 գործով Վճռաբեկ դատարանի որոշումը, Հավելված 1:

որոշում, որում պատճառաբանում է արագացված դատական քննության արդյունքում տուժողի օրինական շահերի վտանգման հանգամանքը:

Հետևաբար, դատական քննության արագացված կարգի դեմ առարկելու և ամբաստանյալի համապատասխան միջնորդությունը մերժելու հարցը լուծելիս տուժողի դիրքորոշումը պետք է վճռորոշ նշանակություն ունենա, հատկապես այն դեպքում, երբ վերջինս ողջամտորեն հիմնավորում է, որ իրեն պատճառված վնասն ամբողջությամբ հատուցված չէ, փաստարկված առարկում է գործի փաստական հանգամանքների դեմ: Միայն վերոգրյալ պահանջների պահպանման պայմաններում կապահովվի տուժողի՝ արդարացի դատաքննության իրավունքի իրականացումը:

Մեկ այլ գործով Վճռաբեկ դատարանը ճանաչել է ***արդարացի դատաքննության իրավունքի խախտում*** առ այն, որ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելիս դատարանն իր որոշման հիմքում դրել է նաև այն հանգամանքը, որ մեղադրյալ Ա. Ղազարյանը հրաժարվում է ցուցմունքներ տալ: Վճռաբեկ դատարանի կողմից ի հիմնավորումն իր որոշման մեջբերվել են Եվրոպական դատարանի որոշումներ, որոնցով Դատարանն ամրագրել է, որ յուրաքանչյուր անձ, ում առաջադրվել է քրեական մեղադրանք, իրավունք ունի պահպանելու լռություն և չտալու իր մեղքը հաստատող ցուցմունքներ[74]:

Ճիշտ է՝ լռություն պահպանելու իրավունքը և դրա բաղկացուցիչ մասը՝ իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը, Կոնվենցիայի 6-րդ հոդվածով ուղղակիորեն ամրագրված չեն, սակայն դրանք միջազգային հանրաճանաչ նորմեր են, որոնք ընկած են արդարացի դատաքննության իրավունքի հիմքում: Սույն իրավունքի իմաստը, inter alia, իշխանությունների ոչ պատշաճ հարկադրանքից մեղադրյալին պաշտպանելն է, ինչն օգնում է խուսափել դատական սխալներից և հասնել 6-րդ հոդվածով նախատեսված նպատակներին (…): Մասնավորապես, այդ իրավունքը նպաստում է, որ մեղադրանքը չհիմնվի այնպիսի ապացույցների վրա, որոնք ձեռք են բերվել մեղադրյալի կամքին հակառակ՝ հարկադրանքի կամ ճնշման միջոցով: Այս իմաստով, նշված իրավունքը սերտորեն կապված է անմեղության կանխավարկածի հետ, որը նախատեսված է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասում[75]: Հիմնվելով վերոգրյալ որոշումների վրա՝ Վճռաբեկ դատարանն ամրագրել է, որ տեղի է ունեցել մեղադրյալի իրավունքների խախտում:

74 Ֆանկեն ընդդեմ Ֆրանսիայի, 1993թ. փետրվարի 25-ի վճիռը, թիվ 10828/84:

75 Սաունդերսն ընդդեմ Միացյալ Թագավորության, 19187/91, 1996թ. դեկտեմբերի 17-ի վճիռը, կետ 68:

Ն. Պողոսյանի գործով Վճռաբեկ դատարանն ***անդրադարձել է անձին նախաքննության ընթացքում կասկածյալի կարգավիճակ տալու*** հարցին[76]: Մասնավորապես, քրեական դատավարության օրենսգիրքը անձի՝ կասկածյալի կարգավիճակ ձեռք բերելու պահը կապում է օրենքով նախատեսված գործողությունների կատարման կամ որոշման կայացման հետ: Այսպես, ձերբակալվածի, հետևաբար նաև կասկածյալի կարգավիճակ ձեռք բերելու համար անձը պետք է փաստացի զրկվի ազատությունից, բերվի իրավասու մարմնի մոտ, պետք է կազմվի ձերբակալման արձանագրություն և այդ մասին պետք է նրան հայտարարվի: Այսպիսով, քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ անձը կասկածյալի կարգավիճակ է ձեռք բերում չորրորդ գործողության կատարմամբ՝ ձերբակալման մասին արձանագրությունը նրան հայտարարելու պահից: Այսպիսով, քրեական դատավարության օրենսգիրքը կասկածյալի կարգավիճակի ձեռքբերումը կապում է ձևական առումով «քրեական մեղադրանքի» առկայության հետ:

Սակայն Վճռաբեկ դատարանը, հիմնվելով Եվրոպական դատարանի նախադեպային որոշումներով արտահայտված տեսակետին, ամրագրել է, որ «քրեական մեղադրանք» հասկացությունը պետք է հասկացվի ոչ թե ձևական (փաստաթղթային), այլ բովանդակային (գործնական) իմաստով[77]: Այսինքն, անձի նկատմամբ «մեղադրանքի» առկայության մասին կարող է վկայել նաև այնպիսի միջոցներ ձեռնարկելը, որոնք ենթադրում են հանցագործության մեջ կասկածանքի առկայություն, ինչպես նաև էականորեն ներգործում են կասկածվող անձի դրության վրա[78]: Սույն գործի նախաքննության ընթացքում ամբաստանյալ Ն. Պողոսյանը հրավիրվել է որպես վկա, նախազգուշացվել է ակնհայտ սուտ ցուցմունք տալու, ինչպես նաև ցուցմունք տալուց հրաժարվելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին և հարցաքննության ընթացքում առաջադրվել են Ն. Պողոսյանին հանցագործության մեջ մերկացնող հարցեր: Ուստի, Ն. Պողոսյանը փաստացիորեն գտնվել է կասկածյալի կարգավիճակում,

76 Տե՛ս, թիվ ՀՅՔՐԴ2/0153/01/08 գործով Վճռաբեկ դատարանի որոշումը, § 15:

77 Դեվեերն ընդդեմ Բելգիայի (Deweer v. Belgium) գործով վճիռ, 1980թ. փետրվարի 27, թիվ 6903/75, կետ 44:

78 Էկլեն ընդդեմ Գերմանիայի (Eckle v. Germany) գործով վճիռ, 1982թ. հուլիսի 15, թիվ 8130/78, կետ 73, Շուբինսկին ընդդեմ Սլովենիայի (Šubinski v. Slovenia) գործով վճիռ, 2007թ. հունվարի 18, թիվ 19611/04, կետ 62, Գ.Կ.-ն ընդդեմ Լեհաստանի (G.K. v. Poland) գործով վճիռ, 2004թ. հունվարի 20, գանգատ թիվ 38816/97, կետ 98:

հետևաբար պետք է օգտվեր օրենքով կասկածյալի կարգավիճակից բխող իրավունքներից:

Մասնավորապես, Արսեն Միրզոյանի գործով որոշումը[79] վերաբերում էր ***մասնավոր մեղադրանքի դեպքերում տուժողի պատշաճ բողոքի բացակայության պայմաններում քրեական գործի վարույթի կարճմանը***, երբ գործով առկա է եղել տուժողի հայտարարությունը և տուժողի օրինական ներկայացուցչի դիմումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործում առկա է տուժողների՝ ոստիկանություն ներկայացրած հաղորդումը, ինչպես նաև իրեն պատճառված գույքային վնասի և ծեծի համար Արսեն Միրզոյանին պատասխանատվության ենթարկելու մասին դիմումը: Ինչպես երևում է նաև գործի հետագա ընթացքից, տուժողները նաև դատաքննության ընթացքում են հայտնել իրենց դիրքորոշումը ամբաստանյալի հետ չհաշտվելու և նրան քրեական պատասխանատվության ենթարկելու ցանկության վերաբերյալ: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սույն փաստական հանգամանքները քանակապես և որակապես բավարար են Յանկովիչի գործով Եվրոպական դատարանի որոշման հիմնավորումները սույն գործի նկատմամբ կիրառելու համար: Սույն պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից տուժողի պատշաճ գրավոր բողոքի բացակայության պատճառաբանությամբ քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշումը կայացվել է ձևական նկատառումներից ելնելով, ինչի արդյունքում թույլ է տրվել քրեադատավարական օրենքի էական խախտում, քանի որ ըստ էության մասնավոր բողոքի առկայության պայմաններում դադարեցվել է քրեական հետապնդումը և կարճվել է գործի վարույթը:

8. Վճռաբեկ դատարանի կողմից կիրառվել է Եվրոպական դատարանի որոշում, որտեղ Դատարանը խախտում է ճանաչել, սակայն այդ նախադեպի կիրառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է խախտման բացակայություն՝ համատեքստից անջատ մեջբերելով Կոնվենցիայի համապատասխան դրույթի առնչությամբ Դատարանի տված մեկնաբանությունը:

Տ. Պիրապյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանը քննել է մեղադրյալի նկատմամբ կիրառված կալանավորման վերաքննիչ

79 Տե՛ս, թիվ ԵԱՔԴ/0045/01/09 գործով Վճռաբեկ դատարանի որոշումը, Հավելված 1:

բողոքարկման դեպքում մեղադրյալի՝ դատաքննությունից բացակայելու իրավաչափության հարցը: Վճռաբեկ դատարանն իր որոշմամբ ամրագրել է, որ ՀՀ քր. դատ. օր. 288 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «դատական ստուգումն իրականացվում է դռնփակ դատական նիստում՝ դատախազի և պաշտպանի մասնակցությամբ: Բողոքը քննելու մասին նախապես իրազեկ կողմի չներկայանալը չի խոչընդոտում դատական ստուգումն իրականացնելուն: Դատարանը բացատրություններ տալու համար դատական նիստին կարող է կանչել հետաքննության մարմնի աշխատակցին, քննիչին, տուժողին»: Դատարանն արձանագրել է, որ որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը Վերաքննիչ դատարանում կատարվում է քր. դատ. օր. 288-րդ հոդվածով սահմանված կարգով, որը դատական ստուգմանը մեղադրյալի մասնակցության մասին դրույթ չի նախատեսում: Վերաքննիչ դատարանում կալանավորման հարցի քննությանը մեղադրյալի մասնակցության ապահովման պահանջ նախատեսված չէ նաև որևէ այլ իրավական նորմով: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ որպես ընդհանուր կանոն, Վերաքննիչ դատարանը չունի կալանավորման հարցի քննությանը մեղադրյալի մասնակցությունն ապահովելու պարտականություն[80]: Հետևաբար Դիմում ներկայացնող անձի արդար դատաքննության իրավունքի խախտում տեղի չի ունեցել:

Այս դատական ակտի հիմնավորման համար Վերաքննիչ դատարանի կողմից մեջբերվել է Շյոպսն ընդդեմ Գերմանիայի (Schöps v. Germany), թիվ 25116/94, Պալատի 2001թ. փետրվարի 13-ի վճռից հատված, որտեղ Եվրոպական դատարանն ամրագրել է, որ կալանավորված և ձերբակալված անձինք իրավունք ունեն ազատազրկման փաստի բողոքարկման՝ ընթացակարգային և նյութական իրավունքի պահպանման տեսանկյունից, ինչն էական է Կոնվենցիայի իմաստով «օրինականության» պահպանման համար: Դա նշանակում է, որ իրավասու դատարանը պետք է քննարկի ոչ միայն ներպետական օրենսդրությամբ նախատեսված կալանավորման ընթացակարգային պահանջների պահպանման հարցը, այլև կալանավորման հիմք հանդիսացած կասկածների հիմնավորվածությունը և կալանավորման նպատակների օրինականությունը:

80 Տե՛ս, թիվ ԱՐԴ1/0028/06/10 գործով Վճռաբեկ դատարանի որոշումը, Հավելված 1:

Կալանավորման կիրառման վերստուգումն իրականացնող դատարանը պետք է ապահովի դատական քննության իրականացման բոլոր երաշխիքները: Քննությունը պետք է լինի մրցակցային և հիմնված կողմերի՝ մեղադրողի և կալանավորված անձի միջև «զենքերի հավասարության» սկզբունքի վրա: Դատարանն ամրագրել է նաև, որ միշտ չէ անհրաժեշտ, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասով դատական քննության երաշխիքները համապատասխանեն քրեական կամ քաղաքացիական գործերով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դատական երաշխիքներին: Քննությունը պետք է ունենա դատական բնույթ և պետք ապահովի երաշխիքներ՝ կախված կոնկրետ դեպքում անձի ազատության սահմանափակման տեսակից: Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետով նախատեսված ազատազրկման ենթարկվելու դեպքում դատական լսումը պարտադիր է, որի ընթացքում կալանավորված անձի ներկա գտնվելն ու լսված լինելը ինչպես անձամբ, այնպես էլ ներկայացված լինելու ձևով ազատությունից զրկելու հարցերի վերաբերյալ որոշման կայացման հիմնական երաշխիքներից մեկն է: Հատկանշականն այն է, որ Կոնվենցիան մասնակից պետություններին չի պարտավորեցնում ունենալ ազատությունից զրկելու վերաբերյալ միջնորդությունների քննարկման երկրորդ ատյան: Սակայն եթե մասնակից պետություններն իրենց ներպետական օրենսդրությամբ նախատեսում են նման հնարավորություն, ապա կալանավորված անձը վերաքննիչ ատյանում պետք է ապահովված լինի նույն երաշխիքներով, ինչ առաջին ատյանում[81]:

Եվրոպական դատարանի նման մոտեցումը թույլ է տալիս արձանագրել, որ կալանքը՝ որպես խափանման միջոց կիրառելու կամ չկիրառելու վերաբերյալ դատարանի որոշման օրինականության և հիմնավորվածության վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշման ստուգումն իրականացնելիս մեղադրյալն իրավունք ունի անձամբ, անկախ պաշտպանի մասնակցությունից, ներկա գտնվելու դատական քննությանը, հայտնելու իր կարծիքը, տալու բացատրություններ, հակառակ դեպքում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն նման մոտեցումը կհանգեցնի մեղադրյալի պաշտպանության իրավունքի խախտման:

81 Schops v. Germany, no. 25116/94, judgment of 13 February 2001.

9. Դատարանների կողմից Եվրոպական դատարանի որոշումը չկիրառելու հիմնավորումները սակավաթիվ են և տեղ են գտնում եզակի դեպքերում:

Ա. Մաթևոսյանի գործով վճռաբեկ բողոքում դիմումատուն մատնանշել է, որ մեղադրանքի հիմքում դրված ապացույցները և խոստովանական ցուցմունքները ձեռք են բերվել ամբաստանյալների նկատմամբ խոշտանգումներ և անմարդկային վերաբերմունք կիրառելու արդյունքում: Բողոքաբերի կողմից վկայակոչվել է Հարությունյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով Եվրոպական դատարանի որոշումը, համաձայն որի, Միշա Հարությունյանի պատասխանատվության հիմքում դրվել են ցուցմունքներ, որոնք ստացվել են խոշտանգումների արդյունքում: Ընդ որում, սույն հանգամանքը հաստատվել է այն փաստով, որ խոշտանգումներ կիրառած ռազմական ոստիկանության չորս ծառայողներ դատապարտվել են պաշտոնեական դիրքի չարաշահման համար երեքից մինչև երեք ու կես տարվա ազատազրկման: Հիմնվելով սույն հանգամանքների վրա՝ Եվրոպական դատարանն արձանագրել էր, որ անկախ նրանից, թե ինչ ազդեցություն են ունեցել խոշտանգումների միջոցով ձեռք բերված ցուցմունքները քրեական վարույթի արդյունքի վրա, նման ապացույցի օգտագործումը ամբողջ դատավարությունը դարձնում է անարդար:

Վճռաբեկ դատարանի կողմից, սակայն, հիմնավորվել է, որ սույն գործի փաստական հանգամանքները որակապես և քանակապես տարբերվում են Հարությունյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով փաստական հանգամանքներից, ինչի արդյունքում Հարությունյանի գործով Դատարանի ընդհանրական դրույթներն այս դեպքում կիրառելի չեն: Մասնավորապես, ի տարբերություն Հարությունյանի գործի, սույն գործով ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության աշխատակիցների նկատմամբ ամբաստանյալներ Ա. Մաթևոսյանին և Ռ. Հարությունյանին ծեծի ենթարկելու կապակցությամբ քրեական գործ չի հարուցվել և քրեական հետապնդում չի իրականացվել հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ: Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բողոքում վկայակոչված հանգամանքներն անհիմն են[82]:

Ի հիմնավորումն դատավարական ժամկետների պահպանման պարտականության՝ Վճռաբեկ դատարանը փաստարկել է գործի քննության ժամկետների ողջամտությունը, ինչպես նաև իրավական որոշակիության պահպանման անհրաժեշտությունը: Սույն պարագա-

82 Տե՛ս, թիվ ՎԲ-04/10 գործով Վճռաբեկ դատարանի որոշումը, Հավելված 1:

յում դատարանն ամրագրել է Եվրոպական դատարանի կարծիքն առ այն, որ իրավական որոշակիությունը ենթադրում է նաև այն, որ երբ համապատասխան ժամկետն անցնելուց հետո դատարանի կողմից որևէ հարցի լուծումը դառնում է վերջնական, ապա այն այլևս չի կարող կասկածի տակ դրվել[83]: Իրավական որոշակիության սկզբունքի տեսակետից մեկնաբանելով համաներում կիրառելու մասին որոշման բողոքարկման պայմանները՝ Վճռաբեկ դատարանը հանգել է եզրակացության, որ քրեական դատավարության օրենսգրքի 376.1 հոդվածի 2-րդ կետը, հնարավորություն տալով բողոքարկել դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշումներն այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, նման բողոքարկման հնարավորությունը տարածում է միայն գործն ըստ էության լուծող դատական ակտերի նկատմամբ: Քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10.1 կետով սահմանվում է գործն ըստ էության լուծող որոշումների սպառիչ շրջանակը, որոնք են՝ դատավճիռը, քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը, բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու մասին որոշումը:

Մեկնաբանելով վերոգրյալ իրավական դրույթները՝ Վճռաբեկ դատարանն ամրագրել է, որ համաներում կիրառելու վերաբերյալ որոշումն ըստ քրեադատավարական օրենսգրքի չի հանդիսանում գործն ըստ էության լուծող ակտ, հետևաբար վերջինի նկատմամբ կիրառվում է վերաքննիչ բողոքարկման 10-օրյա ժամկետի կանոնը՝ նախատեսված քր. դատ. օր. 379 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, բայց այդ այն չի կարող բողոքարկվել օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ քր. դատ օր. 376.1 հոդվածի 2-րդ կետի շրջանակներում: Հետևաբար, Վերաքննիչ դատարանի կողմից օրենքով նախատեսված ժամկետները բաց թողնելուց հետո ներկայացված համաներում կիրառելու մասին որոշման վերաբերյալ վերաքննիչ բողոքի քննության իրականացումը Վճռաբեկ դատարանը ճանաչել է քրեական դատավարության օրենսգրքի 379 հոդվածի 3-րդ մասի պահանջի խախտում, համաձայն որի՝ ժամկետանց բողոքները դատարանի կողմից թողնվում են առանց քննության, որի վերաբերյալ դատարանը կայացնում է որոշում:

83 Բրումարեսկուն ընդդեմ Ռումինիայի գործով (Brumărescu v. Romania) Մեծ պալատի 1999թ. հոկտեմբերի 28-ի վճռի 61-րդ կետը:

10. Ներպետական դատարանները հիմնականում հակված չեն անդրադառնալու կողմի մեջբերած նախադեպերին:

Օրինակ, ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԱՐԱԴ 0078/02/10 գործում հայցվոր Վ. Արմենակյանը նշել էր, որ 29.01.1991թ. ընդունված ՀՀ հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տնամերձ հողամասերը, ինչպես նաև այգեգործության (ամառանոցի) և բնակելի տան շինարարության և դրա սպասարկման համար ՀՀ քաղաքացիների ունեցած հողամասերն անհատույց կարգով թողնվում են նրանց որպես սեփականություն: Սույն հոդվածի վերլուծությունից, ըստ հայցվորի, հետևում է, որ Հ. Հովհաննիսյանին պատկանող վերը նշված տնամերձ հողամասն արդեն իսկ 1991թ.-ից օրենքի ուժով հանդիսանում է Հ. Հովհաննիսյանի սեփականությունը և քարտեզագրման ժամանակ կատարված սխալը ենթակա է ուղղման, քանի որ 29.01.1991թ. հողային օրենսգրքի ուժով այն դադարել է պետական սեփականություն լինելուց:

Կոնվեցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ ոչ ոքի չի կարելի զրկել սեփական գույքից՝ բացառությամբ հանրային շահերի պաշտպանության համար և օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով նախատեսված պայմաններով: Այս դեպքում, ըստ հայցվորի, խախտվել է Կոնվենցիայով նախատեսված սեփականության անձեռնմխելիության իրավունքը, ուստի նաև այս հիմքով պետք է ճանաչվի Հ. Հովհաննիսյանի սեփականության իրավունքը նշված հողակտորի նկատմամբ, որով հնարավորություն կտրվի ընդգրկելու ժառանգության զանգվածի մեջ և կատարելու պետական գրանցում: Հանգուցյալ Հրանուշ Հովհաննիսյանն օրինական կարգով ստացել և մինչև իր մահը տիրապետել է նշված 500 քմ տնամերձ հողամասը որպես սեփական գույք, որն էլ իր ողջ գույքի հետ կտակել է իր թոռ Վիրաբ Արմենակյանին, ով, սակայն, հողամասի նկատմամբ իր իրավունքի պետական գրանցում չի կարող կատարել իրենից անկախ պատճառներով, քանի որ այն սխալ քարտեզագրման պատճառով հանձնվել է համայնքին և դուրս է մնացել ժառանգության զանգվածից:

Առաջին ատյանի դատարանն իր վճռի պատճառաբանական մասում նշել էր, որ քաղաքացիական գործի փաստերի համաձայն՝ 2005թ. վիճելի հողամասը փոխանցվել է Կարբիի համայնքին, որ հայցվորի կողմից դատարանին ներկայացված որևէ ապացույցով չի հիմնավորվում, որ վեճի առարկա հողամասը պատկանել է ժառանգատուին, ներկայացված ապացույցը՝ 0.09 հա տնամերձ հողամասի

վերաբերյալ, առնչվում է ժառանգատուի սկեսուր Ոսկեհատ Հովհաննիսյանին, որի մահից հետո փաստորեն նրա հարսը շարունակել է տիրապետել վիճելի հողամասը՝ առանց համապատասխան իրավահաստատող հիմքերի: Դատարանը, քաղաքացիական և հողային օրենսգրքերով փորձելով հիմնավորել իր դիրքորոշումը, այնուամենայնիվ, չի անդրադարձել Կոնվենցիային:

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի ըստ հայցի ««Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերության, սնանկության գործով կառավարիչ Արսեն Վասիլի Չիտչյան ընդդեմ «Բջնի Գրուպ» ՍՊ ընկերության առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին գործով (ԿԴ2/0200/02/09) պատասխանողը նշել էր, որ դատարանը խախտել էր Քաղ. դատ. օրենսգրքի 95-րդ հոդվածի պահանջները և նախնական դատական նիստ էր նշանակել պատասխանողի կողմից հայցադիմումի ստացման 3-րդ օրը: Ըստ պատասխանողի, այդպիսով խախտվել էր Սահմանադրության 18 և 19-րդ, Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված արդար դատաքննության իրավունքը: Բացի այդ, պատասխանողը նաև հղում էր արել Վճռաբեկ դատարանի 17.11.2006թ. թիվ 3-1894(ՏԴ) որոշմանը, որտեղ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ Քաղ. դատ. օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասում նաև պատասխանողի իրավունքն է սահմանված 14-օրյա ժամկետում ներկայացնելու գրավոր պատասխան: Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանն իր վճռի պատճառաբանական մասում որևէ կերպ չէր անդրադարձել պատասխանողի կողմից արված հղմանը:

Նմանապես, Երևան քաղաքի էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2011թ. ապրիլի 28-ին քննած «Արդշինինվեստբանկ» ՓԲ ընկերությունն ընդդեմ Սուրեն Սիրունյանի և Սամվել Աբովյանի վարկային պայմանագրով պարտքն ամբողջությամբ բռնագանձելու, բռնագանձումը գրավի առարկայի և այլ գույքի վրա տարածելու, վարկային պայմանագրով նախատեսված տոկոսները հաշվեգրելու պահանջների մասին գործով, ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010թ. հունվարի 22-ին քննած «Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերությունն ընդդեմ Նարեկ Կառլենի Միրաքյանի և Սամսոն Սուրենի Միրաքյանի՝ վարկային պայմանագրով պարտքն՝ 1019568 ՀՀ դրամ գումարը ամբողջությամբ բռնագանձելու, բռնագանձումը գրավի առարկայի, այլ գույքի վրա տարածելու, վարկային

պայմանագրով նախատեսված տոկոսները հաշվեգրելու պահանջի մասին գործով, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը 2010թ. ապրիլի 20-ին քննած Դիանա Բալյանի ընդդեմ Լուսյա Ավետիսյանի՝ փոխառության պայմանագիրը չկնքված ճանաչելու պահանջի մասին գործըով կողմերը հղում են կատարել Կոնվենցիայի 6-րդ հոդվածին, սակայն դատարանները, անկախ հայցը բավարարելուց կամ մերժելուց, որևէ ձևով իրենց դատական որոշումներում չեն անդրադարձել Կոնվենցիայի 6–րդ հոդվածին:

ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԱՐԱԴ 0920/02/09 գործում կողմը հղում էր արել Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածին, իսկ Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ շրջանների ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԿԴ 2013/02/10 գործում կողմը հղում էր արել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետին, ինչպես նաև Կոնվենցիայի 13-րդ հոդվածին, մինչդեռ դատարանն (դատարանները) իր վճռի պատճառաբանական մասում որևէ կերպ չի անդրադարձել նշված ակտերին:

Վճռաբեկ դատարանի պարագայում որպես օրինակ կարելի է նշել Ս. Սահակյանի գործով Վճռաբեկ դատարանի որոշումը: Բողոք բերող անձը վիճարկել է Կոնվենցիայով պաշտպանվող իր իրավունքների խախտում առ այն, որ վարույթն իրականացնող մարմինը հրաժարվել է տրամադրել քրեական գործով որպես վկա ներգրավված անձի սեփականությունը հանդիսացող և քրեական գործով իրեղեն ապացույց ճանաչված գույքի վերաբերյալ քննչական գործողությունների որոշումների և այլ դատավարական փաստաթղթերի պատճենները: Բողոք ներկայացնող անձը նշել է, որ պահանջվող փաստաթղթերն առնչվում են իր իրավունքներին և օրինական շահերին, հետևաբար, դրանց տրամադրումը մերժելը խոչընդոտում է վերջինի սահմանադրական իրավունքը՝ զրկելով իրեն իր սեփականության իրավունքը խախտող որոշումների օրինականությունը և հիմնավորվածությունը բողոքարկելու հնարավորությունից: Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ և 13-րդ հոդվածների խախտումներ:

Վճռաբեկ դատարանը սույն բողոքին վերաբերող իր որոշումը հիմնավորել է ՀՀ ներպետական օրենսդրության և իր որոշումների հիման վրա: Այսպես, Վճռաբեկ դատարանը, մեկնաբանելով ՀՀ սահմանադրությամբ ամրագրված սեփականության իրավունքին վերա-

բերող դրույթներն, արձանագրել է, որ գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման՝ սեփականատիրոջ իրավազորությունները մեծ կարևորության իրավական արժեքներ են, որոնք ունեն սահմանադրական բնույթ: Սեփականության իրավունքի սահմանադրական արժեքի կարևորությամբ են պայմանավորված սեփականության իրավունքի պաշտպանության սահմանադրական երաշխիքները, համաձայն որոնց, սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքից անձը կարող է զրկվել բացառապես օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով նախատեսված հիմքերով, ինչպես նաև սեփականատիրոջ կամքին հակառակ սեփականության իրավունքը կարող է դադարեցվել միայն դատական կարգով՝ դատարանի որոշմամբ: Միաժամանակ, ՀՀ սահմանադրությամբ նախատեսված է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու յուրաքանչյուրի իրավունքը: Հետևաբար, հանդիսանալով քրեական գործի շրջանակներում որպես իրեղեն ապացույց ճանաչված գույքի սեփականատերը՝ դիմումատուն, հնարավորություն չունենալով ծանոթանալ դրանց կապակցությամբ կատարված քննչական գործողությունների արձանագրություններին ու դատավարական այլ փաստաթղթերին, զրկվել է իր՝ որպես սեփականատիրոջ իրավունքների պաշտպանության հնարավորությունից[84]: Արդյունքում, դիմողի կողմից մեջբերված նախադեպերին Դատարանն արձագանք չի տվել:

11. Տարբեր ատյանների դատարանների որոշումներում նկատելի են որոշակիորեն ստանդարտացված, կրկնվող մեկնաբանություններով դատական ակտերը:

Դրանցում, որպես կանոն, հղում է արվում Կոնվենցիայի 6-րդ հոդվածին և տրվում է միևնույն մեկնաբանությունը: Օրինակ, Նախշքարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.01.2010 թվականի որոշման դեմ՝ ըստ Ռիմա Նախշքարյանի հայցի ընդդեմ Միսակ և Կարեն Նախշքարյանների, երրորդ անձ Սեդա Հակոբյանի՝ գույքը տիրազուրկ ճանաչելու և ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին, ինչպես նաև Միսակ Նախշքարյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Ռիմա Նախշքարյանի՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջի մասին գործով (թիվ

84 Տե՛ս, թիվ ԵԿԴ/0059/11/10 գործով Վճռաբեկ դատարանի որոշումը:

ԵԱՔԴ/1092/02/09)[85], Փարավոն Ղազանչյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.04.2010 թվականի որոշման դեմ՝ ըստ դիմումի Լիլիթ և Կարինե Ղազանչյանների, երրորդ անձ Փարավոն Ղազանչյանի՝ ժառանգությունն ընդունելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու պահանջի մասին գործով (թիվ ԵԱՔԴ/2478/02/09) և այլ գործերով Վճռաբեկ դատարանը հղում է արել Կոնվենցիայի 6-րդ հոդվածին՝ հետևյալ մեկնաբանությամբ. ««Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է...»:

ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 10.11.2009 թվականի թիվ ԵԿԴ/1928/02/08 վճռի դեմ Լաուրա Հարոյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը հղում էր արել Կոնվենցիայի 6-րդ հոդվածին՝ նշելով, որ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք և մեկնաբանել էր, որ տվյալ քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից, որ Վերաքննիչ դատարանի կողմից ստորադաս դատական ակտը փոխելը բխում է արդարադատության շահերից, քանի որ սույն գործով

85 Տե՛ս, թիվ ԵԱՔԴ/1092/02/09 գործով Վերաքննիչ քաղաքացիական գործով դատարանի որոշումը, Հավելված 2:

վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

12. Վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումների գերակշիռ մասում հղում է արվում Եվրոպական դատարանի միևնույն նախադեպին:

Վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումներից ուսումնասիրվել են պատահականորեն ընտրված շուրջ 200 որոշումներ: Ընտրված որոշումների քանակը բավականին բարձր է և ներկայացուցչական՝ արված եզրահանգումներն ընդհանուր համախմբության նկատմամբ տարածելու համար:

Որպես յուրահատուկ խումբ առանձնացվել են այն գործերը, որոնք իրենց մեջ ներառում են նախադեպի կիրառություն, ընդ որում՝ միևնույն նախադեպի՝ տարբեր առիթներով կիրառություն: Դատական ակտերի շուրջ 70%-ում առկա է «Մելտեքս» ընկերության դատական գործի հայտնի նախադեպի կիրառությունը: Այդ որոշումներում վկայակոչվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի «Մելտեքս» ՍՊԸ-ն և Մեսրոպ Մովսիսյանն ընդդեմ Հայաստանի թիվ 32283/04 գործով 17.06.2008 թվականի վճիռը:

Մյուս ցայտուն օրինաչափությունն այն է, որ վճռաբեկ բողոքներում հաճախ հիշատակված «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» եվրոպական կոնվենցիայի խախտումը՝ որպես վճռաբեկ բողոք ներկայացնելու հիմք, հիմնականում չի քննարկվում վերադարձի որոշման մեջ և դատարանի կողմից դրան որևէ կերպ անդրադարձ չի կատարվում:

13. Թեև դատարանները հղում են անում Կոնվենցիային՝ տալով համապատասխան մեկնաբանություն, սակայն մեկնաբանության մեջ հիմնականում նշում են միայն Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում արտահայտված դիրքորոշումը, առանց նշելու բուն նախադեպը:

Վ. Գրիգորյանի վերաբերյալ գործով դատարանի կողմից մեջբերվել են Եվրոպական դատարանի արտահայտած մեկնաբանությունները՝ Կոնվենցիայի 9-րդ հոդվածի ներքո պաշտպանության ենթակա իրավունքների և ազատությունների շրջանակների վերաբերյալ՝ կատարված Բայաթյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով վճռում: Առաջին ատյանի դատարանի դատավճռում ամրագրված են

Եվրոպական դատարանի կատարած բոլոր եզրահանգումները: Կատարելով Եվրոպական դատարանի վճռի փաստական և իրավական վերլուծություն՝ առաջին ատյանի դատարանի դատավճռում այդուամենայնիվ բացակայում է հղում, որ նման եզրահանգումների Եվրոպական դատարանը հանգել է կոնկրետ Բայաթյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով վճռում: Տվյալ գործում բերված հիմնավորումների ուժով առաջին ատյանի դատարանը փաստել է, որ կրոնական հայացքների հիման վրա զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից խուսափելու համար պատասխանատվության ենթարկելը Կոնվենցիայի լույսի ներքո չի խախտում կրոնի և համոզմունքների ազատության իրավունքը: Ավելին, դատավճռով ամրագրվել է, որ ՀՀ սահմանադրությունը հռչակում է, որ բոլոր մարդիկ հավասար են: Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է: Փաստորեն, ՀՀ սահմանադրությունը սահմանում է բոլոր քաղաքացիների հավասարության սկզբունքն անկախ կրոնի նկատմամբ ունեցած վերաբերմունքից կամ կրոնական պատկանելությունից: Օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը ենթադրում է, որ գործող օրենսդրությամբ նախատեսված բոլոր քաղաքացիական պարտականությունները տարածվում են նաև կրոնական կազմակերպությունների անդամների վրա՝ այլ քաղաքացիների հետ հավասար: Այս դրույթը ենթադրում է, որ ՀՀ օրենսդրությամբ բոլոր քաղաքացիների համար սահմանվում են հավասար իրավունքներ ու պարտականություններ: Եվ իրավահավասարության ցանկացած խախտում կհանդիսանա խտրականություն այլ քաղաքացիների նկատմամբ[86]:

Գործին մասնակից չդարձված անձ Հայկազ Համբարձումյանի վերաքննիչ բողոքը Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 08.05.2008թ. թիվ ԵԱՔԴ 0766/02/08 վճռի դեմ ըստ դիմումի Գուրգեն Հարությունյանի՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստերը հաստատելու պահանջի մասին գործում ըստ բողոքը բերողի դատարանին հայտնի է եղել, որ վեճի առարկա հանդիսացող գույքի վերաբերյալ վճռով

86 Տե՛ս, թիվ ԵՄԴ/0084/01/09 գործով առաջին ատյանի դատարանի դատավճիռը:

անդրադարձ է կատարվում նաև իր իրավունքներին՝ որպես առաջին հերթի ժառանգի, սակայն գործին իրեն մասնակից չի դարձրել[87]: Բողոքում նշվել էր, որ շահագրգիռ անձին դատաքննությանը մասնակից չդարձնելը հանգեցնում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքի խախտման:

Վերաքննիչ դատարանն իր որոշման պատճառաբանական մասում նշել էր, որ ընդհանուր իրավասության դատարանը քաղաքացիական գործը պետք է քններ հայցային վարույթի կարգով և պատասխանող կողմում հայցվորի կողմից ընդգրկված անձին՝ Հայկազ Համբարձումյանին՝ մասնակից դարձներ դատաքննությանը: Մինչդեռ, վերջինս մասնակից չի դարձվել դատաքննությանը, և նրա իրավունքների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ, ինչով դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջները: Գործին մասնակցող անձանց՝ դատական նիստի ժամանակի և վայրի, դատավարական այլ գործողությունների իրականացման մասին պատշաճ ծանուցումը կողմերի դատական պաշտպանության իրավունքի, իրավահավասարության և մրցակցության սկզբունքների ապահովման կարևոր պայմանն է:

Վերաքննիչ դատարանը նշել էր, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում արտահայտել է այն դիրքորոշումը, որ «հավասարության» սկզբունքը՝ կողմերի միջև «արդար հավասարակշռության» իմաստով պահանջում է, որպեսզի յուրաքանչյուր կողմ ունենա ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր գործն այնպիսի պայմաններում, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի նվազ բարենպաստ վիճակում: Մրցակցային դատաքննության սկզբունքը ենթադրում է, որ յուրաքանչյուր կողմ պետք է ունենա գործում եղած կամ լրացուցիչ ներկայացված ապացույցների մասին տեղեկանալու և դրանց մասին մեկնաբանություններ ներկայացնելու հնարավորություն: Նշված սկզբունքներն ամբողջ ծավալով կարող են իրականացվել միայն այն դեպքում, երբ գործին մասնակցող անձանցից յուրաքանչյուրին ընձեռված է դատական նիստին ներկա գտնվելու հնարավորություն:

87 Տե՛ս, թիվ ԵԱՔԴ 0766/02/08 գործով Վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը, Հավելված 2:

Այս գործում Վերաքննիչ դատարանը հղում է արել Կոնվենցիային և տվել է համապատասխան մեկնաբանություն, ինչը ողջունելի է: Սակայն մեկնաբանության մեջ նշվել է միայն Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում արտահայտված դիրքորոշումը, բայց չի նշվել բուն նախադեպը:

Հ. Հակոբյանի գործով որոշմամբ քննարկվել է ***դատարանի դատավճռի հիմնավորվածությունը և դատաքննության ընթացքում չհետազոտված ապացույցների՝ դատավճռի հիմքում դնելու իրավաչափությունը:*** Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումը հիմնվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներին տրված Եվրոպական դատարանի մեկնաբանության վրա: Մասնավորապես, մեջբերվել է Դատարանի այն դիրքորոշումը, որ արդարացի դատաքննության իրավունքը ենթադրում է, որ յուրաքանչյուր մասնակից պետք է հնարավորություն ունենա ծանոթանալ դատավարական հակառակորդի ներկայացրած ցանկացած ապացույցի և, դատարանի դիրքորոշման վրա ազդելու ակնկալիքով, իր վերաբերմունքը հայտնել դրա առնչությամբ: Վճռաբեկ դատարանի այս իրավական դիրքորոշումը բխում է Եվրոպական դատարանի համապատասխան նախադեպային իրավունքից[88]: Վճռաբեկ դատարանն ամրագրել է, որ ապացույցների հետազոտությունը պետք է իրականացվի հրապարակային դատաքննության պայմաններում, ինչն ապահովում է արդարադատության իրականացման նկատմամբ հասարակության վերահսկողությունը, ինչը կարևոր հանրային արժեք է[89]:

Սույն գործի փաստական հանգամանքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առաջին ատյանի դատարանում չեն հետազոտվել վկայի նախաքննական ցուցմունքները, ինչպես նաև դատարանի կողմից չի կատարվել իրեղեն ապացույցների հետազոտություն, որոնք, սակայն դրվել են մեղադրական դատավճռի հիմքում: Սույն պայմաններում, Վճռաբեկ դատարանն ամրագրել է, որ դատավճիռը չի կարող հիմնավորված համարվել, եթե դրա նկարագրական-պատճառաբանական մասում բովանդակվող հետևություններն էապես հիմնված են դատաքննության ընթացքում չհետազոտված ապացույցների վրա: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը հաստատել է, որ սույն գործի շրջանակներում դատավճիռը հիմնավորված չի եղել:

---

88 Լոբո Մաչադոն ընդդեմ Պորտուգալիայի գործով Պալատի 1996թ. փետրվարի 20-ի վճիռը, թիվ 15764/89, կետ 31:

89 Աքսեն ընդդեմ Գերմանիայի գործով Պալատի 1983թ. դեկտեմբերի 8-ի վճիռը, թիվ 8273/78, կետ 25:

Ի հակադրություն, Վճռաբեկ դատարանը, 2008 թվականի մայիսի 23-ի որոշմամբ անդրադառնալով տուժողի իրավահաջորդ Անահիտ Այվազյանի ներկայացուցիչ Կարեն Թումանյանի բերած վճռաբեկ բողոքին, ուղղակիորեն անդրադարձել է բողոք բերած անձի վկայակոչած նախադեպում տեղ գտած Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումների կիրառելիությանը:

Սույն գործով բողոքի հեղինակի վկայակոչել էր, որ խախտվել է կյանքի իրավունքը սահմանող ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի» 2-րդ հոդվածը, ինչպես նաև նույն կոնվենցիայի 13-րդ արձանագրության 1-ին հոդվածը:

Բողոքատուն փաստարկել էր, որ խախտվել է նաև ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածը: Մասնավորապես, դատարանը չի կիրառել գործով կիրառման ենթակա՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի *Մակկանը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով վճիռը՝ փաստական հանգամանքների տարբերության պատճառաբանությամբ:

Դատարանի որոշումը պարունակում է առանձին հատված՝ նվիրված *Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումների կիրառելիությունը*, որը ներկայացված է ստորև:

«Այս կապակցությամբ բողոքի հեղինակը Վճռաբեկ դատարանի առջև բարձրացրել է հետևյալ հարցը. քրեական վերաքննիչ դատարանը իրավասու՞ էր արդյոք մերժել *Մակկանը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի հիմնավորումները սույն գործի նկատմամբ կիրառելն այն հիմքով, որ այդ գործի և քննության առարկա գործի փաստական հանգամանքները տարբերվում են:

Համաձայն ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի (նույնաբովանդակ իրավանորմ նախատեսված է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասում)՝ «Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով (...) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս

ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ»:

Մակկանը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճռում (27 սեպտեմբերի 1995 թ., *McCann v. The United Kingdom*, գանգատ թիվ 18984/91) Մարդու իրավունքների եվրոպական դատարանը սահմանել է, որ մեկ այլ անձի անօրինական բռնությունից պաշտպանելու համար մյուս անձին կյանքից զրկելը պետք է լինի բացարձակ անհրաժեշտություն: Նույն վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը սահմանել է նաև, որ եթե չկա մեկ այլ անձին կյանքից զրկելու իրական սպառնալիք, ապա կյանքի իրավունքի նկատմամբ միջամտությունը չի կարող իրավաչափ լինել (տե՛ս վճռի 148-րդ կետը):

Քրեական վերաքննիչ դատարանը սույն գործով գտել է, որ վերը նշված *Մակկանի* գործով վճիռը տվյալ գործով կիրառելի չէ, քանի որ երկու գործերի փաստական հանգամանքները տարբեր են:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի) հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտը ոչ կիրառելի ճանաչելիս դատարանները չեն կարող բավարարվել կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերությունների պարզ համադրմամբ: Յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքների համակցությամբ եզակի է, ուստի դատարանը պետք է յուրաքանչյուր դեպքում պարզի, թե կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերություններն որքանով են էական: Հակառակ պարագայում ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասում) ամրագրված իրավանորմը կդառնա անկիրառելի:

Դրա հետ մեկտեղ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի կիրառելիության հարցը լուծելիս ***դատարանը պետք է հաշվի առնի նաև այն, թե տվյալ դատական ակտի հիմնավորման բովանդակությունը կազմող ինչպիսի դրույթ է ենթակա կիրառման: Եթե այդ դրույթն իր բնույթով առավել ընդհանրական է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել փոքր ընդհանրություն: Եվ ընդհակառակը՝ եթե դրույթն իր բնույթով առավել կոնկրետ է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել մեծ ընդհանրություն:***

Սույն գործով վերաքննիչ դատարանը պետք է լուծեր վերը նշված *Մակկանի* վճռի հիմնավորումներում ***բովանդակվող ընդհանրական և ոչ թե կոնկրետ դրույթների կիրառելիության հարց:*** Ուստի սույն գործի ու *Մակկանի* գործի փաստական հանգամանքների նմանության աստիճանը պետք է որոշվեր այդ լույսի ներքո: Այսպես, թե՛ *Մակկանի* գործով և թե՛ քննության առարկա գործով պետության անունից գործող և որոշակի դեպքերում զենք կիրառելու լիազորություն ունեցող անձինք, ենթադրաբար անհրաժեշտ պաշտպանության վիճակում, հրազենի կիրառմամբ կյանքից զրկել են ենթադրյալ վտանգի աղբյուր հանդիսացող անձին (անձանց): Այս պայմաններում սույն գործի և *Մակկանի* գործի փաստական հանգամանքների նմանությունը քանակապես և որակապես բավարար էր *Մակկանի* գործով վճռի հիմնավորումներում պարունակվող ընդհանրական դրույթները սույն գործի նկատմամբ կիրառելու համար:

Հետևաբար՝ քրեական վերաքննիչ դատարանը իրավասու չէր մերժել *Մակկանը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի հիմնավորումները սույն գործի նկատմամբ կիրառելն այն հիմքով, որ այդ գործի և քննության առարկա գործի փաստական հանգամանքները տարբերվում են»:

14. Մի շարք դատական ակտերում հանդիպում են միևնույն գործի առնչությամբ մի քանի նախադեպերի կիրառության դեպքեր, սակայն հստակ տարանջատում չի տրվում, թե արդյոք նախադեպն ամբողջովին է կիրառվում և որ մասով այն կիրառություն չունի տվյալ գործի նկատմամբ[90]:

Առավել նպատակահարմար կգտնվեր նախադեպը մեջբերելիս կամ դրա հիման վրա տվյալ գործով այս կամ այն որոշման/եզրահանգման գալիս ոչ միայն նշել նախադեպի կողմերի և վեճի առարկայի մասին հիմնական տեղեկությունները, այլ նաև նշել, թե նախադեպի գործով ինչ որոշում է կայացրել դատարանը և ինչ եզրահանգումներով, կամ նախադեպի մեջ դատարանի կողմից օրենքի մեկնաբանման որ մասն է կիրառելի տվյալ դեպքում, որպեսզի ավելի պարզ և մատչելի դառնար տվյալ նախադեպի կիրառության անհրաժեշտությունը տվյալ գործի առնչությամբ (առավել մեկնաբանված և պատճառաբանված են, օրինակ, հետևյալ դատական ակտերը՝

90 Օրինակ, քաղաքացիական գործեր թիվ ԵԱՔԴ/0874/02/09, ԵԷԴ/0272/02/08:

վարչական գործ թիվ ՎԴ1/0522/05/09, վարչական գործ թիվ ՎԴ6/0234/05/08, վարչական գործ թիվ ՎԴ/0516/05/09, վարչական գործ թիվ ՎԴ/5033/05/08, վարչական գործ թիվ ՎԴ6/0234/05/08):

15. Երբեմն խախտվում է դատական ակտի տրամաբանական հստակությունը ("logical rigor"):

Հանդիպում են դեպքեր, երբ նախադեպից առաջ նշված նախադասությունը վերաբերում է հենց այդ նախադեպին, սակայն որևէ տեղ համապատասխան հղում արված չէ[91]: Մի շարք դեպքերում դատական ակտում նշվում է միայն, որ Վճռաբեկ դատարանը նախկինում անդրադարձել է այդ հարցին և որևէ այլ պարզաբանում չի տրվում[92]: Այս կերպ խախտվում է այսպես կոչված *"logical rigor"*-ը (տրամաբանական հստակություն) վճռի բովանդակության մեջ, որը հստակ ձևակերպված պահանջ է եվրոպական մի շարք երկրների դատական ատյանների, և հատկապես՝ վճռաբեկ դատարանների որոշումների և վճիռների նկատմամբ:

16. Վճռաբեկ դատարանի՝ վարչական գործերով, տեղական ինքնակառավարման մարմինների հետ կապված գործերով, ինչպես նաև քաղաքացիական մի շարք միատեսակ գործերի մի որոշակի շրջանակ չունի ո՛չ նախադեպային մեջբերումներ, ո՛չ էլ Կոնվենցիայի այս կամ այն հոդվածի կիրառության դեպքեր[93]:

«Եվա և Սյուզի» ՍՊԸ ընկերությունն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի վարչական գործով ներկայացված վճռաբեկ բողոքում պատասխանողի կողմից փաստարկվել էր, որ Վարչական դատարանի կողմից անդրադարձ չի կատարվել գործով կարևոր նշանակություն ունեցող հանգամանքների, որպիսի պայմաններում դատարանն անհիմն եզրակացության էր հանգել և բավարարել ներկայացված հայցադիմումը: Վճռաբեկ դատարանում գործի քննության արդյունքում հաստատվել է տվյալ հանգամանքը: Դատարանն ամրագրել է, որ Վարչական դատարանի կողմից ներկայացված փաստարկներին

91 Օրինակ, քաղաքացիական գործ թիվ ԿԴ03/0026/02/08, ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի որոշում:

92 Օրինակ, քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0228/02/09:

93 Օրինակ, քաղաքացիական գործեր թիվ 08-1808, ԵՔԴ/0126/02/08, ԵԿԴ/0462/02/08, ԵԿԴ/0313/02/09, ԵՇԴ/1213/02/09, ԵԿԴ/0335/02/09, վարչական գործեր թիվ ՎԴ/0936/05/10, ՎԴ/2395/05/09, ՎԴ/4787/05/09, 3-233 (ՎԴ), 0961/05/09, ՎԴ3/0168/05/09, ՎԴ/3797/05/09, ՎԴ/5165/05/08:

չանդրադառնալու և ըստ էության չքննելու պայմաններում, նպատակահարմար չի գտնում անդրադառնալու բողոքում վկայակոչված նյութական իրավունքի խախտման հանգամանքին: Սույն պայմաններում, մեր կարծիքով, Վճռաբեկ դատարանը պետք է արձանագրեր կողմի՝ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի խախտում, քանի որ այս իրավունքն իր մեջ ներառում է արդարադատության մատչելիության սկզբունքը, ինչը ենթադրում է, որ դատարանի կողմից պետք է պատասխան տրվի իր առջև բարձրացված ցանկացած հարցի, ինչը չկատարելը հանդիսանում է հրաժարում արդարադատություն իրականացնելուց: Մինչդեռ Վճռաբեկ դատարանի կողմից սույն հանգամանքը չի արձանագրվել:

ՀՀ ԿԱ ՊԵԿ Սպանդարյանի հարկային տեսչությունն ընդդեմ «Շինպրոգրես» ՋՏՄ ՓԲԸ գործով Վճռաբեկ դատարանը ներկայացված բողոքում բարձրացված հարցի քննարկումը մերժել է, քանի որ Վարչական դատարանում հարցի քննության ընթացքում կողմն իր դիրքորոշումը հայտնելու հնարավորության պայմաններում որևէ դիրքորոշում չի հայտնել: Մինչդեռ, Վճռաբեկ բողոքը ենթակա է քննության, եթե բողոք բերող վարչական մարմինը տվյալ հարցի վերաբերյալ իր դիրքորոշումը հայտնել է վարչական դատարանում գործի քննության ժամանակ: Բացառություն է կազմում միայն այն իրավիճակը, երբ բողոք բերող անձը զրկված է եղել այդ հարցի վերաբերյալ վարչական դատարանում գործի քննության ժամանակ իր դիրքորոշումը հայտնելու հնարավորությունից:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը, հիմնվելով միայն ներպետական օրենսդրության դրույթների վրա, մերժել է բողոքը քննության առնել: Մինչդեռ սույն պայմաններում նույնպես դատարանի կողմից կարող էր վկայակոչվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածը՝ որպես Վարչական դատարանում արդար դատաքննության իրավունքի ապահովման փաստարկ, որի համաձայն՝ գործի դատական քննության ընթացքում պետք է պահպանվի կողմերի իրավահավասարությունն ու մրցակցությունը, ինչը ենթադրում է կողմերի՝ ապացույց ներկայացնելու, հակառակ կողմի փաստարկները վիճարկելու և ներկայացված հարցերի առնչությամբ իր դիրքորոշումը հայտնելու իրավունքը: Արդար դատաքննության իրավունքի սույն ենթատեքստում վարչական դատավարությունը բացառություններ և առանձնահատկություններ չունի, ինչից հետևում է, որ կողմի իրավունքը՝ բարձրացված հարցի վերաբերյալ պահպանվել է:

Այս պայմաններում անհրաժեշտ է ուշադրության արժանացնել այն հանգամանքը, որ վարչական գործերով Վճռաբեկ դատարանի կողմից Կոնվենցիայի և Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի կիրառման ցուցանիշները բավականին ցածր են: Նման պրակտիկան թույլ է տալիս փաստել, որ «քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ» եզրը ներպետական դատարանների կողմից թյուր մեկնաբանության է արժանանում՝ սահմանափակելով վարչական արդարադատության ոլորտում Կոնվենցիայի դրույթների և Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի կիրառման ծավալները:

17. Բազմաթիվ դատական ակտերում նկատվում է միևնույն դատական նախադեպի կիրառությունը:

Աշխատանքային օրենսգրքի խախտումների հետ կապված 4 գործերից 3-ում, օրինակ, կիրառվել է միևնույն նախադեպը: Միևնույն նախադեպի կիրառությունն առավել ակնհայտ է հատկապես ըստ վաղեմության սեփականության ձեռքբերման գործերով[94]:

Միևնույն դատական նախադեպի կիրառությունը վկայում է, մի կողմից, այն մասին, որ ՀՀ դատական համակարգում նախադեպը ստանում է իր միատեսակ կիրառությունը, մյուս կողմից, սակայն, դա կրկնաբանության վկայություն է, քանզի միանման գործեր և դատական նախադեպեր կարող են շատ լինել, բայց յուրաքանչյուր գործով անհրաժեշտ է գտնել առավելագույն նմանությունն ունեցող գործը:

18. Թեև ներպետական դատարանների դատական ակտերում մեկնաբանություններ և իրավական դիրքորոշումներ են տեղ գտնում, սակայն, որպես կանոն, դրանք չեն օգտագործվում որպես մոդել՝ գործի ելքին հանգելու նպատակով:

Օրինակ, պաշտպանության իրավունքի իրականացման արդյունավետության վերաբերյալ առաջին ատյանի դատարանների երկու դատավճռում է առկա հղում Կոնվենցիային և նախադեպին առ այն, որ պաշպանության իրավունքը քրեական դատավարության հիմնական սկզբունքներից է և Կոնվենցիայով նախատեսված «զենքերի հավասարության» սկզբունքի ապահովման հիմնական երաշխիքը, և դրա իրականացումը պետք է լինի ոչ թե տեսական և պատրանքային, այլ

94 Քաղաքացիական գործեր թիվ ԵԱԴԴ/1503/02/09, ԵԱՔԴ/0475/02, ԵԿԴ/2915/02/0, ԱՎԴ/0594/02/09:

գործնական և արդյունավետ: Վերոնշյալ դեպքերից մեկում ամբաստանյալն անգրագիտության պատճառով չի տիրապետել դատավարության լեզվին, իսկ նման պայմաններում պաշտպանի մասնակցությունը քրեական գործի քննությանը պարտադիր է:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ իր իրավավիճակը հաստատելու համար պաշտպանը քրեական վարույթն իրականացնող մարմնին է ներկայացնում անձը հաստատող փաստաթուղթ և փաստաբանների պալատի կողմից տրված իր՝ փաստաբան լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ, ինչպես նաև որպես պաշտպան հանդես գալու՝ կասկածյալի կամ մեղադրյալի ստորագրությամբ վավերացված փաստաթղթային հաստատում կամ պաշտպան նշանակելու վերաբերյալ սույն օրենսգրքով իրավասու մարմնի որոշումը: Մինչդեռ սույն քրեական գործով ամբաստանյալի շահերը ներկայացնող փաստաբանը վարույթ է ներգրավվել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգի խախտմամբ, այն է՝ քննիչի կողմից: Քրեական գործի նյութերում բացակայել է ինչպես ամբաստանյալի կողմից հաստատված փաստաթուղթ, այնպես էլ պաշտպան նշանակելու վերաբերյալ ՀՀ փաստաբանների պալատի որոշումը, բացակայել է նաև փաստաբանին որպես պաշտպան ներգրավելու՝ վարույթն իրականացնող մարմնի որոշումը: Դատարանը հաստատել է, որ նման պայմաններում, պաշտպանի մասնակցությամբ կատարված քննչական գործողությունների արդյունքում ձեռք բերված ապացույցները իրավաբանական ուժ չունեն և չեն կարող դրվել մեղադրանքի հիմքում, քանի որ դրանք տեղի են ունեցել քրեադատավարական օրենքի կոպիտ խախտումներով. այն է՝ ամբաստանյալի պաշտպանության իրավունքի խախտմամբ[95]:

Այնումենայնիվ, ուսումնասիրության արդյունքում որոշ դրական նշանակություն ունեցող փաստեր ևս արձանագրվել են, այսպես՝

19. Կողմը կատարում է ոչ պատշաճ հղում նախադեպին, սակայն դատարանը մանրամասնորեն անդրադառնում է կողմի իրավական փաստարկներին:

Օրինակ, թիվ ԵԿԴ/0907/02/10 գործով էրիկ Քալանթարյանի վերաքննիչ բողոքը Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝

95 Տե՛ս, թիվ ՀՅՔԴ2/0153/01/08 գործով առաջին ատյանի դատարանի դատավճիռը:

հայցադիմումը վերադարձնելու մասին 19.05.2010թ. որոշման դեմ՝ ըստ հայցի էրիկ Քալանթարյանի ընդդեմ Հայրապետ Քալանթարյանի, Կենտրոն տարածքային նոտարական գրասենյակի, ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Կենտրոն տարածքային ստորաբաժանման՝ ժառանգությունն ընդունելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու, պարտադիր բաժնի իրավունքով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, ժառանգության իրավունքի վկայագիրը, դրա հիման վրա կատարված պետական գրանցումը, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը և դրա հիման վրա կատարված պետական գրանցումն անվավեր ճանաչելու և ժառանգության զանգվածի 1/3-րդի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման պահանջների մասին գործում, կողմը հղում է արել Եվրոպական դատարանի նախադեպի՝ առանց նշելու գործի անվանումը:

Կողմի հղման մեջ նշված է միայն, որ Եվրոպական դատարանն իր 29.11.2007 թվականի վճռով հաստատել է, որ պետական տուրքը չվճարելու հետևանքով գործը չքննելը հանդիսանում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի խախտում:

Չնայած այն հանգամանքին, որ պարզ չէր, թե որ նախադեպին է հղումն արվում, Վերաքննիչ դատարանն անդրադարձել է այդ հանգամանքին իր որոշման մեջ և արդարացիորեն հիմնավորել հետևյալ կերպ. «Դատարանի պատճառաբանության իրավաչափության և վերաքննիչ բողոքի վերոգրյալ փաստարկի հիմնավորվածության տեսանկյունից Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի «գ» կետի համաձայն՝ առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով արտոնություններ կարող են սահմանել դատարանները կամ դատավորները՝ նույն օրենքի 9-րդ հոդվածում նշված առանձին գործերով՝ ելնելով կողմերի գույքային դրությունից: Վերոգրյալ հոդվածից հետևում է, որ դատարաններում պետական տուրքի գծով արտոնություն, այդ թվում՝ պետական տուրքի վճարումը հետաձգելու տեսքով, կարող են սահմանել նաև դատարանները կամ դատավորները՝ հաշվի առնելով կողմերի գույքային դրությունը: Տվյալ դեպքում հայցվորը դատարանին չի ներկայացրել իր գույքային դրության մասին որևէ ապացույց կամ հիմնավորում, որի հետևանքով վերջինս ի վիճակի չի եղել վճարել օրենքով սահմանված պետական

տուրքի գումարը, իսկ վերջինիս միջնորդությունում առկա տեղեկությունները չեն կարող գնահատվել որպես իր՝ հայցվորի, գույքային դրությունը բնութագրող տեղեկություններ: Նշված տեղեկությունների հիման վրա պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին միջնորդությունը դատարանն իրավացիորեն մերժել է, քանի որ չի համապատասխանում «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի «գ» կետի պահանջներին»:

20. Նախադեպի կիրառության բոլոր կանոնների պահպանմամբ Վճռաբեկ դատարանը պատշաճորեն կիրառել է Եվրոպական դատարանի որոշումը, որը ծառայել է որպես մոդելային օրինակ՝ խախտված իրավունքի համար ապահովելով եվրոպական չափանիշներին համահունչ պաշտպանություն:

Լևոն Գուլյանի վերաբերյալ գործով բողոք ներկայացնող անձը վիճարկում էր Կոնվենցիայի 2-րդ հոդվածի ներքո պետության պոզիտիվ պարտավորությունների կատարման փաստը: Բողոք ներկայացնող անձն իր դիրքորոշումն արտահայտում է Եվրոպական դատարանի որոշումների հիման վրա առ այն, որ երբ անձը կալանավորվում է առողջ վիճակում և հետո մահանում, պետական իշխանությունները պարտավոր են հիմնավոր բացատրություններ տրամադրել նրա մահվանը հանգեցրած իրադարձությունների կապակցությամբ: Հետևաբար, ապացուցման բեռը իշխանությունների վրա է և նրանք պարտավոր են համոզիչ բացատրություններ ներկայացնել: Նման բացատրություն չներկայացնելը կնշանակի, որ պետական իշխանությունները պատասխանատու են նրա մահվան համար[96]: Պետությունը կարող է ճանաչվել Կոնվենցիայի 2-րդ հոդվածը խախտող պետություն՝ հետաքննելու պարտավորության առնչությամբ նույնիսկ այն դեպքում, երբ հայցվորը չի կարողանում ապացույցներ ներկայացնել պետության գործակալների կողմից անձի դիտավորյալ սպանության կապակցությամբ: Հետաքննությունը պետք է լինի «մանրակրկիտ, անկողմնակալ և զգուշավոր»: Հետաքննությունը պետք է նաև գործուն լինի այն իմաստով, որ դրա արդյունքում հնարավոր լինի պարզել, թե արդյոք նման դեպքերում գործադրված ուժը հիմնավորված է եղել, թե ոչ կոնկրետ հանգամանքներում, և բացահայտվեն ու պատժվեն մեղավորները: Սա ոչ թե արդյունքների, այլ ձեռնարկվող միջոցների առնչվող պարտավորություն է:

96 Վելիկովն ընդդեմ Բուլղարիայի, Անգելովան ընդդեմ Բուլղարիայի գործերով վճիռներում արտահայտված դիրքորոշումը:

Վճռաբեկ դատարանի կողմից հաստատվել է այն հանգամանքը, որ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի հիման վրա Կոնվենցիայի 2-րդ հոդվածի ներքո պետության վրա դրված է արդյունավետ քննություն իրականացնելու պարտականություն, և սույն գործի շրջանակներից ելնելով՝ դատարանի կողմից հաստատվել է, որ եթե առողջ անձը ոստիկանության կողմից արգելանքի է վերցվել և հետագայում մահացել, ապա պետությունը պարտավոր է ներկայացնել անձի մահվանը հանգեցրած իրադարձությունների համոզիչ բացատրություն, և այն չներկայացնելու դեպքում պետությունը խախտած կլինի Կոնվենցիայի 2-րդ հոդվածը (տե՛ս *Velikova v. Bulgaria*, 2000 թվականի մայիսի 18-ի վճիռը, թիվ 41488/98, կետ 70, *mutatis mutandis, Selmouni v. France*, 2002 թվականի հոկտեմբերի 24-ի Մեծ պալատի վճիռը, թիվ 25803/94, կետ 87): Սույն գործի փաստական հանգամանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Լևոն Գուլյանը մահացել է ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության աշխատակիցների տրամադրության տակ լինելու պայմաններում, հետևաբար, պետությունը պարտավոր է իրականացնել արդյունավետ քննություն՝ ուղղված նրա մահվանը հանգեցրած իրադարձությունների համոզիչ բացատրություն ներկայացնելուն:

Վճռաբեկ դատարանի կողմից մեջբերված որոշմամբ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ կասկածելի պայմաններում տեղի ունեցած մահվան փաստի արդյունավետ քննության պարտականությունը շարունակում է առկա լինել այնքան ժամանակ, քանի դեռ ակնկալվում է, որ իշխանությունները ողջամտորեն կարող են միջոցներ ձեռնարկել մահվան հանգամանքները բացահայտելու և դրա համար պատասխանատվություն սահմանելու նպատակով[97]: Հիմնվելով վերոգրյալ մեկնաբանության վրա՝ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ քննությամբ չի պարզվել Լևոն Գուլյանի մահվան առաջացման մեխանիզմը և այդ նպատակով չի կատարվել քննչական փորձարարություն: Եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածով ամրագրված դատավարական պարտականության կատարման մասին վերջնական հետևությունները կարող են տրվել միայն քննչական փորձարարության և, անհրաժեշտության դեպքում, դրանից բխող այլ գործողությունների արդյունքների առկայության դեպքում: Այդ պարագայում նշված ապացույցների հաշվառմամբ հնարավոր կլինի նաև ամբողջական

97 Բրեքնելլն ընդդեմ Միացյալ Թագավորության, 2007 թվականի նոյեմբերի 27-ի վճիռը, թիվ 32457/04, 66-72 կետեր, և Հաքեթթն ընդդեմ Միացյալ Թագավորության, 2005 թվականի մայիսի 10-ի որոշումը, թիվ 34698/04:

գնահատական տալ Լ.Գուլյանի մահվան փաստի քննության արդյունավետությանը[98]:

Ա. Գզոյանի գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացվել էր ***մինչդատական վարույթի ընթացքում մեղադրյալի նկատմամբ խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի կիրառման մասին վերջինի հայտարարությունների նկատմամբ իրավասու պետական մարմինների վերաբերմունքի իրավաչափության*** հարցը[99]: Սույն գործի շրջանակներում Վճռաբեկ դատարանի կողմից հղում է կատարվել ոչ միայն Կոնվենցիայի դրույթներին, այլև ՄԱԿ-ի Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիային: Միաժամանակ, իր դիրքորոշումը Վճռաբեկ դատարանն արտահայտել է՝ հիմնվելով Եվրոպական դատարանի նախադեպային որոշումների վրա: Մասնավորապես, որոշմամբ կիրառվել է Զելիլոֆն ընդդեմ Հունաստանի գործով դատարանի որոշումը, որով Եվրոպական դատարանը ևս մեկ անգամ հաստատել է, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածը պաշտպանում է ժողովրդավարական հասարակության ամենահիմնարար արժեքներից մեկը: Անգամ այնպիսի բարդ իրավիճակներում, ինչպիսիք են ահաբեկչության և կազմակերպված հանցավորության դեմ պայքարը, Կոնվենցիան բացարձակ արտահայտություններով արգելում է խոշտանգումը և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը, և 15-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված թույլտվությունից բացի որևէ բացառություն կամ սահմանափակում չի նախատեսում, անգամ ազգի գոյությանը սպառնացող արտակարգ դրության դեպքում..[100]:

Վճռաբեկ դատարանի կողմից մեկ այլ որոշման մեջբերմամբ հաստատվել է, որ խոշտանգումների արգելքի բացարձակ բնույթը ենթադրում է ոչ միայն խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կիրառումից ձեռնպահ մնալու, այլ նաև որոշակի պոզիտիվ գործողություններ կատարելու պետության պարտականությունը: Պոզիտիվ պարտականության առկայությունը հիմնավորվել է Եվրոպական դատարանի մի շարք որոշումներով, մասնավորապես, Վճռաբեկ դատարանի կողմից մեջբերվել է Բեկոսը և Կուտրոպուլոսն ընդդեմ Հունաստանի որոշումը, որտեղ Դատարանն

98 Տե՛ս, թիվ ԵԿԴ/0051/11/09 գործով Վճռաբեկ դատարանի որոշումը, Հավելված 1:

99 Տե՛ս, թիվ ԵԱՔԴ/0049/01/09 գործով Վճռաբեկ դատարանի որոշումը, Հավելված 1:

100 Զելիլոֆն ընդդեմ Հունաստանի, 2004 թվականի մայիսի 24-ի վճիռը, թիվ 17060/03, կետ 42:

իր իրավական դիրքորոշումն է հայտնել այն մասին, որ եթե անձը անում է վստահելի հայտարարություն այն մասին, որ ինքն ի խախտումն 3-րդ հոդվածի ենթարկվել է խոշտանգման ոստիկանի կամ նման այլ պետական պաշտոնատար անձի կողմից, ապա այդ դրույթը Կոնվենցիայի 1-ին հոդվածով ամրագրված՝ «իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար Կոնվենցիայով սահմանված իրավունքների և ազատությունների ապահովման» պետությունների ընդհանուր պարտականության հետ միասին ենթադրում է արդյունավետ պաշտոնական քննության առկայություն: Հակառակ պարագայում, խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ընդհանուր իրավական արգելքը, չնայած իր հիմնարար կարևորության, գործնականում ոչ արդյունավետ կլինի և որոշ դեպքերում հնարավոր կլինի պետական մարմինների կողմից խախտել իրենց տրամադրության տակ գտնվող անձանց իրավունքները և փաստացի մնալ անպատժելի[101]:

Սույն գործի փաստական տվյալների համաձայն՝ Ա. Գզոյանն իր նկատմամբ կիրառված ֆիզիկական և հոգեբանական բռնությունների վերաբերյալ հայտնել է նախաքննության մարմնին: Խոշտանգումներ կիրառած պաշտոնատար անձի նկատմամբ նշանակվել է ծառայողական քննություն, որի արդյունքում կայացվել է որոշում «ՀՀ ոստիկանության ԿՀՂՊ Գլխավոր վարչության 4-րդ վարչության 2-րդ բաժնի ավագ օպերլիազոր, ոստիկանության մայոր Ավետիք Հրաչի Համբարձումյանի հարցը քննարկել ԿՀՂՊ Գլխավոր վարչության պետին կից օպերատիվ խորհրդակցությունում»: Գործի փաստական հանգամանքներով հաստատվել է, որ ծառայողական քննություն իրականացրած մարմինը չի անդրադարձել մարմնական վնասվածքներ ստանալու վերաբերյալ Ա. Գզոյանի հայտարարությանը, դա ստուգելու նպատակով դատաբժշկական փորձաքննություն չի նշանակել, մինչդեռ դատաբժշկական ապացույցներն առանցքային նշանակություն ունեն խոշտանգումների վերաբերյալ հայտարարությունների արդյունավետ քննության համար:

Մինչդեռ Եվրոպական դատարանը նմանատիպ հանգամանքներով Մամմադովն ընդդեմ Ադրբեջանի գործով որոշմամբ արձանագրել է, որ իշխանությունները պետք է ողջամիտ քայլեր ձեռնարկեն ապահովելու համար միջադեպին վերաբերող ապացույցների պահպանությունը՝ ներառյալ դատաբժշկական ապացույցները: Դատաբժշկական ապա-

101 Բեկոսը և Կուտրոպուլոսն ընդդեմ Հունաստանի, 2005 թվականի դեկտեմբերի 13-ի վճիռը, թիվ 15250/02, կետ 53:

ցույցները ժամանակային առումով չապահովելը հանդիսանում է սույն գործով ոչ արդյունավետ քննություն իրականացնելու հիմնական գործոններից մեկը: Ժամանակին կատարված բժշկական հետազոտությունը բժշկին հնարավորություն կտար վնասվածքների պատճառման ժամանակի և դրանց պատճառների վերաբերյալ առավել որոշակի եզրակացության հանգել[102]: Այս պայմաններում Վճռաբեկ դատարանը հանգել է հետևության, որ սույն գործով խոշտանգումների ենթարկվելու վերաբերյալ հայտարարությանը պատշաճ արձագանք չի եղել, քանի որ, ինչպես արձանագրել է Եվրոպական դատարանը, խոշտանգումը պետք է հանգեցնի քրեական պատասխանատվության և պատժի[103]:

102 Մամմադովն ընդդեմ Ադրբեջանի, 2007 թվականի հունվարի 11-ի վճիռը, թիվ 34445/04, կետ 74:

103 Բատին և այլոք ընդդեմ Թուրքիայի, 2004 թվականի հունիսի 3-ի վճիռը, թիվ 33097/96 և 57834/00, 145-146 կետեր:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Այսպիսով, ՀՀ դատարանների դատական ակտերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ չնայած Եվրոպական դատարանի հարուստ նախադեպային իրավունքի գոյությանը, ՀՀ դատական ատյանների՝ հատկապես Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների կողմից դրա կիրառումը սահմանափակ է: Դատարաններն իրենց իրավական եզրահանգումները կատարում են՝ գլխավորապես հիմք ընդունելով ներպետական օրենսդրութան դրույթները և կոնկրետ գործի փաստական հանգամանքները:

Սահմանափակ է դատական նախադեպի «դասական» կիրառությունը. դատարանները հակված են կիրառելու Եվրոպական դատարանի կողմից Կոնվենցիայի որևէ դրույթին տրված ընդհանուր մեկնաբանությունները, ինչը, սակայն, չի հանդիսանում կոնկրետ գործով նախադեպի կիրառում (նախադեպի՝ որպես իրավունքի աղբյուրի առանձնահատկություններից ելնելով): Թեև ներպետական դատարանների դատական ակտերում մեկնաբանություններ և իրավական դիրքորոշումներ են տեղ գտնում, սակայն, որպես կանոն, դրանք չեն օգտագործվում որպես մոդել՝ գործի ելքին հանգելու նպատակով: Այդպիսով, նախադեպն ընկալվում է որպես մեկնաբանող ակտ, և լիարժեքորեն չի իրացվում նախադեպի՝ որպես իրավակիրառական ակտի ներուժը:

Դատական ակտերում չի հիմնավորվում, թե ինչու է Եվրոպական դատարանի՝ կոնկրետ գործով վճիռը կիրառելի խնդրո առարկա գործը լուծելու համար: Որպես կանոն, չի դիտարկվում երկու գործերի փաստական հանգամանքների նույնականությունը կամ տարբերությունը, ինչը հիմք է տալիս կիրառել կոնկրետ որոշումը կամ մերժել դրա կիրառման անհրաժեշտությունը:

Կարելի է եզրակացնել, որ մեջբերված վճիռների փաստական հանգամանքները և դրանց տրված գնահատականները ներպետական դատարանները հանգամանալից չեն ուսումնասիրում, քանի որ արձանագրվել են դեպքեր, երբ Եվրոպական դատարանը ճանաչել է վիճարկվող իրավունքի խախտում, մինչդեռ միևնույն նախադեպի կիրառությամբ ներպետական դատարանը խախտում չի ճանաչել:

Ուսումնասիրված դատական ակտերի հիմնավորվածության և մեկնաբանության տեսանկյունից նկատելի է որոշակի օրինաչափություն. Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանի կայացրած ակտերի

մեջ առավելապես գերակշռում են պատշաճ չմեկնաբանված կամ կողմերի հղումներն անտեսող ակտերը, ինչը չի կարելի ասել Վճռաբեկ դատարանի կայացրած ակտերի մասին: Ի հակադրություն վերը նշված օրինաչափության, ՀՀ դեմ կայացված վճիռների առկայության պարագայում դատարաններն առավել հակված են հիմնավորել կիրառվող նախադեպի և քննվող գործի փաստական հանգամանքների նմանությունը կամ նույնականությունը:

Բավականին շատ են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի կապակցությամբ արված միատեսակ, կրկնվող մեկնաբանությունները: Ըստ էության, դատական ակտերի մեծ մասում ոչ թե նախադեպի կիրառություն է առկա, այլ Կոնվենցիայի դրույթի մեխանիկական մեջբերում: Այս կերպ, ըստ երևույթին, փորձ է արվում բարձրացնել դատական ակտի հեղինակությունը, սակայն մեխանիկական վերարտադրությունն իր այս նպատակին ծառայել չի կարող: Դատական ակտերում հաճախ է հանդիպում Կոնվենցիայի՝ միմյանց բացառող հոդվածների միաժամանակյա վկայակոչումը:

Քիչ չէ այն գործերի քանակը, որոնցով դատարաններն անտեսել են կողմերի հղումները կամ իրենց իսկ կողմից կատարված հղումներին չեն տվել որևէ մեկնաբանություն: Մասնավորապես, Կոնվենցիայի խախտումների մատնանշումներն առավել հաճախ տեղ են գտնում վերաքննիչ բողոքներում, որոնք, սակայն, իրենց հետագա պատասխանը դատարանի որոշմամբ չեն ստանում: Դատարանների կողմից Եվրոպական դատարանի որոշումը չկիրառելու հիմնավորումները սակավաթիվ են և տեղ են գտնում եզակի դեպքերում: Սակայն յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի թե՛ փաստական, թե՛ իրավական հիմնավորումը, ինչպես նաև հիմնավորել մատնանշված նախադեպի չկիրառումը:

Վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումների գերակշիռ մասում հղում է արվում Եվրոպական դատարանի միևնույն նախադեպին: Վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու որոշումների որակի և հիմնավորվածության վրա ազդող կարևոր բացասական գործոններից է այն հանգամանքը, որ դրանք, որպես կանոն, չեն հրապարակվում: Հատկանշական է, որ վերադարձի որոշումներին հատուկ է վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերի հատվածի բացակայությունը, ինչը ևս կարող է կասկածի տակ դնել որոշման հիմնավորվածությունը, քանի որ այս հատվածի բացակայության պայմաններում բավականին դժվար է կողմնորոշվել որոշման հիմնա-

վորվածության հարցում: Այս որոշումներում Կոնվենցիայի կիրառությունը գրեթե բացակայում է, հիմնավորումները ելնում են միայն վճռաբեկ բողոքի պահանջները չբավարարելու դրույթից:

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԿԱՅԱՑՎԱԾ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐ

Լևոն Գուլյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0051/11/09

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵԿԴ/0051/11/09

Նախագահող դատավոր՝ Ս. Ավետիսյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Դ. Ավետիսյանի

մասնակցությամբ դատավորներ Հ. Ասատրյանի
Ե. Դանիելյանի
Ա. Պողոսյանի
Ս. Օհանյանի

քարտուղարությամբ Մ. Պետրոսյանի

մասնակցությամբ տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Հ. Ղուկասյանի

2010 թվականի օգոստոսի 27 -ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2010 թվականի փետրվարի 5-ի որոշման դեմ տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչներ Ա. Կարախանյանի և Հ. Ղուկասյանի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>

1. 2007 թվականի մայիսի 12-ին ՀՀ ոստիկանության վարչական շենքի բակում Լևոն Գուլյանի մահվան փաստի առթիվ Երևան քաղաքի դատախազությունում ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

2. 2007 թվականի դեկտեմբերի 12-ից քրեական գործը քննվել է ՀՀ հատուկ քննչական ծառայությունում:

2008 թվականի մարտի 12-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Գ. Պետրոսյանը որոշում է կայացրել վերը նշված գործի վարույթը կարճելու մասին՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

3. Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչների բողոքի հիման վրա Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2008 թվականի հունիսի 6-ի որոշմամբ վերացրել է քննիչի՝ վերը նշված որոշումը:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել դատախազը:

2008 թվականի հուլիսի 21-ին Վերաքննիչ դատարանը, մերժելով դատախազի վերաքննիչ բողոքը, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2008 թվականի հունիսի 6-ի որոշումը թողել է օրինական ուժի մեջ:

4. 2008 թվականի օգոստոսի 16-ին սույն քրեական գործով կարճված վարույթը վերսկսվել է, և նախաքննությունը կրկին իրականացվել է ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Գ.Պետրոսյանի կողմից:

2009 թվականի ապրիլի 16-ին սույն քրեական գործի վարույթը քննիչի որոշմամբ կրկին կարճվել է՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

5. 2009 թվականի հունիսի 2-ին տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչները քննիչի վերոնշյալ որոշումը բողոքարկել են ՀՀ գլխավոր դատախազին:

ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Զ.Թադևոսյանը 2009 թվականի հունիսի 9-ին որոշում է կայացրել քրեական գործի վարույթը կարճելու մասին քննիչի՝ 2009 թվականի ապրիլի 16-ի որոշման դեմ տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչների բողոքը մերժելու մասին:

6. Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչները բողոք են ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, որով խնդրել են վերացնել ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Զ. Թադևոսյանի՝ 2009 թվականի հունիսի 9-ի, քրեական գործի վարույթը կարճելու մասին ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Գ. Պետրոսյանի՝ 2009 թվականի ապրիլի 16-ի որոշումները և վերսկսել սույն քրեական գործով վարույթը:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2009 թվականի դեկտեմբերի 2-ի որոշմամբ մերժվել է տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչների բողոքը:

7. Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչների վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2010 թվականի փետրվարի 5-ի որոշմամբ բողոքը մերժել է, իսկ Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 2-ի որոշումը՝ թողել անփոփոխ:

8. Վճռաբեկ բողոք են բերել տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչներ Ա.Կարախանյանը և Հ.Ղուկասյանը:

ՀՀ վճռաբեկ դատարանը 2010 թվականի ապրիլի 2-ի որոշմամբ տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչների բողոքը վարույթ է ընդունել:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

9. Քրեական գործով վարույթը կարճելու մասին քննիչի՝ 2009 թվականի ապրիլի 16-ի որոշման համաձայն՝ «2007 թվականի մայիսի 9-ին Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի վարչական տարածքում Ստեփան Վարդանյանի սպանության կապակցությամբ օպերատիվ հարցազրույցի հրավիրված՝ Երևան քաղաքի Եղբայրության փողոցի 14 շենքի 23 բնակարանի բնակիչ, 1976 թվականի ծնված Լևոն Աշոտի Գույլանը ժամը 15:20-ի սահմաններում ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության 2-րդ վարչության 1-ին բաժնի պետի աշխատասենյակի պատուհանից փորձել է դիմել փախուստի, սակայն վայր է ընկել և

ստացված վնասվածքներից տեղում մահացել» (տե՛ս քրեական գործ հատոր 5, էջ 98):

10. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2008 թվականի հունիսի 6-ի որոշմամբ հաստատված է համարվել, որ Լևոն Գուլյանը 2007 թվականի մայիսի 10-ի գիշերը ժամը 03-04-ի սահմաններում կանչվել և մինչ 2007 թվականի մայիսի 12-ի ժամը 14:00-ը գտնվել է ոստիկանության Շենգավիթի բաժնում (Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2008 թվականի հունիսի 6-ի որոշման 9-րդ էջ, տե՛ս քրեական գործ, 4-րդ հատոր, էջ 190):

11. Լ. Գուլյանի մուտքը և ելքը ոստիկանության Շենգավիթի բաժնում պաշտոնապես չի գրանցվել (տե՛ս Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2008 թվականի հունիսի 6-ի որոշման 11–րդ էջ, քրեական գործ հատոր 4, էջ 192):

12. Ո՛չ Շենգավիթ համայնքի դատախազության քննիչի, ո՛չ էլ դատախազի կողմից ոստիկանությանը 2007 թվականի մայիսի 10-ին որպես վկա հարցաքննվելուց հետո Լ. Գուլյանի հետ կապված գործողություններ կատարելու գրավոր կամ բանավոր որևէ հանձնարարություն կամ ցուցում չի տրվել (տե՛ս քրեական գործ, 3-րդ հատոր, 125-126 էջեր):

13. 2007 թվականի մայիսի 12-ին ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ պետի հանձնարարությամբ ոստիկանության բարձրաստիճան պաշտոնյաները ծառայողական մեքենայով ժամը 14:00-ի սահմաններում Լ. Գուլյանի և տեղափոխել են նշված վարչություն (Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2008 թվականի հունիսի 6-ի որոշման 10-րդ էջ, տե՛ս քրեական գործ, 4-րդ հատոր, էջ 191):

14. Լ. Գուլյանը ՔՀԳՎ-ում աշխատասենյակից աշխատասենյակ է տեղափոխվել ոստիկանության աշխատակիցների ուղեկցությամբ, իսկ նրա ջուր խմելու հարցով զբաղվել է բարձրաստիճան ոստիկանը (Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2008 թվականի հունիսի 6-ի որոշման 19-րդ էջ, տե՛ս քրեական գործ, 4-րդ հատոր, էջ 200):

15. 2008 թվականի հունիսի 6-ի որոշման մեջ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը եզրակացրել է, որ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի դրույթներով սույն գործի շրջանակներում ծագած կոնկրետ հարաբերությունները կարգավորվել չեն կարող» (տե՛ս Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշման 12-րդ էջ, քրեական գործ հատոր 4, էջ 193):

16. Ի պատասխան Լ. Գուլյանի մահվան փաստի առթիվ հարուցված քրեական գործով քննչական փորձարարություն կատարելու համար մանեկեն տրամադրելու մասին ՀՀ գլխավոր դատախազության միջազգային կապերի բաժնի պետի հարցման՝ Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազությունից ստացվել է 2008 թվականի դեկտեմբերի 1-ով թվագրված հետևյալ բովանդակությամբ գրություն. «Հայտնում ենք, որ հարցման մեջ նշված բնութագրերով մանեկեն Ռուսաստանի Դաշնության դատախազությանն առընթեր քննչական կոմիտեի տրամադրության տակ չկա:

Միևնույն ժամանակ, Ռուսաստանի Դաշնության դատախազությանն առընթեր քննչական կոմիտեի կողմից ներկայում գնված են 170սմ երկարությամբ և 40կգ քաշով շարնիրային մանեկեններ, որոնցից մեկը կարող է տրամադրվել Հայաստանի Հանրապետության իրավապահպան մարմինների ներկայացուցիչներին» (տե՛ս քրեական գործ, 5-րդ հատոր, էջ 66):

17. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն իր 2008 թվականի հունիսի 6-ի որոշման մեջ, հղում անելով ՀՀ վճռաբեկ դատարանի 2008 թվականի մայիսի 23 թիվ ՎԲ-17/08 որոշման 35-րդ կետի վրա, նշել է. «Որպեսզի պայմանավորվող պետության պատասխանատվությունն առաջացնող մահվան կապակցությամբ նախաքննությունը համարվի «արդյունավետ» Կոնվենցիայի 2-րդ հոդվածի իմաստով, առաջին հերթին անհրաժեշտ է, որ այդ նախաքննությունը լինի պատշաճ: Այն է՝ նման նախաքննությունը պետք է կարողանա հանգեցնել պատասխանատու անձանց ինքնությունը պարզելուն և նրանց պատժին: Իշխանությունները պետք է իրականացնեն առկա բոլոր ողջամիտ քայլերը՝ ապահովելու համար պատահարների հետ կապված ապացույցները» (Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2008 թվականի հունիսի 6-ի որոշման 9-րդ էջ, տե՛ս քրեական գործ, 4-րդ հատոր, էջ 190):

18. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն իր 2008 թվականի հունիսի 6-ի որոշման մեջ արձանագրել է. «[Քննություն կատարող մարմինների կողմից] Միջոցներ չեն ձեռնարկվել Լ. Գուլյանի հավանական անկման պայմաններն ու հետևանքները ճշտելու ուղղությամբ: Ընդունելով քննչական փորձարարություն կատարելու անհրաժեշտությունն ու կարևորությունը՝ նման փորձարարություն չի կատարվել համապատասխան մանեկեն չգտնելու պատճառաբանությամբ»: Նույն որոշման մեջ արձանագրվել է նաև. «Գրավոր ցուցում տված գլխավոր դատախազի տեղակալը (քրեական գործ հ. 4, էջ 123) և նախաքննական մարմինը, կարևորելով Լ.

Գուլյանի անկման մեխանիզմը պարզելու նպատակով քննչական փորձարարություն կատարելու հանգամանքը՝ այդ հիմքով երկարացնելով նախաքննության ժամկետը՝ առանցքային այդ քննչական գործողությունը չի կատարել միայն այն հիմքով, որ համապատասխան մանեկեն ձեռք բերվել չի հաջողվել» (Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2008 թվականի հունիսի 6-ի որոշման 4-րդ և 23-րդ էջեր, տե՛ս քրեական գործ, 4-րդ հատոր, 185, 204 էջեր):

19. Վերաքննիչ դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 21-ի որոշմամբ հաստատված է համարվել, որ «2007 թվականի մայիսի 12-ին ժամը 14-ի սահմաններում ոստիկանության կողմից Լ. Գուլյանի և ՀՀ ոստիկանության ՔՀԳ վարչություն տանելը և դրան հաջորդող գործողությունները չեն բխում ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 1-ին, 191-րդ, 205-րդ, 206-րդ, 316-րդ հոդվածների պահանջներից» (Վերաքննիչ դատարանի որոշման 21-րդ էջ, տե՛ս քրեական գործ, 4-րդ հատոր, էջ 233):

20. Վերաքննիչ դատարանի 2010 թվականի փետրվարի 5-ի որոշման մեջ նշված է, որ «օրենքով սահմանված կարգով ձեռք բերված վերաբերելի և թույլատրելի փաստական տվյալները իրենց համակցությամբ բավարար են հանգելու հետևության, որ քրեական գործով նախաքննությունը շարունակելու հիմքեր չկան» (Վերաքննիչ դատարանի որոշման 19-րդ էջ, տե՛ս Նյութեր, էջ 160):

Վերաքննիչ դատարանի 2010 թվականի փետրվարի 5-ի որոշման համաձայն՝ «քրեական գործի նյութերի հետազոտությունը ցույց է տալիս, որ նախաքննական մարմինը իրականացրել է բոլոր հնարավոր և ողջամիտ քայլերը՝ ապահովելու համար Լ. Գուլյանի պատահարի հետ կապված փաստական հանգամանքները» (Վերաքննիչ դատարանի որոշման 19-րդ էջ, տե՛ս Նյութեր, էջ 160):

Վերաքննիչ դատարանի 2010 թվականի փետրվարի 5-ի որոշման համաձայն՝ «վերսկսված նախաքննության ընթացքում քրեական վարույթ իրականացնող մարմինը համապատասխան միջոցներ է ձեռնարկել դատարանների որոշումներում նշված թերությունները, խախտումները, բացերը վերացնելու կապակցությամբ, որի ընթացքում կայացվել է օբյեկտիվ և ճիշտ որոշում, այն է՝ Լ. Գուլյանի մահվան փաստի առթիվ հարուցված քրեական գործի վարույթը կարճվել է՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ» (Վերաքննիչ դատարանի որոշման 19-րդ էջ, տե՛ս Նյութեր, էջ 160):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

21. Բողոք բերած անձանց պնդմամբ Վերաքննիչ դատարանի 2010 թվականի փետրվարի 5-ի որոշումն անօրինական է, չհիմնավորված ու չպատճառաբանված: Ի հիմնավորումն իրենց փաստարկի՝ բողոքաբերները նշում են, որ այն հակասում է նախկինում սույն գործի քննությունն իրականացրած ՀՀ դատարանների որոշումներին, և դրանով անտեսվում են վերոնշյալ դատական ակտերում առաջ քաշված մի շարք պահանջներ: Մասնավորապես.

21.1 Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն իր 2008 թվականի հունիսի 6-ի որոշման մեջ, հղում անելով ՀՀ վճռաբեկ դատարանի 2008 թվականի մայիսի 23 թիվ ՎԲ-17/08 որոշման 35-րդ կետի վրա, նշել է. «Որպեսզի պայմանավորվող պետության պատասխանատվությունն առաջացնող մահվան կապակցությամբ նախաքննությունը համարվի «արդյունավետ» Կոնվենցիայի 2-րդ հոդվածի իմաստով, առաջին հերթին անհրաժեշտ է, որ այդ նախաքննությունը լինի պատշաճ: Այն է՝ նման նախաքննությունը պետք է կարողանա հանգեցնել պատասխանատու անձանց ինքնությունը պարզելուն և նրանց պատժին: Իշխանությունները պետք է իրականացնեն առկա բոլոր ողջամիտ քայլերը՝ ապահովելու համար պատահարների հետ կապված ապացույցները» (տե՛ս սույն որոշման 17-րդ կետը):

Մինչդեռ, ըստ բողոքաբերների, Վերաքննիչ դատարանի 2010 թվականի փետրվարի 5-ի որոշման մեջ հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ վերսկսված նախաքննությամբ դեպքի հետ կապված բոլոր ապացույցները չեն հավաքվել, իսկ Լ. Գուլյանի մահվան համար պատասխանատու անձանց ինքնությունը չի պարզվել, և նրանց պատժելու համար անհրաժեշտ միջոցներ չեն ձեռնարկվել:

21.2 2008 թվականի հունիսի 6-ի որոշման մեջ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը եզրակացրել է, որ. «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի դրույթներով սույն գործի շրջանակներում ծագած կոնկրետ հարաբերությունները կարգավորվել չեն կարող» (տե՛ս սույն որոշման 15-րդ կետը):

Մինչդեռ, ըստ բողոքաբերների, Վերաքննիչ դատարանի 2010 թվականի փետրվարի 5-ի որոշման մեջ անտեսվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի այս հետևությունը: Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որո-

շումը հիմնավորվել է «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի առանձին հոդվածներով:

21.3 Վերաքննիչ դատարանի 2010 թվականի փետրվարի 5-ի որոշման մեջ հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ Վերաքննիչ դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 21-ի որոշմամբ հաստատված է համարվել, որ «2007 թվականի մայիսի 12-ին ժամը 14-ի սահմաններում ոստիկանության կողմից Լ. Գուլյանի և ՀՀ ոստիկանության ՔՀԳ վարչություն տանելը և դրան հաջորդող գործողությունները չեն բխում ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 1-ին, 191-րդ, 205-րդ, 206-րդ, 316-րդ հոդվածների պահանջներից» (տե՛ս սույն որոշման 19-րդ կետը):

21.4 Բողոք բերած անձանց պնդմամբ, Վերաքննիչ դատարանի 2010 թվականի փետրվարի 5-ի որոշման մեջ հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ ո՛չ Շենգավիթի ոստիկանությունը, ո՛չ էլ ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ-ն Ս.Վարդանյանի սպանության գործով քրեական վարույթ իրականացնող մարմին չեն հանդիսացել: Ի հիմնավորումն այս պնդման՝ բողոքաբերները ներկայացրել են հետևյալ փաստարկները.

Առաջին, գործով նախաքննությունն իրականացվել է Շենգավիթ համայնքի դատախազության քննիչի կողմից:

Երկորդ, ո՛չ Շենգավիթ համայնքի դատախազության քննիչի, ո՛չ էլ դատախազի կողմից ոստիկանությանը 2007 թվականի մայիսի 10-ին որպես վկա հարցաքննվելուց հետո Լ. Գուլյանի հետ կապված գործողություններ կատարելու գրավոր կամ բանավոր որևէ հանձնարարություն կամ ցուցում չի տրվել (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը), մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ «Հետաքննության մարմինը քննիչի վարույթում գտնվող հանցագործությունների գործերով կատարում է քննիչի, դատախազի հանձնարարությունները, դատախազի ցուցումները»:

Երրորդ, ո՛չ Շենգավիթի ոստիկանության, ո՛չ էլ ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ-ի օպերատիվ աշխատակիցները, որոնք առնչություն են ունեցել Լ. Գուլյանի հետ, հետաքննության մարմին չեն հանդիսացել, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 27-րդ կետի համաձայն՝ հետաքննության մարմին է համարվում «(…) սույն օրենսգրքով հետաքննության իրավասություն ունեցող պետական մարմնի համապատասխան ստորաբաժանման պետը (…) և աշխատակիցները»:

21.5 Բողոք բերած անձինք փաստարկել են նաև, որ Վերաքննիչ դատարանի կողմից որևէ կերպ չի բացատրվել Լ. Գուլյանի՝ ոստիկանների մշտական հսկողության տակ գտնվելու և նրա կոշիկների վրայից քուղերի բացակայության հանգամանքները, ինչպես նաև այն, թե ինչու է Լ. Գուլյանը փորձել ՀՀ ոստիկանության վարչական շենքից դուրս գալ երկրորդ հարկի

պատուհանից ներքին բակ ցատկելու, այլ ոչ թե կենտրոնական մուտքից հեռանալու միջոցով:

21.6 Մեջբերելով Վերաքննիչ դատարանի 2010 թվականի փետրվարի 5-ի որոշումը, որում նշված է, որ «օրենքով սահմանված կարգով ձեռք բերված վերաբերելի և թույլատրելի փաստական տվյալները իրենց համակցությամբ բավարար են հանգելու հետևության, որ քրեական գործով նախաքննությունը շարունակելու հիմքեր չկան» (տե՛ս սույն որոշման 20-րդ կետը), բողոք բերած անձինք նշել են, որ Վերաքննիչ դատարանի կողմից անտեսվել է այն հանգամանքը, որ բողոքարկվող որոշման հիմքում առավելապես դրվել են նախաքննության մարմնի այն փաստարկները, որոնք գերակշռող մեծամասնությամբ հիմնված են քրեական գործի ելքով ուղղակի շահագրգռվածություն ունեցող ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների վրա: Վկայակոչված ցուցմունքները Վերաքննիչ դատարանը քննադատական վերլուծության չի ենթարկել, կասկածի տակ չի դրել և չի փորձել հերքել, թեև դա անելու համար քրեական գործում առկա են ավելի քան բավարար ապացույցներ:

Ըստ բողոք բերած անձանց՝ վերոշարադրյալից բացի, Վերաքննիչ դատարանի կողմից անտեսվել են հետևյալ ապացույցները՝

- վկաներ Մ. Գրիգորյանի, Հ. Մելքումյանի, Ձ. Գուլյանի և տուժողի իրավահաջորդ Ա. Գուլյանի ցուցմունքները, որոնցով հաստատվում են Լ. Գուլյանի նկատմամբ ոստիկանության աշխատակիցների կողմից կատարված կամայական և ապօրինի գործողությունները,
- «Շենգավիթ համայնքի դատախազ Ձ. Ֆարխոյանի գրությունը, որով հաստատվում է, որ մայիսի 10-ին հարցաքննվելուց հետո Լ. Գուլյանի հետ որևէ գործողության կատարում չի պլանավորվել, և նրա նկատմամբ ոստիկանության աշխատակիցների կատարած բոլոր գործողությունները դուրս են եղել վարույթն իրականացնող մարմնի վերահսկողության շրջանակներից,
- ՀՀ ոստիկանության կողմից կատարված ծառայողական քննության եզրակացությունը, ըստ որի՝ Լ. Գուլյանը մայիսի 10-ին ժամը 04-ի սահմաններում ներկայացել է ոստիկանության Շենգավիթի բաժին և ազատ է արձակվել ժամը 22-ի սահմաններում,
- փորձագիտական եզրակացություններով, մասնավորապես դատաբժշկական փորձաքննություններով, քրեագիտական, մանրաթելային և դատաքիմիական համալիր փորձաքննությամբ պարզված և դատարանների կողմից հաստատված մի շարք հանգամանքներ, որոնք հերքում են Գ. Թադևոսյանի աշխատասենյակի պատուհանից Լ. Գուլյանի անկման մեխանիզմը,
- քրեական գործով վկա, ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ պետ Հ. Միլիտոնյանի ցուցմունքը, ըստ որի՝ Լ. Գուլյանի և Մ. Գրիգորյանի

ցուցմունքների միջև առկա հակասության կապակցությամբ ինքը հանձնարարել է նշված անձանց հետ «բացատրական աշխատանքներ տանել և օպերատիվ հարցազրույց կատարելու նպատակով հրավիրել ՔՀԳ վարչություն», ինչը դուրս է ոստիկանության վերապահված լիազորությունների շրջանակից: Մինչդեռ ո՛չ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 11-րդ, 19-րդ, 20-րդ, ո՛չ այլ հոդվածներով, և ո՛չ էլ այլ իրավական ակտերով ոստիկանությունը նման լիազորություններ չունի, քանզի օրենքում պարզապես բացակայում են «բացատրական աշխատանքներ» և «օպերատիվ հարցազրույց» կամ «օպերատիվ հարցում» եզրույթները:

21.7 Վկայակոչելով Վերաքննիչ դատարանի 2010 թվականի փետրվարի 5-ի որոշումը, որի համաձայն՝ «քրեական գործի նյութերի հետազոտությունը ցույց է տալիս, որ նախաքննական մարմինը իրականացրել է բոլոր հնարավոր և ողջամիտ քայլերը՝ ապահովելու համար Լ. Գուլյանի պատահարի հետ կապված փաստական հանգամանքները» (տե՛ս սույն որոշման 20-րդ կետը), բողոք բերած անձինք փաստարկել են, որ Վերաքննիչ դատարանի կողմից հաշվի չի առնվել այն, որ նախաքննությունը վերսկսելուց հետո քրեական վարույթն իրականացնող մարմինը, հակառակ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանների որոշումներում առաջ քաշված պահանջների, չի պարզել գործի արդարացի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ: Մասնավորապես.

- ինչպես նախաքննության, այնպես էլ դատաքննության ընթացքում չի պարզվել Գ. Թադևոսյանի աշխատասենյակի պատուհանից Լ. Գուլյանի վայր ընկնելու մեխանիզմը (չի կատարվել քննչական փորձարարություն, կամ տեխնիկական այլ համալիր փորձաքննություն չի նշանակվել),
- չի ճշտվել, թե միջազգային փորձագետների կողմից նշված «մինչ ընկնելն այլ ուժի ազդեցությամբ առաջացած կապտուկներն ու վնասվածքները» Լ. Գուլյանի մարմնի որ հատվածներին են վերաբերում,
- չի բացահայտվել Գ. Թադևոսյանի աշխատասենյակի պատուհանին ձեռքի ափի հետք թողած անձի ինքնությունը,
- չի պարզվել, թե ում հագուստի օտար, բնական և քիմիական մանրաթելերն են հայտնաբերվել Լ. Գուլյանի հագուստի վրա և ինչի հետևանքով այդ նպատակով փորձանմուշներ չեն վերցվել և փորձաքննություններ չեն նշանակվել,
- չի պարզվել թե փախուստի փորձ կատարելու պայմաններում կրծքավանդակի և ողնաշարի կրծքային և գոտկային հատվածների

վնասվածքները ստանալու պահին Լ. Գուլյանը ինչպես է կրծքավանդակի հետին մակերեսով ուղղված եղել դեպի վնասվածք պատճառող առարկան:

21.8 Վկայակոչելով Վերաքննիչ դատարանի 2010 թվականի փետրվարի 5-ի որոշումը, որի համաձայն՝ «վերսկսված նախաքննության ընթացքում քրեական վարույթ իրականացնող մարմինը համապատասխան միջոցներ է ձեռնարկել դատարանների որոշումներում նշված թերությունները, խախտումները, բացերը վերացնելու կապակցությամբ, որի ընթացքում կայացվել է օբյեկտիվ և ճիշտ որոշում, այն է՝ Լ. Գուլյանի մահվան փաստի առթիվ հարուցված քրեական գործի վարույթը կարճվել է՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ» (տե՛ս սույն որոշման 20–րդ կետը), բողոք բերած անձինք փաստարկել են, որ Վերաքննիչ դատարանը նման հետևության չէր հանգի, եթե հաշվի առներ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի հուլիսի 21-ի որոշման մեջ տրված հետևյալ ձևակերպումը՝ «սպանության փաստի առթիվ հարուցված քրեական գործի հանգամանքների շուրջ արդեն իսկ հարցաքննված Լ. Գուլյանն այդպիսի լիազորություններով չօժտված պաշտոնատար անձանց կողմից «հրավիրվել», ապա փաստացի ազատությունից զրկված լինելու պայմաններում տեղափոխվել է ՀՀ ոստիկանության ՔՀԳ վարչություն, համապատասխան լիազորություններով չօժտված պաշտոնատար անձանց կողմից «քննչական գործողություններ, այդ թվում նաև առերեսում» կատարելու նպատակով, որով խախտվել է Լ. Գուլյանի ազատ տեղաշարժվելու իրավունքը, ինչն անհայտ պայմաններում ավարտվել է վերջինիս վախճանով» (ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի հուլիսի 21-ի որոշման 22-րդ էջ, տե՛ս Քրեական գործ, 4-րդ հատոր, էջ 233):

21.9 Սույն որոշման 21-րդ կետի՝ վերոշարադրյալ ենթակետերի հիման վրա բողոք բերած անձինք եզրահանգել են, որ Վերաքննիչ դատարանի 2010 թվականի փետրվարի 5-ի որոշմամբ խախտվել են Հայաստանի Հանրապետության կողմից միջազգային-իրավական պարտավորությունները, մասնավորապես՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ և 3-րդ, ինչպես նաև 5-րդ հոդվածները:

22. Անդրադառնալով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի խախտումներին՝ բողոք բերած անձինք նշել են, որ.

22.1 Հայաստանի Հանրապետությունը Լ. Գուլյանի մահվան կապակցությամբ չի կատարել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի շրջանակներում ստանձնած պոզիտիվ պարտավորությունները: Բողոքաբերների վերոնշյալ փաստարկի հիմքում դրված է Թանրիկուլուն ընդդեմ Թուրքիայի

գործով վճռի 97-րդ կետում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումն առ այն, որ անհատի սպանության համար պետության պատասխանատվության հանգամանքն իր կողմից հաստատելու նպատակով «պահանջվող ապացույցների մակարդակի ապահովումը կարող է բխել բավականաչափ ուժեղ, հստակ և համահունչ մտահանգումների կամ չհերքված ենթադրությունների գոյակցությունից»:

22.2 Ըստ բողոք բերած անձանց՝ Լ. Գուլյանի մահվան հետ կապված իրադարձությունները ամբողջությամբ կամ մեծ մասամբ համընկնում են իշխանությունների բացառիկ տեղեկացվածության տիրույթի մեջ, ուստի փաստական լուրջ ենթադրություններ են ծագում նրան պատճառված մարմնական վնասվածքների և մահվան առնչությամբ: Հետևաբար, ապացուցողական բեռն իշխանությունների վրա է, և նրանք պարտավոր են գոհացուցիչ և համոզիչ բացատրություն ներկայացնել (բողոքաբերների մեջբերված դատողության հիմքում դրված է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Սալմանն ընդդեմ Թուրքիայի, Չաքիչին ընդդեմ Թուրքիայի և Թիմութաշն ընդդեմ Թուրքիայի գործերով վճիռներում արտահայտված դիրքորոշումը):

22.3 Այն դեպքում, երբ անձը կալանավորվում է առողջ վիճակում, բայց ավելի ուշ հայտնվում է մահացած, պետական իշխանությունները պարտավոր են հիմնավոր բացատրություններ տրամադրել նրա մահվանը հանգեցրած իրադարձությունների կապակցությամբ: Նման բացատրություն չտրամադրելը կնշանակի, որ պետական իշխանությունները պատասխանատու կհամարվեն նրա մահվան համար (բողոքաբերների մեջբերված դատողության հիմքում դրված է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Վելիկովն ընդդեմ Բուլղարիայի, Անգելովան ընդդեմ Բուլղարիայի գործերով վճիռներում արտահայտված դիրքորոշումը): Հայցվորը միայն պարտավոր է ցույց տալ, որ իշխանությունները չեն արել այն ամենը, ինչը կարելի էր ողջամտորեն ակնկալել նրանցից՝ խուսափելու անձի կյանքի նկատմամբ իսկական և անմիջական ռիսկից, որի մասին նրանք իմացել էին կամ պարտավոր էին իմանալ (բողոքաբերների մեջբերված դատողության հիմքում դրված է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Օսմանն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճռում արտահայտված դիրքորոշումը):

22.4 «Պետությունը կարող է ճանաչվել Կոնվենցիայի 2-րդ հոդվածը խախտող պետություն՝ հետաքննելու պարտավորության առնչությամբ նույնիսկ այն դեպքում, երբ հայցվորը չի կարողանում ապացույցներ ներկայացնել պետության գործակալների կողմից անձի դիտավորյալ սպանության կապակցությամբ» (բողոքաբերների մեջբերված դատողության հիմքում դրված է Յասան ընդդեմ Թուրքիայի գործով վճռում արտահայտված դիրքորոշումը): Հետաքննությունը պետք է լինի «ման-

րակրկիտ, անկողմնակալ և զգուշավոր» (բողոքաբերների մեջբերված դատողության հիմքում դրված է Վելիկովն ընդդեմ Բուլղարիայի գործով վճռում արտահայտված դիրքորոշումը): Հետաքննությունը պետք է նաև գործուն լինի այն իմաստով, որ դրա արդյունքում հնարավոր լինի պարզել, թե արդյոք նման դեպքերում գործադրված ուժը հիմնավորված է եղել, թե ոչ կոնկրետ հանգամանքներում, և բացահայտվեն ու պատժվեն մեղավորները: Սա ոչ թե արդյունքների, այլ ձեռնարկվող միջոցների առնչվող պարտավորություն է (բողոքաբերների մեջբերված դատողության հիմքում դրված է Շենեգանն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճռում արտահայտված դիրքորոշումը):

23. Բողոքաբերները նշել են նաև, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը համանման մոտեցում է ցուցաբերում նաև Կոնվենցիայի 3-րդ հոդվածով սահմանված պոզիտիվ պարտավորությունների կատարման կապակցությամբ: Խոշտանգման կամ անմարդկային վերաբերմունքի դրսևորման ապացուցելու բեռը հայցվորից տեղափոխվում է պետության վրա այն դեպքում, երբ անհատը ոստիկանության կողմից կալանավորվում է առողջ վիճակում, սակայն հետագայում նրա մոտ հայտնաբերվում են մարմնական վնասվածքներ: Նման պարագայում պետությունը պարտավոր է հիմնավոր բացատրություն տալ այդ վնասվածքների կապակցությամբ:

24. Հիմք ընդունելով վերևում շարադրված դատողությունները՝ բողոք բերած անձինք հետևություն են արել այն մասին, որ Վերաքննիչ դատարանը, չկատարելով Կոնվենցիայի 2-րդ, 3-րդ և 5-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների խախտման կապակցությամբ անկողմնակալ և արդյունավետ քննություն, խախտել է նաև Կոնվենցիայի 13-րդ հոդվածը:

25. Վճռաբեկ բողոքում շարադրված դատողությունների հիման վրա բողոքաբերները փաստարկել են, որ Վերաքննիչ դատարանի 2010 թվականի փետրվարի 5-ի որոշմամբ խախտվել են ՀՀ Սահմանադրության 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ հոդվածների, Եվրոպական կոնվենցիայի 2-րդ, 3-րդ, 5-րդ, 13-րդ հոդվածների և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ, 17-րդ և 25-րդ հոդվածների պահանջները: Վերաքննիչ դատարանը չի կիրառել Կոնվենցիայի այն հոդվածը (հոդվածները), որը ենթակա էր կիրառման, ինչպես նաև թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումներ, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկել կամ դրանցում սահմանափակել կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, այսինքն՝ թույլ է տրվել միջազգային

պայմանագրի ոչ ճիշտ կիրառում և քրեադատավարական օրենքի էական խախտում:

26. Ըստ բողոքի հեղինակների՝ վճռաբեկ բողոքը պետք է վարույթ ընդունվի, քանի որ առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածով նախատեսված հետևյալ հիմքերը.

ա) Վերանայվող դատական ակտն առերևույթ հակասում է վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված որոշմանը:

Բողոքի հիմնավորումները շարադրելիս մատնանշվել է, որ քրեական գործի վարույթը կարճելու մասին նախաքննության մարմնի որոշումը վերացնելիս առաջին ատյանի դատարանն իր հետևությունները հիմնավորելու համար 2008 թվականի հունիսի 6-ի որոշման մեջ հղում է արել ՀՀ վճռաբեկ դատարանի 2008 թվականի մայիսի 23-ի թիվ ՎԲ-17/08 որոշման նախադեպային նշանակություն ունեցող որոշ դրույթների վրա: Մասնավորապես, նշվել է, որ սույն քրեական գործով նախաքննությունը չի եղել պատշաճ, հետևաբար, և արդյունավետ, չեն պարզվել և պատժվել պատասխանատու անձինք, ինչպես նաև չեն ապահովվել պատահարի հետ կապված բոլոր ապացույցները (որոշ բարձրաստիճան ոստիկաններ չեն հարցաքննվել, ոմանք հարցաքննվել են դեպքից հինգ օր անց, Լ. Գուլյանի հետ առնչված վկաները անմիջապես չեն առանձնացվել միմյանցից, որը չի բացառել նրանց հնարավոր հանդիպումն ու դեպքի կապակցությամբ փոխադարձ պայմանավորվածության գալը (թիվ ՎԲ-17/08 որոշման 35-րդ և 37-րդ կետեր):

Այնուհանդերձ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի, այդ թվում՝ Վճռաբեկ դատարանի որոշման պարտադրականության պահանջը և կայացրել է դրանցում արձանագրված փաստական հանգամանքներին և տրված հիմնավորումներին հակասող որոշում:

բ) Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ:

Նշված դատական սխալն առաջացրել է ծանր հետևանքներ, քանի որ դրա արդյունքում անպատիժ են մնացել ոստիկանության այն աշխատակիցները, ովքեր սահմանազանցելով իրենց լիազորությունները՝ քրեական գործով վկայի կարգավիճակ ունեցող, սակայն փաստացի ազատությունից զրկված Լ. Գուլյանին ֆիզիկապես և հոգեպես առողջ վիճակում, առանց իրավական հիմքի, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներից դուրս հարկադրաբար բերել են ՀՀ ոստիկանության վարչական շենք, որտեղ նա անհայտ պայմաններում մահացել է:

27. Վճռաբեկ բողոքում շարադրված փաստարկների հիման վրա բողոքի հեղինակները խնդրել են բեկանել Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 2-ի որոշումն անփոփոխ թողնելու և տուժողի

իրավահաջորդի ներկայացուցիչների բողոքը մերժելու մասին Վերաքննիչ դատարանի 2010 թվականի փետրվարի 5-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

I. Ոստիկանությունում մահացած անձի մահվան փաստի առթիվ արդյունավետ քննության պարտականությունը՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի ներքո.

28. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին հարցը հետևյալն է. Լ. Գուլյան ի մահվան փաստի նկատմամբ տարածվու՞մ է արդյոք Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածով նախատեսված կյանքի իրավունքի դատավարական բաղադրիչը:

29. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով (...)»:

30. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ այն դեպքերում, երբ անհրաժեշտ է եղել հավաստել, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքները ոչ թե տեսական կամ պատրանքային են, այլ գործնական են և արդյունավետ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի տարբեր հոդվածների համատեքստերում սահմանվել են դատավարական պարտականություններ (տե՛ս, օրինակ, B. v. the United Kingdom, 1987 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 9840/82, կետ 63, M.C. v. Bulgaria, 2003 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 39272/98, 148-153 կետերը, և Cyprus v. Turkey, 2001 թվականի մայիսի 10-ի Մեծ պալատի վճիռը, գանգատ թիվ 25781/94, կետ 147):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածները մեկնաբանել է որպես այդ դրույթների նյութաիրավական կողմերի ենթադրյալ խախտման կապակցությամբ արդյունավետ քննություն իրականացնելու դատավարական պարտականություն սահմանող նորմեր՝ հաշվի առնելով այս իրավունքների հիմնարար բնույթը (տե՛ս McCann and Others v. The United Kingdom, 1995 թվականի սեպտեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 18984/91, 157-164 կետերը, Ergi v. Turkey, 1998 թվականի հուլիսի 28-ի վճիռը, գանգատ թիվ 23818/94, կետ 82, Mastromatteo v. Italy, 2002 թվականի հոկտեմբերի 24-ի Մեծ պալատի վճիռը, գանգատ թիվ 37703/97, կետ 89, և

Assenov and Others v. Bulgaria, 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 24760/94, 101-106 կետեր):

31. Մասնավորապես, սույն գործին վերաբերելի մասով Կոնվենցիայի 2-րդ հոդվածով ամրագրված կյանքի իրավունքի շրջանակներում արդյունավետ քննություն իրականացնելու պարտականությունը (կյանքի իրավունքի դատավարական բաղադրիչը) բխում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում հաստատված այն իրավական դիրքորոշմամբ, որ եթե առողջ անձը ոստիկանության կողմից արգելանքի է վերցվել և հետագայում մահացել, ապա պետությունը պարտավոր է ներկայացնել անձի մահվան հանգեցրած իրադարձությունների համոզիչ բացատրություն, և այն չներկայացնելու դեպքում պետությունը խախտած կլինի Կոնվենցիայի 2-րդ հոդվածը (տե՛ս Velikova v. Bulgaria, 2000 թվականի մայիսի 18-ի վճիռը, գանգատ թիվ 41488/98, կետ 70, mutatis mutandis, Selmouni v. France, 2002 թվականի հոկտեմբերի 24-ի Մեծ պալատի վճիռը, գանգատ թիվ 25803/94, կետ 87):

32. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Լևոն Գուլյանի ի մահը վրա է հասել 2007 թվականի մայիսի 12-ին ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության 2-րդ վարչության 1-ին բաժնի պետի աշխատասենյակի պատուհանից վայր ընկնելու հետևանքով (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը): Նախքան այդ, Լ. Գուլյանը վերոնշյալ վարչություն էր տեղափոխվել ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ պետի հանձնարարությամբ, ՀՀ ոստիկանության բարձրաստիճան պաշտոնյաների կողմից, իրենց ծառայողական մեքենայով (տե՛ս սույն որոշման 13-րդ կետը): Լ. Գուլյանը ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչությունում աշխատասենյակից աշխատասենյակ է տեղափոխվել ոստիկանության աշխատակիցների ուղեկցությամբ, իսկ նրա ջուր խմելու հարցով զբաղվել է բարձրաստիճան ոստիկանը (տե՛ս սույն որոշման 14-րդ կետը):

33. Նախորդ կետում շարադրված փաստական հանգամանքները համադրելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Վելիկովայի վերաբերյալ վճռով արտահայտված իրավական դիրքորոշման հետ՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ, 2007 թվականի մայիսի 12-ին ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության աշխատակիցների տրամադրության տակ լինելու պայմաններում Լ. Գուլյանի մահվան փաստի առթիվ պետությունը պարտավոր է իրականացնել արդյունավետ քննություն՝ ուղղված նրա մահվանը հանգեցրած իրադարձությունների համոզիչ բացատրություն ներկայացնելուն:

II. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի ներքո պետության դատավարական պարտականության տևողությունը

34. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ հարցն այն է, թե Լ. Գուլյանի մահվան փաստի արդյունավետ քննություն իրականացնելու պարտականությունը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի իմաստով կարո՞ղ է արդյոք ավարտված համարվել:

35. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նախադեպային մի քանի որոշումներում արձանագրել է, որ կասկածելի պայմաններում տեղի ունեցած մահվան փաստի արդյունավետ քննության պարտականությունը շարունակում է առկա լինել այնքան ժամանակ, քանի դեռ ակնկալվում է, որ իշխանությունները ողջամտորեն կարող են միջոցներ ձեռնարկել մահվան հանգամանքները բացահայտելու և դրա համար պատասխանատվություն սահմանելու նպատակով (տե՛ս, mutatis mutandis, Brecknell v. the United Kingdom, 2007 թվականի նոյեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 32457/04, 66-72 կետեր, և Hackett v. the United Kingdom, 2005 թվականի մայիսի 10-ի որոշումը, գանգատ թիվ 34698/04):

36. Սույն գործի նյութերի ուսումնասիրության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Լ. Գուլյանի մահվան կապակցությամբ քննություն իրականացնելիս չի պարզվել ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության 2-րդ վարչության 1-ին բաժնի պետի աշխատասենյակի պատուհանից Լ. Գուլյանի վայր ընկնելու մեխանիզմը, և այդ նպատակով չի կատարվել քննչական փորձարարություն: Ընդ որում, սույն գործով քննության արդյունավետության տեսանկյունից նշված քննչական փորձարարության կարևորությունը հաստատվել է ինչպես Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի, այնպես էլ նախաքննության մարմնի և նախաքննության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի կողմից (տե՛ս սույն որոշման 18-րդ կետը):

37. Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է հայտնում Լ. Գուլյանի վայր ընկնելու մեխանիզմը պարզելու նպատակով քննչական փորձարարության կատարման կարևորության մասին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի, նախաքննության մարմնի և նախաքննության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի դիրքորոշմանը:

38. Այս առումով անհրաժեշտ է պարզել, թե ՀՀ համապատասխան իրավապահական մարմինները դեռևս ողջամտորեն կարո՞ղ են միջոցներ ձեռնարկել քննչական փորձարարության համար անհրաժեշտ մանեկենը ձեռք բերելու և քննչական փորձարարությունը կատարելու համար:

Նշված հարցին պատասխանելու համար վերլուծելով ՀՀ գլխավոր դատախազության հարցմանն ի պատասխան Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազության ուղարկած գրությունը (տե՛ս սույն որոշման 16-րդ կետը)՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ համապատասխան իրավապահպան մարմինները դեռևս ողջամտորեն կարող են միջոցներ ձեռնարկել քննչական փորձարարության համար անհրաժեշտ մանեկենը ձեռք բերելու և քննչական փորձարարությունը կատարելու համար: Մասնավորապես, Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազության ուղարկած գրության մեջ նշված է, որ «Ռուսաստանի Դաշնության դատախազությանն առընթեր քննչական կոմիտեի կողմից ներկայում գնված են 170սմ երկարությամբ և 40կգ քաշով շարնիրային մանեկեններ»: Դրանից հետևում է, որ Լ. Գուլյանի մահվան փաստի քննության համար անհրաժեշտ բնութագրիչներով մանեկենները (178սմ երկարությամբ և 95կգ քաշով) ողջամտորեն կարող են պատվիրվել այն նույն կազմակերպությունից, որից գնումներ է կատարել ՌԴ դատախազությանն առընթեր քննչական կոմիտեն:

39. Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ սույն որոշման 16-րդ կետում նշված գրությունը ստանալուց հետո շուրջ 4 ամիս շարունակվող նախաքննության ընթացքում վարույթն իրականացնող մարմինը այլևս որևէ միջոց չի ձեռնարկել նշված քննչական փորձարարության կատարումն ապահովելու ուղղությամբ: Մասնավորապես, նոր հարցում չի կատարվել ՌԴ դատախազությանը՝ խնդրելով մատնանշել մանեկենները պատրաստող կազմակերպությանը, և այդ կազմակերպությունից Լ. Գուլյանի մահվան փաստի քննության համար անհրաժեշտ բնութագրիչներով մանեկեն պատրաստելու պատվեր չի տրվել:

40. Վերը շարադրված փաստերի լույսի ներքո Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Լ. Գուլյանի մահվան փաստի առթիվ արդյունավետ քննություն իրականացնելու պարտականությունը դեռևս շարունակվում է, քանի որ առկա է ողջամիտ ակնկալիք առ այն, որ անհրաժեշտ մանեկենը ձեռք կբերվի, և համապատասխան քննչական գործողությունները կկատարվեն:

Քննության շրջանակներում անհրաժեշտ է պարզել, թե ՌԴ դատախազությանը կոնկրետ ինչ կազմակերպություն է մատակարարել սույն որոշման 16-րդ կետում վկայակոչված գրությամբ նշված մանեկենները, բանակցել նշված կազմակերպության հետ անհրաժեշտ մանեկենը ձեռք բերելու հարցով, ձևակերպել համապատասխան պատվեր, ստանալ անհրաժեշտ մանեկենը, կատարել քննչական փորձարարություն Լ. Գուլյանի անկման մեխանիզմը պարզելու նպատակով, դրա արդյունքները համադրել գործով ձեռք բերված մյուս տվյալների հետ և անհրաժեշտու-

թյան դեպքում կատարել դրանից բխող նոր քննչական, այլ դատավարական կամ օպերատիվ-հետախուզական գործողություններ:

41. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածով ամրագրված դատավարական պարտականության կատարման մասին վերջնական հետևությունները հնարավոր են միայն քննչական փորձարարության և, անհրաժեշտության դեպքում, դրանից բխող այլ գործողությունների արդյունքների առկայության դեպքում: Այդ պարագայում նշված ապացույցների հաշվառմամբ հնարավոր կլինի նաև ամբողջական գնահատական տալ Լ. Գուլյանի մահվան փաստի քննության արդյունավետությանը:

Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքաբերների բարձրացրած հարցերի պատասխանները կարող են տրվել միայն այն բանից հետո, երբ Լ. Գուլյան ի մահվան փաստի առթիվ քննությունը վերջնականապես ավարտվի:

42. Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է բեկանել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 2-ի և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի փետրվարի 5-ի որոշումները և պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին վերացնելու Լևոն Գուլյանի մահվան փաստի առթիվ հարուցված քրեական գործի նախաքննության ընթացքում թույլ տրված անձի իրավունքների և ազատությունների խախտումները:

Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչներ Ա. Կարախանյանի և Հ. Ղուկասյանի բողոքը մերժելու վերաբերյալ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 2-ի և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ

վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի փետրվարի 5-ի որոշումները բեկանել և պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին վերացնելու Լևոն Գուլյանի մահվան փաստի առթիվ հարուցված քրեական գործի նախաքննության ընթացքում թույլ տրված անձի իրավունքների և ազատությունների խախտումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Դ. Ավետիսյան

Դատավորներ՝ Հ. Ասատրյան
Ե. Դանիելյան
Ա. Պողոսյան
Ս. Օհանյան

Տարոն Պիրապյանի վերաբերյալ որոշում, ԱՐԴ1/0028/06/10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի
ԱՐԴ1/0028/06/10 որոշում

Նախագահող դատավոր՝ Հ. Տեր-Ադամյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի
քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

մասնակցությամբ դատավորներ Ե. Դանիելյանի
Ա. Պողոսյանի
Ս. Օհանյանի

քարտուղարությամբ Մ. Պետրոսյանի

մասնակցությամբ պաշտպան՝ Շ. Հ. Բրեյդիի

2010 թվականի հուլիսի 23-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010թ. մարտի 24-ի որոշման դեմ մեղադրյալ Տարոն Հակոբի Պիրապյանի պաշտպան Շեյն Հիթ Բրեյդիի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. Քրեական գործը հարուցվել է 2010թ. փետրվարի 2-ին:

Նախաքննության մարմնի 2010թ. մարտի 2-ի որոշմամբ Տարոն Հակոբի Պիրապյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով:

2. ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010թ. մարտի 2-ի որոշմամբ Տ. Պիրապյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը երկու ամիս ժամկետով:

Դատարանի վերոհիշյալ որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել մեղադրյալ Տ. Պիրապյանի պաշտպան Շեյն Հիթ Բրեյդին:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010թ. մարտի 24-ի որոշմամբ պաշտպանի բողոքը մերժվել է, իսկ Տ. Պիրապյանի վերաբերյալ ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010թ. մարտի 2-ի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի վերոհիշյալ որոշման դեմ մեղադրյալ Տ. Պիրապյանի պաշտպանը բերել է վճռաբեկ բողոք:

4. 2010թ. մայիսի 14-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունել է վարույթ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի հիմքով («վերանայվող դատական ակտը առերևույթ հակասում է վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված որոշումներին» և «վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ»):

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Տ. Պիրապյանը 2009թ. հոկտեմբերի 22-ին ստացել է զորակոչման ծանուցագիր՝ բանակ զորակոչվելու համար, սակայն, հարելով «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության գաղափարներին, 2009թ. նոյեմբերի 3-ին դիմում է ներկայացրել Արմավիրի զինվորական կոմիսարին՝ հրաժարվելով ինչպես ժամկետային զինվորական ծառայությունից, այնպես էլ այլընտրանքային ծառայությունից՝ պատճառաբանելով, որ զինվորական ծառայության անցնելը դեմ է իր դավանած աստվածաշնչային սկզբունքներին:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով:

6. Փաստարկելով, որ ՀՀ-ում գործող այլընտրանքային ծառայությունը քաղաքացիական բնույթ չունի, ինչը հակասում է Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին՝ բողոքի հեղինակը նշել է, որ իր պաշտպանյալ Տ. Պիրապյանը հանցագործություն չի կատարել, հետևաբար հանիրավի է գտնվում կալանքի տակ:

7. Վերոգրյալից բացի, բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարաններն անտեսել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի պահանջները: Մասնավորապես, առանց որևէ հիմք ունենալու եզրակացրել են, որ անհրաժեշտ է կալանքը որպես խափանման միջոց ընտրել, քանի որ մեղադրյալը կարող է թաքնվել քննությունից և խուսափել պատասխանատվությունից:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոք բերած անձը նշել է, որ Տ. Պիրապյանը չի թաքնվել քրեական վարույթ իրականացնող մարմնից, և կեղծ են քննիչի պնդումներն այն մասին, որ մեղադրյալը փորձել է խուսափել քրեական վարույթ իրականացնող մարմնից, քանի որ չի պատասխանել իր հեռախոսազանգերին 2010թ. փետրվարի 25-ին և 26-ին ու տանը չի եղել նույն թվականի մարտի 1-ին: Բողոք բերած անձի պնդմամբ, Տ. Պիրապյանի բջջային հեռախոսի զանգերի վերծանումները հաստատում են, որ վերջինս և քննիչը խոսել են 2010թ. փետրվարի 25-ին՝ ժամը 12:28-ին և հաջորդ օրը՝ ժամը 17:55-ին, ինչպես նաև այն, որ մեղադրյալը զանգահարել է քննիչին 2010թ. մարտի 2-ին՝ ժամը 10:54:

Վերոգրյալից բացի, բողոք բերած անձը նշել է, որ Վերաքննիչ դատարանում քննիչը խոստովանել է, որ 2010թ. մարտի 1-ին Տ. Պիրապյանը տանն է եղել և նրանք պայմանավորվել են հանդիպել հաջորդ օրը, ինչը և տեղի է ունեցել:

8. Ըստ բողոք բերած անձի, դատարանները չեն հիմնավորել Տ. Պիրապյանի նկատմամբ կալանավորման կիրառման անհրաժեշտությունը և ընտրել են ամենախիստ խափանման միջոցը՝ առանց քննարկելու ավելի մեղմ խափանման միջոցի կիրառման հնարավորությունը:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ Տ. Պիրապյանը չի խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը, չի եղել և չկա ոչ մի վտանգ, որ նա կկատարի քրեական օրենքով չթույլատրված արարք:

9. Վերոգրյալից բացի, բողոք բերած անձը փաստարկել է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, չապահովելով մեղադրյալ Տ. Պիրապյանի մասնակցությունը վերաքննիչ բողոքի քննությանը, նրան զրկել է արդար դատաքննության իրավունքից:

10. Հիմք ընդունելով շարադրված փաստարկները՝ բողոքի հեղինակը խնդրել է ամբողջությամբ բեկանել և փոփոխել ՀՀ վերաքննիչ քրեական

դատարանի 2010թ. մարտի 24-ի որոշումը և Տ. Պիրապյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերացնել:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

I. Մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցի իրավաչափությունը

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. Տ. Պիրապյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումն արդյո՞ք օրինական, հիմնավորված և պատճառաբանված է:

12. Կալանավորման՝ որպես խափանման միջոցի ընտրության հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Ա. Ճուղուրյանի վերաբերյալ որոշման մեջ և, վերլուծելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «(…) կալանավորման կիրառման հիմքերն ունեն կանխատեսական, մոտավոր բնույթ, քանի որ ենթադրում են ապագային վերաբերող իրադարձություններ: Ընդ որում, այդ կանխատեսող գործողություններն անհրաժեշտ է հիմնավորել քրեական գործով ձեռք բերված որոշակի նյութերով, որով էլ վերջին հաշվով որոշվում է կալանավորման կիրառման հիմնավորվածությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ կասկածների կամ ենթադրությունների վրա: Դա նշանակում է, որ կալանավորման կիրառման հիմքում բոլոր դեպքերում պետք է դրվեն որոշ փաստական տվյալներ: (…)» (տե՛ս Արամ Ճուղուրյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի օգոստոսի 30-ի թիվ ՎԲ-132/07 որոշումը):

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2010թ. մարտի 2-ին քննության է առել Տ. Պիրապյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին քննիչի միջնորդությունը և նկատի ունենալով, որ քրեական գործով ձեռք բերված ապացույցները բավարար են մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու համար, հաշվի առնելով նրան վերագրվող արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, նրա անձը և այն, որ նա, մնալով ազատության մեջ, կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, խուսափել պատասխանատվությունից, գտել է, որ քննիչի միջնորդությունը հիմնավոր է և պետք է բավարարել: Դատարանի որոշման ուսումնասիրությունից երևում է, սակայն, որ դրանում իսպառ բացակայում են հիմնավորումներ այն

մասին, թե ինչու է դատարանը կարծում, որ քննիչի միջնորդությունը հիմնավոր է, և Տ. Պիրապյանը, մնալով ազատության մեջ, կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, խուսափել պատասխանատվությունից:

14. Սույն որոշման 13-րդ կետում շարադրված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելով սույն որոշման 12-րդ կետում ամրագրված իրավական դիրքորոշումները (սահմանված Ա. Ճուղուրյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի որոշմամբ)՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առաջին ատյանի դատարանն անտեսել է այն իրավական պահանջը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ կասկածների կամ ենթադրությունների վրա, և կալանավորման կիրառման հիմքում բոլոր դեպքերում պետք է դրվեն որոշ փաստական տվյալներ: Փաստորեն դատարանը, առանց համապատասխան հիմքերի առկայության, հետևություն է արել Տ. Պիրապյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության հիմնավորված լինելու մասին և արդյունքում կայացրել անհիմն և չպատճառաբանված որոշում:

15. Տ.Պիրապյանի նկատմամբ ընտրված կալանավորման որոշման դատական ստուգման վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010թ. մարտի 24-ի դատական նիստի ձայնային արձանագրության ունկնդրմամբ պարզ է դառնում, որ դատական նիստում քննիչն ընդունում է այն փաստը, որ 2010թ. մարտի 1-ին Տ. Պիրապյանի բնակարան այցելության ժամանակ ինքը հանդիպել է վերջինիս և նրանք պայմանավորվել են հաջորդ օրը՝ 2010թ. մարտի 2-ին իր մոտ հանդիպելու մասին: Համաձայն պայմանավորվածության 2010թ. մարտի 2-ին Տ. Պիրապյանը կամովին ներկայացել է նրա մոտ, ինքը Տ. Պիրապյանին մեղադրանք է առաջադրել, ապա միասին գնացել են դատարան, ուր դատարանի կողմից բավարարվել է Տ. Պիրապյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու քննիչի միջնորդությունը:

Նախագահող դատավոր Հ. Տեր-Ադամյանի այն հարցին, թե ինչո՞ւ է քննիչը որոշում կայացրել Տ. Պիրապյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդություն հարուցելու մասին այն դեպքում, երբ Տ. Պիրապյանը կամովին է ներկայացել քննիչի կանչով, քննիչ Գ. Մանուկյանը պատասխանել է, որ դա արել է մեղադրյալի ոչ պատշաճ վարքագիծը կանխելու նպատակով (տե՛ս դատական նիստի ձայնային արձանագրության լազերային կրիչը, նյութերի 1-ին հատոր, էջ 66):

Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, դատական ստուգման ենթարկելով ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010թ. մարտի 2-ի որոշումը, գտել է, որ առաջին ատյանի դատարանը, բավարարելով Տ. Պիրապյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը, այդպիսով ապահովել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, այն է՝ քրեական վարույթի ընթացքում մեղադրյալի ոչ պատշաճ վարքագիծը կանխելը:

16. Վերոշարադրյալ մեջբերումից երևում է, որ, դատական ստուգման ենթարկելով առաջին ատյանի դատարանի դատական ակտը, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը ևս անտեսել է սույն որոշման 12-րդ կետում նշված հանգամանքները և հետևության հանգել այն մասին, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը ապահովելու նկատառումով քննիչի միջնորդությունը բավարարվել է իրավացիորեն, առաջին ատյանի դատարանի որոշումն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված:

Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010թ. մարտի 2-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելով՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը թույլ է տվել ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի պահանջների, այնպես էլ օրինականության սկզբունքի խախտում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդված), ինչը քրեադատավարական օրենքի էական խախտում է (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ և 398-րդ հոդվածներ) և որոշումը բեկանելու հիմք:

II. Բողոքի հեղինակի կողմից վկայակոչված այլ հանգամանքներ

17. Սույն գործով բողոք բերած անձի կողմից բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, չապահովելով մեղադրյալ Տ. Պիրապյանի մասնակցությունը վերաքննիչ բողոքի քննությանը, արդյո՞ք նրան զրկել է արդար դատաքննության իրավունքից:

18. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Դատական ստուգումը կատարվում է դռնփակ դատական նիստում՝ դատախազի և պաշտպանի մասնակցությամբ: Բողոքը քննելու օրվա մասին նախապես իրազեկ կողմի չներկայանալը չի խոչընդոտում դատական ստուգումն իրականացնելուն: Դատարանը բացատրություններ տալու համար դատական նիստին կարող է կանչել

հետաքննության մարմնի աշխատակցին կամ քննիչին, ինչպես նաև տուժողին»:

Շարադրված դրույթի վերլուծությունից երևում է, որ որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը վերաքննիչ դատարանի կողմից կատարվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածով սահմանված կարգով, որը դատական ստուգմանը մեղադրյալի մասնակցության մասին դրույթ չի պարունակում:

Վերաքննիչ դատարանում կալանավորման հարցի քննությանը մեղադրյալի մասնակցության ապահովման պահանջ նախատեսված չէ նաև որևէ այլ իրավական նորմով:

Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ որպես ընդհանուր կանոն, վերաքննիչ դատարանը չունի կալանավորման հարցի քննությանը մեղադրյալի մասնակցությունն ապահովելու պարտականություն:

19. Սույն որոշման 18-րդ կետում շարադրված Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումը համահունչ է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին: Համաձայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայուն իրավական դիրքորոշման՝ անձին ազատությունից զրկելու դեմ բողոքների դատական ստուգումը պետք է իրականացվի որոշակի երաշխիքների պահպանմամբ, մասնավորապես՝ կողմերի մրցակցության («զենքերի հավասարության») պայմաններում և դատական նիստի շրջանակներում: Մասնավորապես, այս իրավական դիրքորոշումն ամրագրված է Եվրոպական դատարանի հետևյալ վճիռներում. Շյոպսն ընդդեմ Գերմանիայի (Schöps v.Germany), գանգատ թիվ 25116/94, Պալատի 2001թ. փետրվարի 13-ի վճիռ, կետ 44, Պալատի վճիռը, Յիղիթդողանն ընդդեմ Թուրքիայի (Yiğitdoğan v.Turkey), գանգատ թիվ 20827/08, Պալատի 2010 թ. մարտի 16-ի վճիռ, կետ 26: Ընդ որում, մրցակցության պահանջը կարող է ապահովված համարվել, եթե ազատությունից զրկված անձը հնարավորություն է ստացել մասնակցել իր բողոքի քննությանը կա՛մ անձամբ, կա՛մ ներկայացուցչի միջոցով (տե՛ս Սանչեզ-Ռեիսեն ընդդեմ Շվեյցարիայի (Sanchez-Reisse v. Switzerland) գործով Պալատի վճիռը, գանգատ թիվ 9862/82, 1986թ. հոկտեմբերի 21, կետ 51, Ստեֆենսն ընդդեմ Մալթայի (Stephens v. Malta) գործով Պալատի վճիռը, գանգատ թիվ 11956/07, 2009թ. ապրիլի 21, կետ 95):

20. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասը վերաքննիչ դատարանում մեղադրյալի մասնակցությունը սահմանում է ներկայացուցչության (պաշտպանի մասնակցության) եղանակով, ինչը համահունչ է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի

նախադեպային իրավունքին: Իսկ սույն գործով Տ. Պիրապյանի պաշտպանը վերաքննիչ դատարանում իր պաշտպանյալի կալանավորման հարցի քննությանը փաստացի մասնակցել է:

Հետևաբար Տ. Պիրապյանի մասնակցությունը վերաքննիչ բողոքի քննությանը չապահովելով՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը մեղադրյալի արդար դատաքննության իրավունքի խախտում թույլ չի տվել:

21. Սույն գործով բողոք բերած անձի կողմից բարձրացվել է նաև այն հարցը, որ քննիչը ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին կեղծ տեղեկություններ է հայտնել այն մասին, որ Տ. Պիրապյանը փորձել է խուսափել քրեական վարույթ իրականացնող մարմնից, քանի որ չի պատասխանել իր հեռախոսազանգերին 2010թ. փետրվարի 25-ին և 26-ին և տանը չի եղել նույն թվականի մարտի 1-ին (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

22. Անդրադառնալով բողոքաբերի վերոշարադրյալ փաստարկին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդ հանգամանքները ստորադաս դատարաններին հայտնի չեն եղել, քանի որ ո՛չ մեղադրյալ Տ. Պիրապյանը, որը մասնակցել է առաջին ատյանի դատարանի դատական նիստին, ո՛չ էլ փաստաբան Շեյն Հիթ Բրեյդին, որը մասնակցել է վերաքննիչ դատարանի դատական նիստին, այդ մասին ստորադաս դատարանին չեն հայտնել: Այդ հանգամանքերի մասին նշվել է վճռաբեկ բողոքում և բողոքին են կցվել «Վիվա ՍԵլ ՄՏՍ»-ից ձեռք բերված՝ հեռախոսազանգերի վերծանման փաստաթղթերի պատճենները:

III. Սույն որոշման իրավական արժեքը

23. Սույն որոշման 12-16-րդ կետերից երևում է, որ բողոքում նշված հիմնավորումները բավարար են բողոքարկված դատական ակտը բեկանելու համար: Սակայն բողոքարկված դատական ակտերը եղել են ժամանակավոր և դրանք կորցրել են իրենց իրավական նշանակությունը: Ուստի Վճռաբեկ դատարանի սույն որոշումը կայացնելու պահին դրանք իրավաբանորեն դադարել են գոյություն ունենալուց:

Բացի այդ, Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2010 թվականի ապրիլի 22-ին կայացրել է դատավճիռ, որով Տ. Պիրապյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման 2 տարի 6 ամիս ժամկետով: Պատիժ նշանակելու հարցը լուծելիս դատարանը հաշվի է առել Տ. Պիրապյանին անազատության մեջ պահելու ողջ ժամանակահատվածը:

24. Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքարկված դատական ակտերը չեն կարող բեկանվել, քանի որ դրանք այլևս իրավաբանորեն գոյություն չունեն,

ինչպես նաև Տ. Պիրապյանի նկատմամբ քրեական վարույթի ողջ համատեքստում չեն հանգեցրել նրան անազատության մեջ ավելի երկար պահելուն, քան դատարանի դատավճռով սահմանված ժամկետն է:

25. Բողոքարկված դատական ակտերը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակը օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Այդ առումով վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նույնանման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Մեղադրյալ Տարոն Հակոբի Պիրապյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010թ. մարտի 2-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010թ. մարտի 24-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Հ. Ղուկասյան
Դատավորներ՝ Ե. Դանիելյան
Ա. Պողոսյան
Ս. Օհանյան

Տիգրան Քամալյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0097/01/09

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵՇԴ/0097/01/09

Նախագահող դատավոր՝ Ա. Խաչատրյան
Դատավորներ՝ Ս. Ավետիսյան
Մ. Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի
քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Դ. Ավետիսյանի

մասնակցությամբ դատավորներ Հ. Ասատրյանի
Ե. Դանիելյանի
Հ. Ղուկասյանի
Ա. Պողոսյանի
Ս. Օհանյանի

քարտուղարությամբ Կ. Աբրահամյանի

2010 թվականի մարտի 26-ին Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Տիգրան Ռոլանդի Քամալյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2009 թվականի դեկտեմբերի 15-ի որոշման դեմ տուժողի իրավահաջորդ է. Բաղդասարյանի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Քրեական գործը հարուցվել է 2009 թվականի հուլիսի 17-ին ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

2009 թվականի սեպտեմբերի 10-ի որոշմամբ Տիգրան Ռոլանդի Քամալյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով:

2. 2009 թվականի սեպտեմբերի 17-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանը, կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2009 թվականի սեպտեմբերի 30-ի դատավճռով Տ. Քամալյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտել ազատազրկման՝ 2 /երկու/ տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան մեկ տարի ժամկետով:

3. Տուժողի իրավահաջորդ Ա. Արշակյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2009 թվականի դեկտեմբերի 15-ի որոշմամբ տուժողի իրավահաջորդի վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 30-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 15-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել տուժողի իրավահաջորդ է. Բաղդասարյանը:

Վճռաբեկ դատարանը 2010 թվականի փետրվարի 15-ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»):

5. Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. Առաջին ատյանի դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 30-ի դատավճռով Տ. Քամալյանը դատապարտվել է այն բանի համար, որ 2009 թվականի հուլիսի 17-ին՝ ժամը 18:00-ի սահմաններում, իր անձնական օգտագործման «Մերսեդես-230» մակնիշի ավտոմեքենայով, Երևան քաղաքի Մ. Գորկու փողոցի կողմից Արշակունյաց պողոտայով դեպի Գ. Նժդեհի փողոցի կողմն ընթանալիս խախտել է ճանապարհային երթևեկության կանոնների 67-րդ կետի և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները, այն է՝ երթևեկության համար վտանգ առաջանալու պահից, ունենալով իր ընթացքի ուղղությամբ փողոցը հատող Աստղիկ Արշակյանին հայտնաբերելու հնարավորություն, արգելակել է ուշացած և, երթևեկության համար վտանգավոր կերպով դեպի ձախ մանևրելով, հնարավորություն չի տվել հետիոտնին դուրս գալ վտանգավոր գոտուց, այսինքն՝ ստեղծել է վթարային իրադրություն և վրաերթի է ենթարկել Ա. Արշակյանին: Դեպքից անմիջապես հետո Տ. Քամալյանի կինն ու կնոջ քույրն առաջին բուժօգնություն են ցույց տվել տուժողին և դեպքի վայր եկած շտապ բժշկական օգնության ավտոմեքենայով նրան տեղափոխել են «Էրեբունի» բժշկական կենտրոն, որտեղ էլ Ա. Արշակյանը, առանց գիտակցության գալու, մահացել է:

7. Տուժողի իրավահաջորդ Ա. Արշակյանը չի մասնակցել առաջին ատյանի դատարանում գործի քննությանը, և սույն գործով Առաջին ատյանի դատարանն արագացված կարգի կիրառմամբ դատավճիռ է կայացրել նրա բացակայության պայմաններում:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոք բերած անձը փաստարկել է, որ առկա է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

9. Բողոք բերած անձը, նշելով, որ մինչև վերաքննիչ բողոք ներկայացնելը չի մասնակցել քրեական գործի քննությանը, որպես տուժողի

իրավահաջորդ իր դիրքորոշումը հայտնելու հնարավորություն ունեցել է միայն Վերաքննիչ դատարանում, փաստարկել է, որ սույն գործով չի կատարվել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն: Ըստ բողոքաբերի՝ քրեական գործի նյութերում բացակայում են դեպքին ականատես վկաների ցուցմունքները, ամբաստանյալ Տ. Քամալյանի սթափության վերաբերյալ ապացույցները (ապացույցներ, որոնք կբացառեին նրա կողմից թմրանյութեր, հոգեմետ միջոցներ, դեղեր օգտագործելը, նրա արյան մեջ ալկոհոլի առկայությունը), միջադեպի տեղանքի, ճանապարհի, արյան, անվադողերի հետքերի լուսանկարները: Բացի այդ, դատարանն առանց որևէ պատճառաբանության չի ընդունել բողոքաբերի կողմից ներկայացված քաղաքացիական հայցը, հետևաբար դատարանի հետևությունները հիմնավորված չեն:

Բողոքի հեղինակը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ և 70-րդ հոդվածների պահանջները, խախտել է կատարված արարքի և նշանակված պատժի համաչափության վերաբերյալ նյութական իրավունքի, մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 3-11-րդ հոդվածների պահանջները:

10. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 15-ի որոշումը և գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

I. Բողոքաբերի պահանջների պայմանավորվածությունն Առաջին ատյանի դատարանում գործի քննությանը տուժողի իրավահաջորդի բացակայության փաստի հետ.

11. Նախքան վճռաբեկ բողոքում բարձրացված հարցին անդրադառնալը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում դիրքորոշում հայտնել սույն որոշման 9-րդ կետում նշված նյութական և դատավարական իրավունքների ենթադրյալ խախտումների վերաբերյալ փաստարկների և սույն որոշման 7-րդ կետում արձանագրված փաստի միջև առկա կապի մասին:

Այսպես՝ բողոք բերած անձը, փաստարկելով, որ չի մասնակցել սույն քրեական գործի քննությանը և որպես տուժողի իրավահաջորդ իր դիրքորոշումը հայտնելու հնարավորություն ունեցել է միայն Վերաքննիչ դատարանում, պնդում է, որ գործով չի կատարվել բազմակողմանի, լրիվ, օբյեկտիվ քննություն, առանց պատճառաբանության չի ընդունվել իր կողմից ներկայացված քաղաքացիական հայցը, սխալ են մեկնաբանվել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ և 70-րդ հոդվածների պահանջները:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքաբերի վճռաբեկ բողոքում բարձրացված հարցերը հետևանք են այն բանի, որ սույն գործով Առաջին

ատյանի դատարանը քրեական գործի քննության արագացված կարգի կիրառմամբ դատավճիռ է կայացրել տուժողի իրավահաջորդ Ա.Արշակյանի բացակայությամբ: Ուստի առաջին հերթին անհրաժեշտ է քննության առնել Առաջին ատյանի դատարանի կողմից վերոնշյալ դատական ակտի կայացման հարցը:

II. Արդարացի դատական քննության՝ տուժողի իրավունքը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Առաջին ատյանի դատարանում տուժողի իրավահաջորդ Ա. Արշակյանի բացակայությամբ դատական քննության արագացված կարգ կիրառելը և դատավճիռ կայացնելը չի՞ սահմանափակել արդյոք հետագայում տուժողի իրավահաջորդ ճանաչված է. Բաղդասարյանի՝ արդարացի դատական քննության իրավունքը:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Եթե մեղադրողը մեղադրական եզրակացությունում չի առարկում արագացված կարգ կիրառելու դեմ, ապա ամբաստանյալը կամ մեղադրյալն իրեն առաջադրված մեղադրանքի հետ համաձայնվելու դեպքում իրավունք ունի միջնորդել արագացված դատական քննության կարգ կիրառելու մասին, այն հանցագործություններով, որոնց համար ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված պատիժը չի գերազանցում 10 տարի ժամկետով ազատազրկումը»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված դեպքում դատարանը կիրառում է դատական քննության արագացված կարգ, եթե՝ 1) ամբաստանյալը գիտակցում է իր կողմից ներկայացված միջնորդության բնույթը և հետևանքները, և 2) միջնորդությունը ներկայացված է կամավոր, և 3) պաշտպանի հետ խորհրդակցելուց հետո, (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Եթե տվյալ գործով հարուցված է նաև քաղաքացիական հայց, և ամբաստանյալը (մեղադրյալը) կամ քաղաքացիական պատասխանողը ընդունում է այն, ապա դատարանը դատավճռում բավարարում է նաև քաղաքացիական հայցը, եթե այն չի հակասում օրենքին: Այդ դեպքում դատարանը պետք է լրացուցիչ պարզի, թե արդյոք հայցի ընդունումը կամավոր է, և արդյոք այն վերաբերում է այլ անձանց իրավունքներին: Դատարանը, գտնելով, որ հայցի ընդունումը հակասում է օրենքին կամ կամավոր չէ կամ վերաբերում է այլ անձանց իրավունքներին, հայցը թողնում է առանց քննության՝ քաղաքացիական հայցվորին բացատրելով քաղաքացիական դատավարության կարգով հայց ներկայացնելու նրա իրավունքը: Իսկ այն դեպքում, երբ ամբաստանյալը կամ քաղաքացիական պատասխանողը քաղաքացիական հայցը չի ընդունում, ապա դատարանը

քաղաքացիական հայցը թողնում է առանց քննության՝ քաղաքացիական հայցվորին բացատրելով քաղաքացիական դատավարության կարգով հայց ներկայացնելու նրա իրավունքը»:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.2-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Ներկայացված միջնորդությունը դատարանում պետք է հաստատվի պաշտպանի ներկայությամբ և նրա հետ խորհրդակցելուց հետո: Այն դեպքում, երբ ամբաստանյալը (մեղադրյալը) ներկայացրել է արագացված կարգ կիրառելու միջնորդություն և չունի պաշտպան, ապա դատարանը պարտավոր է ամբաստանյալին ապահովել պաշտպանով: Եթե ամբաստանյալին հնարավոր չէ անհապաղ ապահովել պաշտպանով, ապա դատարանը պաշտպանի մասնակցությունն ապահովելու նպատակով դատական նիստը հետաձգում է: Եթե ամբաստանյալը հրաժարվում է պաշտպան ունենալուց, ապա դատարանը արագացված կարգ կիրառելու միջնորդությունը մերժում է՝ անցնելով ընդհանուր կարգով գործի քննությանը»:

Համաձայն քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «Դատարանը արագացված կարգով դատական քննության արդյունքում մեղադրական դատավճիռ կայացնելիս նշանակում է պատիժ, որը չի կարող գերազանցել կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդը, իսկ եթե առավել խիստ պատժի երկու երրորդը փոքր է տվյալ հանցագործության համար նախատեսված առավել մեղմ պատժից՝ ապա առավել մեղմ պատիժը»:

14. Վերոշարադրյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ դատական քննության արագացված կարգ կիրառելու դեպքում լիարժեքորեն երաշխավորված են ամբաստանյալի՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված պաշտպանության իրավունքի իրականացման բոլոր հնարավորությունները: Օրենսդիրն արագացված կարգի կիրառման դեպքում սահմանում է ամբաստանյալի արդարացի դատաքննության իրավունքի կենսագործման համար անհրաժեշտ իրավունքների բավական լայն շրջանակ, ինչպես նաև ամբաստանյալի համար նախատեսում է բարենպաստ իրավական հետևանքներ՝ մեղմ պատիժ նշանակելու, հայցի դեմ առարկելու դեպքում այն առանց քննության թողնելու, դատական ծախսերից ազատվելու և այլ ձևով:

15. Միևնույն ժամանակ, սույն որոշման 13-րդ կետում շարադրված իրավանորմերի վերլուծությունից երևում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը որևէ կանոն կամ ընթացակարգ չի սահմանում, որն ամրագրեր տուժող կողմի (այդ թվում՝ տուժողի, տուժողի ներկայացուցչի և օրինական ներկայացուցչի, տուժողի իրավահաջորդի) ներգրավվածությունը արագացված կարգի կիրառման հարցում: Այլ կերպ՝ տուժող կողմի դիրքորոշումը հաշվի առնելու պահանջ ամրագրված չէ ո՛չ

մեղադրողի համար՝ արագացված դատական քննության դեմ առարկելու կամ չառարկելու հարցը լուծելիս, և ո՛չ էլ դատարանի համար՝ արագացված դատական քննության անցնելու մասին որոշում կայացնելիս:

16. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն»:

17. ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը հռչակում և ամրագրում է արդարացի դատական քննության իրավունքը: Համաձայն այդ հոդվածի 1-ին մասի՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու (…) համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ (...) իր գործի հրապարակային քննության իրավունք»:

ՀՀ քրեական դատավարության 80-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Տուժողի իրավահաջորդ է ճանաչվում նրա մերձավոր ազգականներից մեկը, որը ցանկություն է հայտնել քրեական գործով վարույթում իրականացնել մահացած (…) տուժողի իրավունքները և պարտականությունները»:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Տուժողի իրավահաջորդը քրեական գործով վարույթին մասնակցում է տուժողի փոխարեն և ունի վերջինիս իրավունքները և պարտականությունները, (…)»:

18. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «իր խախտված իրավունքները վերականգնելու (…) համար» սահմանադրական ձևակերպումը որոշակիորեն վերաբերելի է նաև քրեական գործով տուժողին (նաև տուժողի իրավահաջորդին), քանի որ տուժողն այն անձն է, որի իրավունքները հանցագործությամբ խախտվում են: Ընդ որում, տուժողի իրավաչափ շահերի շրջանակում է իրեն հասցված վնասի վերականգնումը, իրեն վնաս պատճառած արարքի հանգամանքների լրիվ բացահայտումը ու դրա ճիշտ քրեաիրավական որակումը, իր նկատմամբ հանցանք կատարած անձի դատապարտումը և արդարացի պատժի նշանակումը: Այդ շահերի ապահովման երաշխիքներից է տուժողի իրավունքը, որպեսզի իր գործով դատական քննությունն ընթանա «արդարության բոլոր պահանջների պահպանմամբ»:

19. Տուժողի համար իր գործի «արդարության բոլոր պահանջների պահպանմամբ» քննությունը, inter alia, ենթադրում է, որ

ա. Դատախազը (մեղադրողը) արագացված դատական քննության դեմ առարկելու կամ չառարկելու հարցը լուծելիս, պետք է հաշվի առնի տուժողի դիրքորոշումը՝ որպես մեղադրանքի կողմի սուբյեկտի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 21-րդ կետ):

բ. Դատարանը չի կարող անցնել դատական քննության արագացված կարգի՝ առանց այդ հարցի կապակցությամբ տուժողի դիրքորոշումը պարզելու:

գ. Դատարանը կարող է դատական քննության արագացված կարգ կիրառելու մասին մեղադրյալի միջնորդությունը մերժել, եթե դրա դեմ առարկում է տուժողը: Այդ դեպքում դատարանը կայացնում է առանձին որոշում, որում պատճառաբանում է արագացված դատական քննության արդյունքում տուժողի օրինական շահերի վտանգման հանգամանքը:

20. Դատախազի (մեղադրողի) և դատարանի համար, սույն որոշման նախորդ կետի հիման վրա, համապատասխանաբար, դատական քննության արագացված կարգի դեմ առարկելու և ամբաստանյալի համապատասխան միջնորդությունը մերժելու հարցը լուծելիս տուժողի դիրքորոշումը պետք է վճռական նշանակություն ունենա մասնավորապես այն դեպքերում, երբ տուժողը՝

ա. ողջամտորեն հիմնավորում է, որ իրեն հասցված վնասն ամբողջությամբ հատուցված չէ,

բ. փաստարկված առարկում է գործի փաստական հանգամանքների դեմ:

21. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը կիրառել է դատական քննության արագացված կարգ, իսկ տուժողի իրավահաջորդ Ա.Արշակյանը դատաքննությանը չի մասնակցել (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը), որի արդյունքում հնարավորություն չի ունեցել կարծիք արտահայտել ինչպես մեղադրանքի, այնպես էլ պատժի վերաբերյալ:

III. Տուժողի շահերի պաշտպանության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումը.

22. Սույն որոշման 19-րդ կետում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը հիմնվում է ոչ միայն ՀՀ Սահմանադրության, այլ նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վրա:

23. Այսպես՝ համաձայն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական … կյանքի … նկատմամբ հարգանքի իրավունք»: Համաձայն Յանկովիչն ընդդեմ Խորվաթիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի 45-րդ կետի՝ «… անձնական կյանքի գաղափարը ներառում է նաև անձի ֆիզիկական և հոգեբանական անձեռնմխելիությունը: 8-րդ հոդվածի ներքո Պետությունները կրում են անձի ֆիզիկական և

հոգեկան անձեռնմխելիությունն այլ անձանց ոտնձգություններից պաշտպանելու պարտականություն: Այդ նպատակով նրանք պետք է հաստատեն ու գործնականում կիրառեն մասնավոր անձանց ոտնձգություններից պաշտպանություն տրամադրող համարժեք իրավական կառուցակարգ»:

Այսպիսով, ՄԻԵԴ-ը սահմանել է, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածը պետության համար առաջացնում է ոչ միայն նեգատիվ պարտականություններ (ձեռնպահ մնալու համապատասխան ազատություններին միջամտելուց), այլ նաև պոզիտիվ պարտականություններ (inter alia, սահմանելու տուժողների իրավունքների քրեադատավարական պաշտպանության համարժեք կառուցակարգեր):

Խորվաթիայի քրեադատավարական օրենսդրությունը նախատեսում էր տուժողի իրավունքների պաշտպանության մի շարք կառուցակարգեր, այդ թվում՝ սուբսիդիար մեղադրողի գործառույթ իրականացնելու իրավունքը (տե՛ս Յանկովիչի վերաբերյալ ՄԻԵԴ վճռի 25-րդ կետ): Այնուհանդերձ,Յանկովիչի գործով ՄԻԵԴ-ը գտել է, որ պետությունը չի կատարել իր այդ պոզիտիվ պարտականությունը, քանի որ, inter alia, տուժողին իրական հնարավորություն չի տրվել իրականացնելու իր դեմ ոտնձգություն թույլ տված անձի քրեական հետապնդում (տե՛ս Յանկովիչի վերաբերյալ ՄԻԵԴ վճռի 57-րդ կետ): Դրա հիման վրա արձանագրվել է Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում (տե՛ս Յանկովիչի վերաբերյալ ՄԻԵԴ վճռի 58-րդ կետ):

24. Յանկովիչն ընդդեմ Խորվաթիայի գործով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումը սույն գործի փաստերի վրա տարածելով (տե՛ս սույն որոշման 21-րդ կետը)՝ կարող ենք արձանագրել, որ ՀՀ քրեադատավարության օրենսդրությամբ նախատեսված արագացված դատական քննության կանոնակարգման պայմաններում, երբ դատական քննության արագացված կարգի անցնելու մասին որոշում կայացնելիս տուժողը հնարավորություն չունի արտահայտել իր դիրքորոշումը (տե՛ս սույն որոշման 14-15-րդ կետերը), տուժողին հնարավորություն չի տրվում իրականացնել իր շահերի արդյունավետ պաշտպանություն:

25. Հիմք ընդունելով սույն որոշման 14-24-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով դատական քննությանը տուժողի իրավահաջորդի մասնակցությունը, ինչպես նաև արագացված դատաքննության անցնելիս նրա դիրքորոշումը հաշվի առնելն անհրաժեշտ էին արդարացի դատաքննության, ինչպես նաև անձի անձնական կյանքի հարգման հիմնարար իրավունքների ապահովման համար:

IV. Տուժողի շահերի պաշտպանության վերաբերյալ ուղղորդող նշանակություն ունեցող միջազգային-իրավական կարգադրագրերը.

25. Սույն գործով իրավական դիրքորոշում ձևավորելիս Վճռաբեկ դատարանը հաշվի է առել նաև Մարդու իրավունքների միջազգային իրավունքում նկատվող իրավական զարգացման միտումները:

26. Այսպես՝ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից 1985 թվականին ընդունված «Տուժողի դերը քրեական իրավունքի և դատավարության շրջանակներում» N R(85) 11 հանձնարարականի նախաբանում հատուկ ընդգծվել է, որ այն ընդունվել է՝ ելնելով այն հանգամանքից, որ քրեական արդարադատության նպատակները ավանդաբար ձևակերպվել են պետության և իրավախախտի միջև հարաբերությունների տիրույթում, ինչի արդյունքում այդ համակարգի գործառումը հաճախ բարդացնում է տուժողի մոտ ծագած խնդիրները, այլ ոչ թե նպաստում դրանց լուծմանը: Մինչդեռ քրեական արդարադատության հիմնական գործառույթը պետք է լինի տուժողի պահանջները բավարարելը և շահերը պաշտպանելը:

Ելնելով վերոշարադրյալից և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ անհրաժեշտ է ամրացնել տուժողի վստահությունը քրեական արդարադատության համակարգի նկատմամբ՝ Նախարարների կոմիտեն Եվրոպայի Խորհրդի անդամ պետություններին հանձնարարել է վերանայել իրենց օրենսդրությունը և դատական պրակտիկան՝ քրեական արդարադատության համակարգում տուժողի դերը բարձրացնելու մի շարք ուղղություններով:

27. Քրեական արդարադատության համակարգում տուժողի պահանջմունքները բավարարելու և շահերը պաշտպանելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու պետությունների պարտավորությունը սահմանված է նաև ՄԱԿ-ի հռչակագրում, որի 4-րդ կետի համաձայն՝ հանցագործությունից տուժողները ներպետական օրենսդրությանը համապատասխան պետք է ունենան արդարադատության մատչելիության և իրենց պատճառված վնասի արագ փոխհատուցման իրավունք:

Հռչակագրի 6-րդ կետի համաձայն՝ անհրաժեշտ է օժանդակել այն բանին, որ դատական և վարչական ընթացակարգերը ըստ էության համապատասխանեն հանցագործության զոհերի պահանջներին, այդ թվում՝

ա) դատական քննության ընթացքում տուժողների դերի, դատավարության իրականացման կարգի, ժամկետների և արդյունքների մասին տուժողներին տեղեկատվություն տրամադրելու միջոցով,

բ) վարույթի ցանկացած փուլում գործի էության վերաբերյալ տուժողներին կարծիք արտահայտելու հնարավորություն ապահովելու և այդ կարծիքները քննարկելու եղանակով, հատկապես երբ տվյալ հարցը վերաբերում է տուժողին,

գ) ամբողջ դատավարության ընթացքում տուժողին անհրաժեշտ օգնություն տրամադրելու եղանակով, (...),

ե) գործերի քննության անհարկի ձգձգումները կանխելու և փոխհատուցման մասին կայացված որոշումները կատարելու միջոցով:

V. Սույն գործով թույլ տված դատավարական օրենքի էական խախտումը.

28. Վերադառնալով քննության առարկա գործի փաստերին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, տուժողի իրավահաջորդ Ա. Արշակյանի բացակայությամբ դատական քննության արագացված կարգ կիրառելով և դատավճիռ կայացնելով, սահմանափակել է հետագայում տուժողի իրավահաջորդ ճանաչված է. Բաղդասարյանի՝ իր խախտված իրավունքները վերականգնելու սահմանադրորեն ամրագրված հնարավորությունը: Այլ կերպ՝ սույն գործով տեղի է ունեցել ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով նախատեսված՝ գործի արդարացի քննության սկզբունքի խախտում:

Այդ խախտումներն իրենց բնույթով էական են, քանի որ դրանց արդյունքում սահմանափակվել է տուժողի իրավահաջորդի դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, խախտվել են գործի արդարացի քննության և արդարադատության մատչելիության իրավունքները, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ դրանք հիմք են կայացված դատական ակտերն ամբողջությամբ բեկանելու և գործը քննած ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու համար:

29. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ չի համարում քննության առնել բողոքում բարձրացված՝ նյութական իրավունքի ենթադրյալ խախտումների վերաբերյալ բողոքաբերի փաստարկները. դրանց հնարավոր է անդրադառնալ միայն սույն որոշման մեջ արձանագրված դատավարական օրենքի խախտումները վերացնելուց հետո:

30. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

31. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Տիգրան Ռոլանդի Քամալյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 30-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 15-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Դ.Ավետիսյան
Դատավորներ՝ Հ. Ասատրյան
Ե.Դանիելյան
Հ. Ղուկասյան
Ա. Պողոսյան
Ս. Օհանյան

Ալիկ Մաթևոսյանի վերաբերյալ որոշում, ՎԲ 04/10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ՎԲ 04/10

Նախագահող դատավոր՝ Ս. Ավետիսյան
Դատավորներ՝ Մ. Սիմոնյան
Ա. Խաչատրյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի
քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Դ. Ավետիսյանի
մասնակցությամբ դատավորներ Հ. Ասատրյանի
Ե. Դանիելյանի
Հ. Ղուկասյանի
Ա. Պողոսյանի
Ս. Օհանյանի

քարտուղարությամբ Կ. Աբրահամյանի
մասնակցությամբ պաշտպան Հ. Բաղդասարյանի

2010 թվականի մարտի 26-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով դատապարտյալ Ալիկ Ռուդիկի Մաթևոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. նոյեմբերի 12-ի որոշման դեմ պաշտպանի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Աղվան Հարությունյանի մահվան փաստի առթիվ 2006թ. ապրիլի 29-ին ՀՀ քրեական օրենսգրքի104-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ:

Նախաքննության մարմնի 2006թ. մայիսի 20-ի որոշմամբ Ալիկ Մաթևոսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասով և 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով ներգրավվել է որպես մեղադրյալ և նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանքը:

2006թ. հոկտեմբերի 16-ին Ա. Մաթևոսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել և լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 10-րդ կետերով:

2006թ. նոյեմբերի 14-ին գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարան:

2. Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2007թ. օգոստոսի 29-ի դատավճռով Ա. Մաթևոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 104-րդ հոդվածի 1-ին մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նա դատապարտվել է ազատազրկման 2/երկու/ տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկման 8/ութ/ տարի 6/վեց/ ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Ա. Մաթևոսյանը վերջնականապես դատապարտվել է ազատազրկման 9/ինը/ տարի 6/վեց/ ամիս ժամկետով:

Նույն դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 5-րդ մասով և 104-րդ հոդվածի 1-ին մասով, 359-րդ հոդվածի 2-րդ կետով 6/վեց/ տարի 6/վեց/ ամիս ժամկետով ազատազրկման է դատապարտվել Ռաֆիկ Հարությունյանը:

3. Ամբաստանյալների, պաշտպանի, մեղադրողների և տուժողի իրավահաջորդի վերաքննիչ բողոքների հիման վրա քննելով գործը՝ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը 2007թ. դեկտեմբերի 3-ի դատավճռով Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2007թ. օգոստոսի 29-ի դատավճիռը թողել է անփոփոխ, իսկ վերաքննիչ բողոքները՝ առանց բավարաման:

ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007թ. դեկտեմբերի 3-ի դատավճռի դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ զինվորական դատախազը:

4. 2008թ. հուլիսի 25-ին ՀՀ վճռաբեկ դատարանը բավարարել է ՀՀ զինվորական դատախազի բողոքը և, բեկանելով ՀՀ քրեական վերաքննիչ

դատարանի 2007թ. դեկտեմբերի 3-ի դատավճիռը, գործն ուղարկել է նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

5. 2008թ. նոյեմբերի 12-ին ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը, բեկանելով և փոփոխելով Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2007թ. օգոստոսի 29-ի դատավճիռը, Ա. Մաթևոսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով և պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով վերջնական պատիժ է նշանակել ազատազրկում 15/ տասնհինգ/ տարի ժամկետով:

Նույն դատավճռով Ռաֆիկ Հարությունյանը ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 5-րդ մասով և 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով, 359-րդ հոդվածի 2-րդ կետով դատապարտվել է 13 /տասներեք/ տարի ժամկետով ազատազրկման:

6. 2009թ. փետրվարի 25-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի և 412-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին չհամապատասխանելու պատճառաբանությամբ վերադարձրել է դատապարտյալ Ալիկ Մաթևոսյանի պաշտպանի վճռաբեկ բողոքը:

2009թ. ապրիլի 30-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի և 412-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին չհամապատասխանելու պատճառաբանությամբ վերադարձրել է դատապարտյալ Ալիկ Մաթևոսյանի վճռաբեկ բողոքը:

2009թ. օգոստոսի 7-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա առանց քննության է թողել դատապարտյալ Ալիկ Մաթևոսյանի և նրա պաշտպանի վճռաբեկ բողոքը:

7. 2009թ. օգոստոսի 25-ին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանելու հարցի որոշման համար Ա. Մաթևոսյանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան:

2009թ. դեկտեմբերի 22-ին ՀՀ սահմանադրական դատարանը որոշում է կայացրել, որի համաձայն՝ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ որոշման մեջ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների շրջանակներում:

8. Վճռաբեկ բողոք է բերել դատապարտյալ Ալիկ Մաթևոսյանի պաշտպանը:

Վճռաբեկ դատարանը 2010թ. փետրվարի 26-ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել:

Գործի փաստական հանգամանքները.

9. Ալիկ Մաթևոսյանը և Ռաֆիկ Հարությունյանը դատապարտվել են հետևյալ արարքների համար.

Ալիկ Մաթևոսյանը ծառայել է ՀՀ ՊՆ թիվ 83117 զորամասի «Կրուգ-2» հենակետում որպես ավագ օպերատոր, իսկ Ռաֆիկ Հարությունյանը՝ ռադիոլոկացիոն հանգույցում որպես վարորդ-էլեկտրամեխանիկ: Կոչումով նրանք եղել են շարքային:

2006 թվականի մարտ ամսին Ալիկ Մաթևոսյանը ռադիոլոկացիոն հանգույցի ժամկետային շարքային զինծառայող Աղվան Հարությունի Հարությունյանից ուզել է վերջինիս աուդիոձայնարկիչը՝ խոստանալով այն վերադարձնել սարքին վիճակում, և ի հավաստումն խոստումի՝ ինքն իր հասցեին տվել է հայհոյանք: Երկու-երեք օր անց Ալիկ Մաթևոսյանն Աղվան Հարությունյանին վերադարձրել է աուդիոձայնարկիչը խոտանված վիճակում, որի պատճառով հանգույցի բուժկետում տեղի ունեցած վիճաբանության ժամանակ Ալիկ Մաթևոսյանը նույն հանգույցի ժամկետային զինծառայող Ռաֆիկ Հարությունյանի հետ միասին, խախտելով զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները, նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության պայմաններում, սեփական անձի առավելություններն ընդգծելու մղումով տարված, ծեծել են Աղվան Հարությունյանին:

2006 թվականի ապրիլի 28-ին՝ ժամը 15-ի սահմաններում, անձնակազմի հրահանգավորման նպատակով հանգույց եկած ավտոծառայության պետ մայոր Սերգեյ Աբրահամյանը դիտողություն է արել չսափրված և համազգեստի խախտումով ներկայացած Ա. Հարությունյանին և դժգոհ մնալով նրա պահվածքից՝ հայհոյել է վերջինիս: Ա. Հարությունյանը նույնպես հայհոյել է մայոր Ս. Աբրահամյանին և կայանի ուղղությամբ դիմել է փախուստի: Քիչ անց Ա.Հարությունյանը վերադարձել է և Ս.Աբրահամյանի հրամանով շարված հանգույցի անձնակազմի առջև ներողություն խնդրել նրանից: Ժամը 16-ի սահմաններում Ա.Մաթևոսյանը ռադիոլոկացիոն հանգույցի ավագների սենյակում բացատրություն է պահանջել Ա. Հարությունյանից, թե ինչու է նա ներողություն խնդրել իրեն մայր հայհոյած մայոր Ս.Աբրահամյանից, այնուհետև նրան դիտողություն է արել իր հետ խոսելիս «արա» բառը գործածելու համար:

Այնուհետև իր անձի կարծեցյալ գերազանցությունը հաստատելու և համածառայողների շրջանում չհեղինակազրկվելու նպատակով Ալիկ Մաթևոսյանը, նախնական պայմանավորվածության համաձայն, ժամը 22-ին Ռաֆիկ Հարությունյանին կանչել է «Կրուգ-2» հենակետի և ռադիոլոկացիոն հանգույցի միջև ընկած «Խաչ» կոչվող վայրը, որտեղ նրան հայտնել է, որ ինքը Աղվան Հարությունյանին կախելու է կամ վերջինս

պետք է ինքնուրույն կախվի: Ալիկ Մաթևոսյանը Ռաֆիկ Հարությունյանին հարցրել է, թե որտեղից կարող են հայթայթել համապատասխան պարան և աթոռ, ինչին Ռաֆիկ Հարությունյանը պատասխանել է, որ դրանց տեղը գիտի: Միասին գնացել են ռադիլոկացիոն հանգույցի հենակետ, ՊՈՎ-18 մակնիշի կապի հատուկ ավտոմեքենայից վերցրել են կանաչ գույնի նստատեղով առանց հենակի աթոռ, իսկ ԱԴ-10 տեսակի դիզելային գեներատորի միջից՝ պարան և սպիտակ մեկուսիչով պատված մալուխ:

Այնուհետև անտառի խորքում գտնվող հաստաբուն ծառի մոտ Ալիկ Մաթևոսյանը Ռաֆիկ Հարությունյանին է տվել լուսարձակով կրակայրիչը, բարձրացել է ծառի վրա, կանգնել գետնից 2,75 մետր բարձրության վրա գտնվող ճյուղին և դրան կապել պարանը, ինչը Ռաֆիկ Հարությունյանը կրակայրիչի միջոցով լուսավորել է:

Ճյուղին կապելով պարանը՝ Ալիկ Մաթևոսյանն իջել է ծառից, աթոռը դրել է պարանի տակ, բարձրացել դրա վրա, պարանի վրա կապելու միջոցով օղակ է արել, այն հարմարեցրել պարանոցին գցելու համար, որից հետո Ռաֆիկ Հարությունյանին ուղարկել է հանգույցի տարածք՝ Աղվան Հարությունյանին կանչելու համար:

Ռաֆիկ Հարությունյանը գնացել է հանգույց և ճաշարանից դեպի զորանոց տանող ճանապարհին հանդիպելով Աղվան Հարությունյանին՝ վերջինիս ասել է, որ Ալիկ Մաթևոսյանն իրեն կանչում է: Երկուսով գնացել են ծառի մոտ, որտեղ նրանց է սպասել Ալիկ Մաթևոսյանը: Տեսնելով Աղվան Հարությունյանին՝ Ալիկ Մաթևոսյանն ինքն իր հասցեին հայհոյանք է տվել և ասել է, որ կամ ինքն է Աղվանին կախելու, կամ էլ նա ինքը պետք է կախվի:

Չթողնելով, որ Աղվան Հարությունյանը պատասխանի, Ալիկ Մաթևոսյանը շարունակել է նվաստացնել վերջինիս պատիվն ու արժանապատվությունը, շահարկելով մայոր Ս.Աբրահամյանի կողմից Աղվան Հարությունյանին մայր հայհոյելու հանգամանքը: Ալիկ Մաթևոսյանը փորձել է բռնել Աղվան Հարությունյանի ձեռքից՝ աթոռին բարձրացնելու նպատակով, սակայն վերջինս գտնվելով ընկճված և ճնշված վիճակում, հետ է հրել Ալիկ Մաթևոսյանի ձեռքը և հայհոյանք տալով ասել, որ ինքը թույլ չի տա իրեն կախել, այլ ինքնուրույն կկախվի: Այնուհետև բարձրացել է աթոռին, պարանի օղն անցկացրել է պարանոցին և իջեցրել ձեռքերը:

Ալիկ Մաթևոսյանն անմիջապես բռնել է նրա ձեռքերը, տարել մեջքի հետևը, Ռաֆիկ Հարությունյանին առաջարկել է կապել դրանք մալուխով, սակայն վերջինս հրաժարվել է այդ անել՝ պատճառաբանելով, որ իր մատնահետքերը կմնան մալուխի վրա:

Աղվան Հարությունյանին ինքն իրեն օգնելու հնարավորությունից զրկելու նպատակով Ալիկ Մաթևոսյանը նախապես բերված և կտրված մալուխով դաստակների շրջանում կապել է նրա ձեռքերը:

Տեսնելով, որ Ալիկ Մաթևոսյանը բռնել է աթոռի հենակի երկաթյա ծողերից, Ռաֆիկ Հարությունյանը շրջվել է և մի քանի մետր քայլել հանգույցի ուղղությամբ, որի ընթացքում Ալիկ Մաթևոսյանն իր անձի առավելություններն ընդգծելու մոլուցքով տարված, չնչին առիթով Աղվան Հարությունյանին սպանելու դիտավորությամբ վերջինիս ոտքերի տակից հրել է աթոռը և Աղվան Հարությունյանին ապօրինաբար զրկել կյանքից:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոք բերած անձը նշել է, որ բողոք բերելու հիմք է դատական սխալը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդված):

Ըստ նրա, սույն գործով թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա և բողոքում նշված խախտումների արձանագրումը և դրանց նկարագրությունը հիմք են տալիս պնդելու, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշմամբ խախտվել է արդարադատության բուն էությունը: Մասնավորապես, Ա.Մաթևոսյանը դիտավորյալ սպանություն չի կատարել, սակայն եթե նույնիսկ նրա մեղադրանքի հիմքում դրված ապացույցները համարվեն թույլատրելի, ապա դրանց առկայության պայմաններում ևս Ա. Մաթևոսյանի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով նախատեսված՝ խուլիգանական դրդումներով սպանության հանցակազմը:

11. Բողոքաբերը փաստարկել է նաև, որ սույն գործով նախաքննության և դատական քննությունների ընթացքում խախտվել են Ա.Մաթևոսյանի իրավունքները և նա չի կարողացել իրավական պաշտպանություն ստանալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում: Մասնավորապես, խախտվել են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների հետևյալ հոդվածները.

ա) Կոնվենցիայի 3-րդ հոդվածը՝ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ի հիմնավորումն վերոնշյալի՝ բողոքաբերը պնդում է, որ Ա.Մաթևոսյանի նկատմամբ ՀՀ ռազմական ոստիկանության աշխատակիցները 2006թ. մայիսի 2-ից մինչև 20-ը իրականացրել են ծեծ ու խոշտանգում: Ցուցմունք կորզելու նպատակով ծեծել են նաև գործով դատապարտյալ Ռ.Հարությունյանին, ում քիթը ջարդվել է, սակայն ո՛չ նախաքննության մարմինը, ո՛չ էլ դատարաններն այս հանգամանքները հաշվի չեն առել:

բ) Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետը և 3-րդ կետը: Ի հիմնավորումն վերոնշյալի՝ բողոքաբերը պնդում է, որ Ա.Մաթևոսյանը փաստացի անազատության մեջ է եղել 2006թ. մայիսի 1-ից (ռազմական ոստիկանությունում՝ 18 օր), սակայն կալանավորվել է (դատավորի մոտ է տարվել) միայն 2006թ. մայիսի 20-ին:

գ) Կոնվենցիայի 6-րդ հոդվածը: Ի հիմնավորումն նշված փաստարկի՝ բողոքաբերը պնդում է, որ ո՛չ նախաքննության մարմինը, ո՛չ դատարանները հաշվի չեն առել Ա.Մաթևոսյանի օգտին առկա ապացույցները:

դ) Կոնվենցիայի 14-րդ հոդվածը և թիվ 12 արձանագրության 1-ին հոդվածը: Ի հիմնավորումն որի բողոքաբերը նշում է, որ փաստացի թե՛ նախաքննության մարմինը, թե՛ դատարանները ռազմական ոստիկանության աշխատակիցների ցուցմունքներին «հավատացել են» և նրանց կողմից կատարված անօրինականություններին ընթացք չեն տրվել, իսկ նրանց ծեծի և խոշտանգումների արդյունքում ձեռք բերված «ապացույցները» համարել են օրինական և դրել մեղադրանքի հիմքում: Բողոքաբերի պնդմամբ, դատարանները հաշվի չեն առել մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումները, մասնավորապես Հարությունյանն ընդդեմ Հայաստանի 2007թ. հունիսի 28-ի թիվ 36549/03 որոշման մեջ առկա այն դիրքորոշումը, որ. «անկախ նրանից, թե ինչ ազդեցություն են ունեցել խոշտանգումների միջոցով ձեռք բերված ցուցմունքները քրեական վարույթի արդյունքի վրա, նման ապացույցի օգտագործումը ամբողջ դատավարությունը դարձնում է անարդար: Այսպիսով, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում»:

12. Բողոք բերած անձը նշել է, որ սույն գործով խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ անձի անձեռնմխելիության (հոդված 11), գործի արդարացի քննության (հոդված 17), անմեղության կանխավարկածի (հոդված 18), կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքի և դրա ապահովման (հոդված 19), ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելու (հոդված 20), քրեական դատավարության ընթացքում մրցակցության (հոդված 23) և ապացույցների ազատ գնահատման (հոդված 25) սկզբունքները:

Ուստի, գտնելով, որ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, վերանայվող դատական ակտն առերևույթ հակասում է Վճռաբեկ դատարանի 2006թ. դեկտեմբերի 22-ի ՎԲ-176/06 որոշմանը («Մատաղիսի գործ») և դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որն առաջացրել է ծանր հետևանքներ՝ բողոք բերած անձը խնդրել է մասնակիորեն բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. նոյեմբերի 12-ի որոշումը, ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ

մասի 10-րդ կետով կարճել քրեական գործի վարույթը և Ա.Մաթևոսյանի նկատմամբ դադարեցնել քրեական հետապնդումը, կամ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանը նախ անդրադառնում է իր առջև բարձրացված հետևյալ հարցերին. արդյո՞ք հիմնավորված են բողոքաբերի պնդումներն այն մասին, որ Ա.Մաթևոսյանի նկատմամբ ոստիկանության աշխատակիցները կիրառել են բռնություններ, իսկ Ռ. Հարությունյանից ցուցմունք են կորզել ծեծի միջոցով, և արդյո՞ք մեղադրանքի հիմքում դրվել են ծեծի ու խոշտանգումների արդյունքում ձեռք բերված ապացույցներ:

14. Ի հիմնավորումն նախորդ կետում նշված պնդումների՝ բողոքաբերը որպես իրավական փաստարկ ներկայացրել է Հարությունյանն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռում, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի 2006թ. դեկտեմբերի 22-ի ՎԲ-176/06 որոշման մեջ («Մատաղիսի գործ»), համապատասխանաբար, Եվրոպական դատարանի և Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները:

15. Ինչպես երևում է Հարությունյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի վճռից, Միշա Հարությունյանին դատապարտելու համար հիմք են հանդիսացել Մ.Հարությունյանի, ինչպես նաև գործով վկաներ Տ-ի և Ա-ի ցուցմունքները, որոնք ստացվել են խոշտանգումների միջոցով: Ընդ որում, նույն վճռի 29-րդ կետում նշված է, որ Միշա Հարությունյանի և նշված երկու վկաների նկատմամբ բռնություն գործադրած ռազմական ոստիկանության չորս աշխատակից Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 2002թ. հոկտեմբերի 9-ի դատավճռով պաշտոնեական դիրքի չարաշահման համար դատապարտվել են երեքից մինչև երեք ու կես տարվա ազատազրկման: Ելնելով վերոգրյալներից՝ Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ անկախ նրանից, թե ինչ ազդեցություն են ունեցել խոշտանգումների միջոցով ձեռք բերված ցուցմունքները դիմումատուի գործով քրեական վարույթի արդյունքի վրա, նման ապացույցի օգտագործումն ամբողջ դատավարությունը դարձնում է անարդար:

Ի տարբերություն Հարությունյանն ընդդեմ Հայաստանի գործի փաստերի՝ սույն քրեական գործում եղած 2006թ. սեպտեմբերի 23-ի որոշումից երևում է, որ Ա.Մաթևոսյանին և Ռ.Հարությունյանին ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության աշխատակիցների կողմից ծեծի ենթարկելու փաստի առթիվ քրեական գործ չի հարուցվել և քրեական հետապնդում չի իրականացվել հանցագործության դեպքի բացակայության պատճառա-

բանությամբ: Բացի այդ, 2007թ. հունիսի 27-ին Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի վարույթում գտնվող քրեական գործով ամբաստանյալ Ռաֆիկ Հարությունյանին ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության աշխատակիցների կողմից ծեծի ենթարկելու փաստի առթիվ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ:

16. Հիմք ընդունելով սույն որոշման 15-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հարությունյանի գործի և սույն գործի փաստական հանգամանքների քանակապես և որակապես տարբերվում են, ինչի արդյունքում Հարությունյանիգործով վճռի հիմնավորումներում պարունակվող ընդհանրական դրույթները սույն գործի նկատմամբ կիրառելի չեն (Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կիրառելիության հարցի մասին տե՛ս Սեյրան Այվազյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2008 թվականի մայիսի 23-ի թիվ ՎԲ-17/08 որոշման 22-28-րդ կետերը):

Նույն պատճառաբանությամբ սույն գործով կիրառելի չեն նաև Վճռաբեկ դատարանի 2006թ. դեկտեմբերի 22-ի ՎԲ-176/06 որոշման («Մատաղիսի գործ») հիմնավորումները:

17. Հետևաբար, անհիմն են բողոք բերած անձի պնդումներն այն մասին, որ Ա.Մաթևոսյանի նկատմամբ ոստիկանության աշխատակիցները կիրառել են բռնություններ, իսկ Ռ.Հարությունյանից ցուցմունք են կորզել ծեծի միջոցով, և ծեծի ու խոշտանգումների արդյունքում ձեռք բերված ապացույցները դրվել են մեղադրանքի հիմքում:

18. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հաջորդ հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ է արդյոք բողոքաբերի փաստարկն այն մասին, որ Ա.Մաթևոսյանի մեղադրանքի հիմքում դրված ապացույցներով նրա արարքում բացակայում է խուլիգանական դրդումներով սպանության հանցակազմը:

19. ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով նախատեսված՝ խուլիգանական դրդումներով սպանությունը կատարվում է հասարակության և բարոյականության համընդհանուր ճանաչում ստացած նորմերի նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքի դրսևորմամբ, երբ հանցավորի վարքագիծը բացահայտ մարտահրավեր է հասարակական կարգին և պայմանավորված է իրեն շրջապատին հակադրելու, շրջապատի նկատմամբ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելու ցանկությամբ:

Խուլիգանական դրդումներն իրենցից ներկայացնում են բովանդակությամբ բարդ շարժառիթ, որի մեջ միահյուսվում են անսահման եսամոլությունը, խեղաթյուրված պատկերացումներն անձնական ազատությունների սահմանների մասին, բիրտ ուժի պաշտամունքը, իր անձի

«առավելությունները» ընդգծելու մոլուցքը, «ինքնահաստատման» պահանջը, սանձարձակությունը, անպարկեշտ վարքագիծը, ցինիզմը, դաժանությունը, հանդգնությունը, վիրավորանքը, չնչին առիթով արված դիտողության համար վրեժ լուծելը և այլն: Նշված շարժառիթների ամբողջությունը բնորոշ է յուրաքանչյուր խուլիգանության, սակայն խուլիգանական դրդումներով սպանություն կատարելիս դրանց միանում է նաև մարդկային կյանքի նկատմամբ արհամարհական վերաբերմունքն ընդհանրապես՝ անկախ տուժողի անձից:

Խուլիգանական դրդումներով սպանությունը հաճախ կատարվում է առանց տեսանելի առիթի կամ աննշան առիթն օգտագործվում է որպես պատրվակ սպանություն կատարելու համար: Որպես հանցագործության արտաքին պատճառ՝ առիթը սերտորեն կապված է հանցավորի ներքին դրդումների հետ: Ընդ որում, արարքը խուլիգանական դրդումներով սպանություն որակելու համար սպանության կատարման տեղը (վայրը) նշանակություն չունի: Այդպիսի սպանությունը կարող է կատարվել ոչ միայն հասարակական վայրում, պարտադիր չէ նաև մարդկանց ներկայությունը:

20. Սույն գործի նյութերով հիմնավորվել է, որ Ալիկ Մաթևոսյանը և Ռաֆիկ Հարությունյանը զորամասում «հեղինակություն» են եղել, մյուս զինծառայողների համեմատ գտնվել են արտոնյալ վիճակում, փաստացի իշխանություն են ունեցել նրանց նկատմամբ: Զինվորների միջև առաջացած բոլոր վեճերը լուծվել, իսկ վիճելի հարցերը պարզաբանվել են Ա. Մաթևոսյանի և Ռ.Հարությունյանի միջոցով, իրենց հուզող հարցերով և խնդիրներով զինծառայողները դիմել են նրանց: Ա.Մաթևոսյանն ու Ռ. Հարությունյանն ազատ տեղաշարժվել են զորամասի տարածքով: Ա. Մաթևոսյանը հաճախ առանց թույլտվության գնացել է ռադիոլոկացիոն հանգույց, իսկ Ռ.Հարությունյանը՝ «Կրուգ 2» հեռակետ, նրանք քնել են ոչ թե ընդհանուր զորանոցում, այլ սպաների հանգստյան սենյակում: Նույնիսկ սպաները չեն փորձել հակադրվել նրանց:

Դեպքի օրը՝ 2006 թվականի ապրիլի 28-ին, Ա.Մաթևոսյանն ու Ռ. Հարությունյանը սպաների հանգստյան սենյակում, սպաների ներկայությամբ քննության առարկա են դարձրել զորամասի ճաշարանում շարքային Խաչատուր Բաբայանի և ռադիոլոկացիոն կայանի պետ, կոչումով ավագ Համլետ Ազիզյանի միջև տեղի ունեցած վիճաբանության հարցը, որի ընթացքում, Ա.Մաթևոսյանի ներկայությունից և աջակցությունից ոգևորված, շարքային Խ.Բաբայանը բռունցքով հարվածել է ավագ Հ.Ազիզյանին: Դրանից անմիջապես հետո վերջինիս Ալիկ Մաթևոսյանը հանձնարարել է իր մոտ կանչել Աղվան Հարությունյանին, որից բացատրություն է պահանջել մայոր Ս.Աբրահամյանից ներողություն խնդրելու համար և այդ ընթացքում դիտողություն է արել հաճախակի «արա» բառը գործածող

Ա.Հարությունյանին՝ զգուշացնելով նրան իր հետ խոսելիս «արա» բառով չդիմել: Նույն օրը երեկոյան, որոշելով, որ կամ ինքն է կախելու Աղվան Հարությունյանին կամ Աղվանն ինքն է կախվելու, Ալիկ Մաթևոսյանը Ռաֆիկ Հարությունյանի օգնությամբ կախաղան է պատրաստել և կախել նրան՝ ապօրինաբար դիտավորությամբ զրկելով կյանքից: Այսինքն, Ա. Մաթևոսյանն է տնօրինել Աղվան Հարությունյանի կյանքը, որոշել նրա ապրել-չապրելու հարցը, գտել է, որ նա անպայման պետք է զրկվի կյանքից, այն էլ՝ կախվելու միջոցով, ինքն է Ռաֆիկի օգնությամբ իր ձեռքով պատրաստել կախաղան, այնտեղ է կանչել Աղվանին և հայհոյանք տալով, նրան հայտնել, որ կամ ինքն է կախելու Աղվանին կամ էլ նա ինքը պետք է կախվի: Այնուհետև, շարունակելով նվաստացնել կախաղանը տեսած, վախեցած, ընկճված և ճնշված վիճակում գտնվող Աղվան Հարությունյանի պատիվն ու արժանապատվությունը, շահարկելով մայոր Ս.Աբրահամյանի կողմից Աղվանին մայր հայհոյելու հանգամանքը, Ալիկ Մաթևոսյանը նրա ձեռքերը տարել է մեջքի հետևը, մալուխով կապել և կախել է տուժողին:

21. Սույն որոշման 19-րդ և 20-րդ կետերի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, շարադրված հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման արդյունքում իրավացիորեն նշել է, որ Ալիկ Մաթևոսյանի գործողություններն իրենցից ներկայացնում են հասարակության և բարոյականության համընդհանուր ճանաչում ստացած նորմերին նետված մարտահրավեր, իրեն շրջապատին և հասարակությանը հակադրելու և հակազդելու ցանկություն, իր անձի «առավելությունները» ընդգծելու մոլուցք, ինքնահաստատման պահանջ, ցինիզմ և դաժանություն, աննշան առիթը սպանության պատրվակ օգտագործել, և արդյունքում դատարանը հանգել է ճիշտ հետևության, որ դատապարտյալը տուժող Աղվան Հարությունյանին դիտավորությամբ կյանքից զրկել է խուլիգանական դրդումներով: Այսինքն՝ նա կատարել է հանցանք, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով: Հետևաբար, անհիմն է բողոք բերած անձի փաստարկն այն մասին, որ Ա.Մաթևոսյանի մեղադրանքի հիմքում դրված ապացույցների առկայության պայմաններում նրա արարքում բացակայում է խուլիգանական դրդումներով սպանության հանցակազմը:

22. Սույն որոշման 18-22-րդ կետերում քննության առնված իրավական հարցից ըստ էության բխում է բողոքաբերի հաջորդ պնդումը, որով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացվում է հետևյալ իրավական հարցը. արդյո՞ք հիմնավորված է Ա.Մաթևոսյանի կողմից Ա.Հարությունյանի սպանությունը կատարելու փաստը:

23. Սույն գործի նյութերով հիմնավորվել է, որ 2006թ. մարտ ամսին ռադիոլոկացիոն հանգույցի բուժկետում տեղի ունեցած վիճաբանության ժամանակ զինծառայող, կոչումով շարքային Ալիկ Մաթևոսյանը շարքային Ռաֆիկ Հարությունյանի հետ ծեծի են ենթարկել Աղվան Հարությունյանին: Այնուհետև Կապանի տարածաշրջանի Կաղնուտ գյուղի անտառում Ա. Մաթևոսյանը խուլիգանական դրդումներով, կախելու միջոցով սպանել է Աղվան Հարությունյանին:

Նշված հանցագործության կատարման մեջ Ա.Մաթևոսյանի մեղավորությունն ապացուցված է գործով մյուս դատապարտյալ Ռ.Հարությունյանի՝ նախաքննության ընթացքում տված ցուցմունքներով, որտեղ նա մանրամասն նկարագրել է իր օժանդակությամբ Ա.Մաթևոսյանի կողմից Ա. Հարությունյանին կախելու միջոցով սպանելու հանգամանքները: Նշված ցուցմունքը Ռ.Հարությունյանը պնդել է Ա.Մաթևոսյանի հետ առերես հարցաքննության ժամանակ: Ա.Մաթևոսյանի հանցանքը հաստատված է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված կարգով՝ գործի համար նշանակություն ունեցող տվյալներն ստուգելու և ճշտելու նպատակով կատարված քննչական փորձարարությամբ և դրա մասին կազմված արձանագրությամբ: Կատարված հանցագործության մեջ Ա.Մաթևոսյանի մեղավորությունը հաստատված է նաև գործով տուժող Խաչատուր Բաբայանի, վկաներ Վահե Աբրահամյանի, Տիգրան Վարդանյանի, Վահե Դոխոյանի, Կարեն Կոստանյանի, Վահե Գրիգորյանի, Համազասպ Ալեքսանյանի, Արման Կարավարդյանի, Վահրամ Մելիքսեթյանի, Միհրան Դովլաթյանի, Ազատ Մարտիրոսյանի, Դավիթ Խաչատրյանի, Սարգիս Սեֆիլյանի, Արսեն Մանուչարյանի ցուցմունքներով, դատաբժշկական, դատահետքաբանական, դատահողագիտական փորձաքննությունների եզրակացություններով, տեղանքի զննում, առգրավում, դեպքի վայրի և դիակի զննություն կատարելու մասին արձանագրություններով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Մաթևոսյանի վերաբերյալ դատական ակտի հիմքում դրված վերը նշված ապացույցները, որոնք ձեռք են բերվել քրեական դատավարության օրենսդրության պահանջներին համապատասխան, դատարանը հետազոտել է դատաքննության ժամանակ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի հիման վրա՝ դրանք գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, հանգել է ճիշտ եզրակացության: Այս ապացույցների առկայության պայմաններում կատարված հանցագործության մեջ Ա.Մաթևոսյանի մեղավորության մասին վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավորված ու պատճառաբանված են, իսկ այդ

կապակցությամբ վճռաբեկ բողոքում բերված փաստարակները գործի նյութերում իրենց հաստատումը չեն գտել: Հետևաբար անհիմն է բողոք բերած անձի այն պնդումը, թե Ա.Մաթևոսյանի կողմից դիտավորյալ սպանություն չի կատարվել:

24. Վերոգրյալի հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոք բերած անձը, նշելով, որ նախաքննության և դատական քննությունների ընթացքում խախտվել են Ա.Մաթևոսյանի իրավունքները և նա չի կարողացել իրավական պաշտպանություն ստանալ վերաքննիչ դատարանում, որևէ փաստարկ չի բերել հիմնավորելու, թե ինչում են արտահայտվել այդ խախտումները և վերաքննիչ դատարանում իրավական պաշտպանություն չստանալը: Իսկ ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքում նշված՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ, 6-րդ, 14-րդ հոդվածների, ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ, 23-րդ, 25-րդ, 129-րդ, 130-րդ հոդվածների պահանջների խախտմանը, ապա գործի նյութերից երևում է, որ վերաքննիչ բողոք բերած անձն իր բողոքում նշված հարցերը չի բարձրացրել, դրանք վերաքննիչ դատարանը քննության չի առել և դրանց վերաբերյալ որոշում չի կայացրել: Վճռաբեկ դատարանի կողմից Վերաքննիչ դատարանի 2007թ. դեկտեմբերի 3-ի դատավճիռը բեկանելուց և գործը նույն դատարան նոր քննության ուղարկելուց հետո էլ վերաքննիչ դատարանում գործի քննությանը մասնակցած Ա.Մաթևոսյանի պաշտպանը վճռաբեկ բողոքում նշված հարցերը վերաքննիչ դատարանում չի բարձրացրել:

Գործի նյութերից երևում է, որ նա վերաքննիչ դատարանում միջնորդել է ունկնդրել գործով իրեղեն ապացույց ճանաչված քննչական փորձարարության, Ալիկ Մաթևոսյանի և վկա Վահե Դոխոյանի, Ալիկ Մաթևոսյանի և Ռաֆիկ Հարությունյանի առերես հարցաքննությունների տեսաերիզները, սակայն վերաքննիչ դատարանը նշված միջնորդությունները մերժել է այն պատճառաբանությամբ, որ դրանք դատարանում ունկնդրվել են, բացի այդ, տեսաերիզների պատճենները տրվել են կողմերին: Պաշտպանության կողմը միջնորդություններ է հարուցել նաև վկա Վ.Դոխոյանին և դատաբժշկական փորձագետ Բիշարյանին դատարան հրավիրելու և հարցաքննելու, գործով դատալուսանկարչական և դատաբժշկական համալիր փորձաքննություն նշանակելու, դեպքի վայրում քննչական փորձարարություն անցկացնելու մասին: Վերաքննիչ դատարանը, օրենքով սահմանված կարգով քննարկելով այդ միջնորդությունները, պատճառաբանված որոշմամբ մերժել է դրանք:

25. Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոք բերած անձի կողմից անտեսվել է ՀՀ քրեական դատավարության

օրենսգրքի 404-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, որի համաձայն՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտերն անձը չի կարող բողոքարկել Վճռաբեկ դատարան, եթե նա նույն հիմքերով չի բողոքարկել դատական ակտը վերաքննիչ դատարանում: Հետևաբար վերաքննիչ դատարանում չբարձրացված վերը նշված հարցերը Վճռաբեկ դատարանում քննության առարկա դառնալ չեն կարող:

Այստեղ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ 2009թ. դեկտեմբերի 22-ին Ալիկ Մաթևոսյանի դիմումի հիման վրա քննության առնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանելու հարցը՝ ՀՀ սահմանադրական դատարանը որոշել է, որ այն համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:

26. Հիմք ընդունելով վերոշարադրյալ հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավորված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դատական սխալի՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտման առկայությունը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, այդ առումով վերաքննիչ դատարանի դատական ակտն օրինական է, հիմնավորված ու պատճառաբանված, լիովին համապատասխանում է ՀՀ քրեական դատավարության օրենսգքրի 358-րդ հոդվածի պահանջներին, ուստի նույն օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա Վճռաբեկ բողոքը պետք է մերժել՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

27. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Դատապարտյալ Ալիկ Ռուդիկի Մաթևոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով և 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի նոյեմբերի 12-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Դ. Ավետիսյան
Դատավորներ՝ Հ. Ասատրյան
Ե. Դանիելյան
Հ. Ղուկասյան
Ա. Պողոսյան
Ս. Օհանյան

Սեյրան Այվազյանի վերաբերյալ որոշում, 105/07

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
քրեական գործ թիվ 105/07

Նախագահող դատավոր՝ Հ. Տեր-Ադամյան
դատավորներ՝ Ս. Ղազարյան
Ս. Համբարձումյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Հ. Մանուկյանի

մասնակցությամբ դատավորներ Դ. Ավետիսյանի
Հ. Դուկասյանի
Ս. Օհանյանի
Ա. Մկրտումյանի
Վ. Աբելյանի
Ս. Սարգսյանի

2008 թվականի մայիսի 23-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով հավատարմագրված փաստաբան Արթուր Ղազարյանի միջոցով տուժողի իրավահաջորդ Անահիտ Այվազյանի ներկայացուցիչ Կարեն Թումանյանի բերած վճռաբեկ բողոքը թիվ 55200706 քրեական գործով Լոռու մարզի դատախազության քննիչ Ս. Մխիթարյանի 2006 թվականի հոկտեմբերի 3-ի «Քրեական գործը կար-

ճելու մասին» որոշման 2-րդ կետը՝ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնի ոստիկաններ Արամ Սահակյանի, Աշոտ Աբգարյանի, Ռուսլան Մոսինյանի, Հրաչյա Գրիգորյանի նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժելու մասը հաստատելու վերաբերյալ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի սեպտեմբերի 12-ի որոշումն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 23-ի որոշման դեմ,

ՊԱՐԶԵՑ

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Լոռու մարզի դատախազության քննիչ Ս.Մխիթարյանը 2006 թվականի մարտի 6-ին Սեյրան Այվազյանի կողմից համագյուղացիներին և ոստիկանության աշխատակիցներին մարմնական վնասվածքներ հասցնելու փաստի առիթով հարուցել է թիվ 55200706 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի (երկու կամ ավելի անձանց սպանության փորձ) հատկանիշներով:

Ս.Այվազյանի քույրը՝ Անահիտ Այվազյանը, 2006 թ. ապրիլի 11-ի քննիչի որոշմամբ թիվ 55200706 քրեական գործով ճանաչվել է տուժողի իրավահաջորդ:

2006 թվականի հոկտեմբերի 3-ին քննիչը որոշում է կայացրել քրեական գործով վարույթը կարճելու մասին այն հիմքով, որ հանցանք կատարած անձը՝ Ս.Այվազյանը, մահացել է:

Նույն որոշմամբ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնի չորս աշխատակիցների նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժվել է նրանց գործողություններում հանցակազմի բացակայության հիմքով:

2. «Թիվ 55200706 քրեական գործի վարույթը կարճելու մասին» քննիչի 2006 թ. հոկտեմբերի 3-ի որոշման դեմ տուժողի իրավահաջորդ Անահիտ Այվազյանը բողոք է ներկայացրել Լոռու մարզի դատախազություն: 2006 թվականի նոյեմբերի 20-ի թիվ Դ-81 գրությամբ վերջինս պատասխանել է, որ որոշումը կայացվել է օրենսդրությանը համապատասխան:

2006 թ. հոկտեմբերի 3-ի քննիչի որոշման դեմ տուժողի իրավահաջորդը բողոք է ներկայացրել Լոռու մարզի դատախազին: 2006 թվականի նոյեմբերի 16-ի թիվ Դ-81 գրությամբ վերջինս հայտնել է, որ որոշումը վերացնելու հիմքեր չկան:

Քննիչի նույն որոշման դեմ տուժողի իրավահաջորդը բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին: ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության պետի տեղակալ Բ.Աղայանը 2007 թ.

հունվարի 19-ի թիվ 15-87-06 գրությամբ բողոք բերողին հայտնել է, որ կայացված որոշման օրինականությունը ստուգվել է ՀՀ գլխավոր դատախազությունում. որոշումն օրինական է, և այն վերացնելու հիմքեր չկան:

3. 2007 թ. հունիսի 27-ին տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Կ.Թումանյանը բողոք է ներկայացրել Լոռու մարզի առաջին ատյանի դատարան՝ պահանջելով թիվ 55200706 քրեական գործի վարույթը կարճելու մասին քննիչի որոշման 2-րդ կետը վերացնել:

Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թ. սեպտեմբերի 12-ի որոշմամբ տուժողի իրավահաջորդի ներկայացուցչի բողոքը մերժվել է:

Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչը 2007 թ. սեպտեմբերի 27-ին բերել է վերաքննիչ բողոք:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2007 թ. հոկտեմբերի 23-ի որոշմամբ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի որոշումը թողնվել է անփոփոխ, իսկ վերաքննիչ բողոքն առանց բավարարման:

4. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2007 թ. հոկտեմբերի 23-ի որոշման դեմ տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Կ.Թումանյանը հավատարմագրված փաստաբան Ա.Ղազարյանի միջոցով վճռաբեկ բողոք է բերել:

2008 թվականի մարտի 4-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը բողոքն ընդունել է վարույթ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»):

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

Սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստական հանգամանքները.

5. Թիվ 55200706 քրեական գործով իրականացված նախաքննությամբ պարզվել է հետևյալը.

2006 թվականի մարտի 6-ին՝ ժամը 12.00-ից մինչև 17.00-ի սահմաններում, գտնվելով հոգեպես անհավասարակշիռ վիճակում, Ս. Այվազյանն իր մոտ գտնվող դանակով Լոռու մարզի Օձուն գյուղում փորձել է սպանել նույն գյուղի բնակիչներ Հ.Չոբանյանին և Ե.Պետրոսյանին, ինչպես նաև ոստիկանության տեղամասային տեսուչ Վ. Բոշյանին:

Այնուհետև ՀՀ ոստիկանության Թումանյանի բաժնի պետի հրամանով ոստիկանության վեց ծառայողներ՝ Հ.Գևորգյանը, Ն.Նանինյանը, Ա. Սահակյանը, Ա.Աբգարյանը, Ռ.Մոսինյանը և Հ.Գրիգորյանը, Ս.Այվազյանին վնասազերծելու նպատակով հարկադրաբար բացել են նրա տան դուռն ու ներս մտել, սակայն նրան վնասազերծել չի հաջողվել: Այն ժամանակ, երբ ոստիկանների խումբը հեռանում էր, Ս.Այվազյանն իր տան պատշգամբում դանակով հարվածել է ՀՀ ոստիկանության ավագ տեղամասային տեսուչ Հ.Գևորգյանին: Վերջինիս վիրավորվելը տեսնելով՝ ՀՀ ոստիկանության չորս աշխատակիցներ՝ Ա.Սահակյանը, Ա.Աբգարյանը, Ռ.Մոսինյանը և Հ. Գրիգորյանը, իրենց հաշվեցուցակային զենքերից կրակել են Ս.Այվազյանի ուղղությամբ: Ալավերդու հիվանդանոց տեղափոխելիս ստացած հրազենային վնասվածքներից վերջինս մահացել է:

Ս.Այվազյանի ուղղությամբ Հ.Գրիգորյանը կրակել է մեկ անգամ, Ա. Սահակյանը՝ ութ, Ա.Աբգարյանը՝ երեք, և Ռ.Մոսինյանը՝ երեք:

6. Քրեական գործով տուժող Հ.Գևորգյանը հարցաքննվել է 2006 թ. մարտի 7-ին (քրեական գործ, 46-րդ էջ), վկա Հ.Գրիգորյանը՝ 2006 թ. մարտի 14-ին (քրեական գործ, 83-րդ էջ), վկա Ն.Նանինյանը՝ 2006 թ. մարտի 15-ին (քրեական գործ, 89-րդ էջ), իսկ վկա Ա.Աբգարյանը՝ 2006 թ. մարտի 16-ին (քրեական գործ, 92-րդ էջ):

7. Ա.Այվազյանի դիակի դատաբժշկական փորձաքննություն իրականացրած փորձագետի եզրակացության մեջ նկարագրված հրազենային գնդակային տասը կրակոցներից առաջացած վերքերից վեցն ունեցել են «հետևից առաջ» ուղղությունը (քրեական գործ, 276-րդ էջ):

8. Թիվ 55200706 «Քրեական գործով վարույթը կարճելու մասին» 2006 թ. հոկտեմբերի 3-ի քննիչի որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետում նշված է. «... որոշեցի ... ՀՀ Ոստիկանության ԼՄՎ Ոստիկանության Թումանյանի բաժնի ոստիկաններ Արամ Սահակյանի, Աշոտ Աբգարյանի, Ռուսլան Մոսինյանի, Հրաչյա Գրիգորյանի նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժել նրանց գործողություններում հանցակազմի բացակայության պատճառով»:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Ըստ բողոքի հեղինակի՝ վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասը և 175-րդ հոդվածը: Դատարանի հիմնավորումը, որ նախաքննության մարմինը թիվ 55200706 քրեական գործի շրջանակներում կատարել է քննություն և անհրաժեշտություն չի եղել առանձին քրեական գործ հարուցել Ս.

Այվազյանին կյանքից զրկելու կապակցությամբ, անհիմն է: Բողոքի հեղինակը փաստարկում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «դեպքը» հանցագործության հատկանիշներ պարունակող իրադարձություն է, որի կապակցությամբ իրականացվում է քրեական դատավարություն, իսկ նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «քրեական գործը» քրեական հետապնդման մարմնի կամ դատարանի կողմից իրականացվող առանձին վարույթ է՝ քրեական օրենսգրքով չթույլատրված մեկ կամ մի քանի ենթադրաբար կատարված արարքների կապակցությամբ:

Բողոքաբերը նշում է, որ դատարանը խախտել է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածը: Դատարանի հիմնավորումը, թե ոստիկանության աշխատակիցների արարքում բացակայում է հանցակազմը, անհիմն է, քանի որ տվյալ դեպքի համար հանցակազմի առկայության կամ բացակայության հարցի վերջնական լուծումը կարող է տեղի ունենալ տվյալ ուղղությամբ առանձին քրեական գործի շրջանակներում՝ լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի նախաքննություն կատարելուց հետո: Իսկ քրեական գործ հարուցելու և նախաքննություն իրականացնելու համար առկա են հանցակազմի բոլոր հատկանիշները:

10. Ըստ բողոքի հեղինակի՝ անհիմն է նաև դատարանի այն հիմնավորումը, որ Ս.Այվազյանին կյանքից զրկել են նրա կողմից անօրինական բռնությունից՝ կատարված և կատարվող հարձակումից պաշտպանվելու և այն կանխելու համար, որ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնի ծառայողները գործել են անհրաժեշտ պաշտպանության վիճակում և նրանց կողմից Ս.Այվազյանի նկատմամբ անհրաժեշտ է եղել գործադրել հրազեն, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցագործություն չի համարվում այն գործողությունը, որը կատարվել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում (…)»:

Ըստ բողոքաբերի՝ տվյալ դեպքում ոստիկանության աշխատակիցների կողմից զենքի գործադրումը և դրանով մահ պատճառելը չի կարող դիտվել անհրաժեշտ պաշտպանության վիճակում կատարված, քանի որ անձի կյանքի համար վտանգավոր բռնություն կամ այդպիսի բռնության իրական սպառնալիք չի եղել:

Բացի այդ, նախաքննական մարմինը իր որոշմամբ չի նշել, թե ոստիկանության աշխատակիցների կողմից Ս.Այվազյանին կյանքից զրկելն արարքի հանցավորությունը բացառող հատկապես ո՛ր հանգամանքի առկայությամբ է իրավաչափ (անհրաժեշտ պաշտպանության, ծայրահեղ անհրաժեշտության, հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու): Իսկ դատարանը իրավունք չուներ նույն հետևությանը հանգելու,

քանի որ նախաքննության մարմինը տվյալ հանգամանքի ուղղությամբ նախաքննություն չի իրականացրել, և արարքի հանցավորությունը բացառող կոնկրետ հանգամանքի առկայությունը չի հիմնավորվել:

11. Բողոքի հեղինակը նշում է, որ խախտվել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 2-րդ մասը: Անհիմն է դատարանի այն հիմնավորումը, որ բաց է թողնվել նախաքննության մարմնի որոշումը բողոքարկելու՝ օրենքով սահմանված ժամկետները, քանի որ գործով տուժողի իրավահաջորդը բողոքարկել է դատախազության քննիչի որոշումը, սակայն վերադաս դատախազը օրենսգրքով սահմանված կարգով 7 օրվա ընթացքում որոշում չի կայացրել, այլ բողոքը մերժել է գրությամբ:

Բացի այդ, նախաքննության մարմինը մեկ որոշմամբ երկու գործողություն է իրականացրել. կարճել է քրեական գործը և մերժել է քրեական գործի հարուցումը: Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը՝ բողոքը բերելու օրվա դրությամբ, քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը դատական կարգով բողոքարկելու ժամկետի սահմանափակումներ չի նախատեսել: Այսինքն՝ բողոքի հեղինակը գտնում է, որ սույն գործով կիրառման է ենթակա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասի նախկին խմբագրությունը, որը չէր սահմանում գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված բողոքը բավարարելուց դատախազի հրաժարվելը դատարան բողոքարկելու ժամկետ:

12. Ըստ բողոքի հեղինակի՝ խախտվել է նաև կյանքի իրավունքը սահմանող ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի» 2-րդ հոդվածը, ինչպես նաև նույն կոնվենցիայի 13-րդ արձանագրության 1-ին հոդվածը: Մասնավորապես, անհիմն է դատարանի այն հիմնավորումը, թե ոստիկանության աշխատակիցները գործել են իրենց լիազորությունների շրջանակում և օրենքի հիման վրա:

13. Բողոքատուն փաստարկում է, որ խախտվել է նաև ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածը: Մասնավորապես, դատարանը չի կիրառել գործով կիրառման ենթակա՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մակկանը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճիռը՝ փաստական հանգամանքների տարբերության պատճառաբանությամբ:

14. Ելնելով վերոգրյալից՝ բողոքի հեղինակը խնդրում է ամբողջությամբ բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 23-ի որոշումը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքը պետք է մերժել հետևյալ պատճառաբանությամբ.

Ի. Առաջին ատյանի դատարանի կողմից գործն ըստ էության քննության առնելու իրավաչափությունը.

15. Բողոքը բերած անձը Վճռաբեկ դատարանի առջև բարձրացրել է հետևյալ հարցը. Լոռու մարզի առաջին ատյանի դատարանը և քրեական վերաքննիչ դատարանն իրավասու՞ էին ըստ էության քննության առնել տուժողի իրավահաջորդ Ա.Այվազյանի ներկայացուցիչ Կ.Թումանյանի բողոքները, թե պարտավոր էին մերժել այն ժամկետանց լինելու հիմքով:

16. Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի՝

«1. Քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում կասկածյալի, մեղադրյալի, ամբաստանյալի, նրանց պաշտպանների, տուժողի, նրա ներկայացուցչի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի կամ նրանց ներկայացուցիչների (...) կողմից (...) կարող է բողոքարկվել վերադաս դատախազին:

2. Դատախազը բողոքը ստանալու պահից 7 օրվա ընթացքում որոշում է կայացնում բողոքը մերժելու կամ բավարարելու մասին: Կայացված որոշման պատճենն անհապաղ ուղարկվում է բողոքը ներկայացնող անձին: Գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված բողոքը մերժելու մասին դատախազի որոշումը դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում կարող է բողոքարկվել դատարան»:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասի՝ մինչև 2007 թ. ապրիլի 7-ն ուժի մեջ եղած խմբագրության՝ «Գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված բողոքը բավարարելուց դատախազի հրաժարվելը կարող է բողոքարկվել դատարան»:

17. Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի՝

«1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և

գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

(...)

3. Բողոքը կարող է ներկայացվել վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան՝ այն մերժելու մասին տեղեկություն ստանալու կամ, եթե դրա վերաբերյալ պատասխան չի ստացվել, բողոք ներկայացնելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից՝ մեկ ամսվա ընթացքում:

(...)»:

18. Վճռաբեկ դատարանը համաձայնում է բողոքաբերի այն հիմնավորմանը, որ տուժողի իրավահաջորդ Ա.Այվազյանի՝ դատախազության ուղղված բողոքը բավարարելուց հրաժարվելու հետևանքով ծագած իրավահարաբերությունները կարգավորվում էին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասի՝ մինչև 2007 թ. ապրիլի 7-ն ուժի մեջ եղած խմբագրությամբ, որը չէր սահմանում դատախազի որոշման դատական բողոքարկման հստակ ժամկետ:

Սակայն Վճռաբեկ դատարանը չի ընդունում բողոքի հեղինակի այն մեկնաբանությունը, որ սույն գործով կիրառման ենթակա օրենսդրությամբ սահմանված չէր դատարան դիմելու որևէ ժամկետային սահմանափակում: Վճռաբեկ դատարանը ճիշտ է համարում քրեական վերաքննիչ դատարանի այն հիմնավորումը, որ սույն գործով կիրառման է ենթակա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված՝ դատական բողոքարկման մեկամսյա ընդհանուր ժամկետը:

Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Կ.Թումանյանի բողոքն առաջին ատյանի դատարան է բերվել միայն 2007 թ. հունիսի 27-ին, այսինքն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված դատական բողոքարկման մեկամսյա ժամկետը սույն գործով չի պահպանվել:

19. Այս պայմաններում գործի էությունը քննության առարկա դարձնելով՝ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները դուրս են եկել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության թույլատրելի ժամանակային շրջանակներից:

20. Հետևաբար՝ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանը և քրեական վերաքննիչ դատարանն իրավասու չէին ըստ էության քննության առնելու տուժողի իրավահաջորդ Ա.Այվազյանի ներկայացուցիչ Կ.Թումանյանի բողոքները, այլ պարտավոր էին մերժել դրանք ժամկետանց լինելու հիմքով:

21. Վերը շարադրված հիմնավորումները բավարար են բողոքը մերժելու համար: Այնուհանդերձ, նկատի ունենալով, որ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները սույն գործը քննության են առել ըստ էության

և իրենց որոշումներում շարադրել են ըստ էության հիմնավորումներ, ինչպես նաև ելնելով օրենքի միատեսակ կիրառության ապահովման իր սահմանադրական գործառույթից՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել մի շարք իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նույնանման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

II. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումների կիրառելիությունը.

22. Այս կապակցությամբ բողոքի հեղինակը Վճռաբեկ դատարանի առջև բարձրացրել է հետևյալ հարցը. քրեական վերաքննիչ դատարանը իրավասու՞ էր արդյոք մերժել Մակկանը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի հիմնավորումները սույն գործի նկատմամբ կիրառելն այն հիմքով, որ այդ գործի և քննության առարկա գործի փաստական հանգամանքները տարբերվում են:

23. Համաձայն ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի (նույնաբովանդակ իրավանորմ նախատեսված է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասում)՝ «Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով (...) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ»:

24. Մակկանը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճռում (27 սեպտեմբերի 1995 թ., McCann v. The United Kingdom, գանգատ թիվ 18984/91) Մարդու իրավունքների եվրոպական դատարանը սահմանել է, որ մեկ այլ անձի անօրինական բռնությունից պաշտպանելու համար մյուս անձին կյանքից զրկելը պետք է լինի բացարձակ անհրաժեշտություն: Նույն վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը սահմանել է նաև, որ եթե չկա մեկ այլ անձին կյանքից զրկելու իրական սպառնալիք, ապա կյանքի իրավունքի նկատմամբ միջամտությունը չի կարող իրավաչափ լինել (տե՛ս վճռի 148-րդ կետը):

25. Քրեական վերաքննիչ դատարանը սույն գործով գտել է, որ վերը նշված Մակկանի գործով վճիռը տվյալ գործով կիրառելի չէ, քանի որ երկու գործերի փաստական հանգամանքները տարբեր են:

26. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ

հոդվածի 4-րդ մասի) հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտը ոչ կիրառելի ճանաչելիս դատարանները չեն կարող բավարարվել կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերությունների պարզ համադրմամբ: Յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքների համակցությամբ եզակի է, ուստի դատարանը պետք է յուրաքանչյուր դեպքում պարզի, թե կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերությունները որքանով են էական: Հակառակ պարագայում ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասում) ամրագրված իրավանորմը կդառնա անկիրառելի:

Դրա հետ մեկտեղ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի կիրառելիության հարցը լուծելիս դատարանը պետք է հաշվի առնի նաև այն, թե տվյալ դատական ակտի հիմնավորման բովանդակությունը կազմող ինչպիսի դրույթ է ենթակա կիրառման: Եթե այդ դրույթն իր բնույթով առավել ընդհանրական է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել փոքր ընդհանրություն: Եվ ընդհակառակը՝ եթե դրույթն իր բնույթով առավել կոնկրետ է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքերի առավել մեծ ընդհանրություն:

27. Սույն գործով վերաքննիչ դատարանը պետք է լուծեր վերը նշված Մակկանի վճռի հիմնավորումներում բովանդակվող ընդհանրական և ոչ թե կոնկրետ դրույթների կիրառելիության հարց: Ուստի սույն գործի ու Մակկանիգործի փաստական հանգամանքների նմանության աստիճանը պետք է որոշվեր այդ լույսի ներքո: Այսպես, թե՛ Մակկանիգործով և թե՛ քննության առարկա գործով պետության անունից գործող և որոշակի դեպքերում զենք կիրառելու լիազորություն ունեցող անձինք, ենթադրաբար անհրաժեշտ պաշտպանության վիճակում, հրազենի կիրառմամբ կյանքից զրկել են ենթադրյալ վտանգի աղբյուր հանդիսացող անձին (անձանց): Այս պայմաններում սույն գործի և Մակկանիգործի փաստական հանգամանքների նմանությունը քանակապես և որակապես բավարար էր Մակկանի գործով վճռի հիմնավորումներում պարունակվող ընդհանրական դրույթները սույն գործի նկատմամբ կիրառելու համար:

28. Հետևաբար՝ քրեական վերաքննիչ դատարանը իրավասու չէր մերժել Մակկանը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի հիմնավորումները սույն գործի նկատմամբ կիրառելն այն հիմքով, որ այդ գործի և քննության առարկա գործի փաստական հանգամանքները տարբերվում են:

III. Ս.Այվազյանին կյանքից զրկելու փաստի առթիվ քննությունը.

29. Ս.Այվազյանին կյանքից զրկելու փաստի առթիվ քննության իրավաչափության կապակցությամբ

Վճռաբեկ դատարանը նախ քննության է առնում հետևյալ հարցը. Ս.Այվազյանին կյանքից զրկելու փաստի առթիվ իրականացվե՞լ է արդյոք որևէ քրեադատավարական քննություն:

30. Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը պարտավոր են իրենց իրավասության սահմաններում քրեական գործ հարուցել հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում, օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները ձեռնարկել հանցագործություն կատարած անձանց և հանցագործության, ինչպես նաև դրա կատարման հանգամանքները բացահայտելու համար»:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 175-րդ հոդվածի՝ «Քրեական գործ հարուցելու՝ սույն օրենսգրքով նախատեսված առիթների և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը, իրենց իրավասության շրջանակներում, պարտավոր են քրեական գործ հարուցել»:

Ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի՝

«1. Քրեական գործ հարուցելու առիթի և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելու մասին:

2. Որոշման մեջ պետք է նշվեն գործ հարուցելու առիթն ու հիմքը, քրեական օրենքի այն հոդվածը, որի հատկանիշներով հարուցվում է գործը, հարուցելուց հետո գործի հետագա ընթացքը:

(...)»:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Տուժող է ճանաչվում այն անձը, ում քրեական օրենսգրքով չթույլատրվող արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս: (...)»: Ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Տուժողի իրավահաջորդ է ճանաչվում նրա մերձավոր ազգականներից մեկը, որը ցանկություն է հայտնել քրեական գործով վարույթում իրականացնել մահացած (...) տուժողի իրավունքները և պարտականությունները»:

31. Քննության առարկա գործի նյութերի վերլուծությունը հնարավորություն չի տալիս միանշանակ պատասխան տալ այն հարցին, թե արդյոք Ս. Այվազյանին կյանքից զրկելու փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ և իրականացվել է նախնական քննություն:

Մի շարք հանգամանքներ վկայում են այն մասին, որ թիվ 55200706 քրեական գործը հարուցվել է Ս.Այվազյանի կողմից կատարված

գործողությունների և ոչ թե նրան կյանքից զրկելու փաստի կապակցությամբ: Այսպես՝

ա) Թիվ 55200706 քրեական գործը հարուցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (երկու կամ ավելի անձանց սպանության փորձ), իսկ դա չի համապատասխանում Ս. Այվազյանին կյանքից զրկելու փաստի որևէ հնարավոր իրավաբանական որակմանը:

բ) Թիվ 55200706 քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշմամբ լուծվել է նաև Ս.Այվազյանին կյանքից զրկելու փաստի կապակցությամբ քրեական գործի հարուցման հարցը. որոշվել է նրա ուղղությամբ կրակած ոստիկանների նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժել (տե՛ս վերը՝ 8-րդ կետ): Դրանից ուղղակիորեն հետևում է, որ Ս.Այվազյանին կյանքից զրկելու փաստի առթիվ քրեական գործ հարուցված չէր եղել:

32. Միևնույն ժամանակ որոշ հանգամանքներ վկայում են այն մասին, որ թիվ 55200706 քրեական գործը հարուցելու հիմք հանդիսացած փաստերի շրջանակը ներառել է նաև Ս.Այվազյանին կյանքից զրկելու փաստը, և այդ կապակցությամբ իրականացվել է նախնական քննություն: Այսպես՝ նշված քրեական գործը հարուցելու մասին որոշման նկարագրական մասում ամրագրված է, որ «Այվազյանը վնասազերծվել և մարմնական վնասվածքներով տեղափոխվել է Ալավերդու քաղաքային հիվանդանոց, որտեղ և մահացել է» (քրեական գործ, 1-ին էջ): Քննիչի 2006 թ. ապրիլի 11-ի որոշմամբ Ս.Այվազյանի քույրը՝ Անահիտ Այվազյանը, ճանաչվել է տուժողի իրավահաջորդ: Որոշման մեջ նշված է «... հանցագործությամբ քաղ. Սեյրան Այվազյանին պատճառվել է ֆիզիկական վնաս, մահ ...» (քրեական գործ, 163-րդ էջ):

Բացի այդ, քրեական գործով մի շարք ապացույցներ վերաբերել են Ս.Այվազյանին կյանքից զրկելու հանգամանքներին: Մասնավորապես.

ա) Դեպքի վայրի զննության արձանագրությունը (քրեական գործ, 29-37-րդ էջեր),

բ) Ս.Այվազյանի դիակի և հագուստի զննության արձանագրությունը (քրեական գործ, 52-54-րդ էջեր),

գ) Ս.Այվազյանի դիակի դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը (քրեական գործ, 273-276-րդ էջեր),

դ) Ս.Այվազյանի հագուստի դատաձգաբանական փորձաքննության եզրակացությունը (քրեական գործ, 314-317-րդ էջեր),

ե) Ս.Այվազյանի վրա կրակած և այդ դեպքին ականատես եղած ոստիկանների ցուցմունքները (Հ.Ս.Գևորգյանի ցուցմունքը՝ քրեական գործ, 46-51-րդ էջեր, Հ.Ե.Գրիգորյանի ցուցմունքը՝ քրեական գործ, 83-85-րդ էջեր, Ն.Վ.Նանինյանի ցուցմունքը՝ քրեական գործ, 89-91-րդ էջեր, Ա.Մ.Աբգարյանի ցուցմունքը՝ քրեական գործ, 92-96-րդ էջեր):

33. Այսպիսով, որոշակի հանգամանքներ վկայում են այն մասին, որ Ս. Այվազյանին կյանքից զրկելու փաստի կապակցությամբ, այնուամենայնիվ, որոշակի քրեադատավարական քննություն իրականացվել է:

34. Վճռաբեկ դատարանն այնուհետև քննության է առնում այն հարցը, թե Ս.Այվազյանին կյանքից զրկելու փաստի կապակցությամբ քննությունն արդյո՞ք պատշաճ է եղել:

35. Ռամսահայը և այլոք ընդդեմ Նիդեռլանդների գործով վճռի (15 մայիսի 2007 թ., Ramsahai and others v. The Netherlands, գանգատ թիվ 52391/99) 324-րդ կետում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատը սահմանել է. «Որպեսզի պայմանավորվող պետության պատասխանատվությունն առաջացնող մահվան կապակցությամբ նախաքննությունը համարվի «արդյունավետ»՝ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի իմաստով, առաջին հերթին անհրաժեշտ է, որ այդ նախաքննությունը լինի պատշաճ: Այն է՝ նման նախաքննությունը պետք է կարողանա հանգեցնել պատասխանատու անձանց ինքնությունը պարզելուն և նրանց պատժին: Իշխանությունները պետք է իրականացնեն առկա բոլոր ողջամիտ քայլերը՝ ապահովելու համար պատահարի հետ կապված ապացույցները: (…)»:

Ռամսահայի գործով վճռի 326-րդ կետում նշված է. «(…) ոստիկաններ Բրոնսը և Բալստրան հարցաքննվել են միայն դեպքից մի քանի օր անց և այդ ժամանակահատվածում նրանք հնարավորություն են ունեցել պատահարը քննարկել միմյանց և այլոց հետ»:

Ռամսահայի գործով վճռի 330-րդ կետում սահմանված է. «(…) ոստիկաններ Բրոնսը և Բալստրան դեպքից հետո չեն պահվել իրարից մեկուսի և չեն հարցաքննվել գրեթե երեք օր (…): Չնայած, (…) չկա որևէ ապացույց առ այն, որ նրանք գաղտնի համաձայնության են եկել միմյանց կամ Ամստերդամի ոստիկանական ուժերի իրենց գործընկերների հետ, այնուամենայնիվ, միայն այն փաստը, որ չեն ձեռնարկվել նման համաձայնության վտանգի նվազեցմանն ուղղված համապատասխան քայլեր, հանդիսանում է նախաքննության պատշաճության էական թերություն»:

36. Ռամսահայի գործն իր փաստական հանգամանքներով էապես նման է քննության առարկա գործին. երկու գործերում էլ արարքի հանցավորությունը ենթադրաբար բացառող հանգամանքներում ոստիկանները զենքի գործադրմամբ մահ են պատճառել ենթադրաբար հանցանք կատարած անձին: Երկու գործերի էական ընդհանրություն է նաև այն, որ ոստիկաններից բացի՝ զենք գործադրելու այլ անմիջական ականատեսներ չեն եղել:

Ուստի ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի) ուժով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ սույն որոշման 35-րդ

կետում նշված հիմնավորումները քննության առարկա գործով ենթակա են կիրառման:

37. Ս.Այվազյանի մահվան կապակցությամբ իրականացված քննության պատշաճությունը գնահատելիս Վճռաբեկ դատարանը հաշվի է առնում այն հանգամանքը, որ գործով հարցաքննվել են դեպքին ականատես ոչ բոլոր ոստիկանները: Մասնավորապես, ոստիկանների կողմից Ս. Այվազյանի ուղղությամբ կրակելու պահին դեպքի վայրում գտնված վեց ոստիկաններից երկուսը՝ Գ.Մելքոնյանը և Ռ.Մոսինյանը, չեն հարցաքննվել: Դա նշանակում է, որ վարույթն իրականացնող մարմինը չի իրականացրել առկա բոլոր ողջամիտ քայլերը՝ ապահովելու Ս.Այվազյանին կյանքից զրկելու հետ կապված ապացույցները:

Ինչ վերաբերում է մյուս չորս ոստիկաններին, ապա Վճռաբեկ դատարանը հաշվի է առնում նրանց հարցաքննության ժամկետները: Այսպես՝ վկա Հ.Գրիգորյանը հարցաքննվել է դեպքից 8 օր հետո, վկա Ն.Նանինյանը՝ 9 օր հետո, իսկ վկա Ա.Աբգարյանը՝ 10 օր հետո (տե՛ս վերը՝ 6-րդ կետը):

Այդ ընթացքում ոչինչ չի ձեռնարկվել նրանց միմյանցից մեկուսի պահելու համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ չնայած չկա որևէ ապացույց այն մասին, որ ոստիկանները գաղտնի համաձայնության են եկել միմյանց հետ, այնուամենայնիվ, միայն այն փաստը, որ չեն ձեռնարկվել նման համաձայնության վտանգի նվազեցմանն ուղղված համապատասխան քայլեր, հանդիսանում է նախաքննության պատշաճության էական թերություն:

Քննության պատշաճությունը գնահատելիս Վճռաբեկ դատարանը հաշվի է առնում նաև այն, որ բավարար չափով չի պարզվել Ս.Այվազյանի ուղղությամբ կրակոցներ արձակելու մեխանիզմը. մասնավորապես, համապատասխան գնահատականի չի արժանացել Ս.Այվազյանի վրա արձակված կրակոցների ուղղությունը: Այսպես, քննությամբ ողջամիտ բացատրություն չի տրվել այն փաստին, որ Ս.Այվազյանի ուղղությամբ վեց կրակոց արձակվել է հետևից (տե՛ս վերը՝ 7-րդ կետը):

38. Նախորդ կետում շարադրվածն ինքնին բավարար է այն հետևության համար, որ Ս.Այվազյանին կյանքից զրկելու փաստի կապակցությամբ քննությունը պատշաճ չի եղել:

Հաշվի առնելով սույն որոշման 15-20-րդ կետերում շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 408-րդ, 419-րդ, 421-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Բողոքը մերժել: Թիվ 55200706 քրեական գործով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2007 թ. հոկտեմբերի 23-ի որոշումը Վճռաբեկ դատարանի պատճառաբանություններով թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Հ. Մանուկյան
Դատավորներ՝ Դ. Ավետիսյան
Հ. Ղուկասյան
Ս. Օհանյան
Ա. Մկրտումյան
Վ. Աբելյան
Ս. Սարգսյան

Արայիկ Գզոյանի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0049/01/09

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵԱՔԴ/0049/01/09

Նախագահող դատավոր՝ Ա. Հովհաննիսյան
Դատավորներ՝ Ս. Չիչոյան, Ա. Դանիելյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի
քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Դ. Ավետիսյանի
մասնակցությամբ դատավորներ՝ Հ. Ասատրյանի
Ե. Դանիելյանի
Հ. Ղուկասյանի
Ա. Պողոսյանի
Ս. Օհանյանի

քարտուղարությամբ Մ. Պետրոսյանի

2010 թվականի փետրվարի 12-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ամբաստանյալ Արայիկ էդուարդի Գզոյանի վճռաբեկ բողոքն իր վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 2.1-րդ կետերով, 266-րդ հոդվածի 4-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 27-ի որոշման դեմ,

ՊԱՐԶԵՑ

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2008թ. հուլիսի 12-ին ՀՀ ոստիկանության էրեբունու քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերի, 266-րդ հոդվածի 4-րդ մասի և 268-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի հատկանիշներով հարուցվել է թիվ 12113708 քրեական գործը:

2. 2008թ. հոկտեմբերի 15-ին Արայիկ Էդուարդի Գզոյանը ձերբակալվել է:

3. 2008թ. հոկտեմբերի 17-ի որոշմամբ Ա.Գզոյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1-րդ կետով և 268-րդ հոդվածի 3-րդ մասով:

4. 2008թ. դեկտեմբերի 4-ի որոշմամբ թիվ 12113708 քրեական գործից անջատվել է Ա.Գզոյանի և մյուսների մասը, և անջատված մասին շնորհվել է 14800508 համարը:

5. 2009թ. մարտի 6-ի որոշմամբ Ա.Գզոյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել, լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 266-րդ հոդվածի 4-րդ մասով:

6. 2009թ. մայիսի 5-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է ՀՀ Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. հուլիսի 21-ի դատավճռով ամբաստանյալ Ա.Գզոյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 2.1-րդ կետերով, 266-րդ հոդվածի 4-րդ մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 2.1-րդ կետերով նա դատապարտվել է ազատազրկման 5(հինգ) տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով՝ տուգանքի 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կանոններով, պատիժները լրիվ գումարելու միջոցով ամբաստանյալ Ա.Գզոյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 5(հինգ) տարի ժամկետով և տուգանք՝ 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամի չափով:

7. Ամբաստանյալ Ա.Գզոյանի և նրա պաշտպանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2009թ. հոկտեմբերի 27-ի որոշմամբ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին

ատյանի դատարանի 2009թ. հուլիսի 21-ի դատավճիռը թողել է օրինական ուժի մեջ:

8. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. հոկտեմբերի 27-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Ա.Գզոյանը:

Վճռաբեկ դատարանը 2009թ. դեկտեմբերի 24-ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»):

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ուղարկվել:

<u>Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

9. Արայիկ Գզոյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2008թ. հուլիսի 18-ին, քննությամբ չպարզված անձից իրացման նպատակով ապօրինի ձեռք է բերել առանձնապես խոշոր չափերի՝ 40 գրամ քաշով ափիոն տեսակի թմրամիջոցից և 1 լիտր քացախաթթվի անհիդրիդից 1,36 գրամ հաստատուն քաշով երկուանգամյա օգտագործման համար նախատեսված չափաբաժին և պրեկուրսոր հանդիսացող 2մլ ծավալով քացախաթթվի անհիդրիդ, ինչպես նաև զգալի չափերի՝ 0,3 գրամ քաշով մզվածքային ափիոն տեսակի թմրամիջոցը վաճառելու միջոցով ապօրինի իրացրել է Գարեգին Ղազարյանին: Բացի այդ, կրկին անգամ, 2008թ. հուլիս ամսին Ա.Գզոյանն իր ընկերոջ՝ ոմն Լյովայի խնդրանքով երկու անգամ, քննությամբ չպարզված անձից իրացման նպատակով ապօրինի ձեռք բերված առանձնապես խոշոր չափերի՝ 40 գրամ քաշով ափիոն տեսակի թմրամիջոց՝ 2 գրամ քաշով չափաբաժինը վաճառելու միջոցով ապօրինի իրացրել է Երևան քաղաքի բնակիչներ ոմն Հրաչին և ոմն Արամին:

10. 2009 թվականի մարտի 2-ին Ա.Գզոյանը ՀՀ ոստիկանության ՔԳՎ Երևանի ոստիկանության վարչության Արաբկիրի ՔԲ քննիչ Ա.Հակոբյանին հայտնել է, որ «(…) [ոստիկանության] 4-րդ բաժնում տրված բացատրությունները չ[են] համապատասխանում իրականությանը: Դրանք ներկայացվել են (…) ինձ ծեծի ենթարկելու, երեխաներիս հասցեին ահաբեկչական հայհոյանքների և սպառնալիքների ազդեցության ներքո: Այդ ցուցմունքը ես ներկայացրել եմ ֆիզիկապես անտանելի հյուծված և հոգեպես ծանր՝ ծայրաստիճան ցնցված ու անկայուն վիճակում [՝ հ] արցաքննության ընթացքում չդիմանալով ֆիզիկական ահավոր ցավերին[, ռ]ետինե մահակով հարվածներ ստանալով ոտքերիս տակ և երիկամներիս շրջանում: Այդ մահակի ուժեղ հարվածից պայթել է ձախ ականջիս

ականջաթաղանթը և ես լիովին կորցրել եմ այդ ականջիս լսողությունը ու մի քանի սեղանատամներ: (…)» (Քրեական գործ, 2-րդ հատոր, 129 էջ):

11. 2009 թվականի մարտի 4-ին Ա.Գզոյանի պաշտպան Ս.Միրզոյանը ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևանի ոստիկանության վարչության Արաբկիրի քննչական բաժնի քննիչ Ա.Հակոբյանին տեղեկացրել է ոստիկանության աշխատակիցների կողմից իր պաշտպանյալին ծեծի ենթարկելու մասին (Քրեական գործ, 2-րդ հատոր, 115-117 էջեր):

12. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ձերբակալված անձանց պահելու վայրի պետի 2008թ. նոյեմբերի 10-ի թիվ 8/8-215 գրությամբ փաստաբան Ս.Միրզոյանին հայտնվել է, որ «Ոստիկանության Արաբկիրի բաժնի կողմից ձերբակալված և 2008թ. հոկտեմբերի 15-ին Ոստիկանության Երևանի վարչության [ձերբակալվածներին պահելու վայր] բերված Արայիկ Էդուարդի Գզոյանը սահմանված կարգով ենթարկվել է բուժզննության, որի ընթացքում հայտնաբերվել և արձանագրվել են հետևյալ մարմնական վնասվածքները՝ ձախ ձեռքի դաստակի ներսի մասում կա կտրված վերք, աջ բազկին կա կապտուկ, ձախ ականջին կապտուկ, ըստ նրա բանավոր հայտարարության վերը նշված վնասվածքները ստացել է երկու օր առաջ ծառից ընկնելու հետևանքով» (Քրեական գործ, 2-րդ հատոր, 212 էջ):

13. Սույն որոշման 11-րդ կետում վկայակոչված՝ պաշտպանի դիմումի կապակցությամբ 2009 թվականի մարտի 13-ին նշանակվել է ծառայողական քննություն, և դրա արդյունքում հաստատված է համարվել, որ «Ծառայողական քննությամբ պարզվել է, որ Ա.Գզոյանի նկատմամբ Ա.Համբարձումյանի կողմից անօրինական վերաբերմունք չի ցուցաբերվել (…):

ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 14-ի թիվ 818-Ն որոշմամբ հաստատված «Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումից բխող՝ ծանուցման ենթակա իրավունքների» ցանկի 2-րդ կետի 3-րդ և 5-րդ ենթակետերի պահանջները լիարժեք չկատարելու՝ ՀՀ ոստիկանության [կազմակերպված հանցավորության դեմ պայքարի] գլխավոր վարչության շենք բերման ենթարկված Արայիկ Էդուարդի Գզոյանի կողմից պաշտպանից հրաժարվելու հանգամանքը չարձանագրելու, ինչպես նաև վերջինիս պահանջով ոստիկանություն բերելու պահից սկսած՝ երեք ժամվա ընթացքում Ա.Գզոյանի գտնվելու վայրի մասին վերջինիս կողմից ընտրված անձին ուշացումով տեղեկացնելու համար ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ Գլխավոր վարչության 4-րդ վարչության 2-րդ բաժնի ավագ օպերլիազոր, ոստիկանության մայոր Ավետիք Հրաչի Համբարձումյանի հարցը քննարկել ԿՀԴՊ Գլխավոր վարչության պետին

կից օպերատիվ խորհրդակցությունում» (Քրեական գործ, 2-րդ հատոր, 147-151 էջեր):

14. Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավճռում առկա են հետևյալ ձևակերպումները. «(…) Ամբաստանյալ Ա.Գզոյանը դատաքննության ընթացքում (…) տված ցուցմունքով հայտնեց, որ (…) իրեն տարել են ոստիկանություն և իր նկատմամբ գործադրել հոգեբանական և ֆիզիկական ներգործություն և ծեծի ենթարկելով ստիպել, որ խոստովանի, որ զբաղվել է թմրամիջոցների վաճառքով: Իրեն ենթարկել են ֆիզիկական բռնությունների, որոնց ճնշման տակ ինքը տվել է այնպիսի ցուցմունքներ, ինչպես որ իրեն թելադրել են, քանի որ իրեն սպառնացել են, որ իր տղային, որը բժշկական համալսարանի ուսանող է, նույնպես կբերեն բաժին՝ թմրանյութ գցելով գրպանը: Բացի այդ, ոստիկանությունում ծեծի հետևանքով կորցրել է ձախ ականջի լսողությունը, ինչի կապակցությամբ բժշկական փորձաքննության չի ենթարկվել (…)»:

«(…) Ամբաստանյալ Ա.Գզոյանը դեռևս նախաքննության փուլում գրավոր հայտնել է իր պաշտպան Ս.Միրզոյանին իր նկատմամբ գործադրած բռնության մասին, որի կապակցությամբ կատարվել է ծառայական քննություն և ըստ էության չեն հերքվել Ա.Գզոյանի պնդումները: Բացի այդ, գործով վկա Գ.Ղազարյանն իր դատաքննական ցուցմունքներով չհերքեց այն փաստը, որ Ա.Գզոյանի հետ առերես հարցաքննության ժամանակ նրա հագուստները եղել են արյունոտ վիճակում (…)» (Քրեական գործ, 2-րդ հատոր, 233 էջ):

«(…) Սույն քր. գործով 40 գրամ ափիոն տեսակի թմրամիջոցի ձեռքբերման հանգամանքը Ա.Գզոյանը միայն իր ցուցմունքում է ընդունել, և հետագայում հրաժարվել է այդ ցուցմունքից՝ պատճառաբանելով, որ իր նկատմամբ գործադրվել է ճնշում, ֆիզիկական բռնության ձևով, ծեծի միջոցով, որի հետևանքով ինքը կորցրել է նաև ձախ ականջի լսողությունը: (…) Դատարանը գտնում է, որ Ա.Գզոյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով մեղսագրված արարքը ապացուցված չէ, սպառվել են այն բոլոր հնարավորությունները այդ փաստը՝ 40 գրամ թմրամիջոցը ձեռք բերելու մասին հավաստող որևէ նոր ապացույց ձեռք բերելու համար:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ բոլոր չփարատված ենթադրությունները պետք է մեկնաբանվեն մեղադրյալի, ամբաստանյալի օգտին, իսկ Ա.Գզոյանի կողմից 40 գրամ ափիոն տեսակի թմրամիջոցի ապօրինի ձեռքբերման հանգամանքը նախաքննական մարմնի չփարատված ենթադրությունն է, որը այլ ապացույցներով չի հաստատվել:

Վերանայելով վերը նշվածը՝ դատարանը հաստատված և ապացուցված է համարել այն փաստը, որ Ա.Գզոյանը ապօրինի ձեռք է բերել և 44.000 ՀՀ դրամով Գ.Ղազարյանին վաճառել է 1,36 գրամ հաստատուն քաշով երկուանգամյա օգտագործման համար նախատեսված չափաբաժին և պրեկուրսոր հանդիսացող 2 մլ ծավալով քացախաթթվի անհիդրիդ, ինչպես նաև զգալի չափերի հասնող 0,3 գրամ քաշով մզվածքային ափիոն տեսակի թմրամիջոց: Բացի այդ, կրկին անգամ, 2008թ. հուլիս ամսին Արայիկ Գզոյանը իր ընկերոջ ոմն Լյովայի խնդրանքով երկու անգամ Երևան քաղաքի Կիևյան և Օրբելի փողոցների խաչմերուկում քննությամբ չպարզված անձից իրացման նպատակով ապօրինի ձեռք բերված ափիոն տեսակի թմրամիջոցից 2 գրամ քաշով չափաբաժին ապօրինի, վաճառելու միջոցով, իրացրել է Երևան քաղաքի բնակիչներ ոմն Հրաչին և ոմն Արամին՝ յուրաքանչյուրին 1 գրամը վաճառելով 11.000 ՀՀ դրամով: Այսինքն, նա կատարել է հանցանք, որը նախատեսված է ՀՀ քր. օր-ի 266 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 2.1 կետով: Հետևապես ամբաստանյալ Ա.Գզոյանին մեղսագրված արարքը ՀՀ քր. օր-ի 266 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետից պետք է վերաորակել ՀՀ քր. օր-ի 266 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 2.1 կետի և նա մեղավոր պետք է ճանաչվի այդ արարքի համար: (…)» (Քրեական գործ, 2-րդ հատոր, 233-234 էջեր):

15. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշման պատճառաբանական մասում ամրագրված է, որ «(…) Մեղադրյալ Ա.Գզոյանը դեռևս նախաքննության փուլում գրավոր հայտնել է պաշտպան Ս.Միրզոյանին իր նկատմամբ գործադրած բռնության մասին, որի կապակցությամբ կատարվել է ծառայական քննություն և ըստ էության չեն հերքվել Ա. Գզոյանի պնդումները: Բացի այդ, գործով վկա Գ.Ղազարյանն իր դատաքննական ցուցմունքներով չի հերքել այն փաստը, որ Ա.Գզոյանի հետ առերես հարցաքննության ժամանակ նրա հագուստները եղել են արյունոտ վիճակում: Սույն քրեական գործով 40 գրամ ափիոն տեսակի թմրամիջոցի ձեռքբերման հանգամանքը Ա.Գզոյանը միայն իր ցուցմունքում է ընդունել և հետագայում հրաժարվել է այդ ցուցմունքից՝ պատճառաբանելով, որ իր նկատմամբ գործադրվել է ճնշում ֆիզիկական բռնության ձևով, ծեծի միջոցով, որի հետևանքով ինքը կորցրել է նաև իր ձախ ականջի լսողությունը:

(…)

Ամբաստանյալ Ա.Գզոյանի կողմից 40 գրամ ափիոն տեսակի թմրամիջոցի ապօրինի ձեռք բերման հանգամանքը նախաքննական մարմնի չփարատված ենթադրությունն է, հետևաբար այն պետք է դիտել որպես չփարատված կասկած և մեկնաբանել ի օգուտ ամբաստանյալ Ա. Գզոյանի:

Նման պայմաններում առաջին ատյանի դատարանը, իրավացիորեն, հիմնավորված է համարել այն փաստը, որ Ա.Գզոյանը ապօրինի ձեռք է բերել և 44.000 ՀՀ դրամով Գ.Ղազարյանին վաճառել է 1,36 գրամ հաստատուն քաշով երկուանգամյա օգտագործման համար նախատեսված չափաբաժին և պրեկուրսոր հանդիսացող 2 մլ ծավալով քացախաթթվի անհիդրիդ, ինչպես նաև զգալի չափերի հասնող 0,3 գրամ քաշով մզվածքային ափիոն տեսակի թմրամիջոց: Բացի այդ, կրկին անգամ, 2008թ. հուլիս ամսին Արայիկ Գզոյանը իր ընկերոջ ոմն Լյովայի խնդրանքով երկու անգամ Երևան քաղաքի Կիևյան և Օրբելի փողոցների խաչմերուկում քննությամբ չպարզված անձից իրացման նպատակով ապօրինի ձեռք բերված ափիոն տեսակի թմրամիջոցը՝ 2 գրամ չափաբաժին, ապօրինի, վաճառելու միջոցով, իրացրել է Երևան քաղաքի բնակիչներ ոմն Հրաչին և ոմն Արամին՝ յուրաքանչյուրին 1 գրամը վաճառելով 11.000 ՀՀ դրամով: (…)» (Քրեական գործ, 2-րդ հատոր, 290-291 էջեր):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

16. Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով:

Բողոք բերած անձը գտնում է, որ որոշումը կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներով և ոչ ճիշտ կիրառմամբ, որն ազդել է գործի ելքի վրա՝ հանգեցնելով դատական սխալի: Բողոքաբերը նշում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի պահանջը, չի կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասը, որը ենթակա էր կիրառման, և արդյունքում կայացրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասպանող չհիմնավորված և չպատճառաբանված որոշում: Բացի այդ, դատարանը չի կիրառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածը, որն ազդել է գործի ելքի վրա, սակայն նյութական իրավունքի նորմերի խախտմամբ կիրառել է ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 2.1-րդ կետերը, 266-րդ հոդվածի 4-րդ մասը, որը չպետք է կիրառեր:

17. Բողոք բերած անձը նշում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշման մեջ առկա հետևությունները միայն ենթադրություններ են: Ի հիմնավորումն վերոնշյալի՝ բողոքաբերը փաստարկում է, որ դատարանում հետազոտվել է միայն մեկ ապացույց՝ Գ.Ղազարյանի նախաքննական ցուցմունքը, քանի որ նախաքննության մյուս ապացույցները, մասնավորապես՝ Ա.Գզոյանի ցուցմունքները, դատավճռի հիմքում չեն դրվել դրանք բռնության արդյունքում ձեռք բերված լինելու պատճառով: Ըստ բողոք բերած անձի, դատարանում Գ.Ղազարյանը ցուցմունք է տվել այն

մասին, որ Ա.Գզոյանն իրեն փոխանցել է ոմն Լյութոյի կողմից ծխախոտի տուփի մեջ դրված թմրանյութը, որի պարունակության մասին Ա.Գզոյանը չի իմացել, սակայն Գ.Ղազարյանի այս ցուցմունքը դատավճռում չի ներառվել:

Վերոգրյալից բողոք բերած անձը հետևություն է անում այն մասին, որ իր արարքը պետք է որակվեր ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով, այլ 268-րդ հոդվածի 2-րդ մասով:

18. Հիմք ընդունելով իր վերոշարադրյալ փաստարկը՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել և փոփոխել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. հոկտեմբերի 27-ի որոշումը, իր նկատմամբ պատիժ նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածով, իսկ բողոքը չբավարարելու դեպքում՝ հաշվի առնելով իր անձը բնութագրող տվյալները, պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները, իր նկատմամբ պատիժ նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

19. Նախքան վճռաբեկ բողոքում բարձրացված հարցին անդրադառնալը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում դիրքորոշում հայտնել սույն որոշման 16-րդ կետում առկա վերաորակման պահանջի և 10-րդ, 11-րդ, 12-րդ և 13-րդ կետերում արձանագրված՝ Ա.Գզոյանի նկատմամբ ֆիզիկական և հոգեկան բռնություն կիրառելու հանգամանքների միջև առկա կապի մասին: Այսպես, ըստ բողոք բերած անձի, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից իր արարքը պետք է որակվեր ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 2.1-րդ կետերով և 266-րդ հոդվածի 4-րդ մասով, այլ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասով: Նրա պնդմամբ, այս առումով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը թույլ է տվել նյութական իրավունքի խախտում, այն է՝ չի կիրառել այն օրենքը, որը ենթակա էր կիրառման և կիրառել է այն օրենքը, որը ենթակա չէր կիրառման:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից նյութական իրավունքի խախտում թույլ տալու և իրեն խոշտանգելու վերաբերյալ բողոքաբերի հայտարարությունները փոխկապակցված են. նյութական իրավունքի խախտումը կարող է հետևանք լինել ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ քրեական դատարանների կողմից թույլ տրված դատավարական իրավունքի ենթադրյալ խախտման, որը սույն գործով դրսևորվել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 3-րդ, Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 4-րդ հոդվածներից, ՀՀ Սահմանադրության 17-րդ և

22-րդ հոդվածներից, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 7-րդ մասից և 105-րդ հոդվածից բխող պահանջների չպահպանմամբ: Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առաջին հերթին անհրաժեշտ է քննության առնել առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների կողմից սույն գործի քննության ժամանակ թույլ տրված դատավարական իրավունքի ենթադրյալ խախտման հարցը:

I. Իրեն խոշտանգելու վերաբերյալ Ա.Գզոյանի հայտարարության քննությունը մինչդատական վարույթում

20. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք սույն գործի նախաքննության ընթացքում ձեռնարկվել են պատշաճ միջոցներ իր նկատմամբ կիրառված ֆիզիկական և հոգեկան բռնությունների վերաբերյալ Ա.Գզոյանի հայտարարությունների ստուգման և նրան ենթադրաբար խոշտանգած անձին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

21. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Այս դրույթը չի կարող հիմք ծառայել՝ շեղվելու 2-րդ հոդվածից, բացառությամբ պատերազմական օրինական գործողությունների հետևանքով մարդկային զոհերի կապակցությամբ, կամ 3-րդ հոդվածի, 4-րդ հոդվածի 1-ին կետի և 7-րդ հոդվածի դրույթներից»:

Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 4-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր մասնակից պետություն ապահովում է, որ խոշտանգման բոլոր գործողություններն իր քրեական օրենսդրությանը համապատասխան քննության առնվեն որպես հանցագործություններ: Նույնը վերաբերում է խոշտանգման ենթարկելու փորձին, ինչպես նաև ցանկացած անձի այն գործողություններին, որոնք ներկայանում են որպես մասնակցություն կամ գործակցություն խոշտանգմանը»:

ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ձերբակալված, կալանավորված և ազատազրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությու-

ների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Քրեական դատավարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, անօրինական ֆիզիկական կամ հոգեկան բռնության, այդ թվում՝ բժշկական դեղամիջոցների օգտագործմամբ, սովի, ուժասպառման, հիպնոսի, բժշկական օգնությունից զրկվելու, ինչպես նաև այլ դաժան վերաբերմունքի: Արգելվում է կասկածյալից, մեղադրյալից, ամբաստանյալից, տուժողից, վկայից և քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանցից ցուցմունքներ կորզել բռնության, սպառնալիքի, խաբեության, նրանց իրավունքների ոտնահարման, ինչպես նաև այլ անօրինական գործողությունների միջոցով»:

22. Վերոշարադրյալ հոդվածների վերլուծությունից երևում է, որ խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը բացարձակ բնույթ է կրում:

Նշված հանգամանքը բազմիցս շեշտադրվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի վերաբերյալ կայացված նախադեպային որոշումներում: Մասնավորապես, Զելիլոֆն ընդդեմ Հունաստանի որոշման մեջ դատարանն արձանագրել է. «(…) 3-րդ հոդվածը պաշտպանում է ժողովրդավարական հասարակության ամենահիմնարար արժեքներից մեկը: Անգամ այնպիսի բարդ իրավիճակներում, ինչպիսիք են ահաբեկչության և կազմակերպված հանցավորության դեմ պայքարը, Կոնվենցիան բացարձակ արտահայտություններով արգելում է խոշտանգումը և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը: Ի տարբերություն Կոնվենցիայի և՛ 1-ին, և՛ 4-րդ Արձանագրությունների շատ նյութաիրավական դրույթների, 3-րդ հոդվածը 15-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված թույլտվությունից բացի որևէ բացառություն կամ սահմանափակում չի նախատեսում, անգամ ազգի գոյությանը սպառնացող արտակարգ դրության դեպքում (…)» (տե՛ս Zelilof v. Greece, 2004 թվականի մայիսի 24-ի վճիռը, գանգատ թիվ 17060/03, կետ 42):

23. Խոշտանգումների արգելքի բացարձակ բնույթը ենթադրում է ոչ միայն խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կիրառումից ձեռնպահ մնալու, այլ նաև որոշակի պոզիտիվ գործողություններ կատարելու պետության պարտականությունը:

Պոզիտիվ գործողություններ կատարելու պահանջը բխում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 1-ին հոդվածում ամրագրված պահանջից, որի

համաձայն՝ «Բարձր պայմանավորվող կողմերն իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն Կոնվենցիայի առաջին բաժնում»:

Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն դիրքորոշումը, որ վերոշարադրյալ հոդվածում կիրառվող՝ «ապահովել» բառը ենթադրում է այնպիսի միջոցներ ձեռնարկելու պոզիտիվ պարտականություն, որոնց արդյունքում կապահովվի իրավունքների երկուստեք՝ օրենսդրական և գործնական պատշաճ պաշտպանություն:

Վերոնշյալ պոզիտիվ պարտականության առկայությունը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից հիմնավորվել է մի շարք այլ որոշումներում ևս: Այսպես, Բեկոսը և Կուտրոպուլոսն ընդդեմ Հունաստանի որոշման մեջ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «(…) եթե անձը անում է վստահելի հայտարարություն այն մասին, որ ինքն ի խախտումն 3-րդ հոդվածի ենթարկվել է խոշտանգման ոստիկանի կամ նման այլ պետական պաշտոնատար անձի կողմից, ապա այդ դրույթը Կոնվենցիայի 1-ին հոդվածով ամրագրված՝ «իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար Կոնվենցիայով սահմանված իրավունքների և ազատությունների ապահովման» պետությունների ընդհանուր պարտականության հետ միասին ենթադրում է արդյունավետ պաշտոնական քննության առկայություն: (…) Հակառակ պարագայում, խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ընդհանուր իրավական արգելքը, չնայած իր հիմնարար կարևորության, գործնականում ոչ արդյունավետ կլինի և որոշ դեպքերում հնարավոր կլինի պետական մարմինների կողմից խախտել իրենց տրամադրության տակ գտնվող անձանց իրավունքները և փաստացի մնալ անպատժելի (ի թիվս այլ աղբյուրների տե՛ս Labita v. Italy, գանգատ թիվ 26772/95, կետ 131)» (Bekos and Koutropoulos v. Greece, 2005 թվականի դեկտեմբերի 13-ի վճիռը, գանգատ թիվ 15250/02, կետ 53):

24. Սույն քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Գզոյանը իր նկատմամբ կիրառված ֆիզիկական և հոգեկան բռնությունների վերաբերյալ հայտնել է նախաքննության մարմնին (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը): Ա.Գզոյանի պաշտպանի դիմումի հիման վրա նշանակվել է ծառայողական քննություն, որի արդյունքում կայացված եզրակացության մեջ ծառայողական քննությունն իրականացրած մարմինը սահմանափակվել է միայն «Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումից բխող՝ ծանուցման ենթակա իրավունքների» ցանկի 2-րդ կետի 3-րդ և 5-րդ ենթակետերի պահանջները լիարժեք չկատարելու,

այն է՝ ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության շենք բերման ենթարկված Արայիկ Էդուարդի Գզոյանի կողմից պաշտպանից հրաժարվելու հանգամանքը չարձանագրելու, ինչպես նաև վերջինիս պահանջով ոստիկանություն բերելու պահից սկսած՝ երեք ժամվա ընթացքում Ա.Գզոյանի գտնվելու վայրի մասին վերջինիս կողմից ընտրված անձին ուշացումով տեղեկացնելու հարցերի քննարկմամբ և չի անդրադարձել Ա.Գզոյանին խոշտանգելու հարցին (տե՛ս սույն որոշման 13-րդ կետը):

Ինչպես երևում է վերոշարադրյալ մեջբերումից, ծառայողական քննություն իրականացրած մարմինը չի անդրադարձել մարմնական վնասվածքներ ստանալու վերաբերյալ Ա.Գզոյանի հայտարարությանը, դա ստուգելու նպատակով դատաբժշկական փորձաքննություն չի նշանակել, մինչդեռ դատաբժշկական ապացույցներն առանցքային նշանակություն ունեն խոշտանգումների վերաբերյալ հայտարարությունների արդյունավետ քննության համար: Այս առումով Վճռաբեկ դատարանի համար ուղեցույց է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Մամադովն ընդդեմ Ադրբեջանի գործով վճռի մեջ ամրագրված մոտեցումն այն մասին, որ. «Իշխանությունները պետք է ողջամիտ քայլեր ձեռնարկեն ապահովելու համար միջադեպին վերաբերող ապացույցների պահպանությունը՝ ներառյալ դատաբժշկական ապացույցները: (…) [Դ]ատաբժշկական ապացույցները ժամանակային առումով չապահովելը հանդիսանում է սույն գործով ոչ արդյունավետ քննություն իրականացնելու հիմնական գործոններից մեկը: Ժամանակին կատարված բժշկական հետազոտությունը բժշկին հնարավորություն կտար վնասվածքների պատճառման ժամանակի և դրանց պատճառների վերաբերյալ առավել որոշակի եզրակացության հանգել» (տե՛ս Mammadov (Jalaloglu) v. Azerbaijan,2007 թվականի հունվարի 11-ի վճիռը, գանգատ թիվ 34445/04, կետ 74):

25. Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ ծառայողական քննության արդյունքում կայացված որոշումը, այն է՝ «ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ Գլխավոր վարչության 4-րդ վարչության 2-րդ բաժնի ավագ օպերլիազոր, ոստիկանության մայոր Ավետիք Հրաչի Համբարձումյանի հարցը քննարկել ԿՀԴՊ Գլխավոր վարչության պետին կից օպերատիվ խորհրդակցությունում» չի կարող գնահատվել որպես խոշտանգման փաստի պատշաճ արձագանք: Այս հարցում Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումն այն մասին, որ խոշտանգումը պետք է հանգեցնի քրեական պատասխանատվության և պատժի (առավել մանրամասն տե՛ս Bati and Others v. Turkey, 2004 թվականի հունիսի 3-ի վճիռը, գանգատներ թիվ 33097/96 և 57834/00, 145-

146 կետեր, Mikheev v. Russia, 2006 թվականի հունվարի 26-ի վճիռը, գանգատ թիվ 77617/01, 120 և 135 կետեր):

26. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի նախաքննության ընթացքում պատշաճ միջոցներ չեն ձեռնարկվել իր նկատմամբ կիրառված ֆիզիկական և հոգեկան բռնությունների վերաբերյալ Ա.Գզոյանի հայտարարությունների ստուգման և նրան ենթադրաբար խոշտանգած անձին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

II. Իրեն խոշտանգելու վերաբերյալ Ա.Գզոյանի հայտարարությանն արձագանքելը ՀՀ դատարանների կողմից

27. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք ստորադաս դատարանների կողմից պատշաճ արձագանք է տրվել իր նկատմամբ կիրառված ֆիզիկական և հոգեկան բռնությունների վերաբերյալ Ա.Գզոյանի հայտարարություններին:

28. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ «Դատարանի լիազորություններն են մասնավորապես՝

(…)

4) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դատախազին դիմելը,

(…)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «Դատախազը մինչդատական վարույթի ընթացքում լիազորված է՝ (…) դատարանի միջնորդության հիման վրա հարուցել քրեական գործ, (…)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 184-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը իրենց վարույթում գտնվող քրեական գործի նյութերով կայացնում են որոշում նոր գործ հարուցելու և այն առանձին վարույթում առանձնացնելու մասին, իսկ դատարանը նման որոշում կայացնելու միջնորդությամբ դիմում է դատախազին, եթե մեղադրյալին վերագրվող հանցագործություններից բացի բացահայտված է առաջինի հետ չկապված այլ հանցագործություն, որը կատարել է այլ անձ՝ առանց մեղադրյալի մասնակցության»:

29. Վերոշարադրյալ դրույթների տառացի մեկնաբանությունից բխում է, որ եթե դատարաններն իրենց վարույթում գտնվող քրեական գործի քննության ընթացքում հայտնաբերում են հանցագործության ակնհայտ հատկանիշներ, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 184-րդ

հոդվածի 1-ին մասի հիման վրա պարտավոր են քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դիմել դատախազին:

30. Սույն գործի նյութերից երևում է, որ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանները հաստատված են համարել այն, որ Ա.Գզոյանը ցուցմունքներ է տվել ֆիզիկական բռնությունների ազդեցության տակ: Դատարանները, հիմք ընդունելով իրեն խոշտանգելու վերաբերյալ Ա. Գզոյանի հայտարարությունը, գտել են, որ վերջինիս՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով մեղսագրված արարքն ապացուցված չէ և սպառվել են նրա կողմից 40 գրամ թմրամիջոց ձեռք բերելու փաստը հավաստող որևէ նոր ապացույց ձեռք բերելու բոլոր հնարավորությունները (տե՛ս սույն որոշման 14-րդ և 15-րդ կետերը): Այսինքն, Ա.Գզոյանի նախաքննական ցուցմունքները դատարանները գնահատել են որպես ոչ հավաստի ապացույց: Նշվածի հետ մեկտեղ, սակայն, դատարանները միևչդատական վարույթի նկատմամբ հսկողություն իրականացնող համապատասխան դատախազին Ա.Գզոյանի նկատմամբ ֆիզիկական և հոգեկան բռնություն գործադրելու վերաբերյալ հայտարարությունն ստուգելու և նրա նկատմամբ ֆիզիկական և հոգեկան բռնություն գործադրելու փաստի առթիվ քրեական գործ հարուցելու միջնորդություն չեն ներկայացրել:

31. Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարանների կողմից պատշաճ արձագանք չի տրվել իր նկատմամբ կիրառված ֆիզիկական և հոգեկան բռնությունների վերաբերյալ Ա.Գզոյանի հայտարարություններին, ինչը հանգեցրել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» եվրոպական կոնվենցիայի 3-րդ, Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 4-րդ հոդվածների, ՀՀ Սահմանադրության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 7-րդ մասից բխող պահանջների չպահպանման:

32. Ի լրումն սույն որոշման 28-րդ կետում առկա օրենսդրական կարգավորումներին, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ նախաքննության մարմնի դեմ ներկայացված բողոքները պետք է քննվեն անկախ մարմնի կողմից, որը չպետք է կապված լինի նախաքննության մարմնի հետ և պետք է առանձնացված լինի վերջինիցս:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի 1998 թվականի նոյեմբերի 19-ի Եզրափակիչ Դիտարկումներում նշված է՝ «Կոմիտեն առաջարկում է հատուկ անկախ մարմին հիմնադրել՝ իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից թույլ տրված խոշտանգումների և անմարդկային

վերաբերմունքի առնչությամբ բերված բողոքներն ուսումնասիրելու նպատակով» (տե՛ս Մարդու իրավունքների կոմիտեի Եզրափակիչ Դիտարկումները, Հայաստան, CCPR/C/79/Add.100., 19 նոյեմբերի 1998թ., կետ 12):

Ռամսահայն ընդդեմ Նիդեռլանդների և Բատին և ուրիշներն ընդդեմ Թուրքիայի որոշումներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից արտահայտված դիրքորոշման համաձայն՝ չպետք է լինի ինստիտուցիոնալ կամ ենթակարգային կապ քննիչների և այն ոստիկանների միջև, ում դեմ բողոք է ներկայացվել (տե՛ս Bati and Others v. Turkey, 2004 թվականի հունիսի 3-ի վճիռը, գանգատներ թիվ 33097/96 և 57834/00, Ramsahai v. The Netherlands, 2007 թվականի մայիսի 15-ի վճիռը, գանգատ թիվ 52391/99):

III. Որպես ոչ հավաստի գնահատված ապացույցից բխող փաստերի կիրառումը դատարանների կողմից

33. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երրորդ իրավական հարցը հետևյալն է. Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանները, հաստատված համարելով այն, որ Ա.Գզոյանի կողմից 40 գրամ թմրամիջոցի ձեռքբերման փաստը ապացուցված չէ, իրավասո՞ւ էին արդյոք ապացուցված համարել փաստերն այն մասին, որ վերոնշյալ 40 գրամ թմրամիջոցից Ա.Գզոյանը որոշակի չափաբաժիններով թմրամիջոց է իրացրել:

34. ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք (…)»:

ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի համաձայն՝ «(…) Արգելվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը (…)»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (…)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական գործով ապացույցներ են ցանկացած փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով որոշված կարգով հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը պարզում են քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 5-րդ կետերի համաձայն՝ «1. Քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել՝

1) բռնությամբ, սպառնալիքով, խաբեությամբ, անձին ծաղրի ենթարկելով, ինչպես նաև այլ անօրինական գործողություններով.

2) կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքի (….) էական խախտմամբ.

(…)

5) քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ.

(…)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ապացույցներ ձեռք բերելիս էական են այն խախտումները, որոնք, դրսևորվելով մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների կամ սույն օրենսգրքի որևէ պահանջի խախտմամբ, դատավարության մասնակիցներին՝ օրենքով երաշխավորված իրավունքների զրկմամբ կամ սահմանափակմամբ կամ որևէ այլ կերպ ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա»:

35. Ա.Սարգսյանի վերաբերյալ որոշման 15-րդ կետում Վճռաբեկ դատարանը իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ. «(…) որպես քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները պարզելու միջոց կարող են օգտագործվել միայն այնպիսի ապացույցներ, որոնք ձեռք են բերվել, ամրագրվել և գործին կցվել են քրեադատավարական օրենքով սահմանված և թույլատրելի համարվող կարգով: Ապացույցների ձեռքբերման և ամրագրման թույլա-

տրելիությունը կարգավորող նորմերից հետևում է, որ որպես ապացույց չեն կարող օգտագործվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ ձեռք բերված փաստական տվյալները, հատկապես եթե դրանք իրենց հերթին հանգեցրել են դատավարության մասնակիցների իրավունքների էական խախտման, ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա:

Այսպիսով, ապացույցների հավաքմանը և ստուգմանն ուղղված դատավարական գործողությունների կատարման ընթացքում պետք է ապահովվի անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Հակառակ դեպքում կատարված դատավարական գործողության արդյունքում ստացված փաստական տվյալը, անկախ գործի համար ունեցած նշանակությունից, կորցնում է իր իրավական ուժը, ապացուցողական նշանակությունը և չի կարող ընդգրկվել կոնկրետ քրեական գործով ապացույցների համակցության մեջ և դրվել մեղադրանքի հիմքում» (տե՛ս Արմեն Սեյրանի Սարգսյանի վերաբերյալ 2009 թվականի սեպտեմբերի 16-ի՝ ԵՔՐԴ /0295/01/08 որոշման 15-րդ կետը):

36. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ինչպես Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի, այնպես էլ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանները գտել են, որ Ա.Գզոյանի կողմից 40 գրամ ափիոն տեսակի թմրամիջոցի ապօրինի ձեռք բերման հանգամանքը նախաքննական մարմնի չփարատված ենթադրությունն է, հետևաբար այն պետք է դիտել որպես չփարատված կասկած և մեկնաբանել հօգուտ ամբաստանյալ Ա.Գզոյանի: Մինչդեռ, անդրադառնալով վերոնշյալ՝ 40 գրամ թմրամիջոցից որոշակի չափաբաժիններով թմրամիջոցի իրացման վերաբերյալ փաստերին, դատարանները դրանք հիմնավորված են համարել և Ա.Գզոյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 2.1-րդ կետերով, 266-րդ հոդվածի 4-րդ մասով (տե՛ս սույն որոշման 6-րդ, 7-րդ, 14-րդ և 15-րդ կետերը):

37. Վերոշարադրյալ փաստական հանգամանքների լույսի ներքո Վճռաբեկ դատարանին անհասկանալի է, թե Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանները, հաստատված համարելով այն, որ Ա.Գզոյանի կողմից 40 գրամ ափիոն տեսակի թմրամիջոցի ապօրինի ձեռքբերման փաստը նախաքննական մարմնի չփարատված ենթադրությունն է, որն այլ ապացույցներով չի հաստատվել, կարո՞ղ էին արդյոք հիմնավորված հետևության հանգել այն մասին, որ վերոնշյալ 40 գրամ թմրամիջոցից Ա.Գզոյանը որոշակի չափաբաժիններով թմրամիջոց է իրացրել:

38. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք (…) խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»: Ուստի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն, սույն գործով Վերաքննիչ դատարանի դատական ակտը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

39. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Արայիկ Էդուարդի Գզոյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 2.1-րդ կետերով և 266-րդ հոդվածի 4-րդ մասով Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. հուլիսի 21-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. հոկտեմբերի 27-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Դ. Ավետիսյան
Դատավորներ՝ Հ. Ասատրյան
Ե. Դանիելյան
Հ. Դուկասյան
Ա. Պողոսյան
Ս. Օհանյան

Ժիրայր Քառյանի վերաբերյալ դատավճիռ, ԵԿԴ 0048/01/08

ԴԱՏԱՎՃԻՌ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

18 ապրիլի 2008թ. ք. Երևան

ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների
ընդհանուր իրավասության դատարանը
նախագահությամբ Դատավոր Ե. Եսոյանի
քարտուղարությամբ՝ Մ. Մելքոնյանի
մասնակցությամբ՝
մեղադրող՝ Լ. Մուսախանյանի
ամբաստանյալ՝ Ժ. Քառյանի

դռնբաց դատական նիստում քննելով Ժիրայր Ռոմանի Քառյանի (ծնված 19.11.1989թ., Երևան քաղաքում, հայ, ՀՀ քաղաքացի, միջնակարգ կրթությամբ, չամուսնացած, չի աշխատում, նախկինում չդատված, բնակվել է ք. Երևան, Վրացյան փողոց 71/1շենք, բնակարան 34, ներկայումս «Նուբարաշեն» ՔԿՀ-ի կալանավոր, որպես խափանման միջոց ընտրվել է կալանավորում՝ երկու ամիս ժամկետով՝ մինչև 2008 թվականի մայիսի 4-ը) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 327 հոդվածի 1-ին մասով քրեական գործը՝

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

2008 թվականի փետրվարի 4-ին Կենտրոնի քննչական բաժնում ամբաստանյալ Ժիրայր Ռոմանի Քառյանի կողմից 2007 թվականի աշնանային ժամկետային զինվորական ծառայությունից հրաժարվելու փաստի առթիվ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 327 հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 13103208 քրեական գործը: Գործն ընդունվել է Կենտրոնի քննչական բաժնի քննիչ Տ. Մանուկյանի վարույթ և կատարվել նախաքննություն:

2008 թվականի մարտի 4-ին Կենտրոնի քննչական բաժնի քննիչ Տ. Մանուկյանի կողմից որոշում է կայացվել թիվ 13103208 քրեական գործով

Ժիրայր Ռոմանի Քառյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 327 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքում:

2008 թվականի մարտի 4-ին Կենտրոնի քննչական բաժնի քննիչ Տ. Մանուկյանի կողմից որոշում է կայացվել թիվ 13103208 քրեական գործով Ժիրայր Ռոմանի Քառյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդություն հարուցելու մասին: Նույն օրը ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացվել է որոշում Ժիրայր Ռոմանի Քառյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով՝ մինչև 2008 թվականի մայիսի 4-ը:

2008 թվականի մարտի 11-ին Կենտրոնի քննչական բաժնի քննիչ Տ. Մանուկյանը, ավարտելով գործի նախաքննությունը, կազմել է մեղադրական եզրակացություն, որը 2008 թվականի մարտի 14-ին հաստատվել է Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների դատախազի կողմից և նույն օրը քրեական գործն ուղարկվել է ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան:

Մեղադրական եզրակացության համաձայն՝ Ժիրայր Ռոմանի Քառյանը մեղադրվում է այն բանի համար, որ նա 07.02.2005թ. Կենտրոնի զինկոմիսարիատում անցել է կցագրում, ճանաչվել է պիտանի զինվորական ծառայության համար, որի հիման վրա ենթակա է եղել զորակոչման, սակայն հանդիսանալով «Եհովայի վկա», խուսափել է ժամկետային զինվորական ծառայության հերթական զորակոչից: Հրաժարվել է մեկնել ինչպես այլընտրանքային զինվորական, այնպես էլ քաղաքացիական աշխատանքային ծառայության:

2. Ապացույցների հետազոտում և գնահատում.

Դատարանը ամբաստանյալ Ժիրայր Ռոմանի Քառյանի մեղքը հաստատված է համարում հետևյալ ապացույցներով.

Ամբաստանյալ Ժիրայր Ռոմանի Քառյանը նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ կատարած արարքի համար և առաջադրված մեղադրանքում ինքն իրեն մեղավոր չի ճանաչում, քանի որ դաստիարակվում է Աստվածաշնչով, իր խիղճը թույլ չի տալիս մեկնել զինծառայության, իսկ Հայաստանի Հանրապետությունում գործող օրենքներն, այդ թվում «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքը, նույնպես հակասում են իր խղճին, որի պատճառով հրաժարվում է մեկնել այլընտրանքային ծառայության:

Դատաքննության ընթացքում ամբաստանյալ Ժիրայր Ռոմանի Քառյանը պնդել է նախաքննության ընթացքում իր տված ցուցմունքները և ավելացրել, որ առաջին բժշկական հանձնաժողովը անցել է 2007 թվականի

աշնանը և ունեցել է շնչառական համակարգի հետ կապված խնդիրներ, որն անդրադարձել է նաև իր սրտի վրա: Այսինքն իր մոտ առաջանում են սրտի սուր ծակոցներ, ինչպես նաև բժշկական հանձնաժողովը հայտնել է իրեն, որ ինքն ունի «թթվածնի քաղց», որն էլ իր հերթին ազդում է իր ողջ օրգանիզմի վրա: Զինկոմիսարիատը, հաշվի չառնելով իր հիվանդությունները, իրեն ճանաչել է պիտանի զինվորական ծառայության: Ինքը դիմում է ներկայացրել զինկոմիսարիատ, որտեղ նշել է զինվորական ծառայության չմեկնելու պատճառները:

Բացի այդ, ամբաստանյալ Ժիրայր Ռոմանի Քառյանը պաշտպանական ճառում հայտնել է, որ ինքը համաձայն չէ մեղադրանքին, որը ներկայացրել է դատախազությունը և խնդրում է դատարանին ճանաչել իրեն անմեղ, իսկ դատախազության կողմից ներկայացված մեղադրանքն՝ անհիմն, որի համար ներկայացրել է հետևյալ պատճառաբանությունները: ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ լինելով ՀՀ քաղաքացի պետությունը պարտավորվում է ապահովել իր իրավունքները, ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածը ներառում է կրոնը կամ համոզմունքը, փոխելու ազատությունը և արտահայտվելու ազատությունը, որի միջոցով ինքը հնարավորություն ունի դավանել իր կրոնը, ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածը իրեն իրավունք է տալիս, իսկ 46-րդ հոդվածը՝ իր վրա պարտավորություն է դնում, որն իրեն կաշկանդում է իրականացնել կամ արտահայտել իր իրավունքը: Իրեն իրավունք տալով հանդերձ՝ պետությունը միաժամանակ իրեն դատապարտում է նրա համար, որ ինքը դրսևորում է իր այդ իրավունքը՝ հրաժարվելով զինվորական ծառայությունից: Արդյունքում ինքն ոչ միայն չի կարողանում ազատ կերպով դավանել իր կրոնը և պահպանել իր իրավունքները, այլ նաև որպես քրեական հանցագործ կանգնած է դատարանի առջև: Սակայն ինքը հասարակության համար վտանգավոր որևէ արարք չի գործում և պարզապես զոհն է իրար հակասող օրենքների: 2002 թվականի մարտի 18-ից ապրիլի 26-ը կայացած Մարդու իրավունքների հանձնաժողովի 58-րդ նիստի աշխատանքների մասին զեկույցի մեջ հանձնաժողովը, վկայակոչելով դեռևս 1998 թվականի ապրիլի 22-ին ընդունված 1998/77 բանաձևը նշում է, որ ընդունում է, որ մտքի, խղճի և դավանանքի իրավունքների օրինական իրականացման ձև է զինվորական ծառայությունից հրաժարվելը՝ կրոնական համոզմունքներից ելնելով: Բացի այդ Հայաստանի Հանրապետությունը Եվրոխորհուրդի առջև պարտավորվել է անդամակցելուց հետո 3 տարվա ընթացքում ընդունել եվրոպական չափանիշներին համապատասխան այլընտրանքային զինվորական ծառայության մասին օրենքը, և այդ ընթացքում համաներում շնորհել խղճի պատճառով հրաժարվողներին, որոնք ներկայումս իրենց պատիժը կրում են բանտերում կամ կարգապահական գումարտակներում և նրանց թույլ

տալ ծառայությունն իրականացնեն օրենքի ընդունումից անմիջապես հետո ոչ զինված միավորումներում և այլընտրանքային զինվորական ծառայություններում:

Իր պարտավորություններին հակառակ ՀՀ –ը այսօր իրեն մեղադրում է մի արարքում, որն ինքը չի էլ կատարում, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 327 հոդվածը, որի հիման վրա իրեն մեղադրանք է ներկայացվել՝ զինվորական ծառայությունից հրաժարվելու կապակցությամբ չի համապատասխանում իր գործողություններին: Այնտեղ նշվում է ժամկետային ծառայությունից ծառայության հերթական զորակոչից խուսափելու մասին: Ինքը ոչ թե խուսափում է (փաստաթուղթ կեղծելով, փախնելով և այլն), այլ ինքը հրաժարվում է կամ բացահայտ հետ է կանգնում: Նաև ինքը ոչ թե խուսափում է հերթական զորակոչից, այլ հրաժարվում է զինվորական ծառայությունից ընդհանրապես և ցանկացած ժամանակ: Փաստորեն այս հոդվածը հարմարեցված է իր գործողություններին, իր գործողությունների հետ կախված հոդված գոյություն չունի, ուստի քրեական օրենքը իր արարքը դեռևս չի դիտում որպես հանցագործություն, իսկ 327 հոդվածը հարմարեցված է: Ինչ վերաբերվում է այլընտրանքային մասին ՀՀ օրենքի դրույթից օգտվելուն, ապա զարմանք է առաջացնում այդ ծառայության ժամկետը 3.6 տարի, այնինչ զինվորական ծառայությունը տևում է 2 տարի, իսկ ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածը նշում է, որ բոլոր մարդիք հավասար են օրենքի առջև, խտրականությունը կախված կրոնից, անձնական և սոցիալական այլ հանգամանքից արգելվում է: Ինքն ընդամենը փորձում է իր իրավունքները օրինական ձևով իրականացնել, իսկ Հայաստանի Հանրապետությունը, չկատարելով իր նկատմամբ պարտավորությունը, որն է՝ ապահովել իր հիմնական իրավունքների պաշտպանությունը, իրեն դատապարտում է նույնիսկ միջազգային իրավունքների և և սկզբունքների նորմերին հակառակ:

Ամբաստանյալ Ժիրայր Ռոմանի Քառյանը, ելնելով իր վերը նշված ցուցմունքից, խնդրել է ՀՀ քրեական օրենսգրքի 366 հոդվածով իրեն ճանաչել անմեղ և իր հանդեպ կայացնել արդարացման դատավճիռ, և եթե դատարանը իր նկատմամբ կայացնի մեղադրական դատավճիռ և եթե Ազգային ժողովի կողմից ընդունվի օրենք Ա.Ք.Ծ-ի մասին, ապա ինքը պատիժը կրելուց հետո չի մեկնի այդ ծառայությանը:

Վկա՝ ՀՀ Պաշտպանության նախարարության Կենտրոնականի զինվորական կոմիսարիատի զորակոչման բաժնի տեսուչ Պարսամ Կորյունի Պետրոսյանը դատաքննության ընթացքում պնդել է նախաքննության ընթացքում իր տված ցուցմունքները և հայտնել, որ 1989 թվականին ծնված Ժիրայր Քառյանը 2007 թվականի աշնանային զորակոչին ՀՀ Պաշտպանության նախարարության Կենտրոնականի զինկոմիսարիատում զորակոչային բժշկական հանձնաժողովի կողմից պիտանի է ճանաչվել,

որի հիման վրա ենթակա է եղել ծառայության 2007 թվականի աշնանային զորակոչին, սակայն զինակոչիկ Ժիրայր Քառյանը դիմում է ներկայացրել ՀՀ Պաշտպանության նախարարության Կենտրոնականի զինվորական կոմիսարիատ և հայտնել, որ ինքը դաստիարակվում է Աստվածաշնչով, իր խիղճը թույլ չի տալիս մեկնել ծառայության, իսկ Հայաստանի Հանրապետությունում գործող օրենքներն, այդ թվում «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքը, նույնպես հակասում են իր խղճին, որի պատճառով հրաժարվում է մեկնել զինծառայության, այդ պատճառով նրա անձնական գործն ուղարկվել է Կենտրոնի քննչական բաժին՝ որպես զինծառայությունից խուսափողի նրան քրեական պատասխանատվության ենթարկելու համար:

Դատաքննության ընթացքում ամբաստանյալ Ժիրայր Քառյանի հայր՝ վկա Ռոման Անդրանիկի Քառյանը, օգտվելով իր քրեադատավարական իրավունքից, հրաժարվեց ցուցմունք տալ իր որդու վերաբերյալ:

Կենտրոնի քննչական բաժնի քննիչ Տ. Մանուկյանի 2008 թվականի մարտի 4-ի որոշման համաձայն՝ ապացույց է ճանաչվել Ժիրայր Ռոմանի Քառյանի կողմից բանակ մեկնելու համար ծանուցագիր ստանալու ստացականը և դիմումը, ըստ որոնց՝ Ժիրայր Ռոմանի Քառյանը 25.10.2007թ. ստորագրել և ստացել է զորակոչման ծանուցագիրը և պարտավորվել է ներկայանալ ՀՀ Պաշտպանության նախարարության Կենտրոնականի զինվորական կոմիսարիատ: Իսկ 26.11.2007թ. Ժիրայր Քառյանը դիմում է ներկայացրել ՀՀ Պաշտպանության նախարարության Կենտրոնականի զինվորական կոմիսարիատ այն մասին, որ իր անձնական տեսակետներից և սկզբունքներից ելնելով, որոնք հիմնված են Աստվածաշնչի վրա, ինչպես նաև Աստվածաշնչով կրթված իր խղճից չի կարող կատարել որևէ տեսակ զինվորական ծառայություն:

ՀՀ Պաշտպանության նախարարության Կենտրոնականի զինվորական կոմիսարիատի զորակոչիկ Ժիրայր Ռոմանի Քառյանի թիվ 10 գործի համաձայն՝ 19.11.1989թ. ծնված Ժիրայր Քառյանը կցագրման և զորակոչային հետազոտման արդյունքներով պիտանի է զինվորական ծառայության:

Դատաքննության ընթացքում մեղադրող Լ. Մուսախանյանը պնդեց մեղադրական եզրակացությունը և հայտնեց, որ ամբաստանյալ Ժիրայր Ռոմանի Քառյանը մեղադրվում է այն բանի համար, որ նա 2005 թվականի փետրվարի 7-ին Կենտրոնի զինկոմիսարիատում անցել է կցագրում, ճանաչվել է պիտանի զինվորական ծառայության համար, որի հիման վրա ենթակա է եղել զորակոչման, սակայն հանդիսանալով «Եհովայի վկա», խուսափել է ժամկետային զինվորական ծառայության հերթական զորակոչից: Հրաժարվել է մեկնել ինչպես այլընտրանքային զինվորական ծառայության, այպես էլ քաղաքացիական աշխատանքային ծառայության:

Այսինքն, Ժիրայր Ռոմանի Քառյանը կատարել է հանցանք, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 327 հոդվածի 1-ին մասով: Խնդրեց ամբաստանյալ Ժիրայր Ռոմանի Քառյանին մեղավոր ճանաչել այդ հոդվածով և նշանակել պատիժ:

3. Դատարանի իրավական վերլուծությունները.

Դատաքննությամբ և քրեական գործով ձեռք բերված տվյալներով դատարանն հաստատված համարեց հետևյալը.

Ամբաստանյալ Ժիրայր Ռոմանի Քառյանը, 2007 թվականի աշնանային զորակոչի ընթացքում ՀՀ Պաշտպանության նախարարության Կենտրոնականի զինվորական կոմիսարիատի զորակոչային բժշկական հանձնաժողովի կողմից ենթարկվելով բժշկական հետազոտման, ճանաչվել է պիտանի զինվորական ծառայության մեկնելու համար, որի հիման վրա ենթակա է եղել 2007 թվականի աշնանային ժամկետային զինվորական ծառայության մեկնելու: Սակայն կրոնական բնույթի պատճառաբանություններով՝ համարելով, որ Աստվածաշնչով դաստիարակվող իր խիղճը թույլ չի տալիս մեկնել զինվորական ծառայության, խուսափել է ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական՝ 2007 թվականի աշնանային զորակոչից՝ այդ ծառայությունից ազատվելու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայության դեպքում:

Համաձայն «Մարդու Իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածի՝

1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք. այս իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը և դրանք ինչպես միանձնյա, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով, քարոզչության, արարողությունների, պաշտամունքի և ծեսերի միջոցով արտահայտելու ազատություն:

2. Սեփական կրոնը կամ համոզմունքները դավանելու ազատությունը ենթակա է միայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի պաշտպանություն հասարակական անվտանգության, հասարակական կարգի, առողջության կամ բարոյականության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների:

Համաձայն Եվրոպայի միության հիմնարար իրավունքների խարտիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի՝ համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայությունը մերժող անձանց իրավունքը ճանաչված իրավունք է՝ համաձայն ազգային օրենքների, որոնք կարգավորում են այս իրավունքի իրագործումը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասի՝ միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 23-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք, իսկ ըստ ՀՀ Սահմանադրության 47-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը, իսկ ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածը նշում է, որ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները, որոնք ամրագրվում են ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածում, կարող են սահմանափակվել օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի և բարի հանբավի պաշտպանության համար:

Տվյալ դեպքում, հենց այդ սահմանափակմանն է ուղված «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, «Խղճի և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, «Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը և Հայաստանի Հնարապետության քրեական օրենսգրքի հոդվածները:

Մասնավորապես, «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածը նշում է, որ զինվորական ծառայության են զորակոչվում 18-ից մինչև 27 տարեկան արական սեռի զորակոչիկները, ովքեր առողջական վիճակի պատճառով ճանաչվել են զինծառայության համար պիտանի, իսկ տվյալ դեպքում ամբաստանյալ Ժիրայր Քառյանը, անցնելով համապատասխան կցագրում, ճանաչվել է պիտանի զինվորական ծառայության համար և ենթակա է եղել զորակոչման:

Միաժամանակ նույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացին կարող է ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից՝ առողջական վիճակի պատճառով, եթե նա այդ ընտանիքի միակ արու զավակն է և նրա հայրը /մայրը/ կամ եղբայրը /քույրը/ զոհվել է Հայաստանի Հանրապետության պաշտպանության կամ զինված ուժերում և այլ զորքերում ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ, կառավարության որոշմամբ, մինչև Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ընդունելը օտարերկրյա պետությունների զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն է անցել, կամ

ունի գիտական աստիճան և ներգրավված է մասնագիտացված, գիտական կամ կրթական գործունեության մեջ: Իսկ համաձայն նույն օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի՝ առանձին դեպքերում կառավարությունը որոշում է քաղաքացիների կատեգորիաները և առանձին քաղաքացիներին, որոնց տարեկետում է տրվում պարտադիր զինվորական ծառայության զորակոչից:

Տվյալ դեպքում, ամբաստանյալ Ժիրայր Քառյանին չեն վերաբերում պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու վերը նշված դեպքերից և որևէ մեկը:

Համաձայն «Խղճի և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի՝ գործող օրենսդրությամբ նախատեսված բոլոր քաղաքացիական պարտականությունները տարածվում են նաև կրոնական կազմակերպությունների հավատացյալ անդամների վրա՝ այլ քաղաքացիների հետ համահավասար: Քաղաքացիական պարտականությունների և կրոնական համոզմունքների հակասության առանձին դեպքերում քաղաքացիական պարտականությունների կատարման հարցը կարող է լուծվել այլընտրանքային սկզբունքով՝ օրենքով նախատեսված կարգով համապատասխան պետական մարմնի և տվյալ կրոնական կազմակերպության փոխադարձ համաձայնությամբ: Տվյալ դեպքում, ամբաստանյալ Ժիրայր Քառյանի վրա նույնպես տարածվում է վերը նշված օրենքի դրույթի քաղաքացիական պարտականությունների համահավասար կատարումը: Իսկ ինչ վերաբերվում է քաղաքացիական պարտականությունների հակասությանը կրոնական համոզմունքներին, ապա տվյալ դեպքում օրենքը նախատեսում է նույպես օրենքով կարգավորվող այլընտրանքային սկզբունք, որից սակայն ամբաստանյալը նույնպես հրաժարվել էր:

Համաձայն «Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի՝ այլընտրանքային ծառայությունը մի ծառայություն է, որը փախարինում է զինվորական ծառայությանը, և որը կապված չէ զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու հետ և իրականացվում է զինվորական, այնպես էլ քաղաքացիական հիմնարկներում: Համաձայն նույն օրենքի 3-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ում կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է ռազմական ստորաբաժանումներում պարտադիր զինվորական ծառայություն անցնելը, ինչպես նաև զենք կրելը, պահելը, պահպանելը և օգտագործելը, իրավունք ունի անցնելու այլընտրանքային ծառայություն: Տվյալ դեպքում ամբաստանյալ Ժիրայր Ռոմանի Քառյանին օրենքով սահմանված կարգով տրվել էր այդ իրավունքը, սակայն վերջինս թե նախաքննության ընթացքում և թե

դատական նիստի իր կողմից տրված ցուցմունքներում հրաժարվել է «Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով իրեն ընձեռնվող այլընտրանքային ծառայության իրավունքից:

Քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժամկետայաին զինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական զորակոչից, վարժական հավաքից կամ զորավարժանքից խուսափելը՝ այդ ծառայությունից ազատվելու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայության դեպքում՝ պատժվում է կալանքով առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ առավելագույնը երեք տարի ժամկետով:

Տվյալ դեպքում, ամբաստանյալ Ժիրայր Քառյանը խուսափել է զինվորական ծառայությունից, հրաժարվել է այլընտրանքային ծառայությունից, փաստորեն կատարել է քրեորեն պատժվող արարք, որի համար օրենսդիրը, Սահմանադրության 44 հոդվածի համաձայն սահմանափակելով Սահմանադրության 23 հոդվածում ամրագրված յուրաքանչյուրի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունքը, սահմանում է առավելագույնը երեք տարի ժամկետով ազատազրկում:

Ինչ վերաբերվում է ամբաստանյալի դատաքննության ընթացքում տրված ցուցմունքին այն մասին, որ առաջին բժշկական հանձնաժողովը անցել է 2007 թվականի աշնանը և ունեցել է (շնչառական համկարգի հետ կապված խնդիրներ, որն անդրադարձել է նաև իր սրտի վրա): Այսինքն, իր մոտ առաջանում են սրտի սուր ծակոցներ, ինչպես նաև բժշկական հանձնաժողովը հայտնել է իրեն, որ ինքն ունի «թթվածնի քաղց», որն էլ իր հերթին ազդում է իր ողջ օրգանիզմի վրա: Զինկոմիսարիատը, հաշվի չառնելով իր հիվանդությունները, իրեն ճանաչեց պիտանի զինվորական ծառայության, ապա դատարանը գտնում է, որ դա չի համապատասխանում իրականությանը և հակասում է ամբաստանյալի անձնական գործում առկա փաստերին: Մասնավորապես, Ժիրայր Քառյանի Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Կենտրոնական զինկոմիսարիատի անձնական գործում առկա նյութերից պարզ երևում է, որ նա անցել է կցագրում և 2007 թվականի դեկտեմբերի 20-ին Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից ճանաչվել է պիտանի զինծառայության համար և համաձայն կցագրման արդյունքների և բժիշկների եզրակացությունների՝ չի ունեցել և որևէ առողջական խնդիր, և ամբողջովին ենթարկվելով մանրամասն առողջական զննության՝ բոլոր ուղղություններով բժիշկների եզրակացությունների հիման վրա ճանաչվել է պիտանի զինվորական ծառայության:

Վերը նշվածները իրենց հստակ մոտեցումն են ունեցել նույնատիպ գործով 2006 թվականի դեկտեմբերի 12-ին Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի, ըստ թիվ 23459/03 գանգատով Վահան

Բայաթյանի՝ ընդդեմ Հայաստանի գործում, որտեղ դիմումատուն, որը նույպես «Եհովայի վկա» էր, նույնպես գիտակցաբար հրաժարվում էր զինվորական ծառայությունից իր կրոնական հայացքների պատճառով:

Այսպիսով, դատարանը, համաձայն Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 360 հոդվածի՝ ապացուցված է համարում ամբաստանյալ Ժիրայր Ռոմանի Քառյանի կատարած արարքը, գտնում է, որ նախաքննական մարմնի կողմից արարքին տրվել է իրավական ճիշտ որակավորում և այն համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 327 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներին, որը կատարելու մեջ ամբաստանյալի մեղավորությունը առկա է:

Ամբաստանյալ Ժիրայր Ռոմանի Քառյանի նկատմամբ պատժի տեսակը և չափը որոշելիս դատարանը հաշվի է առնում կատարված հանցագործության հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, այն, որ կատարված հանցանքը ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն միջին ծանրության է, ամբաստանյալը երիտասարդ է, նախկինում դատապարտված չի եղել, բնութագվում է դրական:

ՀՀ քրեական օրենսգրքի 62 և 63 հոդվածներով նախատեսված կարգով ամբաստանյալ Ժիրայր Ռոմանի Քառյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներ առկա չեն:

Ամբաստանյալ Ժիրայր Ռոմանի Քառյանի նկատմամբ պատիժը նշանակելիս դատարանը գտնում է, որ պետք է պատիժ նշանակվի ազատազրկման ձևով և նա պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատիժը, քանի որ դրանից նվազ խիստ պատժի տեսակը չի կարող ապահովել պատժի նպատակը:

Սույն քրեական գործով քաղաքացիական հայց և դատական ծախսեր չկան, ամբաստանյալի գույքի վրա կալանք չի դրված, իրեղեն ապացույցներ չկան, ամբաստանյալի նկատմամբ հարկադրական բուժում կամ խնամակալություն նշանակելու հիմքեր չկան:

Ամբաստանյալ Ժիրայր Ռոմանի Քառյանի նկատմամբ ընտրված որպես խափանման միջոց կալանավորումը թողնել անփոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, «Մարդու Իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 1, 357-360, 369-375, 379 հոդվածներով՝ դատարանը

ՎՃՌԵՑ

Ժիրայր Ռոմանի Քառյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 327 հոդվածի 1-ին մասով և դատապարտել ազատազրկման 2 (երկու) տարի, 6(վեց) ամիս ժամկետով:

Ամբաստանյալ Ժիրայր Ռոմանի Քառյանի պատժի սկիզբը հաշվել 2008 թվականի մարտի 04-ից:

Ամբաստանյալ Ժիրայր Ռոմանի Քառյանը պատիժը պետք է կրի ՀՀ Արդարադատության նախարարության համապատասխան քրեակատարողական հիմնարկում:

Ամբաստանյալ Ժիրայր Ռոմանի Քառյանի նկատմամբ ընտրված որպես խափանման միջոց կալանավորումը թողնել անփոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Դատավճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո:

Դատավճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ քրեական վերաքննիչ դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ Երեմ Եսոյան

ՀԱՎԵԼՎԱԾ 2
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԿԱՅԱՑՎԱԾ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐ

Սահակ Սիրունյանն ընդդեմ Հայկանուշ Գրիգորյանի, ԱՐԱԴ /0920/02/09

ՎՃԻՌ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանը

Նախագահությամբ դատավոր Գ. Խաչատրյանի
Նիստի քարտուղար Հ. Մատաթյան

Գործին մասնակցող անձինք՝
Հայցվոր Սահակ Համլետի Սիրունյան
/անձնագիր՝ ԱՀ 0219127, տրված՝
13.01.2009թ., 043-ի կողմից, հասցեն՝
Գեղարքունիքի մարզ, գ.Աստղաձոր,
Անդրանիկի փող., տուն 19/

Պատասխանող Հայկանուշ Ժիլբերտի Գրիգորյան
/հասցեն՝ ք. Աշտարակ, Պռոշյան-24/6/

Պատասխանողի ներկայացուցիչ Լ. Խեչանյան

2010թ. մարտի 26-ին

Աշտարակ քաղաքում դռնբաց դատական նիստում քննեց քաղաքացիական գործն ըստ հայցի Սահակ Սիրունյանի /այսուհետ նաև հայցվոր/ ընդդեմ Հայկանուշ Գրիգորյանի /այսուհետ նաև պատասխանող/՝ փոխառության գումարի և հաշվեգրվող տոկոսների բռնագանձման պահանջի մասին

Դատավարական նախապատմությունը.

Սահակ Սիրունյանը 13.11.2009 թվականին դատարան ներկայացրած հայցադիմումով խնդրել է պատասխանողից հօգուտ իրեն բռնագանձել 2200 ԱՄՆ դոլարին համարժեք՝ 850.234 ՀՀ դրամ գումար և նախապես մուծված պետ տուրքը՝ 17.002 ՀՀ դրամ: Պատասխանողից քաղ. օր.-ի 411-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով տոկոսների հաշվեգրումը կատարել կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը:

Դատարանի 13.11.2009 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ, բավարարվել է հայցվորի միջնորդությունը՝ հայցի ապահովման միջոցներ ձեռնարկելու մասին, և արգելանք է դրվել պատասխանողին պատկանող անշարժ գույքի և դրամական միջոցների վրա:

Գործի քննությունն ավարտվել է 12.03.2010թվականին:

Հայցվորի իրավական դիրքորոշումը

Հայցվորը ներկայացրած հայցադիմումով հայտնել է, որ պատասխանողին պարտավորագիր – ստացականով 2009թ. սեպտեմբերի 1-ին կանխիկ և առձեռն հանձնել է 2200 ԱՄՆ դոլար գումար և առանց ստացականի՝ 380.000: Պատասխանողը պարտավորվել է գումարը վերադարձնել 2009թ. հոկտեմբերի 1-ին, որպես գումարը վերդարձնելու երաշխիք՝ իր մոտ է թողել «Կալինա» մակնիշի ավտոմեքենան, սակայն սեպտեմբերի 20-ին պատասխանողը մեքենան տարել է, իսկ գումարը չի վերադարձրել: Դիմել է ՀՀ Ո Մարտունու բաժին, որտեղ նախապատրաստված նյութերով նույնպես պարզվել է, որ ինքը պատասխանողին մեկ ամիս ժամկետով տվել է 2200 ԱՄՆ դոլար և 380.000 ՀՀ դրամ, որի դիմաց որպես երաշխիք պատասխանողն իր մոտ է թողել «Կալինա» մակնիշի 13 ԼՕ 763 պետ. համարանիշով ավտոմեքենան և տվել է պարտավորագիր, սակայն 20.10.2009թ. պատասխանողը և իրեն անծանոթ մարդիկ եկել են իրենց բնակարան, որտեղ պատասխանողն իր հետ եկած մարդկանց ներկայացրել է, որպես ավտոմեքենայի գնորդ, իրեն է տվել 380.000 ՀՀ դրամը, իսկ մնացած 2200 ԱՄՆ դոլարը պայմանավորվել են, որ պատասխանողը կտա 2009թ. հոկտեմբերի 1-ին: Ավտոմոքենայի գնորդը պետք է մեքենայի արժեքն ամբողջովին տար պատասխանողին, իսկ վերջինս այդ գումարից պետք է փակեր իր պարտքը՝ մինչև հոկտեմբերի 1-ը: Դրանից հետո պատասախանողն անհիմն պատճառաբանություններով ձգձգել է պարտքի գումարի վերադարձը:

Ոստիկանության բաժնից իրեն 09.10.2009թ. եզրակացությամբ առաջարկվել և իրավունք է վերապահվել քաղ. հայցի կարգով դիմել դատարան: Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 877 հոդվածի 1-ին մասի փոխառության պայմանագրով մեկ կողմը (փոխատուն) մյուս կողմի (փոխառուի) սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային

հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել միևնույն գումարի դրամ (փոխառության գումարը) կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք: Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրամ կամ այլ գույք հանձնելու պահից: Սույն օրենգրքի 878-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն փոխառության պայմանագիրը կնքվում է գրավոր, 2-րդ մասի համաձայն՝ ի հավաստումն փոխառության պայմանագրի և դրա պայմանների՝ կարող է ներկայացվել փոխառուի տված ստացականը կամ փոխատուի կողմից փոխառուին որոշակի դրամական գումար կամ որոշակի քանակի գույք տալը հավաստող այլ փաստաթուղթ: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 880-րդ հոդվածի համաձայն՝ փոխառուն պարտավոր է փոխառության պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով, փոխատուին վերադարձնել ստացված փոխառության գումարը:

Պատասխանողը տվել է ստացական, որը ի հավաստումն պարտավորության տված պարտքային փաստաթուղթ է, որով ընդունում է իր պարտքը պարտատիրոջ հանդեպ: Ստացական տալը՝ պարտավոր անձի կողմից պարտքի ճանաչումը վկայող գործողություն է, որի առկայության պայմաններում էականը ոչ թե այն հանգամանքն է, թե այդպիսի գործողությունը ում ներկայությամբ կամ թե որտեղ է կատարվել, այլ այն փաստը, որ պարտապանն ընդունել է իր պարտքը պարտատիրոջ հանդեպ: ՀՀ քաղաքացիական օրենգրքի 347-րդ հոդվածի համաձայն, պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենգրքի 411-րդ հոդվածի 1-ին մասի, ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու, կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերում այդ գումարին վճարվում են տոկոսներ: Տոկոսները հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը ըստ ՀՀ ԿԲ-ի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների:

Համաձայն «Հայէկոնոմբանկ» ՓԲԸ Մարտունու մասնաճյուղի կողմից 04.11.2009թ. տրված ՆՄ25-124 տեղեկանքի 1 ԱՄՆ դոլարի փոխարժեքը ՀՀ դրամի նկատմամբ սահմանավել է 386.47 ՀՀ դրամ: Հետևաբար պատասխանողի պարտքն իր հանդեպ կազմում է 386.47 x 2200 = 850.234 ՀՀ դրամ: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 356-րդ հոդվածի համաձայն ՀՀ-ում պարտավորությունները պետք է արտացոլվեն ՀՀ դրամով: Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղ օր-ի 345, 347, 411, 877, 878, 879, 880, 881 հոդվածների, «Մարդու իրավունքերի և հիմնարար

ազատությունների մասին» Եվրոպական կոնվեցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի, խնդրել է. Պատասխանողից հօգուտ իրեն բռնագանձել ամբողջ պարտքի գումարին 2200 ԱՄՆ դոլարին համարաժեք 850.234 ՀՀ դրամ, ինչպես նաև պատասխանողից բռնագանձել հօգուտ իրեն իր կողմից մուծված 17.002 ՀՀ դրամ պետ տուրքի գումարը: Պատասխանողից ՀՀ քաղ օր-ի 411-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով տոկոսների գումարների հաշվեգրումը կատարել կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը՝ ՀՀ ԿԲ-ի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների:

Հայցվորը գործի քննությամբ պահանջը պնդել է ամբողջությամբ, սակայն գործի քննությունը պատասխանողի միջնորդությունները բավարարելու հիմքով հատածգվելու պատճառով, դիմել է գործի քննությունն իր բացակայությամբ իրականացնելու միջնորդությամբ: Գործը քննվել է հայցվորի բացակայությամբ:

Պատասխանողի իրավական դիրքորոշումը.

Պատասխանողը հայցադիմումի գրավոր պատասխան չի ներկայացրել դատարան:

Պատասխանողը բազմիցս խնդրել է գործի քննությունը հետաձգել՝ փաստաբանի մասնակցությունն ապահովելու համար, սակայն դատական նիստերին ոչ ինքը՝ պատասխանողը, ոչ նրա ներկայացուցիչը, չեն ներկայացել: Գործը քննվել է պատշաճ ծանուցված պատասխանողի բացակայությամբ:

Գործի փաստերը.

Հայցվորը ներկայացրել է պատասխանողի կողմից տրված պարտավորագրի բնօրինակը, համաձայն որի պատասխանողը հայցվորից իր անձնական կարիքների համար վերցրել է 2200 ԱՄՆ դոլար և 38000 ՀՀ դրամ գումար, որը պարտավորվել է վերադարձնել 2009թվականի հոկտեմբերի 1-ին և որպես երաշխիք՝ հայցվորին ի պահ է հանձնել իրեն պատկանող «Կալինա» մակնիշի 13 ԼՕ 763 պետհամարանիշի մեքենան:

ՀՀ Մարտունու բաժնի կողմից 09.10.2009թ. տրված եզրակացությամբ հաստատվել է, որ պատասխանողը չի հրաժարվել 2200 ԱՄՆ դոլարը վերադարձնելուց:Գտնելով, որ դիմող Սիրունյանի նշած փաստերն ունեն քաղաքացիահիրավական բնույթ Սիրունյանի դիմումի առիթով նախապատրաստված նյութերը թողնվել են անհետևանք:

Դատաքննությամբ չի հաստատվել պարտավորությունը կատարմամբ դադարած լինելու փաստ, չի հերքվել հայցվորի վկայակոչած՝ փոխառության գումարն վերադարձրած չլինելու փաստը:

Իրավական վերլուծությունը.

Լսելով կողմերին, հետազոտելով գրավոր փաստաթղթերն ու մյուս ապացույցները, որոնցից յուրաքանչյուրը գնահատելով բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, դատարանը գտնում է, որ հայցվորի պահանջը հիմնավոր է և ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

Համաձայն ՀՀ քաղ դատ օր 48 հոդվածի, գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Համաձայն ՀՀ քաղ դատ օր 51 հոդվածի, գործի հանգամանքները, որոնք օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ՀՀ քաղ օր. 877-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխառության պայմանագրով մեկ կողմը /փոխատուն/ մյուս կողմի /փոխառուի/ սեփականությանն է հանձնում դրամ կամ տնտեսական հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել միևնույն գումարի դրամ /փոխառության դրամ/ կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք»: Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրամ կամ այլ գույք հանձնելու պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 878-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ի հավաստումն փոխառության պայմանագրի և դրա պայմանների՝ կարող է ներկայացվել փոխառուի տված ստացականը կամ փոխատուի կողմից փոխառուին որոշակի դրամական գումար կամ որոշակի քանակի գույք տալը հավաստող այլ փաստաթուղթ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 880-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին մասի համաձայն՝ փոխառուն պարտավոր է փոխառության պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով փոխատուին վերադարձնել ստացած փոխառության գումարը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 880-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն փոխառության գումարը համարվում է վերադարձված այն փոխատուին հանձնելուց կամ նրա բանկային հաշվին փոխանցելու պահին, եթե այլ բան նախատեսված չէ փոխառության պայմանագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 881-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, եթե փոխառուն սահմանված ժամկետում չի վերադարձնում փոխառության գումարը, ապա փոխառության պայմանագրում նախատեսված տոկոսները դադարում են, իսկ այդ գումարից ենթակա են վճարման միայն սույն օրենսգրքի 411 հոդվածի 1-ին կետով նախատեսված չափով

տոկոսներ, սկսած այն օրվանից երբ գումարը պետք է վերադարձվեր մինչև գումարը փոխատուին վերադարձնելու օրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345–րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և սույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347 հոդվածի համաձայն, պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղ օր 424 հոդվածի համաձայն, պարտավորությունը դադարում է կատարմամբ:

Համաձայն ՀՀ քաղ. օր. 411 հոդվածի 1-ին կետի, ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու,վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու, կամ այլ անձի հաշվին անհիմն հարստանալու կամ խնայելու դեպքերում այդ գումարին վճարվում են տոկոսներ:

Դատաքննությամբ, փաստորեն, հիմնավորվում է, որ կողմերի միջև ծագել են պարտավորական իրավահարաբերություններ՝ ըստ դատարան ներկայացված պարտավորագրի բնօրինակի:

Պայմանագրի առարկան արտահայտված է արտարժույթով, հայցվորը պահանջը պնդել է փոխառության գումարին համարժեք դրամական արտահայտությամբ: Պատասխանողը չի վիճարկել պարտավորագիրը, թեև 27.01.2010թ., 17.02.2010թ., 01.03.2010թ. նշանակված դատական նիստերը հետաձգվել են նրա իսկ միջնորդությամբ: Հետևաբար պահանջը փոխառության գումարի բռնագանձման մասով՝ հիմնավորված է:

Դատաքննությամբ հաստատվում է նաև այն փաստը, որ պատասխանողը պարտավորագրում սահմանված ժամկետում՝ 2009թ հոկտեմբերի 1-ին, չի վերադարձրել փոխառության գումարը, հետևաբար, պահանջը՝ փոխառության գումարին ՀՀ քաղ օր 411 հոդվածով սահմանված տոկոսներ հաշվեգրելու մասով, նույնպես հիմնավորված է:

Դատական ծախսերը պետք է բաշխվեն բավարարված պահանջներին համամասնորեն՝ ՀՀ քաղ դատ. օր. 73 հոդվածի համաձայն, ընդհուպ մինչև վճռի հրապակման պահը հաշվեգրված տոկոսների մասով:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղ դատ օր 3, 130-132, 207 հոդվածներով, դատարանը

ՎՃՌԵՑ

Հայցը բավարարել:

Պատասխանող Հայկանուշ Ժիլբերտի Գրիգորյանից հօգուտ հայցվոր

Սահակ Սիրունյանի բռնագանձել 2200 /երկու հազար երկու հարյուր/ ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես փոխառության գումար: Փոխառության գումարի նկատմամբ հաշվեգրել ՀՀ քաղ. օր. 411 հոդվածով նախատեսված տոկոսներ՝ 2009թվականի հոկտեմբերի 1-ից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը ներառյալ՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար ՀՀ ԿԲ սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների:

Պատասախանողից հօգուտ հայցվորի բռնագանձել 17.002 ՀՀ դրամ, որպես նախապես վճարված պետական տուրքի գումար, իսկ հօգուտ ՀՀ պետ բյուջեի 1500 ՀՀ դրամ՝ որպես պետ. տուրք:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռը հրապարակումից մեկ ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

Դատավոր Գ. Խաչատրյան

Գուրգեն Հարությունյանի դիմումի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0766/0208

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների
ընդհանուր իրավասության դատարանի վճիռ
Քաղաքացիական գործ ԵԱՔԴ 0766/02/08
Դատավոր՝ Ա. Հունանյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վերաքննիչ քաղաքացիական դատարանը հետևյալ կազմով՝

նախագահությամբ դատավորներ Ա. ԽԱՌԱՏՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Կ. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ

2009 թվականի օգոստոսի 06-ին

դռնբաց դատական նիստում, քննելով գործին մասնակից չդարձված անձ Հայկազ Համբարձումյանի վերաքննիչ բողոքը Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 08.05.2008 թվականի ԵԱՔԴ/0766/02/08 վճռի դեմ ըստ դիմումի Գուրգեն Հարությունյանի՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստերը հաստատելու պահանջի մասին.

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ դիմումատու Գուրգեն Հարությունյանը խնդրել է հաստատել իրավաբանական նշանակություն ունեցող հետևյալ փաստերը.

1. որ ինքը՝ 20.11.1944 թվականին Վրաստանի Բոլնիսի շրջանի Խաչեն գյուղում ծնված, հանդիսացել է Իսկուհի /Օսկո/ Մինասի /Մնացականի/ Հարությունյանի և Վահան Համբարձումի Հարությունյանի հարազատ որդին:

2. որ Երևան քաղաքի Քանաքեռ 5-րդ փողոցի թիվ 14 /նախկինում՝ Մյասնիկյան փողոց 14 տուն/ 1958 թվականին Օսկո Մնացականի Հարությունյանի անվամբ տրված հատակագիծը պատկանում է Իսկուհի Մինասի Հարությունյանին:

3. որ իր հայր Վահան Համբարձումի Հարությունյանը՝ ծնված 1900 թվականին, մահացել է 1970 թվականին, և իր մայր Իսկուհի Մինասի Հարությունյանը՝ ծնված 1913 թվականին, մահացել է 1958 թվականին:

4. Իրեն ճանաչել Երևան քաղաքի Քանաքեռ 5-րդ փողոցի, 14 տան / նախկինում՝ Մյասնիկյան փողոց 14 տան/ առաջին հարկի օրինական շինության, այդ շինությամբ ծանրաբեռնված հողամասի և օրինական ազատ հողամասի նկատմամբ ժառանգությունը փաստացի ընդունած ժառանգ:

Ընդհանուր իրավասության դատարանի կողմից դիմումը բավարարվել է:

Վճռի դեմ վերաքննիչ բողոք է բերվել գործին մասնակից չդարձված անձ Հայկազ Համբարձումյանի կողմից:

Դիմումատու Գուրգեն Հարությունյանը մահացել է 10.09.2008 թվականին:

ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշմամբ Գուրգեն Հարությունյանի իրավահաջորդ են ճանաչվել կինը՝ Անահիտ Ադամյանը և որդին՝ Վահագն Հարությունյանը:

2. Վերաքննիչ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վերաքննիչ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 08.05.2008թ. կայացված վճռով թույլ են տրվել դատավարական և նյութական իրավունքի նորմերի խախտումներ, որոնք հանգեցրել են գործի սխալ լուծման: Մասնավորապես, ըստ բողոքաբերի՝ դատարանը խախտել է

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191 և 192 հոդվածները:

Դատարանը 05.03.2008թ. որոշում է կայացրել վարույթ ընդունել Գուրգեն Հարությունյանի կողմից ներկայացրած հայցադիմում ընդդեմ իրեն՝ Հայկազ Համբարձումյանի՝ սեփականության իրավունքով տիրապետման փաստը հաստատելու և ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքից բաժինն առանձնացնելու վերաբերյալ:

05.03.2008թ. դատարանը որոշում է կայացրել վարույթ ընդունել Գուրգեն Հարությունյանի կողմից ներկայացրած հայցադիմում ընդդեմ իրեն՝ Հայկազ Համբարձումյանի՝ սեփականության իրավունքով տիրապետման փաստը հաստատելու և ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքից բաժինն առանձնացնելու պահանջով, սակայն դատարանը քննությունն իրականացրել է հատուկ հայցային վարույթի կարգով: Դատարանին հայտնի է եղել, որ վեճի առարկա հանդիսացող գույքի վերաբերյալ վճռով անդրադարձ է կատարվում նաև իր իրավունքներին՝ որպես առաջին հերթի ժառանգի, սակայն գործին իրեն մասնակից չի դարձրել: Շահագրգիռ անձին դատաքննությանը մասնակից չդարձնելը հանգեցնում է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվեցիայի /այսուհետ՝ Կոնվենցիա/ 6-րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքի խախտման:

Դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51 հոդվածի 1-ին մասի պահանջն առ այն, որ գործի հանգամանքները, որոնք օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53 հոդվածի 1-ին մասի պահանջն առ այն, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132 հոդվածի I-ին մասի 1-ին պարբերության պահանջն առ այն, որ դատարանի վճիռը կազմված է ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերից, ինչպես նաև 4-րդ պարբերության պահանջն առ այն, որ վճռի պատճառաբանական մասում պետք է նշվեն դատարանի կողմից պարզված գործի հանգամանքները, ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները, այս կամ այն ապացույցը մերժելու փաստարկները, ինչպես նաև այն օրենքները և իրավական ակտերը, որոնցով դատարանը ղեկավարվել է վճիռ կայացնելիս:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ դատարանը հայցը կամ դիմումը թողնում է առանց քննության, եթե իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման մասին դիմումը քննելիս վեճ է ծագել իրավունքի մասին: Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման մասին հատուկ վարույթի կարգով քննվող գործերն այն գործերն են, որտեղ պետք է բացակայի նյութահիրավական վեճը:

Վճռաբեկ դատարանն օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու իր սահմանադրական առաքելությունն իրականացնելիս, 28.09.2006թ. թիվ 3-1805/Ա/ քաղաքացիական գործով արտահայտել է իրավական դիրքորոշում այն մասին, որ յուրաքանչյուր դեպքում իրավունքի վերաբերյալ վեճի առկայությանը ստուգելիս դատարանը պարտավոր է պարզել, թե արդյոք, գործի փաստերից ելնելով, առերևույթ առկա է փոխադարձ կապ քննարկվող փաստի և այլ անձի իրավունքների միջև, և արդյո՞ք նման փաստի հաստատումը կարող է որևէ կերպ ազդել այլ անձի իրավունքների ծավալի վրա: Դատարանը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում վեճի առկայության կամ բացակայության հարցը պետք է պարզի՝ ելնելով տվյալ գործի փաստերից, ինչպես նաև օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներից:

Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 205 հոդվածի 2-րդ մասի՝ գործին մասնակից չդարձած այն անձիք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ, Վերաքննիչ դատարանում օգտվում են գործին մասնակցող անձանց իրավունքներից և կրում են նրանց համար սահմանված պարտականություններ:

Վերը նշվածի տրամաբանական վերլուծությունից հետևում է, որ դիմումատուի կողմից ներկայացված փաստերը բավարար հիմքեր չեն ստեղծել հատուկ վարույթի կարգով իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման համար, քանի որ անձը դատարանին չի ապացուցել համապատասխան լիազոր պետական մարմնին դիմելու և նշված փաստաթղթերը վերականգնելու անհնարինությունը հաստատող ապացույցներ:

Փաստորեն, դիմումատուն թաքցրել է այն փաստը, որ ինքը հանդիսանում է Վահան Հարությունյանի և Իսկուհի Հարությունյանի ժառանգը, և բնակվում Երևան քաղաքի Քանաքեռ 5-րդ փողոցի թիվ 14 տանը: Գործով վկա Անահիտ Աղամյանը նույնպես թաքցրել է այդ փաստը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վերաքննիչ դատարանին խնդրել է բեկանել ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտը և դիմումը թողնել առանց քննության:

3. Վերաքննիչ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վերաքննիչ դատարանի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 05.03.2008թվականի որոշում /գ.թ.1/

Դատարանի՝ 23.04.2008թվականի թիվ Ե-1085 գրությամբ կատարված հարցում ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Ձեյթուն ՏՍ-ի ղեկավարին հետևյալ բովանդակությամբ. «Դատարանի վարույթում է գտնվում քաղ. գործն ըստ հայցի Գուրգեն Վահանի Հարությունյանի ընդդեմ Հայկազ Վահանի Համբարձումյանի՝ սեփականության իրավունքով տիրապետման փաստը հաստատելու և ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքից բաժինն առանձնացնելու պահանջի մասին: Կարիքն առաջանալու կապակցությամբ խնդրվում է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայքների ընդհանուր իրավասության դատարանին տրամադրել Քանաքեռ 5-րդ փողոցի, 14 տան կադաստրային գործը» /գ.թ.77/

Վերաքննիչ բողոքին կից ներկայացվել են Երևան քաղաքի Քանաքեռ 5-րդ փողոցի, 14 տան /նախկինում՝ Մյասնիկյան փողոց 14 տան/ կոմունալ և կենցաղային հարկեր վճարելու վերաբերյալ անդորրագրեր՝ Հայկազ Համբարձումյանի անունից:

Վերաքննիչ բողոքին կից ներկայացվել է Հայկազ Համբարձումյանի ծննդյան ակտի գրանցման վկայականը:

4. Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Վերաքննիչ բողոքը քննելով նշված հիմքերի սահմաններում՝ Վերաքննիչ դատարանը պարզեց հետևյալը.

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանում Գուրգեն Հարությունյանի հայցադիմումի հիման վրա քաղաքացիական վարույթ է հարուցվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 90 հոդվածի կանոններով: Պատասխանող կողմում ընդգրկված է եղել Հայկազ Համբարձումյանը: Պահանջը վերաբերել է սեփականության իրավունքով տիրապետման փաստը հաստատելու և ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքից բաժնեմասն առանձնացնելուն: Քաղաքացիական գործը քննվել է առանց նախնական դատական նիստ հրավիրելու: Մինչդեռ, առանց որևէ իրավական հիմքի դատարանը քաղաքացիական վարույթն ավարտել է և վճիռ արձակել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 34 գլխի կանոններով, այն է՝ «Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման գործերի վարույթը»:

Այսինքն, դատարանն ի սկզբանե իմանալով ժառանգական գույք հանդիսացող բնակելի տան նկատմամբ բացի Գուրգեն Հարությունյանից նաև Հայկազ Համբարձումյանի հավակնությունը՝ քաղաքացիական գործի քննությունն իրականացրել է հատուկ վարույթի կարգով՝ Հայկազ Համբարձումյանին զրկելով իր իրավունքների դատական պաշտպանության հնարավորությունից:

Ընդհանուր իրավասության դատարանը վճիռ է կայացրել՝ ելնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189 հոդվածի 2-րդ կետի, 1-ին, 3-րդ, 5-րդ 7-րդ ենթակետերով, որոնցով սահմանվում է հետևյալը՝ դատարանը փաստերի հաստատման վերաբերյալ քննում է այն գործերը, որոնք վերաբերում են անձանց ազգակցական հարաբերություններին, ծննդյան և մահվան գրանցմանը, ժառանգությունն ընդունելուն, իրավունք սահմանող փաստաթղթերի պատկանելությանը:

Նախ, ըստ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191 հոդվածի՝ վիճող կողմը դատարանին պետք է ներկայացնի անհերքելի ապացույցներ՝ փաստը հաստատելու վերաբերյալ, սակայն դրանց վերաբերելության ապացույցների բացակայության պատճառով՝ հիմնվի միայն կայացվելիք դատական ակտի վրա: Ըստ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 192 հոդվածի՝ դատարանն իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատում է միայն այն դեպքում, եթե դիմողը հնարավորություն չունի այլ կարգով ստանալու այդ փաստը հավաստող պատշաճ փաստաթղթեր կամ անհնար է վերականգնել կորցրած փաստաթղթերը:

Ընդհանուր իրավասության դատարանի ճռի դեմ վերաքննիչ բողոք բերող անձը՝ Հայկազ Համբարձումյանը, բողոքին կից ներկայացրել է մի շարք ապացույցներ, որոնցով հիմնավորել է ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացված դատական ակտն իր իրավունքներին անմիջականորեն անդրադառնալու փաստը: Մասնավորապես,

- Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ /գ.թ.1/ հաստատվում է, որ պահանջն ի սկզբանե ներկայացված է եղել պատասխանող Հայկազ Համբարձումյանի դեմ, սակայն հետագայում դատարանի ուշադրությունից վրիպել է այդ հանգամանքը, և քաղաքացիական գործը քննվել ոչ թե հայցային, այլ՝ հատուկ վարույթի կարգով:
- Վերաքննիչ բողոքին կից ներկայացվել են Երևան քաղաքի Քանաքեռ 5-րդ փողոցի, 14 տան /նախկինում՝ Մյասնիկյան փողոց 14 տան/ կոմունալ և կենցաղային հարկեր վճարելու վերաբերյալ անդորրագրեր՝ Հայկազ Համբարձումյանի անունից:
- Վերաքննիչ բողոքին կից ներկայացվել է Հայկազ Համբարձումյանի ծննդյան ակտի գրանցման վկայականը:
- Սույն քաղաքացիական գործի շրջանակներում ընդհանուր իրավասության դատարանի կողմից 23.04.2008թվականին թիվ Ե-1085 գրությամբ հարցում է արվել ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Ձեյթուն ՏՍ-ի ղեկավարին հետևյալ բովանդակությամբ. «Դատարանի վարույթում է գտնվում քաղ. գործն ըստ հայց:

Գուրգեն Վահանի Հարությունյանի ընդդեմ Հայկազ Վահանի Համբարձումյանի՝ սեփականության իրավունքով տիրապետման փաստը հաստատելու և ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքից բաժինն առանձնացնելու պահանջի մասին: Կարիքն առաջանալու կապակցությամբ խնդրվում է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայքների ընդհանուր իրավասության դատարանին տրամադրել Քանաքեռ 5-րդ փողոցի, 14 տան կադաստրային գործը» /գ.թ.77/

Վերոգրյալից ելնելով, ընդհանուր իրավասության դատարանը քաղաքացիական գործը պետք է քններ հայցային վարույթի կարգով և պատասխանող կողմում հայցվորի կողմից ընդգրկված անձին՝ Հայկազ Համբարձումյանին՝ մասնակից դարձներ դատաքննությանը: Մինչդեռ, վերջինս մասնակից չի դարձվել դատաքննությանը, և նրա իրավունքների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ, ինչով դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջները: Գործին մասնակցող անձանց՝ դատական նիստի ժամանակի և վայրի, դատավարական այլ գործողությունների իրականացման մասին պատշաճ ծանուցումը կողմերի դատական պաշտպանության իրավունքի, իրավահավասարության և մրցակցության սկզբունքների ապահովման կարևոր պայմանն է:

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում արտահայտել է այն դիրքորոշումը, որ «հավասարության» սկզբունքը՝ կողմերի միջև «արդար հավասարակշռության» իմաստով պահանջում է, որպեսզի յուրաքանչյուր կողմ ունենա ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր գործն այնպիսի պայմաններում, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի նվազ բարենպաստ վիճակում: Մրցակցային դատաքննության սկզբունքը ենթադրում է, որ յուրաքանչյուր կողմ պետք է ունենա գործում եղած կամ լրացուցիչ ներկայացված ապացույցների մասին տեղեկանալու և դրանց մասին մեկնաբանություններ ներկայացնելու հնարավորություն: Նշված սկզբունքներն ամբողջ ծավալով կարող են իրականացվել միայն այն դեպքում, երբ գործին մասնակցող անձանցից յուրաքանչյուրին ընձեռված է դատական նիստին ներկա գտնվելու հնարավորություն: Այդ դիրքորոշումն է հայտնել նաև ՀՀ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային՝ էդիկ Բալայանի դիմումը՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականանության իրավունքի ճանաչելու մասին որոշմամբ /28.09.2006թ., 3-1805Ա, Վճռաբեկ դատարանի որոշումների ընտրանի, հատոր1, էջ 33-35/:

Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207 հոդվածի 5-րդ մասի՝ գործին մասնակից չդարձված անձինք, որոնց

իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ, իրավունք ունեն վերաքննիչ բողոք բերելու այն օրվանից սկսած երեք ամսվա ընթացքում, երբ իմացել են կամ կարող էին իմանալ դատական ակտի կայացման մասին: Դատական ակտի կայացման մասին Հայկազ Համբարձումյանը տեղեկացել է 2009 թվականի ապրիլ ամսին, երբ 10.09.2008 թվականին Գուրգեն Հարությունյանի մահից հետո վեց ամիս անց վեճ է առաջացել նրա ժառանգական գույքի վերաբերյալ:

Վերջինս, օգտվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207 հոդվածի 5-րդ կետի կանոններից, 04.06.2009 թվականին վերաքննիչ բողոք է ներկայացրել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի ԵԱՔԴ 766/02/08 գործով 08.05.2008 թվականին կայացված վճռի դեմ: Հետևաբար, Հայկազ Համբարձումյանի կողմից պահպանվել են վերաքննիչ բողոք բերելու համար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207 հոդվածի 5-րդ կետով նախատեսված դատավարական ժամկետները, և վերջինի բողոքն օրենքով սահմանված կարգով ընդունվել է վարույթ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103 հոդվածի 4-րդ կետի համաձայն Գրիգոր Հարությունյանի դիմումը պետք է մնա առանց քննության: Համաձայն մատնանշված նորմի՝ դատարանը դիմումը կամ հայցը թողնում է առանց քննության, եթե իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման …մասին դիմումը քննելիս վեճ է ծագել իրավունքի մասին:

Այսպիսով, սույն բողոքի հիմքերի առկայությունը ՀՀ Վերաքննիչ դատարանը բավարար է համարում Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 08.05.2008 թվականի թիվ ԵԱՔԴ 0766/02/08 վճիռը բեկանելու և Գրիգոր Հարությունյանի դիմումն առանց քննության թողնելու համար:

Ղեկավարվելով ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103, 217, 219-221 հոդվածներով, Վերաքննիչ դատարանը

ՈՐՈՇԵՑ

Վերաքննիչ բողոքը բավարարել:

1. Բեկանել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 08.05.2008թվականի ԵԱՔԴ 0766/02/08 վճիռը: Գուրգեն Հարությունյանի դիմումը թողնել առանց քննության:

2. Պետական տուրքի հարցը համարել լուծված:
3. Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ Վճռաբեկ դատարան հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Նախագահող դատավոր՝ Ա. Խառատյան
Դատավոր՝ Կ. Չիլինգարյան
Դատավոր՝ Ա.Պետրոսյան

Էրիկ Քալանթարյանն ընդդեմ Հայրապետ Քալանթարյանի, Կենտրոն տարածքային նոտարական գրասենյակի, ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ Կենտրոն տարածքային ստորաբաժանման, ԵԿԴ/0907/02/10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0907/02/10
Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ
վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի
19.05.2010 թվականի որոշում
Նախագահող դատավոր՝ Ս.Թադևոսյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

2010 թվականի հուլիսի 08-ին ք. Երևան

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը
(այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)

հետևյալ կազմով՝
նախագահող դատավոր Ն. Տավարացյան
քարտուղարությամբ Ա. Խաչատրյանի

դռնբաց դատական նիստում քննելով թիվ ԵԿԴ/0907/02/10 քաղաքացիական գործով էրիկ Քալանթարյանի վերաքննիչ բողոքը Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ հայցադիմումը վերադարձնելու մասին 19.05.2010 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի էրիկ Քալանթարյանի

ընդդեմ Հայրապետ Քալանթարյանի, Կենտրոն տարածքային նոտարական գրասենյակի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Կենտրոն տարածքային ստորաբաժանման՝ ժառանգությունն ընդունելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու, պարտադիր բաժնի իրավունքով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, ժառանգության իրավունքի վկայագիրը, դրա հիման վրա կատարված պետական գրանցումը, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը և դրա հիման վրա կատարված պետական գրանցումն անվավեր ճանաչելու և ժառանգության զանգվածի 1/3-րդի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ հայցվորը պահանջել է հարգելի համարել Էրիկ Գագիկի Քալանթարյանի կողմից, հոր՝ մահացած 23.04.1998 թվականին, Գագիկ Սարիկի Քալանթարյանի ժառանգությունն ընդունելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառները, ճանաչել ժառանգությունն ընդունած ժառանգ, անվավեր ճանաչել՝ Սուրիկ Քալանթարյանի անվամբ 14.03.2005 թվականին տրված ժառանգության իրավունքի վկայագիրը, դրա հիման վրա կատարված պետական գրանցումը, Հայրապետ Քալանթարյանի և Սուրիկ Քալանթարյանի միջև 29.06.2009 թվականին կնքված թիվ 4293 անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը և դրա հիման վրա 02.07.2009 թվականին կատարված պետական գրանցումը և ճանաչել էրիկ Քալանթարյանի սեփականության իրավունքը հոր՝ Գագիկ Քալանթարյանի ժառանգության զանգվածի՝ Երևան քաղաքի Ղ.Փարպեցու փողոցի 9բ շենք, թիվ 21բնակարանի 1/3-րդի նկատմամբ:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան) 19.05.2010 թվականի որոշմամբ հայդադիմումը վերադարձրել է:

Նշված որոշման դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել հայցվոր էրիկ Քալանթարյանը (ներկայացուցիչ՝ Կ.Քալանթարյան):

Վերաքննիչ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վերաքննիչ դատարանը ստորև շարադրում է վերաքննիչ բողոքի հիմքերն ու հիմնավորումները՝ դատարանի նախընտրած հերթականությամբ և խմբավորմամբ:

Դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ, 145-րդ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ և 31-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվեցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը բողոքի սույն հիմքը հիմնավորում է հետևյալ փաստարկներով.

Եվրոպական դատարանն իր 29.11.2007 թվականի վճռով հաստատել է, որ պետական տուրքը չվճարելու հետևանքով գործը չքննելը, հանդիսանում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի խախտում:

Դատարանը, խախտելով վերը նշված պահանջները, անհիմն մերժել է պետական տուրքը հետաձգելու միջնորդությունը և հայցադիմումը վերադարձրել:

Դատարանը որոշումները հայցվորին է ուղարկել 27.05.2010 թվականին, այսինքն որոշումը կայացնելուց 8 օր հետո, որը Հայցվորի կողմից ստացվել է 28.05.2010 թվականին:

Վերոգրյալի հիման վրա վերաքննիչ բողոք բերած անձը պահանջել է վերացնել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ հայցադիմումը վերադարձնելու մասին 19.05.2010 թվականի որոշումը. պետական տուրքի վճարումը հետաձգելու միջնորդությանը բավարարել, կայացնել պետական տուրքի վճարումը հետաձգելու և հայցադիմումը վարույթ ընդունելու մասին նոր դատական ակտեր:

3. Վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

1) Հայցվոր էրիկ Քալանթարյանը Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան 05.05.2010 թվականին հայցադիմում է ներկայացրել ընդդեմ Հայրապետ Քալանթարյանի, Կենտրոն տարածքային նոտարական գրասենյակի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Կենտրոն տարածքային ստորաբաժանման՝ ժառանգությունն ընդունելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու, պարտադիր բաժնի իրավունքով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, ժառանգության իրավունքի վկայագիրը, դրա հիման վրա կատարված պետական գրանցումը, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը և դրա հիման վրա կատարված պետական գրանցումն անվավեր ճանաչելու և ժառանգության զանգվածի 1/3-րդի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման պահանջներով:

2) Դատարանի՝ 10.05.2010 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

3) Հայցվորը 17.05.2010 թվականին կրկին հայցադիմում է ներկայացրել Դատարան հայցադիմումում ներկայացնելով նաև միջնորդություն պետական տուրքի վճարումը հետաձգելու և այդ հարցին վերջնական դատական ակտով անդրադառնալու մասին:

4) Դատարանի 19.05.2010 թվականի որոշմամբ հայցադիմումը կրկին վերադարձվել է այն պատճառաբանությամբ, որ չեն ներկայացվել սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթեր, իսկ պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ միջնորդությունը դատարանի մեկ այլ որոշմամբ մերժվել է:

4. Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վերաքննիչ բողոքը Դատարանի կողմից «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ և 31-րդ հոդվածները չկիրառելու բողոքի հիմքի սահմանում՝ Վերաքննիչ դատարանը նախևառաջ հարկ է համարում նշել, որ Դատարանը պետական տուրքի վճարումը հետաձգելու միջնորդությունը մերժել և հայցադիմումը վերադարձրել այն պատճառաբանությամբ, որ հայցվորը Դատարանին չի ներկայացրել իր գույքային դրության վերաբերյալ ապացույցներ:

Բողոք բերած անձը, Դատարանի վերոգրյալ պատճառաբանության վերաբերյալ նշել է, որ Եվրոպական դատարանն իր 29.11.2007 թվականի վճռով հաստատել է, որ պետական տուրքը չվճարելու հետևանքով գործը չքննելը, հանդիսանում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի խախտում:

Դատարանի պատճառաբանության իրավաչափության և վերաքննիչ բողոքի վերոգրյալ փաստարկի հիմնավորվածության տեսանկյունից Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի «գ» կետի համաձայն՝ առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով արտոնություններ կարող են սահմանել դատարանները կամ դատավորները՝ նույն օրենքի 9-րդ հոդվածում նշված առանձին գործերով՝ ելնելով կողմերի գույքային դրությունից:

Վերոգրյալ հոդվածից հետևում է, որ դատարաններում պետական տուրքի գծով արտոնություն, այդ թվում՝ պետական տուրքի վճարումը հետաձգելու տեսքով, կարող են սահմանել նաև դատարանները կամ դատավորները՝ հաշվի առնելով կողմերի գույքային դրությունը:

Տվյալ դեպքում հայցվորը Դատարանին չի ներկայացրել իր գույքային դրության մասին որևէ ապացույց կամ հիմնավորում, որի հետևանքով վերջինս ի վիճակի չի եղել վճարել օրենքով սահմանված պետական

տուրքի գումարը, իսկ վերջինիս միջնորդությունում առկա տեղեկությունները չեն կարող գնահատվել որպես իր՝ հայցվորի, գույքային դրությունը բնութագրող տեղեկություններ: Նշված տեղեկությունների հիման վրա պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին միջնորդությունը Դատարանն իրավացիորեն մերժել է, քանի որ չի համապատասխանում «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի «գ» կետի պահանջներին:

Ինչ վերաբերում է բողոք բերած անձի այն պնդմանը, որ Դատարանը որոշումները հայցվորին է ուղարկել 27.05.2010 թվականին, այսինքն՝ որոշումը կայացնելուց 8 օր հետո, ապա Վերաքննիչ դատարանը այդ փաստարկը ևս հիմնավոր չի համարում այն պատճառաբանությամբ, որ թեև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդված 2-րդ մասով սահմանված է, որ Դատարանը, սույն օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով, հայցադիմումը վերադարձնելու մասին կայացնում է որոշում՝ հայցադիմումն ստանալու օրվանից եռօրյա ժամկետում որոշումը, հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը պատշաճ ձևով ուղարկելով հայցվորին, սակայն միաժամանակ օրենսդիրը նույն հոդվածի 4-րդ մասով նախատեսել է, որ հայցադիմումը վերադարձնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան հայցվորի կողմից այն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Այսինքն՝ բողոքարկման ժամկետի սկիզբ է համարվում ոչ թե Դատարանի կողմից որոշման կայացման ամսաթիվը, այլ այդ որոշումը հայցվորի կողմից ստանալու ամսաթիվը: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ Վերաքննիչ դատարանը գտնում է որ նշված խախտումը կրում է զուտ ձևական բնույթ, քանի որ այն որևէ կերպ չի խախտել բողոք բերած անձի դատավարական իրավունքները:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոքի հիմքերը հիմնավոր չեն, իսկ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ հայցադիմումը վերադարձնելու մասին 19.05.2010 թվականի որոշումը հիմնավորված է, որպիսի պայմաններում այն չի կարող վերացվել:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-365(ՎԴ)2008 14.04.2008 թվականի նախադեպային որոշման համաձայն՝ միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների համար պետական տուրք չի գանձվում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ և 2213-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վերաքննիչ բողոքը մերժել: Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ պետական տուրքի վճարումը հետաձգելու միջնորդությունը մերժելու և հայցադիմումը վերադարձնելու մասին 19.05.2010 թվականի որոշումները թողնել անփոփոխ՝ օրինական ուժի մեջ:

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով այն ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում:

Դատավոր Ն. Տավարացյան

Սերգեյ Զիգարխանովն ընդդեմ «ԲՏԱ Բանկ» ՓԲԸ, ԵԿԴ/0313/02/09

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում 2010թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0313/02/09
Նախագահող դատավոր՝ Ա. Թումանյան
Դատավորներ՝ Գ. Մատինյան
Լ. Գրիգորյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2010 թվականի մարտի 12-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «ԲՏԱ Բանկ» ՓԲԸ-ի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.07.2009 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Սերգեյ Զիգարխանովի ընդդեմ «ԲՏԱ Բանկ»

ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ)՝ գործատուի կողմից արձակված ներքին իրավական ակտերն անվավեր ճանաչելու, աշխատողին պաշտոնում վերականգնելու և հարկադիր պարապուրդը վճարելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Սերգեյ Ձիգարխանովը պահանջել է անվավեր ճանաչել Բանկի գործադիր տնօրենի 27.01.2009 թվականի թիվ 56 և 30.01.2009 թվականի թիվ 65 հրամանները, վերականգնել զբաղեցրած պաշտոնում, Բանկից բռնագանձել հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի գումարը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 21.05.2009 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 18.07.2009 թվականի որոշմամբ Դատարանի վճիռը պետական տուրքի մասով մասնակիորեն բեկանվել և փոփոխվել է. Բանկից պետական բյուջեի օգտին բռնագանձվել է 4000 (չորս հազար) ՀՀ դրամ և վճարվելիք հարկադիր պարապուրդի 2 (երկու) տոկոսը՝ որպես ընդհանուր իրավասության դատարանի պետական տուրքի գումար: Վճիռը մնացած մասով թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Սերգեյ Ձիգարխանովը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1. Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 224-րդ, 226-րդ, 227-րդ հոդվածները, չի կիրառել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը, ««ԲՏԱ ինվեստբանկ» ՓԲԸ անվտանգության վարչության վերաբերյալ» կարգը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Անհիմն է Վերաքննիչ դատարանի այն պնդումը, որ Սերգեյ Ձիգարխանովի արարքը որպես իրավախախտում հայտնաբերվել է 03.12.2008 թվականին, քանի որ այն որպես այդպիսին որակվել է

26.01.2009 թվականին՝ համաձայն ծառայողական քննության արդյունքում կազմված զեկուցագրի:

Ուստի, իրավախախտման հայտնաբերման պահը 26.01.2009 թվականն է, երբ Բանկի գործադիր տնօրենն իրազեկվել է դրա մասին: Ինչ վերաբերում է աշխատողի կողմից բացատրագիրը ներկայացնելուն, ապա այն 27.01.2009 թվականին ստացվելուց հետո նույն օրը կիրառվել է կարգապահական տույժը, իսկ օրենսդիրը չի արգելել, որ տույժը կիրառվի բացատրագիրը ներկայացնելու նույն օրը:

Բացի այդ, սույն գործով առկա չեն նաև կարգապահական տույժ կիրառելու մասին հրամանն անվավեր ճանաչելու այլ հիմքեր, քանի որ, համաձայն ««ԲՏԱ ինվեստբանկ» ՓԲԸ անվտանգության վարչության վերաբերյալ» կարգի 7.1-րդ կետի՝ անվտանգության վարչության գործառույթների ժամանակին և պատշաճ իրականացման համար պատասխանատվությունը կրում է անվտանգության վարչության պետը: Վերջինս պատասխանատու է նաև անվտանգության վարչության աշխատակիցների կողմից աշխատանքային և արտադրական կարգապահության համար:

2. Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը, 121-րդ հոդվածի 2-րդ մասը, 221-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Սերգեյ Ձիգարխանովի հետ աշխատանքային պայմանագիրը լուծելու համար հիմք է հանդիսացել 24.11.2008 թվականին տրված եզրակացությունը, որով Սերգեյ Ձիգարխանովի կողմից դրսևորվել է կամայականություն, քանի որ դրանում արձանագրելով բազում թերություններ՝ այդուհանդերձ կատարված աշխատանքի արդյունքները գնահատել է բավարար: Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև Բանկի ներքին աուդիտի ծառայության կողմից դրամարկղային հանգույցի կառուցման աշխատանքների՝ ՀՀ իրավական ակտերի համապատասխանության վերաբերյալ իրականացված ստուգման արդյունքում 30.01.2009 թվականին կազմված ակտը, որտեղ մատնանշված թերությունների առկայության պարագայում կատարված աշխատանքները չէին կարող որակվել բավարար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է ամբողջությամբ բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 18.07.2009 թվականի որոշումը՝ հայցն ամբողջությամբ մերժել, կամ ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 18.07.2009 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

03.12.2008 թվականին տեղի ունեցած Բանկի կառավարման նիստի ընթացքում Բանկի գործադիր տնօրենի խորհրդականին տրվել է Բանկի տնտեսական անվտանգության բաժնի կողմից, այսպես կոչված, անորակ նախավարկային ստուգում անցկացնելու փաստը պարզելու առաջադրանքը և հենց հաջորդ օրն իսկ Ա.Քեշիշյանի կողմից խախտման առիթով ներկայացվել է բացատրագիր, հետևաբար պատասխանողը կարող էր օրենքով սահմանված մեկամսյա ժամկետում ավարտել կարգապահական վարույթը:

Ինչ վերաբերում է վկայակոչված խախտման վերաբերյալ Սերգեյ Ձիգարխանովի կողմից բացատրագիր ներկայացնելուն, ապա պետք է նշել, որ թեև «խիստ նկատողությունը» թվագրված է 27.01.2009 թվականին, սակայն 26.01.2009 թվականին Բանկի գործադիր տնօրենի խորհրդականի զեկուցագրում Բանկի գործադիր տնօրենի կողմից արդեն իսկ մակագրություն էր արվել կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին՝ թվագրված 26.01.2009 թվականով, մինչդեռ բացատրությունը վերցվել է 27.01.2009 թվականին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 04.08.2008 թվականի թիվ 238 աշխատանքային պայմանագրի համաձայն՝ Սերգեյ Ձիգարխանովը աշխատել է Բանկում՝ որպես անվտանգության վարչության պետ: 03.10.2008 թվականի թիվ 692 հրամանով աշխատանքային պայմանագրի ժամկետը երկարաձգվել է մինչև 06.10.2009 թվականը ներառյալ (հատոր 1-ին, գ. թ. 11-16):

2. Սերգեյ Ձիգարխանովը ստորագրել է 07.11.2008 թվականին կազմված Բանկի փոքր վարկային կոմիտեի հարցման թերթիկի «Դրական» սյունակի «Կարծիք» կետում (հատոր 1-ին, գ. թ. 56):

3. Բանկի վարչության 03.12.2008 թվականի թիվ 202 որոշմամբ Բանկի անվտանգության վարչությունում ծառայողական քննություն անցկացնելու նպատակով մանրածախ վարկավորման վարչության պետին հանձնարարվել է գործադիր տնօրենի խորհրդականին փոխանցել Դավիթ Ավանեսովի մերժված վարկային հայտով բոլոր փաստաթղթերը (հատոր 1-ին, գ. թ. 57):

4. 04.12.2008 թվականին Բանկի վարկային բլոկի ուղեկցման սեկտորի առաջատար մասնագետ Ա. Քեշիշյանը բացատրագիր է ներկայացրել Բանկի գործադիր տնօրենին, որտեղ նշել է հիշյալ վարկառուի վարկ տրամադրելու գործով իր կողմից կատարված գործողությունների և թերացումների մասին:

5. Բանկի գործադիր տնօրենին հասցեագրված 26.01.2009 թվականի Բանկի գործադիր տնօրենի խորհրդականի թիվ 124 զեկուցագրի համաձայն՝ առանց Բանկի փոխառու Դավիթ Ավանեսովի տվյալների բավարար ստուգման մասին գրավոր ապացույցների՝ Սերգեյ Ձիգարխանովը ստորագրել է Բանկի փոքր վարկային կոմիտեի հարցման թերթիկի «Դրական» սյունակի «Կարծիք» կետում:

Այսպիսով՝ փոխառուի վարկավորմանը նախորդել է անորակ ստուգում, այդ վարկային գործում բացակայում է Բանկի տնտեսական անվտանգության բաժնի եզրակացությունը, չի իրականացվել տնտեսական անվտանգության փորձաքննություն, ինչի հետևանքով անհրաժեշտ է Բանկի վարկային բլոկի ուղեկցման սեկտորի առաջատար մասնագետ Ա. Քեշիշյանի նկատմամբ, ով իրականացրել է վարկառուի վարկավորման աշխատանքները, կիրառել «նկատողություն» կարգապահական տույժ՝ իր ծառայողական պարտականությունների անբարեխիղճ կատարման համար, իսկ Սերգեյ Ձիգարխանովի առնչությամբ Բանկի վարչության նիստում բարձրացնել Բանկի անվտանգության վարչությունում նրանց կողմից զբաղեցրած պաշտոնների մակարդակին նրանց ծառայողական համապատասխանության հարցը նշված վարչության աշխատակիցների գործունեության նկատմամբ հսկողություն չիրականացնելու, վարկավորմանը վերաբերող ներքին նորմատիվ ակտերի չիմացության հետևանքով (հատոր 1-ին, գ. թ. 26):

6. 27.01.2009 թվականին Սերգեյ Ձիգարխանովի կողմից վերոնշյալ իրավախախտման վերաբերյալ ներկայացվել է բացատրագիր (հատոր 1-ին գ. թ. 28):

7. Բանկի գործադիր տնօրենի 27.01.2009 թվականի թիվ 56 հրամանի համաձայն (հիմք՝ 26.01.2009 թվականի Բանկի գործադիր տնօրենի խորհրդականի թիվ 124 զեկուցագիրը, Ա. Քեշիշյանի և Սերգեյ Ձիգարխանովի բացատրագրերը)՝ Ա. Քեշիշյանին հայտարարվել է «նկատողություն», իսկ Սերգեյ Ձիգարխանովին՝ «խիստ նկատողություն» (հատոր 1-ին, գ. թ. 17):

8. 27.01.2009 թվականի Բանկի դրամարկղային հանգույցի մասին Սերգեյ Ձիգարխանովի եզրակացության համաձայն՝ Բանկի վարչական ղեկավարության մոտ բացակայում են Բանկի դրամարկղային հանգույցի նախագծման, շինվերանորոգման, ձևավորման աշխատանքների վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, իսկ այդ աշխատանքները իրականացվել են ՀՀ օրենսդրությամբ ամրագրված պահանջների խախտմամբ: Այժմ շինարարական աշխատանքներն ավարտված են: Այդուհանդերձ գործառնական դրամարկղի շինության վերանորոգման աշխատանքներն ընդհանուր առմամբ իրականացվել են բավարար (հատոր 1-ին, գ. թ. 88):

9. 27.01.2009 թվականի Բանկի գործադիր տնօրենի թիվ 55 հրամանով Բանկի ներքին աուդիտի ծառայության պետին հանձնարարվել է իրականացնել դրամարկղային հանգույցի՝ ՀՀ նորմատիվ ակտերի պահանջներին տեխնիկական համապատասխանության ստուգում, որի արդյունքում 30.01.2009 թվականին արձանագրվել է, որ Բանկի գլխամասի դրամարկղային հանգույցը չի համապատասխանում ՀՀ օրենսդրության պահանջներին, կատարված վերանորոգման-շինարարական աշխատանքները բավարար չէին և ամբողջությամբ չհանգեցրին արտաքին ռիսկերի նվազեցմանը, և անհրաժեշտ է հիմնովին վերանախագծել դրամարկղային հանգույցը (հատոր 1-ին, գ. թ. 55, 68-70):

10. Բանկի գործադիր տնօրենի 30.01.2009 թվականի թիվ 65 հրամանի համաձայն՝ լուծվել է Սերգեյ Զիգարխանովի հետ կնքված 04.08.2008 թվականի թիվ 238 աշխատանքային պայմանագիրը (հատոր 1-ին, գ.թ. 19):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) Վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային կարգապահության խախտում է համարվում աշխատողի մեղքով աշխատանքային պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածի համաձայն՝ մինչև կարգապահական տույժի կիրառումը գործատուն պետք է աշխատողից պահանջի խախտման մասին գրավոր բացատրություն:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 227-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգապահական տույժը կարող է կիրառվել խախտումը հայտնաբերելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, չհաշված աշխատողի ժամանակավոր անաշխատունակության պատճառով բացակայության, գործուղման կամ արձակուրդի մեջ գտնվելու ժամանակահատվածները:

«ԲՏԱ ինվեստբանկ» ՓԲԸ անվտանգության վարչության վերաբերյալ» կարգի 3.7 կետի համաձայն՝ Բանկի անվտանգության վարչության գործառույթներից է տնտեսական անվտանգության փորձաքննությունների իրականացումը: Նույն կարգի 7.1-րդ կետի համաձայն՝ սույն կարգով նախատեսված անվտանգության վարչության գործառույթների պատշաճ և ժամանակին կատարման համար պատասխանատու է անվտանգության վարչության պետը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Բանկի վարչության 03.12.2008 թվականի թիվ 202 որոշմամբ մանրածախ վարկավորման վարչության պետին հանձնարարվել է գործադիր տնօրենի խորհրդականին փոխանցել Դավիթ Ավանեսովի մերժված վարկային հայտով բոլոր փաստաթղթերը Բանկի անվտանգության վարչությունում ծառայողական քննություն անցկացնելու նպատակով: 04.12.2008 թվականին Բանկի վարկային բլոկի ուղեկցման սեկտորի առաջատար մասնագետ Ա. Քեշիշյանը բացատրագիր է ներկայացրել Բանկի գործադիր տնօրենին, որտեղ նշել է հիշյալ վարկառուի վարկ տրամադրելու գործով իր կողմից կատարված գործողությունների և թերացումների մասին: 26.01.2009 թվականին Բանկի գործադիր տնօրենի խորհրդականը Բանկի գործադիր տնօրենին է ներկայացրել զեկուցագիր, համաձայն որի՝ առանց Բանկի փոխառու Դավիթ Ավանեսովի տվյալների բավարար ստուգման մասին գրավոր ապացույցների՝ Սերգեյ Զիգարխանովը ստորագրել է Բանկի փոքր վարկային կոմիտեի հարցման թերթիկի «Դրական» սյունակի «Կարծիք» կետում:

Վերաքննիչ դատարանը գտել է, որ սույն գործով խախտումը հայտնաբերվել է 04.12.2008 թվականին՝ Ա. Քեշիշյանի կողմից բացատրագիր ներկայացնելու օրը:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ խախտման հայտնաբերման պահը որոշվում է Սերգեյ Զիգարխանովի կողմից կատարված արարքը որպես իրավախախտում որակելու, այն է՝ Բանկի գործադիր տնօրենի խորհրդականի թիվ 124 զեկուցագիրը 26.01.2009 թվականին ներկայացնելու օրով, հետևաբար՝ գործատուի կողմից պահպանվել է կարգապահական պատասխանատվություն կիրառելու համար ՀՀ աշխատանքային օրենսգրքի 227-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված մեկամսյա ժամկետը:

Ինչ վերաբերում է միևնույն օրը Սերգեյ Զիգարխանովի կողմից խախտման կապակցությամբ գրավոր բացատրություն ներկայացնելուն և կարգապահական պատասխանատվություն կիրառելուն, ապա նշված բացատրությունը ներկայացվել է մինչև Բանկի կողմից կարգապահական պատասխանատվություն կիրառելը, ինչը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածի իմաստով իրավաչափ է, հետևաբար գործատուի կողմից պահպանվել է կարգապահական պատասխանատվություն կիրառելու համար ՀՀ աշխատանքային օրենսգրքով ամրագրված պահանջները:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի պատասխանում նշված այն փաստարկին, որ 26.01.2009 թվականին Բանկի գործադիր տնօրենի խորհրդականի զեկուցագրում Բանկի գործադիր տնօրենի կողմից արդեն իսկ մակագրություն էր արվել կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին՝ թվագրված 26.01.2009 թվականով, մինչդեռ բացա-

տրությունը վերցվել է 27.01.2009 թվականին, ապա Վճռաբեկ դատարանն այն համարում է սույն գործով էական նշանակություն չունեցող հանգամանք, քանի որ սույն գործով էական է կարգապահական պատասխանատվություն կիրառելու, այլ ոչ թե դրանից առաջ այս կամ այն փաստաթղթի վրա արված մակագրությունների օրը:

2) Վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ գործատուն իրավունք ունի լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը սույն օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 121-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործատուն իրավունք ունի լուծելու աշխատանքային պայմանագիրը, եթե աշխատողը թեկուզև մեկ անգամ թույլ է տվել սույն օրենսգրքի 221-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված աշխատանքային կարգապահության կոպիտ խախտում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 221-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ աշխատանքային կարգապահության կոպիտ խախտում կարող է համարվել իր և այլոց համար անօրինական եկամուտներ ստանալու կամ այլ անձնական դրդապատճառներով պաշտոնեական դիրքը օգտագործելը, ինչպես նաև կամայականություն դրսևորելը:

««ԲՏԱ ինվեստբանկ» ՓԲԸ անվտանգության վարչության վերաբերյալ» կարգի 3.17-րդ կետի համաձայն՝ Բանկի անվտանգության վարչության գործառույթներից է Բանկի տարածքներում և առանձնացված կառուցվածքային ստորաբաժանումներում պահպանական-հրդեհային և ազդանշանային միջոցների տեղադրման աշխատանքների կազմակերպումը՝ մրցույթների անցկացում, պայմանագրերի կնքում, մասնակցություն նախագծա-նախահաշվային փաստաթղթաբանության մշակմանը, տվյալ տիպի պայմանագրերի կատարման հսկողություն, իսկ նույն կարգի 3.18-րդ կետի համաձայն՝ շին-մոնտաժային և այլ տիպի՝ Բանկի և առանձնացված կառուցվածքային ստորաբաժանումների տեխնիկական ամրացվածության աշխատանքների՝ այդ թվում հաշվարկային-դրամարկղային կենտրոնների, արտարժույթի փոխանակման կետերի և դրամարկղային հանգույցների վերազինման կազմակերպումը, մրցույթների անցկացումը, պայմանագրերի կնքումը, մասնակցություն նախագծա-նախահաշվային փաստաթղթաբանության մշակմանը, տվյալ տիպի պայմանագրերի կատարման հսկողությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ իրականացվել են Բանկի դրամարկղային հանգույցների շինարարական աշխատանքներ, որոնց՝ ՀՀ իրավական ակտերի պահանջների համապատասխանության նկատմամբ հսկողություն իրականացնելու պարտականություն կրում է Բանկի անվտանգության վարչության պետը՝ տվյալ դեպքում Սերգեյ Ձիգարխանովը: Վերջինս 27.01.2009 թվականին Բանկի դրամարկղային հանգույցի մասին տվել է եզրակացություն, որում մասնավորապես նշել է, որ Բանկի վարչական ղեկավարության մոտ բացակայում են Բանկի դրամարկղային հանգույցի նախագծման, շինվերանորոգման, ձևավորման աշխատանքների վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, իսկ այդ աշխատանքներն իրականացվել են ՀՀ օրենսդրությամբ ամրագրված պահանջների խախտմամբ: Այժմ շինարարական աշխատանքներն ավարտված են: Այդուհանդերձ գործառնական դրամարկղի շինության վերանորոգման աշխատանքներն ընդհանուր առմամբ գնահատել է բավարար:

Բացի այդ, Բանկի ներքին աուդիտի ծառայության պետի կողմից 27.01.2009-30.01.2009 թվականը իրականացված դրամարկղային հանգույցի՝ ՀՀ նորմատիվ ակտերի պահանջներին տեխնիկական համապատասխանության ստուգման արդյունքում արձանագրվել է, որ Բանկի գլխամասի դրամարկղային հանգույցը չի համապատասխանում ՀՀ օրենսդրության պահանջներին, կատարված վերանորոգման-շինարարական աշխատանքները բավարար չէին և ամբողջությամբ չհանգեցրին արտաքին ռիսկերի նվազեցմանը, և անհրաժեշտ է հիմնովին վերանախագծել դրամարկղային հանգույցը:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից անտեսվել է այն կարևոր հանգամանքը, որ Սերգեյ Ձիգարխանովը կատարված աշխատանքներում ՀՀ օրենսդրության բազմաթիվ խախտումների առկայության պայմաններում այդուհանդերձ դրանք գնահատել է բավարար:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի 18.07.2009 թվականի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-2412-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.07.2009 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Ս. ՍԱՐԳՍՅԱՆ
Դատավորներ՝ Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ.ԱԲԵԼՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Է. ՀԱՅՐԻՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Ռիմա Նախշքարյանն ընդդեմ Միսակ և Կարեն Նախշքարյանների, ԵԱՔԴ/1092/02/09

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Քաղաքացիական գործ թիվ ԵԱՔԴ/1092/02/09
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում 2010թ.
Նախագահող դատավոր՝ Ս. Միքայելյան
Դատավորներ՝ Ն. Տավարացյան
Դ. Խաչատրյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2010 թվականի հուլիսի 30-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Ռիմա Նախշքարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.01.2010 թվականի որոշման դեմ՝ ըստ Ռիմա Նախշքարյանի հայցի ընդդեմ Միսակ և Կարեն Նախշքարյանների, երրորդ անձ Սեդա Հակոբյանի՝ գույքը տիրազուրկ

ճանաչելու և ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին, ինչպես նաև Միսակ Նախշքարյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Ռիմա Նախշքարյանի՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1.Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ռիմա Նախշքարյանը պահանջել է Երևանի Թավրիզյան փողոցի թիվ 31 հասցեում գտնվող տան և հողամասի 1/4 բաժինը ճանաչել տիրազուրկ և ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել սեփականության իրավունքը:

Հակընդդեմ հայցով Միսակ Նախշքարյանը պահանջել է Գևորգ Նախշքարյանի ժառանգական գույքի՝ Երևանի Թավրիզյան փողոցի թիվ 31 հասցեում գտնվող անշարժ գույքի 5/8 բաժնի՝ 68,12քմ տան և 210,9քմ հողամասի նկատմամբ ճանաչել ժառանգությունն ընդունած ժառանգ:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ Դատարան) 12.09.2009 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը բավարարվել է մասնակիորեն: Վճռվել է Միսակ Գևորգի Նախշքարյանի անվամբ գրանցված Երևանի Թավրիզյան փողոցի թիվ 31 հասցեում գտնվող տան և հողամասի 1/4 բաժինը ճանաչել տիրազուրկ, և ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել Ռիմա Նախշքարյանի սեփականության իրավունքը: Գևորգ Նախշքարյանի ժառանգական գույքի՝ Երևանի Թավրիզյան փողոցի թիվ 31 հասցեում գտնվող տան 3/8 բաժնի նկատմամբ ճանաչել Միսակ Նախշքարյանին ժառանգությունն ընդունած ժառանգ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 22.01.2010 թվականի որոշմամբ Միսակ Նախշքարյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 12.09.2009 թվականի վճիռը բեկանվել և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ռիմա Նախշքարյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ, 54-րդ հոդվածները, 219-րդ հոդվածի 3-րդ կետը, որի արդյունքում չի կիրառել ՀՀ նախկին քաղաքացիական

օրենսգրքի 549-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 178-րդ, 187-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր և կիրառել է ՀՀ նախկին քաղաքացիական օրենսգրքի 554-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները, պատշաճ իրավական գնահատական չի տվել այն հանգամանքին, որ Գևորգ Միսակի Նախշքարյանը հոր՝ Միսակ Գևորգի Նախշքարյանի մահից հետո փաստացի չի տիրապետել ու կառավարել ժառանգական գույքը, իսկ ժառանգությունն ընդունելու համար օրենքով սահմանված կարգով չի դիմել նոտարին:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն հանգամանքը, որ Գևորգ Միսակի Նախշքարյանի կողմից հոր՝ Միսակ Գևորգի Նախշքարյանի ժառանգական գույքը տիրապետելու կամ կառավարելու վերաբերյալ Միսակ Գևորգի Նախշքարյանը չի ներկայացրել որևէ ապացույց:

Մինչդեռ Ռիմա Միսակի Նախշքարյանը 1979 թվականից մինչ օրս բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է Երևանի Թավրիզյան փողոցի թիվ 31 հասցեում գտնվող տան և հողամասի 1/4 բաժինը, կատարել է դրանց համար սահմանված պետական վճարումները, հոգացել է դրանց պահպանման խնդիրները, ինչի վերաբերյալ դատարանին են ներկայացվել բազմաթիվ գրավոր հայտարարություններ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 22.01.2010 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 12.09.2009 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Միսակ Գևորգի Նախշքարյանը և Գոհարիկ Թադևոսի Գևորգյանն ամուսիններ են: Ռիմա, Գևորգ և Գրիշա Միսակի Նախշքարյանները նրանց զավակներն են, իսկ Միսակ Գևորգի Նախշքարյանը՝ Գևորգ Միսակի Նախշքարյանի և Սեդա Հայրապետի Հակոբյանի որդին է (Միսակ Գևորգի Նախշքարյանի թոռը) (հատոր 1-ին, գ.թ.13,60):

2. Միսակ Գևորգի Նախշքարյանը (ավագը) մահացել է 31.01.1979 թվականին (հատոր 1-ին, գ.թ.12), Գոհարիկ Թադևոսի Գևորգյանը՝ 10.05.2002 թվականին (հատոր 1-ին, գ.թ.11), Գևորգ Միսակի Նախշքարյանը՝ 05.03.2008 թվականին (հատոր 1-ին, գ.թ.9), իսկ Գրիշա Միսակի Նախշքարյանը՝ 31.05.2008 թվականին (հատոր 1-ին, գ.թ.10):

3. Երևանի Թավրիզյան փողոցի թիվ 31 հասցեում գտնվող տունը ձեռք է բերվել Միսակ Գևորգի Նախշքարյանի և Գոհարիկ Թադևոսի Գևորգյանի ամուսնության ընթացքում:

4. 03.08.1979 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի համաձայն՝ Միսակ Գևորգի Նախշքարյանի ժառանգական գույքի՝ Երևանի Թավրիզյան փողոցի թիվ 31 հասցեում գտնվող տան 1/2 բաժնի նկատմամբ ժառանգներ են կինը՝ Գոհարիկ Թադևոսի Գևորգյանը, զավակները՝ Ռիմա, Գևորգ և Գրիշա Միսակի Նախշքարյանները: Ռիմա Նախշքարյանը հրաժարվել է ժառանգությունից հօգուտ մորը, իսկ Գևորգ և Գրիշա Միսակի Նախշքարյանները չեն ներկայացել ժառանգության իրավունքի վկայագիր ստանալու համար, նրանց բաժինները բաց է թողնվել (հատոր 1-ին, գ.թ.23):

5. 22.11.2002 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի համաձայն՝ Ռիմա և Գևորգ Նախշքարյանները ճանաչվել են ժառանգ Գոհարիկ Թադևոսի Գևորգյանի ժառանգական գույքի՝ Երևանի Թավրիզյան փողոցի թիվ 31 հասցեում գտնվող տան 3/4 բաժնի նկատմամբ (հատոր 1-ին, գ.թ.19):

6. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Արաբկիրի տարածքային ստորաբաժանման 29.10.2008 թվականի թիվ 4880ա և 26.05.2009 թվականի թիվ Ել-2434ա գրությունների համաձայն՝ Երևանի Թավրիզյան փողոցի թիվ 31 հասցեում գտնվող տան 3/4 բաժնի համասեփականատերեր են Ռիմա և Գևորգ Նախշքարյանները, իսկ 1/4 բաժնի սեփականատերն է Միսակ Գևորգի Նախշքարյանը, այդ բաժնով ժառանգության իրավունքը բացված չէ, իսկ 22.11.2002 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրից ծագող իրավունքները պետական գրանցման չեն ենթարկվել (հատոր 1-ին, գ.թ.16, 27):

7. 14.08.2008 թվականին Միսակ Գևորգի Նախշքարյանը դիմել է Կենտրոն նոտարական գրասենյակ՝ հոր՝ Գևորգ Միսակի Նախշքարյանի ժառանգական գույքի նկատմամբ ժառանգությունն ընդունելու համար (հատոր 1-ին,գ.թ.61):

8. Արաբկիր համայնքի թիվ 13 տեղամասի լիազոր ներկայացուցչի 20.08.2009 թվականի տեղեկանքի համաձայն՝ Գևորգ Միսակի Նախշքարյանը Երևանի Թավրիզյան փողոցի թիվ 31 հասցեում հաշվառվել է 1980 թվականից, սակայն բնակվել է 2005 թվականից մինչև մահը (հատոր 1-ին, գ.թ.68):

9. Երևանի Թավրիզյան փողոցի հասցեում բնակվող հարևանների հայտարարությունների համաձայն՝ Գևորգ Միսակի Նախշքարյանը Երևանի Թավրիզյան փողոցի թիվ 31 հասցեում բնակվել է 2005 թվականից մինչև մահը՝ 05.03.2008 թվականը, իսկ Ռիմա Միսակի Նախշքարյանը

1979 թվականից տիրապետում և օգտագործում է Երևանի Թավրիզյան փողոցի թիվ 31 հասցեում գտնվող տունը (հատոր 1-ին, գ.թ.97-100):

10. Երևանի Արարատյան 1-ին զանգվածի 12 շենքի բնակիչների հայտարարությունների համաձայն՝ Գևորգ Միսակի Նախշքարյանը 1993 թվականից մինչև 2005 թվականը բնակվել է Երևանի Արարատյան 1-ին զանգվածի 12 շենքի թիվ 12 բնակարանում (հատոր 1-ին, գ.թ.101-104):

4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ նախկին քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգությունը ձեռք բերելու համար ժառանգը պետք է ընդունի այն: Չի թույլատրվում ժառանգության ընդունումը պայմանով կամ վերապահումներով: Ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա փաստորեն սկսում է տիրապետել կամ կառավարել ժառանգական գույքը, կամ երբ նա ժառանգության բացման վայրի նոտարական մարմնին հայտարարել է ժառանգությունն ընդունելու մասին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով, իսկ 3-րդ մասի համաձայն՝ եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար:

Վերոնշյալ հոդվածների համադրումից հետևում է, որ օրենսդիրը նախատեսել է ժառանգության ընդունման երկու եղանակ՝ ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելը և ժառանգի կողմից ժառանգությունը փաստացի տիրապետելը կամ կառավարելը: Ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել այդ գույքը, ինչը հանդիսանում է ժառանգական գույքի նկատմամբ ժառանգի սեփականության իրավունքի ծագման նախապայման (տես՝ Արմինե Հակոբյանը և Սամվել Հակոբյանն ընդդեմ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Ալվարդ Մելքոնյանի, Անահիտ, Մարգարիտ, Քնարիկ Հակոբյանների՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, ժառանգական գույքն առանձնացնելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը մասնակի անվավեր ճանաչելու

պահանջների մասին թիվ 3-1621(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 09.11.2007 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը նշել է, որ եթե գործի քննության ընթացքում կողմերից մեկը բարձրացնում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ձևերից մեկով ժառանգությունն իր կողմից ընդունելու հարցը, ապա նմանատիպ գործեր քննելիս միշտ կարևոր է այն իրավական հարցի պարզաբանումը, թե արդյոք անձը փաստացի տիրապետման հիմքով ընդունել է ժառանգությունը (տես, օրինակ՝ Վլադիմիր Բալասանյանն ընդդեմ Կարինե Սերոպյանի, ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտարի, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ ժառանգության իրավունքի վկայագիրը և դրա հիման վրա տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականներն անվավեր ճանաչելու և սեփականության իրավունքի վկայականը համապատասխան բաժիններով տրամադրելու, Սերյոժա Բալասանյանի 01.02.1994 թվականի կտակը մասնակիորեն անվավեր ճանաչելու, Թամարա Բալասանյանի մահից հետո փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած միակ ժառանգ ճանաչելու և Այգեստան 10-րդ փողոցի 2-րդ շենքի թիվ 58-րդ բնակարանի և ավտոտնակի նկատմամբ Կարինե Սերոպյանի սեփականության իրավունքը փոխհատուցմամբ դադարեցնելու պահանջների մասին թիվ 3-183(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի որոշումը): Ուստի դատարանում գործի քննության ժամանակ պետք է հիմնավորվի փաստացի տիրապետման հիմքով ժառանգական գույքն ընդունելու փաստը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ժառանգական գույքի փաստացի տիրապետելու փաստը կարող է ապացուցվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով նախատեսված ապացույցների տեսակներով (տես՝ Գառնիկ Նազարյանն հայցի ընդդեմ Գագիկ Նազարյանի, Արտաշատի նոտարական տարածքի նոտարի՝ փաստացի տիրապետման ուժով ժառանգությունն ընդունած ճանաչելու և Գագիկ Նազարյանին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասին թիվ 3-1125(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի որոշումը, ինչպես նաև Միշա Վարդանյանն ընդդեմ Վարդան Վարդանյանի, Արմավիրի նոտարական տարածքի նոտար Նարինե Մկրտչյանի, ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Արմավիրի տարածքային ստորաբաժանման՝ Վարդան Վարդանյանի անվամբ տրված ըստ օրենքի ժառանգության և սեփականության իրավունքի վկայագրերն անվավեր ճանաչելու, փաստացի տիրապետման եղանակով Միշա Վարդանյանին ժառանգությունը ընդունած ժառանգ

ճանաչելու պահանջների մասին թիվ 3-938(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 01.06.2007 թվականի որոշումը):

Եթե օրենսդիրը դիմում տալու եղանակով ժառանգության ընդունման հատուկ ընթացակարգ է նախատեսել (ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին վեցամսյա ժամկետում հանձնելը), ապա փաստացի տիրապետման և կառավարման եղանակով ժառանգության ընդունումը կարող է տեղի ունենալ ժառանգի կողմից ամենատարբեր բնույթի ակտիվ գործողություններ սկսելու հիմքով, որպիսիք ուղղված են ժառանգատուի գույքի փաստացի տիրապետման և կառավարման հնարավորությունների ապահովմանը (տես՝ Կիմա Սարգսյանի ընդդեմ Հարություն Սարգսյանի, Վարդուհի Սարգսյանի և Անժելա Սարգսյանի՝ փաստացի տիրապետման եղանակով բնակարանի ժառանգությունն ընդունած համարելու պահանջի մասին թիվ 3-1224(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի որոշումը):

Դատարանը հայցը բավարարելու, իսկ հակընդդեմ հայցը մասնակի բավարարելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ Ռիմա Նախշքարյանը շուրջ 50 տարի բնակվել է նշված բնակարանում, հոր մահից հետո կատարել է գույքի պահպանմանն ուղղված բոլոր գործողությունները և այդ ժամանակահատվածում որևէ մեկը չի վիճարկել գույքը դիմողի կողմից տիրապետելու փաստը:

Դատարանը նաև նշել է, որ հակընդդեմ հայցվոր Միսակ Գևորգի Նախշքարյանի ներկայացուցչի պնդումը, որ Ռիմա Նախշքարյանը դեռևս 1979 թվականի օգոստոսի 3-ին հրաժարվել է հոր՝ իրեն հասանելիք ժառանգությունից, հօգուտ իր մոր, բաց մնացած ժառանգության 1/4 մասը տիրապետման փաստով ընդունել է վստահորդի հայրը՝ Գևորգ Միսակի Նախշքարյանը, որի առաջին հերթի ժառանգ է հակընդդեմ հայցվոր Միսակ Գևորգի Նախշքարյանը, անհիմն է և հայցը բավարարելու հիմք հանդիսանալ չի կարող:

Ռիմա Նախշքարյանը վիճարկել է ոչ թե ժառանգությունն ընդունելու հարցը, այլ՝ հոր անվամբ որպես սեփականություն գրանցված Երևանի Թավրիզյան 31 հասցեի անշարժ գույքի 1/4 մասը ձեռքբերման վաղեմությամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու հարցը: Դատարանը նշել է, որ Երևանի Թավրիզյան փողոցի թիվ 31 հասցեի տան տնային գրքի հետազոտմամբ պարզվել է, որ Գևորգ Նախշքարյանը նշված հասցեի գրանցումից դուրս է գրվել դեռևս 1973 թվականի փետրվարի 3-ին, հայրը՝ Միսակ Նախշքարյանը մահացել է 31.01.1979 թվականին, իսկ Գևորգ Նախշքարյանը հոր ժառանգությունը բացվելու ժամանակ հաշվառված չի եղել և չի բնակվել հիշյալ հասցեում: Հետևաբար, լինելով չտիրապետող ժառանգ հոր 1/4 մասից իր բաժին ժառանգությունը չի ընդունել:

Դատարանը նաև նշել է, որ հակընդդեմ հայցվորի պահանջը հիմնավոր է միայն Գոհար Գևորգյանի Երևանի Թավրիզյան 31 բնակելի տան 3/4 մասի վերաբերյալ, որի համար 22.11.2002 թվականին Գևորգ և Ռիմա Նախշքարյաններին տրվել է ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, որտեղ Գևորգ Նախշքարյանի բաժինը կազմում է 3/4 մասի կեսը՝ 3/8 մասը: Գևորգ Նախշքարյանը մահացել է 05.03.2008 թվականին, որից հետո նրա որդին՝ Միսակ Գևորգի Նախշքարյանը 14.08.2008 թվականին դիմել է նոտարին՝ հոր մահից հետո մնացած ժառանգական գույքը ընդունելու համար: Հետևաբար համարվում է Գևորգ Նախշքարյանին պատկանող ժառանգական գույքն ընդունած ժառանգ:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը բավարարելիս, գտել է, որ առաջին ատյանի դատարանում հաստատված փաստերի և ՀՀ նախկին քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածի համադրմամբ անհրաժեշտ է պարզել Գևորգ Միսակի Նախշքարյանը հոր ժառանգական գույքի բաժինը չընդունելու պայմաններում արդյոք այդ բաժինն անցել է ըստ օրենքի մյուս ժառանգներին և այն արդյոք մայրը չի ընդունել, և ընդունելու դեպքում Գևորգ Միսակի Նախշքարյանի կողմից մոր ժառանգական գույքի զանգվածի մեջ արդյոք ներառվել է և Գևորգ Միսակի Նախշքարյանի մահից հետո դրա նկատմամբ տեղի չի ունեցել ժառանգական իրավահաջորդությամբ սեփականության իրավունքի փոխանցում նրա ժառանգներին:

Մինչդեռ հիմք ընդունելով սույն գործում առկա ապացույցները, ինչպես նաև առաջին ատյանի դատարանում հաստատված փաստերը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Գևորգ Միսակի Նախշքարյանը Միսակ Գևորգի Նախշքարյանի մահից հետո փաստացի չի տիրապետել ու կառավարել ժառանգական գույքը, իսկ ժառանգությունն ընդունելու համար օրենքով սահմանված կարգով չի դիմել նոտարին:

Այսինքն՝ Գևորգ և Գրիշա Միսակի Նախշքարյանները ժառանգատու հոր՝ Միսակ Գևորգի Նախշքարյանի ժառանգական գույքի 1/8-ական բաժինների նկատմամբ ժառանգությունը չեն ընդունել, որի արդյունքում 1/4 բաժին ժառանգական գույքի նկատմամբ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր չի տրվել, և այն մնացել է գրանցված ժառանգատու Միսակ Գևորգի Նախշքարյանի անվամբ:

Ավելին, 22.11.2002 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր տրվել է Ռիմա և Գևորգ Նախշքարյաններին՝ ժառանգատու՝ Գոհարիկ Թադևոսի Գևորգյանի ունեցած ժառանգական գույքի՝ Երևանի Թավրիզյան փողոցի թիվ 31 հասցեում գտնվող տան 3/4 բաժնի նկատմամբ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմավորմամբ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-2412-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.01.2010 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 12.09.2009 թվականի վճռին:

2. Միսակ Նախշքարյանից բռնագանձել ՀՀ պետական բյուջե 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրք:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Ս. ՍԱՐԳՍՅԱՆ
Դատավորներ՝ Է. ՀԱՅՐԻՅԱՆ
Վ. ԱԲԵԼՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Չափսը՝ 60x84 1/16: Թուղթը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 15 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 500 օրինակ:
Տպագրված է «Կոլլաժ» տպարանում: